Փ. ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ
7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ»
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ - 2023

ՀՏԴ 373:811.19(075.3)
ԳՄԴ 81.51g72
Բ 371

Խմբագիրներ՝ **Լիանա Հովսեփյան,**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Փառանձեմ Մեյթիխանյան,
բանասիրական գիտությունների դոկտոր

Մեթոդիստ՝ **Վալտեր Բերբերյան,**
Երևանի թիվ 119 ավագ դպրոցի ուսուցիչ

Սույն դասագրքի գրված է
«Հ. Խ. Բարսեղյան, Փ. Գ. Մեյթիխանյան Հայոց լեզու VII դասարան»
դասագրքի նյութերի հիման վրա՝ հրատարակված «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության կողմից:

Բ 371 **Մեյթիխանյան Փ.**
Հայոց լեզու: 7-րդ դասարանի, Փ. Մեյթիխանյան.- Եր.: Աստղիկ Գրատուն,
2023.- 176էջ:

ISBN 978-9939-74-145-1

ՀՏԴ 373:811.19(075.3)
ԳՄԴ 81.51g72

© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն,2023
© Մեյթիխանյան Փ., 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Նախորդ դասարանում անցած նյութի կրկնություն.....5

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մասեր 17
Գոյական անուն 22
Ածական անուն 58
Թվական անուն 72
Դերանուն 85
Կիսամյակային կրկնություն 104
Բայ 109

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

1. ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 165
Խոսքի ոճերը 165
2. ՏԵՔՍՏ 169
Հայտարարություն 170
Գովազդ 171
Տարեվերջյան կրկնություն 172
Համառոտագրություններ 175

Պայմանական նշաններ

Տեքստային աշխատանք

Ստեղծագործական աշխատանք

Խմբային աշխատանք

Հեղինակային մեջբերում

Հարցեր

Առաջադրանքներ

Վարժություններ

Անակնկալ հարց

Բառերի շտեմարան

Հիշի՛ր

Իմացի՛ր

Սահիկաշար

Հարցեր անցած նյութից

* Բարդ վարժություն կամ առաջադրանք

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏ

ՆԱԽՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԱԾ ՆՅՈՒԹԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Հայկ Նահապետ

Տիգրան Մեծ

Գրիգոր Լուսավորիչ

Մեսրոպ Մաշտոց

«Մեր հազարամյա անցյալի այն երկար ճանապարհին, որի վրա փռված են մեր անհուն տառապանքները, ո՛չ բանակներ ունեինք մեր պահպանության համար, ո՛չ ուժ, ո՛չ հնարավորություն, ո՛չ էլ դրսի օգնություն, այլ մի հատիկ բան միայն՝ Մեսրոպյան գիրը... Նույնիսկ եթե տիգրանները ավելի սովորական երևույթներ լինեին մեր պատմության մեջ, դարձյալ նրանց հաղթությունները չէին կարող համեմատվել այս համեստ վարդապետի գործի հետ... Տիգրանների հաղթություններից մեզ ոչինչ ժառանգություն չմնաց, մինչդեռ ամբողջ 15 դար է, ինչ հայը ունի հաստատ ու անկողոպտելի մնացած մի ժառանգություն, և դա ***Մեսրոպի*** *այդ աննման հաղթությունից է մնացել»:*

Լեո

Ու եթե պիտի գիր ու տառ հիշվի,
Ապա նա ինքն է այն մեծատառը,
Որով հասարակ ու պարզուկ բառը
Աճում է, հասնում խորհրդանիշի,
Եվ... մարդը ձգվում ու դառնում է Մարդ,
Անցողիկ մարտը՝ հավերժական Մարտ,
Խեղճ տքնությունը՝ զորեղ Տքնություն,
Ինքնությունն անուժ՝ զորեղ Ինքնություն,
Պաշտողը՝ Պաշտող,
Իսկ հայը՝ ... Մաշտոց:

Պ. Սևակ

1. **Ըստ տրված նկարների՝ հավաքի՛ր նյութեր մյուս հերոսների՝** *Հայկ Նահապետի, Տիգրան Մեծի, Գրիգոր Լուսավորչի* **մասին և ներկայացրո՛ւ դասարանում:**

2. Կարդա՛ և փորձի՛ր բացատրել քեզ ներկայացված հեղինակների՝ Լեոյի և Պ. Սևակի մտքերը:
3. Կարելի՞ է դրանք տեքստեր համարել և ինչո՞ւ: Տեքստի ի՞նչ տեսակներ են դրանք:
4. Արտասանի՛ր հայոց այբուբենը: Ի՞նչ հետաքրքիր պատմություններ գիտես հայոց այբուբենի մասին. արտահայտվի՛ր բանավոր:
5.* Հավաքի՛ր նյութեր հայ գրերի, Մ. Մաշտոցի մասին (երգ, բանաստեղծություն, մտքեր, բնութագրումներ): Ի՞նչ գիտես Տառերի պուրակի մասին:
6. Քանի՞ տառ և քանի՞ հնչյուն է պարունակում ժամանակակից այբուբենը:
7. Դասավորի՛ր հայոց այբուբենի տառերի հերթականությամբ քո ընտրած բառերը, ինչպես՝

Ա - արքայախնձոր
Բ - բարկացայտ
Գ - գարեհաց
Դ - Դրաստամատ
Ե - եղինջ

Իսկ դու կարո՞ղ ես նկարել այբուբենի տառերից որևէ մեկը՝ օգտվելով Տառերի պուրակի պատկերներից:

Է ձայնավոր հնչյունը հայոց այբուբենում միավորների մեջ ունի 7 թվային արժեքը, լինում է փոքրատառ *է* և մեծատառ *Է*: Այս տառն ունի բացարձակ մարդկային ծագում և խորհրդանշում է ***էություն*** [1]:

8. Տրված օրինակին համապատասխան՝ գրի՛ր բառեր *է* սկզբնատառով, բառամիջում, բառավերջում՝ նշելով կազմությունը.

Էմմա - պարզ բառ
էջանշան - բարդ բառ
անէ - ածանցավոր
էգ - պարզ բառ
մանրէաբան- բարդ բառ
ելևէջել - բարդածանցավոր
հէկ - բարդածանցավոր

[1] Տե՛ս Հր. Պողոսյան, *Լեզվի ծագումը և Աստվածաշունչը*, Եր., 2006թ., 121 էջ:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա.

9. **Կարդա՛ և պատմի՛ր ստորև տրված երկու ստեղծագործությունները թե՛ քո, թե՛ տեքստին բնորոշ բառերով:**
10. **Երկու տեքստերի ո՞ր նախադասություններում է ամփոփված հեղինակների հիմնական ասելիքը: Առանձնացրո՛ւ դրանք քո տետրում:**

Լավությո՛ւն արա ու ջո՛ւրը նետիր,
Լավությո՛ւն արա ու մի՛ երկմտիր,
Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ,
Նետի՛ր գետերը ու նետի՛ր անդարձ,
Գետը կտանի, կխառնի ծովին,
Քո նետած լավը՝ աշխարհի լավին,
Որ ծովը մի քիչ ավե՛լ քաղցրանա,
Որ ծովից լավի շոգին բարձրանա,
Որ լավով լցվի ամպը երկնքում,
Ու բարությունը հողին ու հոգուն,
Անձրևի փոխված, տեղա անխտիր:
Լավությո՛ւն արա ու ջո՛ւրը նետիր...

Ս. Կապուտիկյան

Լավ վերաբերվենք բարբառներին

Լոռեցիներն ընկույզին **կակալ** են ասում, զանգեզուրցիները՝ **ճղոպուր**, աշտարակցիները՝ **պոպոք**: Կարելի՞ է կամ պե՞տք է, որ այդ բառերը մտնեն գրական հայերենի մեջ: Ո՛չ կարելի է, ո՛չ էլ պետք է: Ինչո՞ւ: Պետք չէ թեկուզև այն պատճառով, որ դրանցից մեկը հասկանալի է միայն Լոռիում, մյուսը՝ Զանգեզուրում, երրորդը՝ Աշտարակում: Ուրեմն դրանք անելիք չունեն համաժողովրդական գրական հայերենում:

Այդպես էլ շատ ու շատ ուրիշ բարբառային բառեր ու դարձվածքներ, որոնք հասկանալի են միայն իրենց ծննդավայրում, տեղ չեն գտնում գրական լեզվում:

Բայց կան շատ և շատ ուրիշ բարբառային բառեր ու դարձվածքներ, որ առոք-փառոք տեղ են գտել գրական հայերենում նույնիսկ այն դեպքում, երբ ունեն իրենց գրական համարժեքները: Ինչո՞ւ, որովհետև նախ՝ մատչելի են ամենքին և ապա՝ ունեն երանգային տարբերություններ: Համոզվենք օրինակներով:

Բանաստեղծ Համո Սահյանն իր գրքերից մեկը կոչել է «Իրիկնահաց»:

Իր ոտանավորներից մեկում նա գրել է. «*Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնահացի*»: **Իրիկնահաց**-ն այլ բան չէ, քան **ընթրիք**-ը, բայց բարբառային բառը ունի մի երանգ, մի այնպիսի հարազատություն ժողովրդական կենցաղին, որից **ընթրիքը** զուրկ է: Հիշածս տողի մեջ բավական է **իրիկնահաց** բառը փոխարինել **ընթրիք** բառով, որ տարբերությունը զգացվի: Այն խորթ կհնչի այնպես, ինչպես եթե «Ձմեռվա իրիկունը» (Պուշկինի հայտնի բանաստեղծության վերնագիրը՝ Հովի. Թումանյանի թարգմանությամբ) ասելու փոխարեն ասենք «Ձմեռվա երեկոն»: Հովհաննես Թումանյանը շատ ջանք է թափել «մաքուր գրական լեզվի» անխոհեմ պաշտպաններին իրենց տեղը նստեցնելու համար: Երբ նրանք բանը հասցրել են ծայրահեղության՝ ասելով, թե **ջան** բառն օտար է ու մերժելի, բանաստեղծն այսպես է պատասխանել. «…այսուհետև փոխանակ **ախպեր ջան** կամ **Գրիգոր ջան** ասելու՝ մաքուր հայերենով կասենք **հոգյակ եղբայր** կամ **հոգյակ Գրիգոր** կամ թե չէ՝ քեֆ անելիս, ներողություն, մաքուր հայերենով ասենք, խրախճանք անելիս կամ առհասարակ ուրախանալիս, փոխանակ «ջա՜ն» բացականչելու, կկանչենք «հոգյա՜կ»… Եվ մի՞թե դուք չեք տեսնում ու չեք զգում, թե ինչքան է սա անմիտ ու անճաշակ: Մի՞թե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ աչքն էլ եք հանում»:

Թե որքան էր իրավացի բանաստեղծը նաև այս դեպքում, կարելի է ցույց տալ բազմաթիվ օրինակներով:

Քննենք ժողովրդական կամ բարբառային մի դարձվածք՝ «ձեռ առնել»:

Գրական լեզվում ունե՞նք «ձեռ առնել»-ի համարժեքը: Հոմանիշների բառարանում կան՝ **ծաղրել, հեգնել, ծանակել, ծաղր ու ծանակի ենթարկել** և այլն:

Բայց ինչո՞ւ մենք կենդանի խոսքի մեջ գերադասում ենք ասել ժողովրդական ակունքից եկածը՝ «Ո՞ւմ ես ձեռ առնում, ի՞նձ», «Ձեռ առնողի՜ս տես»: Պատճառն այն է, որ ժողովրդական դարձվածքն ավելի վառ է, կենդանի ու տպավորիչ, քան իր համարժեքները գրական լեզվում:

Հիմա տեսեք **ձեռք**-ի հետ կապված ինչքան վառ ու կենդանի արտահայտություններ ունի հայերենը ժողովրդական ակունքներից, որոնք երանգային տարբերություններ ունեն իրենց գրական համարժեքների համեմատ.

ձեռը դատարկ – *չունևոր, դատարկաձեռն,*

ձեռը բաց – *առատաձեռն,*

ձեռը փակ – *ժլատ,*

ձեռք բերել – *հայթայթել,*

ձեռ քաշել – *հրաժարվել,*
ձեռքերը լվանալ – *հրաժարվել, մի կողմ քաշվել,*
ձեռուտ ընկնել – *շուտափույթ ամեն միջոցի դիմել,*
ձեռքերը ծալել – *պարապ նստել,*
ձեռքին նայել – *մեկից օգնություն հայցել,*
ձեռքից գալ – *կարողանալ:*

Հավանորեն նկատեցիք, որ զուգահեռների այս շարքում առաջինները ոչ պակաս, գուցեև ավելի վառ են, ավելի տպավորիչ, քան երկրորդները: Եթե այդպես է, իրոք, ապա ինչո՞ւ մենք առաջիններն ավելի քիչ ու անհամարձակ ենք գործածում, քան երկրորդները:

Եթե նույնիսկ ժամանակին այդ արտահայտությունները եղել են բարբառային կամ ժողովրդական խոսվածքի սեփականությունը, ապա վաղուց ի վեր մտել են մեր գրական լեզվի մեջ, տեղ գրավել ժամանակակից հայոց լեզվի բոլոր բառարաններում:

Բարբառը պետք է սիրել ու գուրգուրել ոչ միայն այն պատճառով, որ նա գրական լեզվի հզոր ակունքներից մեկն է: Բարբառը հրապուրիչ է հենց իբրև ժողովրդական ստեղծագործություն: Ամեն բարբառ ունի իր գույնը, հրապույրը, իր երաժշտությունը: Ես հաճույքով եմ լսում Ղարաբաղի բարբառը, որ ինձ գրավում է ուրույն երաժշտությամբ, իբրև մեղեդի: Հապա ինչքա՜ն գեղեցիկ է թիֆլիսահայ բարբառի մեղեդին: Ամեն բարբառ մի մեղեդի է հայոց լեզվի վիթխարի համակարգում:

Բարբառները մեր լեզվի հարստությունն են, ուստի և պետք է լավ վերաբերվել նրանց՝ առանց թույլ տալու, որ նրանք հախուռն ու անկոչ միջամտություններով խաթարեն գրական հայերենը:

Ըստ Լ. Հախվերդյանի

Բ.

11. **Բնութագրի՛ր բառապաշարի համագործածական, գրքային և խոսակցական շերտերը. համապատասխան օրինակներ բե՛ր տրված տեքստերից:**
12. **Ի՞նչ խոսակցական (նաև բարբառային) բառեր եք օգտագործում դու, ընկերներդ, քո ընտանիքի անդամները. գրի՛ր դրանք քո տետրում և նշի՛ր դրանց գրական համարժեքները՝ ուշադրություն դարձնելով նաև շեշտադրմանը:**
13. **Տեքստում տրված նկարը քեզ ի՞նչ դարձվածքներ է հուշում:**

Ուսուցչիդ օգնությամբ որոշե՛ք, թե տրված երգերի հատվածները ո՞ր բարբառով են գրված, լրացրե՛ք ամբողջական տեքստը և երգե՛ք դասարանում:

Կարող եք ներկայացնել նաև ձեր ընտրած երգը՝ նշելով բարբառը:

1. ***

Իրիքնակը տյուս ա եկալ,
Տանըս յերա լյուս ա եկալ,
Սօր մին կորե վեր վար անինքյ
Գյիդա՝ սրտես հոյս ա եկալ

2. ***

Տնեն էլար դու կայնար տյուռ,
Մեջքդ բարակ, խանջարի պյուռ
Քյամին էզար, իտու շուռ-մուռ,
Ես քո սիրուն շիվար ու ծուռ
..., խանե, խանե…

Վանի Աղթամար կղզու
Սուրբ Խաչ եկեղեցի

3. ***

... երթանք մըր էրգիր,
Երթանք ըն ձոր, քաղինք մատղաշ խավրծիլ,
Քաղինք, քաղինք, ընինք մըզի դեղ ու ճար,
... երթանք մըր էրգիր:

4. ***

Զինչ ու զինչ տամ լողվորչուն:
... էր:
Զիմ լաչակ տամ լողվորչուն,
Քոմա, քոմա էր:
Ո՛չ էառ,
Ո՛չ հավնեցավ,
... էր:
Ո՛չ եհան ծամկալ ծովեն,
Քոմա քոմա էր:

«-ռ-ա – -ռ-ա է»
«-ա-ա-ա-ի -ռ-ռ-ել»
«Խ-ռ – Խ-ռ»
«-ելե -առ»

Լսածդ երգերի վերաբերյալ արտահայտի՛ր քո կարծիքը:

1 ԲԱՌԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ



ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ռազմիկ Դավոյան

Ինչպես արևի շողը բռնելով
Կենդանանում է թրթուրը քնած
Եվ խլրտում է տաքուկ փոշու մեջ,
Այդպես Հանճարի ճառագայթի տակ
Արթնանում Բառը
Եվ տաք խլիրտով
Շարժվում է դեպի հավիտենություն:

Զգացմունքների խեղդվող հեղեղից
Բառն ինքը, ահա,
Խոստովանանքի համար է ծնվում,
Ու թեև նրան մանրում են մարդիկ
Շահատակության շուկաների մեջ,
Սակայն ինչ-որ տեղ՝
Հոգու ծալքերում իմաստունների,
Ապրում է Բառը և անվերջ թրթվում:

1. Բառերի մի մասը քնած է (և ոչ երբեք մեռած), ուստի և հարություն տվող է պետք: Բառերի մյուս մասը պարզապես լռում է, ուստի և խոսեցնող է պետք: Իսկ բառերի գերակշիռ մասը պարզապես (շատ և անհարկի գործածվելուց) մաշված է անտանելի, ուստի և նրանց նախնական իմաստը վերականգնել ու փրկել է պետք: (Պ. Ս.)

14. **Ինչո՞ւ են *Բառ* և *Հանճար* բառերը բանաստեղծության մեջ գրված մեծատառով: Բացատրի՛ր ուսուցչիդ օգնությամբ:**
15. **Արդյոք քեզ բավարարում է քո բառապաշարը մտքերդ արտահայտելու համար:**
16. **Բացատրի՛ր բազմիմաստ բառերի ուղիղ և փոխաբերական իմաստները:**
17. **Օգտվելով գծապատկերից՝ բնութագրի՛ր բառի հիմնական հատկանիշները:**
18. **Տրված արձակ և չափածո տեքստերից դո՛ւրս գրիր հինգական կարճ և երկար բառեր. քանի՞ հնչյունից և քանի՞ տառից են կազմված դրանք:**
19. **Ո՞ր բառերում շեշտը չի ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա. բե՛ր օրինակներ:**
20. **Կազմե՛ք նախադասություններ, որոնց բոլոր բառերը լինեն միավանկ, երկվանկ, բազմավանկ.** Օրինակ՝ *Բենը տունը գնեց երկու օրում:*

2 ԲԱՌԻՄԱՍՏ



21. Վերևում տրված արձակ և չափածո տեքստերից դո՛ւրս գրիր մենիմաստ և բազմիմաստ բառեր. բացատրի՛ր բազմիմաստ բառերի իմաստները:
22. Մարդու մարմնի մասերի անվանումներից որո՞նք ունեն մեկից ավելի իմաստներ. թվարկի՛ր:
23. Կազմի՛ր բարդ բառեր *սիրտ, տուն, անուն* բառերով. քո կազմած բառերում որո՞նք են շատ՝ մենիմաստնե՞րը, թե՞ բազմիմաստները:
24. Սահմանի՛ր հոմանիշ, հականիշ և համանուն բառերը:
25. Գրի՛ր տրված բառերին իմաստով մոտ (հոմանիշ) և հակառակ (հականիշ) մեկական բառ. *բերկրանք, կարծր, ողորկ, հակիրճ, բարկանալ, գեղանի, իրազեկ, ապերախտ, գովել, գունատ, հարգել, հնազանդ, դեռատի:*
Օրինակ՝ *կարծր – պինդ, կարծր – փափուկ:*
26. Ի՞նչ օրինաչափություն ես նկատում հետևյալ հականիշ բառազույգերում.

գիտուն-տգետ	երջանիկ-ապերջանիկ
խելացի-անխելք	բախտավոր-ապաբախտ
կիրթ-անկիրթ	գեղեցիկ-տգեղ

27. Բացատրի՛ր տրված համանուն բառերի իմաստները և այդ բառերով կազմի՛ր նախադասություններ.

եղանակ	դաս	ակնարկ	անարգել
եղանակ	դաս	ակնարկ	անարգել

28. Ստորև տրված ծաղկաթերթիկի մեջ նշված բառերից (նաև թեքված) որո՞նք են մենիմաստ և բազմիմաստ, հոմանիշ, հականիշ, համանուն բառեր:
Դո՛ւրս գրիր դրանք առանձին սյունակներում. հաց, աղավաղել, ակնարկ, ականջ, սուր, արդար, ոգնի, երջանիկ, քանոն, փող, նետ, նռնենի, լեզու,

հայրենի, գառ, պատեր, եղ-
ծել, օտար, խրթին, հեշտ,
կանխակալ, ապերջանիկ,
գանձ, դրամա:

29. **Կազմի՛ր նախադասություններ տրված բառերի ուղիղ և փոխաբերական նշանակություններով.** թև, մուք, աքոռ, ծաղիկ:



3 ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ



30. **Բառի ո՞ր բաղադրիչն է կոչվում *արմատ*. վերհիշի՛ր անհնչյունափոխ և հնչյունափոխված արմատների սահմանումները:**

31. **Վերհիշի՛ր ածանցի և ածանցավոր բառերի սահմանումները:**

32.* **Որոշի՛ր տրված բառաշարքերում ընդհանուր արմատը. նշի՛ր դրանց տարբերակները.** օրինակ՝ ***ձեռ-ձեռն-ձերբ:***

կեղծանուն, անվանաբերք, ազգանուն
անարգ, հարգել, մեծարգո
արժեք, անարժան, արժևորում
ամենագետ, գիտափորձ, տգիտություն
ակնդետ, դիտանցք, դիտահոր
ակներև, երևույթ, օդերևութաբան
կայուն, ենթակա, ներկա, հանդիպակաց
կենարար, կենսաբեր, կեցություն, նստակյաց
կովկիթ, կթել, հավկիթ, ձկնկիթ, այգեկութ
աղեկտուր, կտրել, միակտուր, կտրուկ
ձեռնտու, ձերբազատվել, անձեռոցիկ
միջին, միջնադար, սնամեջ, միջուկ

33. Տրված ցանկում գտի՛ր հնչյունափոխված արմատները. ի՞նչ կարգի հնչյունափոխություններ ես նկատում. օրինակ՝ ***դետ/դիտ՝ ե***-ի հնչյունափոխություն, ***դիտում:***

34. Տրված ածանցներով կազմի՛ր ածանցավոր բառեր:
- ապ-, ենթ-, գեր-, առ-, հակ-
- -ական, -ային, -աբար, -եղեն, -ք

4 ԴԱՐՁՎԱԾՔ

35. Արտահայտի՛ր հետևյալ դարձվածքների իմաստը մեկ բառով.

աչքը դռանը մնալ	*աստծու կրակ*	*խելքը կտրել*
վահանով վերադառնալ	*ծաղիկ հասակ*	*սիրտ առնել*
մտքի թելը կտրվել	*խելքից պակաս*	*լեղին պատռվել*

36. Բառարանի օգնությամբ գրի՛ր *աչք, արյուն, երակ, գլուխ, մեջք, ոտք, ականջ, քիթ, թև* բառերով դարձվածքներ:

37.* Գտի՛ր տրված դարձվածքներին հականիշ կամ հոմանիշ դարձվածքներ բառարանի օգնությամբ:

Ականջը ձայնի, աչքը կուշտ, խոսքը թագավորեցնել, խիղճը կորցնել կամ *ծախել, խղճի ձայն, խոսքը կտրել, կաշվից դուրս գալ, կաշին փրկել, կարասն ընկած մուկ, ձեռքը ծանր, մի խմորից հունցած, մի կողմ քաշվել.* օր.՝ հոմանիշ՝ *խղճի ձայն – հոգու թելադրանք:*

38. Բառարաններից դո՛ւրս գրեք տարբեր կենդանիների անուններով դարձվածքներ և սովորե՛ք դրանց նշանակությունները:

Բաժանվելով երեք խմբի՝ դասարանում անցկացրե՛ք մրցույթ՝
Ո՞վ ավելի շատ դարձվածքներ կարող է ասել ու բացատրել:

Ականավոր լեզվաբան Հր. Աճառյանի հայագիտական ուսումնասիրությունները վերաբերում են հայերենի պատմությանը, բարբառագիտությանը, բառարանագրությանը, հայ ժողովրդի պատմությանը և այլ հարցերի:

39. Տարբեր աղբյուրներից հավաքի՛ր նյութեր Հրաչյա Աճառյանի մասին:

Գրի՛ր շարադրություն՝ *«Իմ առօրյան»* վերնագրով՝ օգտվելով տրված բառերից ու բառակապակցություններից. *անմիջական խոսք ու զրույց, հոգատար, մաթեմատիկա, նպատակասլաց, զովացուցիչ ըմպելիք, ընկերա-*

կան միջավայր, հաճելի զրուցակից, պայուսակ, ճոճաթոռ, պատասխանատվության զգացում, նախաճաշ, անակնկալ, պարապմունք, այգու ծաղիկներ, համակարգչային խաղեր, խտասկավառակ, տրամադրություն, ընթերցել:

Իսկ դու մտածե՞լ ես, որ ուտում ես այն, ինչ պահանջում է քո օրգանիզմը:



https://moyadacha.temaretik.com

40. **Նույն ձևով ներկայացրո՛ւ քո պատկերացումները ոչ միայն տրված, այլև ուրիշ պատկերների համեմատությամբ: Արտահայտվի՛ր բանավոր:**
41. *Միրտ, ականջ, ուղեղ, աչ* **բառերի ուղիղ և փոխաբերական իմաստներով կազմի՛ր նախադասություններ:**

Բառերի շտեմարան

Այբուբեն-ը տառերի ամբողջությունն է՝ դասավորության ընդունված կարգով. մեր այբուբենն իր ստեղծողի անունով էլ հաճախ անվանվում է ***մաշտոցյան*** կամ ***մեսրոպյան:***

Գիր-ը բնիկ հայերեն բառ է, որն ունի մի քանի իմաստ՝ 1. *տառ*, 2. *գրվածք*, 3. *նամակ*, 4. *Աստվածաշունչ*, 5. *որևէ գիրք:*

Տառ-ը ուղղակիորեն կապվում է ***տարր*** բառի հետ. երկու **ր**-երը միանալով տվել են **ռ:**

Մագաղաթ նշանակում է *«կաշվից պատրաստված գրանյութ»*. բառը մեզ անցել է եբրայերենից, որտեղ նշանակել է *«գալարված մատյան, թուղթ»*, արաբերենում նշանակում է *«ճոխ կազմ ունեցող գիրք»:*

Մատյան բառը դարձյալ հայկական ծագում չունի. այն մեր բառապաշար է մտել պարսկերենից և նշանակում է *«գիրք, գրվածք»*.

նրանից էլ կազմվել է **մատենադարան** բառը, որը սկզբնապես նշանակել է *«գրադարան»*, բայց այժմ գործածվում է մասնավորապես *«-հին ձեռագրերի պահպանման և ուսումնասիրության կենտրոն»* իմաստով, ինչպես՝ **Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան** կամ ուղղակի՝ **Երևանի Մատենադարան:**

Իսկ մնացած դեպքերում ***մատենադարան*** բառը գրվում է փոքրատառով, ինչպես՝ ***Վիեննայի մատենադարան:***

Ըստ Հր. Աճառյանի

Լուծե՛ք տրված խաչբառը՝ բաժանվելով երեք խմբի:



Հեղ.՝ Հ. Սաֆարյան
ԵՊՀ բանֆակ, III կ.

1. Կիլիկիայի հայոց թագավոր՝ Հեթումյանների հարստության հիմնադիր
2. Արտավազդ Բ-ի քրոջ ամուսինը
3. Հայոց թագավոր՝ *Բարեպաշտ* մականունով
4. Սարդուրի Ա-ի որդին
5. Կիլիկիայի իշխան՝ Կոնստանդին Ա-ի որդին
6. Մենուայի որդին
7. Աշոտ Բ-ի եղբայրը, որ հաջորդեց իրեն
8. Վանի թագավոր՝ Սարդուրի Ա-ի որդին

42. 1. Նկարագրի՛ր Հայաստանի դրոշը, զինանշանը:
2. Լսե՛ք Հայաստանի Հանրապետության հիմնը:

Լսենք մեծերին

Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա, բայց չայն անուշցավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուշցնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարքը շա՜տ դառն է, օձի լեղի:

Ավ. Իսահակյան

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Ընդհանուր գիտելիք

Բառերի ձևափոխությունների կանոնների ամբողջությունը կոչվում է ձևաբանություն:

Ձևաբանությունն ուսումնասիրում և ուսուցանում է բառերի այն բոլոր ձևափոխությունները, որոնցով դրանք կապակցվում են միմյանց ու կազմում նախադասություններ:

Ձևաբանությունն ուսումնասիրում է նաև բառերի տեսակները՝ խոսքի մասերը, սրանց ձևային և իմաստային հատկանիշները:

Շարահյուսությունն ուսումնասիրում է բառակապակցությունն ու նախադասությունը, նրանց տեսակներն ու կառուցվածքը: Այս երկու բաժինները միասին կազմում են **լեզվի քերականությունը:**

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Լեզվի բոլոր բառերը, իրենց արտահայտած ընդհանուր իմաստների համաձայն, բաժանվում են տարբեր խմբերի կամ տեսակների, որոնք կոչվում են **խոսքի մասեր:**

Հայերենն ունի տասը խոսքի մաս՝ **գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն:**

Այս խոսքի մասերը, ըստ իրենց արտահայտած ընդհանուր իմաստի, բաժանվում են երեք խմբի.

Ա. Նյութական իմաստ արտահայտող՝

1. երկինք, ուսուցիչ, երաժշտություն, միտք, բաճկոն, համակարգիչ,
2. քնքուշ, վայելուչ, լուսավոր, ժլատ, լեռնային, անթերի, բարեբեր,
3. մեկ, հիսուն, վաթսուներորդ, տասական, մեկ երրորդ, իններորդ,
4. ներկել, սայթաքել, արհամարհել, վտանգել, նվիրել, հուզել,
5. ես, ողջ, ոմանք, ով, ինչ, միմյանց, այս, դա, ե՞րբ, ինչո՞ւ, ոչինչ,
6. ամենուրեք, երբեմն, հանկարծակի, մշտապես, անընդհատ:

Բոլոր այս բառերն արտահայտում են **նյութական իմաստ**, ունեն անվանողական արժեք:

Բ. Քերականական իմաստ արտահայտող՝

1. որովհետև, որ, եթե, քանի որ, որպեսզի, թեև, թեկուզ,
2. հետ, մասին, համար, բացի, ի, ըստ, վրա, փոխանակ:

Այս բառերը նյութական իմաստից զուրկ են. դրանք արտահայտում են **քերականական իմաստ**, այսինքն՝ այս կարգի բառերը ցույց են տալիս հարաբերություն և խոսքի մեջ իրար են կապում կա՛մ բառեր, կա՛մ նախադասություններ՝ այսպիսով դառնալով սպասարկու բառեր:

Գ. Վերաբերմունքային իմաստ արտահայտող՝

1. անշուշտ, գուցե, ավա՜ղ, գեթ, արդյոք, մի՞թե, անկասկած, իրոք,
2. վահ, ահ, է՜յ, օխա՜յ, ա՛յ, հա՛ֆ-հա՛ֆ, ջա՜ն, հե՜յ, ուխա՜յ:

Այս բառերը սոսկ եղանակավորում են խոսքը, **դատողական** կամ **զգացական վերաբերմունք** արտահայտում:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

- **1. Նյութական իմաստ արտահայտող**
  - Գոյական | Ածական | Թվական | Դերանուն | Բայ | Մակբայ
- **2. Քերականական իմաստ արտահայտող**
  - Կապ | Շաղկապ
- **3. Վերաբերմունքային իմաստ արտահայտող**
  - Վերաբերական | Ձայնարկություն

Թեքվող և չթեքվող խոսքի մասեր

Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից գոյականը, բայը, դերանունների մի մասը ենթարկվում են ձևափոխությունների. **գոյականը** և **դերանունների մի մասը հոլովվում են**, **բայը խոնարհվում է, ածականը** և **թվականը չեն հոլովվում, բայց հոլովվում են գոյականաբար գործածվելիս, մակբայը** չի ձևափոխվում:

Ըստ այդմ՝ խոսքի մասերը բաժանվում են երկու խմբի՝ ***թեքվող*** և ***չթեքվող***. թեքվող են համարվում **գոյականը, բայը, մասամբ՝ դերանունը, չթեքվող՝ ածականը, թվականը, այն դերանունները,** որոնք ցույց են տալիս առարկայի և գործողության հատկանիշ: Բուն չթեքվող խոսքի մասերն են **մակբայը, կապը, շաղկապը, վերաբերականը, ձայնարկությունը:**

1. **Որոշի՛ր առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերը և գրի՛ր առանձին սյունակներում.**

   աղբյուր, սև, դժգույն, բարձր, գիրք, գնալ, փայլել, տասնինը, գործել, փորել, չորրորդ, կավիճ, ազնիվ, թուղթ, գրատախտակ, փոքր, լայն, շքեղ, կտրել, ամուր, ապակի, կարծր, համարել, պայուսակ, քաղցր, արտասանել, վերցնել, ակութ, մաճկալ, մրուր, քանքար, շարական, հուշարձան, արևաբույր, լեռնային, վայրկենական, այծենակաճ, տխրադալուկ, բողբոջել, տասներորդ, կցկտուր, կծկել, քամահրել, տարրալուծել, վաղորդայն, արփի:

2. **Տրված տեքստից դո՛ւրս գրիր առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող վեցական բառ:**

   Արարատը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռն է՝ կազմված երկու կոնաձև գագաթներից, որոնցից մեծը կոչվում է Մասիս, փոքրը՝ Սիս:

   Արարատի գագաթը ծածկված է հավերժական ձյունով: Լեռան անունը Աստվածաշնչում հիշատակվում է իբրև Համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի առաջին հանգրվան: Ըստ ավանդության՝ Արարատի վրա են գտնվում հայ թագավորների շիրիմները:

Հիմք և վերջավորություն

Բառերի ձևափոխությունները կատարվում են սովորաբար վերջից ավելացող մասնիկների օգնությամբ. օրինակ՝ աշակերտ, աշակերտ-**ի**, աշակերտ-**ից**, աշակերտ-**ներ**, գնաց-**ինք**, գնաց-**իք**, գնաց-**ին**:

♦ Բառերի ձևափոխության ժամանակ վերջից ավելացվող մասնիկները կոչվում են **վերջավորություններ:**

Վերջավորությունները չպետք է շփոթել ածանցների հետ: Ածանցները, ավելանալով բառին, փոխում են նրա իմաստը և նոր բառ են կազմում, իսկ վեր-

ջավորությունները չեն փոխում բառի իմաստը, այլ միևնույն բառի տարբեր ձևերն են կազմում: **Աշակերտի, աշակերտից, աշակերտով, աշակերտներ, աշակերտներով** ձևերը **աշակերտ** պարզ բառի տարբեր ձևերն են, այլ կերպ ասած՝ **բառաձևեր**: **Հիվանդանոցի, հիվանդանոցում, հիվանդանոցներ** ձևերը **հիվանդանոց** ածանցավոր բառի բառաձևերն են:

♦ Բառի վերջավորությունից առաջ ընկած մասը կոչվում է **հիմք: Աշակերտի, աշակերտից, աշակերտով, աշակերտներ** ձևերի հիմքն է **աշակերտ**-ը, **գնացինք, գնացիք, գնացին** ձևերի հիմքն է **գնաց**-ը:

Եթե բառը ունի մի քանի վերջավորություն, ապա բառի հիմքը վերջին վերջավորությունից առաջ ընկած մասն է, օրինակ՝ **ճանապարհի** բառի հիմքն է **ճանապարհ, ճանապարհների** բառի հիմքն է **ճանապարհներ** և այլն:

Որոշ բառեր հնչյունափոխության հետևանքով կարող են ունենալ երկու տեսակ հիմք՝ **անհնչյունափոխ** և **հնչյունափոխված**:

Աշակերտ բառը, վերջավորություններ ստանալով, հնչյունափոխության չի ենթարկվում և բոլոր ձևերում ունի միատեսակ հիմք: **Գլուխ** բառի **գլուխներ, գլուխների, գլուխներից, գլուխներով, գլուխներում** ձևերի մեջ ունենք **գլուխներ** անհնչյունափոխ հիմքը, իսկ **գլխի, գլխից, գլխով, գլխում** ձևերի մեջ՝ **գլխ** հնչյունափոխված հիմքը. ուրեմն՝ **գլուխ** բառն ունի միևնույն հիմքի երկու ձև՝ **գլուխ** և **գլխ:**

3. **Արտագրի՛ր հետևյալ բառաձևերը՝ վերջավորությունները գծիկով անջատելով հիմքից.** քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում, քաղաքներով. սենյակում, սենյակներ. պարտեզով, պարտեզում, պարտեզներ. մարդու, մարդուց, մարդիկ. բերքահավաքի, բերքահավաքից. սեղանի, սեղանից, սեղաններ. օրվա, օրում, օրեր. ընկերոջ, ընկերով, ընկերներ. գյուղի, գյուղում, գյուղով:
Օրինակ՝ *քաղաք-ի, քաղաք-ից, քաղաք-ում:*

4. **Արտագրի՛ր ընդգծված բառերը և փակագծում գրի՛ր՝ ավելացած վերջին մասնիկը ածա՞նց է, թե՞ վերջավորություն:**

Անտառում **վայրի** կենդանիներ կան: Հրամանատարը հանեց այդ **վայրի** քարտեզը: **Հակառակորդի** կայազորը **գլխովին** ջարդվեց: Նստել ենք ծառի **հովին**: **Հատու** սրով նա կտրեց վայրի վարազի գլուխը:

Անկողնու վրա չեն նստի: Սևանա լճում **ջրային** կենդանիներ կան: Նա իր **տղային** շատ է սիրում: Ընկերս **երևանցի** է: Վահրամն աշխատում է **էլեկտրացանցի** կենտրոնական գրասենյակում: Գևորգը գրեց **տնային** աշխատանքը: Մեր տունը մոտ է **դպրոցին:** Հիվանդը խմում է **ձկան** յուղ:

Դարակից մի տետր վերցրեց:

Օրինակ՝ ջր-**ային** (ած.), անկողն-**ու** (վերջ.):

Բառերի շտեմարան

Շաբաթվա օրերի անունները տարբեր լեզուներում կազմված են կա՛մ երկնային մարմինների անուններից, կա՛մ թվականներից:

Այսպես՝ եվրոպական լեզուներում երկնային մարմինների անուններից են **Sunday** (անգլ.), **Sonntag** (գերմ.), **Monday** «Արևի օր», **Montag** «Լուսնի օր» և այլն: Հայերենում այդ անունները կազմված են թվականներից, ընդ որում՝ **կիրակին** շաբաթվա առաջին օրն էր (գրաբարում ունենք կիրակիի **միաշաբաթ** անվանումը, որը հետո փոխարինվեց հունարենից փոխառված **կիրակի** «տերունական» բառով), **երկուշաբթի**՝ շաբաթվա երկրորդ օր, այդպես նաև՝ **երեքշաբթի**, **չորեքշաբթի, հինգշաբթի: Ուրբաթ** բառն ունի ասորական ծագում և նշանակում է **պատրաստություն, նախապատրաստություն,** որովհետև մարդիկ այդ օրն էին անում բոլոր գործերը, որ չէր կարելի անել շաբաթ օրը՝ այն սուրբ (մաքուր) պահելու համար: Մեկ այլ կարծիքով՝ **ուրբաթ** նշանակում է **սուգ, բոթ,** քանի որ այդ օրը Ադամն ու Եվան վտարվեցին դրախտից:

Ըստ **Աստվածաշնչի**՝ աշխարհի վեցօրյա արարչագործությունից հետո Աստված յոթերորդ՝ **շաբաթ** օրը հանգիստ առավ. ահա թե ինչու **շաբաթ** բառի բուն նշանակությունն է **հանգիստ, դադար, խաղաղություն**:

Բառը եբրայերենից փոխառությամբ անցել է բազմաթիվ լեզուների՝ sabbatum – լատիներենին, samedi – ֆրանսերենին, sabato – իտալերենին, суббота – ռուսերենին:

Ըստ Հր. Աճառյանի

Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի բառերը հայերենում գոյականներ են. կիրառվում են նաև որպես ածական և մակբայ. օրինակներ՝ *Երկուշաբթին անձրևոտ է լինելու: Շաբաթ օրը մեկնում եմ Ջերմուկ: Կիրակի կայցելեմ քեզ:*

5. **Կազմի՛ր նախադասություններ շաբաթվա օրերի անունների հոլովված ձևերով:**
6. **Տրված առածներին ավելացրո՛ւ քո իմացածները:**

   Կիրակի օրվա փլավը երկուշաբթի էլ կուտվի: Ուրբաթ ամպեց, շաբաթ պարզեց: Ուրբաթ շաբաթից շուտ եկավ: (Ա. Ղ.)

Լսենք մեծերին

Ով երեխա չի եղել, երբեք հասուն մարդ չի դառնա: Չ. Չապլին

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Լուս.՝հեղինակային. «Հայաստան աշխարհ»

Գոյականը որպես խոսքի մաս

1. **Ընդհանուր իմաստը՝** *առարկա*
2. **Ձևաբանական առանձնահատկությունը՝** *թեքվող (թիվ, հոլով, առում)*
3. **Տեսակները՝** *հատուկ, հասարակ, անձնանիշ, իրանիշ*
4. **Շարահյուսական դերը՝** *ենթակա, կոչական, ստորոգյալի մաս, գոյականական և բայական անդամի լրացում*

Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն կամ գոյական:

Քերականության մեջ *առարկա* ասելով հասկանում ենք ոչ միայն նյութական իրերը, այլև անձեր, կենդանիներ, բնության երևույթներ, զգացմունքներ, եղելություններ, գաղափարներ, օրինակ՝ **պահարան, մարդ, խնդություն, կատու, հերոսություն, փորձանք, որոտ:**

Առարկա ցույց տվող բառերը պատասխանում են **ո՞վ** կամ **ի՞նչ** հարցին, օրինակ՝ **ո՞վ – աշակերտ, քարտուղար, քույր, Արուսյակ. ի՞նչ – կոկորդիլոս, պայուսակ, խնդություն, որոտ, փորձանք:**

7. **Ի՞նչ են ցույց տալիս հետևյալ քառատողում ընդգծված բառերը:**
Մեր **պատմությունն** է այս **գրերի** մեջ,
Դրանք մեր **ոգու գանձերն** են անշեջ.
Հնձվորի նման ննջում են հոգնած,
Մաշտոցն է հսկում **անդորրը** նրանց: *(Ս. Մ.)*

8. **Առանձնացրո՛ւ առարկա՝ իր, անձ, կենդանի, բնության երևույթ, զգացմունք, եղելություն, գաղափար ցույց տվող գոյականները.** հաղթանակ, փղոսկր, թախիծ, զինվոր, պատերազմ, պատիվ, զզվոտոց, լուսան, կարկուտ, սյուք,

քնքշություն, կրիա, ընկերուհի, կարծիք, բազրիք, ընթրիք, երազանք, ձնհալ, նժույգ, նախանձ, հրեա, բարեկամություն, վզնոց, թփուտ, ամբարձիչ, դերձակ, մրջյուն, բարություն, արհամարհանք, մակընթացություն, հրավերք:

9. **Անվանի՛ր մեկ բառով՝ տեղադրելով տրված բառերը.** առասպելական թևավոր ձի, ազնվացեղ ձի, ձիու համաչափ վազք, ձիու պարանոց, բազեազգիների գիշատիչ թռչուն, վայրի ոչխար, կոկորդիլոսի մի ցեղ, արու թռչուն, էգ թռչուն **(ալիգատոր, պեգաս, վարուժան, վարգ, նժույգ, մուֆլոն, մարի, բաշ, ուրուր):**

Ըստ քո դիտած տեսանյութի՝ ո՞րն է ամենագեղեցիկ ձին:

10. **Օգտվելով համացանցից** (https://www.noticaballos.com), **գրքերից՝ պատրաստի՛ր ելույթ ձիերի ցեղատեսակների մասին:**

Այցելե՛ք ձիարշավարան կամ թափառող շների հավաքատեղի՝ այնտեղ կատարելով համապատասխան գրառումներ դրանց տեսակների, անունների, գույների, պահման պայմանների, դրանց ստեղծման բուն նպատակի մասին: Այս բոլորի մասին անցկացրե՛ք հարցազրույց տնօրենների, անասնաբույժի, ձիարշավարան և շների հավաքատեղի եկած այցելուների հետ:

Գրե՛ք շարադրություն *«Տպավորություններ ձիարշավարանից», «Ձիեր», «Թափառող շներ»* **թեմաներից մեկով՝ օգտագործելով ձեր ձեռքի տակ եղած նյութերը, ու բարձրաձայն ընթերցե՛ք դասարանում՝ առանձնացնելով տեքստի հիմնական միտքը արտահայտող բառերը:**

11. *Ձի, շուն, արծիվ* **բառերով դարձվածքներ դո՛ւրս գրիր Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի, Խ. Բաղիկյանի, Պ. Բեղիրյանի դարձվածաբանական բառարաններից,** օրինակ՝ *ձիուց իջնել, էշ նստել:*

12. **ա) Տեսանյութը դիտելիս աշխատե՛ք արագ գրառումներ կատարել և օգտվել դրանցից բանավոր խոսքի ընթացքում:**
բ) Պատրաստի՛ր տեսանյութ ընտանի կենդանիների մասին և քննարկի՛ր այն դասընկերներիդ հետ:

ՀԱՏՈՒԿ ԵՎ ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Գոյական անունները լինում են **հասարակ** և **հատուկ**:

Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է հասարակ անուն:

Օրինակ՝ **գիրք, հայր, դպրոց, ծաղիկ, պարտեզ, մարդ, դարբնոց**:

Միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն:

Օրինակ՝ **Երևան, Տիգրան, Արագած, Ավետիք, Հրազդան, Մարոկկո**:

Հատուկ անուններ են աշխարհագրական (գետեր, ծովեր, երկրներ, լեռներ) անունները, մարդկանց անուններն ու ազգանունները, հիմնարկների, կազմակերպությունների անվանումները, գրական, գիտական և այլ ստեղծագործությունների անունները, կենդանիներին տրվող անունները և այլն:

13. **Տրված բանաստեղծության մեջ ի՞նչ հատուկ անուններ կան. դո՛ւրս գրիր առանձին սյունակներով՝ անձնանուն, ազգանուն, տեղանուն, մականուն:**

Մագաղաթներ՝ սուրբ, խնկաբույր,
Բյուր դարերի փոշով օծված,
Դուք մեր նախնյաց ոգին եք հուր՝
Իմաստությամբ, խոհով լցված:
Ձեր թերթերին ոսկեջրած՝
Հազար լեգենդ ու առասպել,
Հաղթանակած Հայկ ու Արա,
Ծունկի եկած Շամիրամ, Բել:
Ավարայրի ճակատամարտ,
Ոգեղեն ճառ քաջ Վարդանի,
Խորենացի, Դավիթ Անհաղթ
Ու Տրդատի երկնած Անի:
Դուք Քուչակի սիրտ սիրահար
Ու Ֆրիկի անզուսպ ցասում,
Շիրակացու ջինջ աստղաշար
Եվ Այգեկցու խայթող լեզու:
Դուք Հերացու դեղամատյան,
Գոշի օրենք, եղեգան փող,
Ակնա կռունկ ու երգ Գողթան,
Նարեկացու հանճարեղ տող:
Սասնա Դավթի լույս օրորոց,
Տիգրան Մեծի քաջամարտիկ,
Դուք Ռոսլինի ոսկե շարոց՝
Որդան կարմիր, նռնահատիկ:
Գրեր ծաղկող Սարգիս Պիծակ,
Վիշապաքաղ Վահագնի հուր,
Արշակին ուժ տվող հենակ՝
Հայրենական սուրբ հող ու ջուր:

Ս. Մուրադյան

14.* Թվարկի՛ր հինգ արական և հինգ իգական անձնանուն, որոնք, ըստ քեզ, հայկական են:

15. Քո տետրում գրի՛ր հինգական
- պետության անվանում
- սրբավայր տեղանուն
- լեռնանուն
- գրական կեղծանուն

Փորձե՛ք նշել *Դավիթ, Սարգիս, Գրիգոր* անունների նաև այլ տարբերակներ. գտե՛ք այլ անուններ՝ իրենց տարբերակներով, ինչպես՝ *Մնացական, Մացակ, Մացո, Մնաց, Ցական:*

16. Նշե՛ք *Գրիգոր, Հովհաննես, Դավիթ, Տրդատ, Խոսրով, Մարիամ* անուններով պատմական նշանավոր անձանց ամբողջական անվանումները:

Գյումրու Սուրբ Նշան եկեղեցի

Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը

Հատուկ անունները լինում են երկու տեսակ՝ **պարզ** և **բաղադրյալ:**

Մեկ բառից կազմված հատուկ անունը պարզ է, ինչպես՝ **Գառնիկ, Ապարան:**

Մեկից ավելի բառերից կազմված հատուկ անունը բաղադրյալ է, ինչպես՝ **Տավրոսյան լեռնաշղթա, Մաքևոսյան Արփինե, Դավիթ Անհաղթ:**

Բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները սկսվում են մեծատառով.

Ա **Պետությունների պաշտոնական անուններում.** օրինակ՝ Նիդեռլանդների Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Արաբական Միացյալ Էմիրություններ (Ամիրայություններ) և այլն:

Ի՞նչ գիտես քաղաք-պետությունների մասին, տվյալ դեպքում՝ Մոնակոյի:

Բ **Բաղադրյալ անձնանուններում, ազգանուններում, մականուններում և ծածկանուններում,** օրինակ՝ Եղիշե Աբգարի Սողոմոնյան (Եղիշե Չարենց), Ջորջ Նոել Գորդոն Բայրոն, Սալվադոր Դալի, Նար-Դոս, Մխիթար Սպարապետ, Առյուծաձև Մեր, Մայր Թերեզա, Քաջ Նազար և այլն:

Մոնակոյի Իշխանություն

Գ **Բոլոր բաղադրյալ աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝**
- ***բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են,*** օրինակ՝ Արփա-Սևան, Դոնի Ռոստով, Մայնի Ֆրանկֆուրտ և այլն,

- ***հասարակ անուն լրացումը նախադաս է,*** օրինակ՝ Արևելյան Եփրատ, Բարձր Հայք, Նոր Արեշ, Հին Հունաստան, Հին Հռոմ և այլն,
- ***երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը՝ նաև հատուկ), բայց փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ,*** օրինակ՝ Հեռավոր Արևելք (երկրամաս), Հայկական Պար (լեռնաշղթա), Ծիր Կաթին (աստղակույտ), Հայկ, Թռչող Ձուկ, Հյուսիսային Թագ, Դրախտային Թռչուն, Փոքր Առյուծ, Մողես, Զոհասեղան, Բերենիկեի Գես, Որսկան Շներ, Փոքր Արջ (համաստեղություններ):

Հայկի համաստեղություն

17. Լրացրո՛ւ այդ ցանկը դպրոցական դասագրքերից, համացանցից:

Դ Հոգևոր-պատմամշակութային հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են. օրինակ՝ Անգղա Սուրբ Նշան, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ և այլն:

18. Դասարանում պատմի՛ր Մայր Թերեզայի կենսագրությունը և ներկայացրո՛ւ նրա թևավոր խոսքերից՝ ուշադրություն դարձնելով բանավոր խոսքիդ:

Մայր Թերեզայի նման գործունեություն ծավալած ուրիշ ո՞ւմ գիտես:

19. Համեմատի՛ր հայկական անուններով երկնային մոլորակների և Մենդելեևի քիմիական տարրերի պարբերական աղյուսակը՝ կարևորելով նաև մոլորակների անունները:

Մոլորակը	նյութը	Մենդելեևի պարբերական աղյուսակ		
Արեգակ	ոսկի	79	Au	79
Լուսին	արծաթ	47/57	Ag	47
Մերկուրի (Փայլածո)	սնդիկ	80/82	Hg	80
Վեներա (Լուսաբեր, Աստղիկ,Արուսյակ)	պղինձ	29/94	Cu	29
Մարս (Հրատ)	երկաթ	26/62	Fe	26
Յուպիտեր (Լուսնթագ)	անագ	50/27	Sn	50
Սատուռ/ր/ն	կապար	82	Pb	82[2]

2 Տե՛ս Գ.Կարապետյան, *Այբուբենի գաղտնիքները*, Եր., 2008, 56-57 էջեր:

Հին հունարեն ***իրիս-ծիածան*** բառից է առաջացել ***իրիդիում*** քիմիական տարրի անունը: Հայերենում ***իրիս***-ը ծաղկանուն է, որի հոմանիշն է ***հիրիկ:***

20. Տարբերակի՛ր հատուկ անունները՝ ըստ տրված խմբերի՝ 1. անուն-ազգանուն, 2. անուն-մականուն, 3. կեղծանուն, 4. տոհմանուն. *Դավիթ Անհաղթ, Բագրատունիներ, Իսահակ Նյուտոն, Կարլ Լիննեյ, Ջենով Օհան, Մխիթար Սեբաստացի, Սայաթ-Նովա, Կամսարականներ, Ալֆրեդ Նոբել, Հովհան Ոսկեբերան, Վահագն Վիշապաքաղ, Շիրվանզադե, Տորք Անգեղ, Աղբյուր Սերոբ, Դանիել Բեկ-Փիրումյան, Լեռ Կամսար, Արտաշիսյաններ, Վարդան Մամիկոնյան:*

21. Տրված բառերից ստացի՛ր հատուկ անուններ. *ֆրանսիացի, լոսանջելեսյան, միջինասիական, շվեյցարացի, խաղաղօվկիանոսյան, տերյանական, կոմիտասյան, սանկտպետերբուրգցի, գյումրեցի:*

22. Կազմի՛ր նախադասություններ՝ տրված բառերը գործածելով թե՛ որպես հասարակ, թե՛ որպես հատուկ անուններ. *նվեր, ավետիս, մարտիրոս, անդրանիկ, բուրաստան, աշտարակ, ռազմիկ, պարգև, գոռ:*

23. Դասարանը բաժանելով երեք խմբի՝ թվարկե՛ք և գրե՛ք մայրցամաքների, օվկիանոսների, ծովերի անունները: Որ խումբը տրված ժամանակում ավելի շատ հատուկ անուններ կգրի՝ օգտագործելով քարտեզն ու գրատախտակը, նա էլ կհաղթի:

Բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բառն է սկսվում մեծատառով.

Ա **Աշխարհագրական հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալն առանձին վերցրած հատուկ անուն չէ.** օրինակ՝ *Սև ծով, Բալկանյան թերակղզի, Սևանա լիճ, Հայկական բարձրավանդակ* և այլն:

Բ **Պետությունների պատմական և վարչատարածքային անվանումներում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցրած, հատուկ անուն չէ.** օրինակ՝ *Վանի նահանգ, Կիլիկիայի հայկական պետություն, Կարսի Բագրատունիների թագավորություն, Բյուզանդական կայսրություն, Հայաստանի առաջին հանրապետություն, Արարատի մարզ* և այլն:

Գ **Չակերտների մեջ առնվող ստեղծագործությունների, լրագրերի բաղադրյալ հատուկ անուններում.** օրինակ՝ *«Հին օրհնություն», «Ամբոխները խելագարված», «Գրական թերթ», «Հայոց լեզու», «Ջուր ծախող տղան»* և այլն:

- **Հիմնարկների, կուսակցությունների, կազմակերպությունների բաղադրյալ անուններում.** օրինակ՝ *«Գրանդ քենդի» ձեռնարկություն, «Հայկական ավիաուղիներ» ընկերություն, «Հանրապետություն» կուսակցություն* և այլն:

Դ **Մրցանակի կամ բարձրագույն պատվավոր կոչման, ինչպես նաև շքանշանների և մեդալների բաղադրյալ անուններում.** օրինակ՝ *ՀՀ Պետական մրցանակ, Նոբելյան մրցանակ, «Մեսրոպ Մաշտոց» շքանշան, «Մովսես Խորենացի» մեդալ//Մովսես Խորենացու անվան մեդալ, Ազգային հերոսի կոչում* և այլն:

24. **Թվարկի՛ր հինգ Ազգային հերոսի անուն՝ ներկայացնելով բանավոր նրանցից որևէ մեկի կենսագրությունը, մյուսի հերոսական մահը:**



Վիկտոր Համազասպի Համբարձումյան

Վազգեն Զավենի Սարգսյան

Գարեգին Սամվելի Պողոսյան

Ե **Համաշխարհային եզակի կազմակերպությունների բաղադրյալ անուններում.** օրինակ՝ *Միավորված ազգերի կազմակերպություն, Առևտրի համաշխարհային խորհուրդ, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա, Համաշխարհային բանկ* և այլն:

Զ **Պետական կառավարման օրենսդիր, գործադիր, դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում.** օրինակ՝ *ՀՀ Ազգային ժողով, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ, ՌԴ Պետական դումա, Համայնքների պալատ, ՀՀ Սահմանադրական դատարան* և այլն:

Է **Համաշխարհային նշանավոր անցքերի և պետական տոների բաղադրյալ անուններում.** օրինակ՝ *Հայրենական մեծ պատերազմ, Մեծ եղեռն, Հաղթանամյա պատերազմ, Անկախության օր, Գիտելիքի, գրի և դպրության օր, Սուրբ Ծննդյան տոներ (նաև՝ Ծննդյան տոներ)* և այլն:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայերը Թուրքիայում (hy.m. Wikipedia. apg)

Հայերը ժամանակակից Թուրքիայում ապրել են շատ ավելի վաղ ժամանակներից, քան այնտեղ հաստատվել է թուրքական տարրը: Իսկ Փոքր Ասիայում թուրքերի հաստատվելուց հետո հայերն Արևմտյան Հայաստանի տարածքում կազմակերպել են ազգային կյանքը, տնօրինել իրենց սեփական և հասարակական ունեցվածքը: Թուրք-հայկական մշակութային և հասարակական հարաբերությունների ընթացքում տեղի են ունեցել մշակույթների զգալի ներթափանցումներ: Սակայն Օսմանյան կայսրության ստեղծումից հետո արևմտահայության վիճակը խիստ ծանրացավ: 16-17-րդ դարերի ընթացքում երկարատև պատերազմներ տեղի ունեցան Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Արևմտյան Հայաստանը հաճախ դառնում էր ռազմական գործողությունների թատերաբեմ, որի հետևանքով քայքայվում էր նրա տնտեսությունը, մեծ զոհեր էր տալիս հայ խաղաղ բնակչությունը…

Ներկայումս Թուրքիայում բնակվում է 60-80 հազար հայ, որից 50 հազարը միայն Ստամբուլում, որտեղ կենտրոնացած է հայ կյանքը: Թուրքիայում հայ հասարակական կյանքը կազմակերպել են ազգային, մշակութային, գրական միությունները, բարեգործական ընկերությունները, որոնցից նշանավոր են Համազգայաց, Մեսրոպյան, Արարատյան, Կիլիկյան, Ազգանվեր, Հայուհյաց-ը:

Պալյանների ձեռնարկներից ավելի քան հիսունն այսօր էլ կանգուն են և զարդարում են Ստամբուլը

Ներկայումս գործում են 17 հայկական վարժարաններ, որտեղ ուսուցանվում են հայոց լեզու, կրոնի պատմություն (հայ ժողովրդի պատմության դասավանդումն արգելված է): Թուրքերենի, Թուրքիայի պատմության և աշխարհագրության ուսուցիչները պարտադիր թուրքեր են:

Թուրքիայում առաջին թատրոնի հիմնադիրը Հակոբ Վարդովյանն է, օպերայի և օպերետի ստեղծողը՝ Տիգրան Չուխաջյանը, երկար տարիներ արքունի ճարտարապետության գլխավոր դեմքերից են եղել Պալյան ընտանիքի ներկայացուցիչները, Գ. և Կ. Օտյանները՝ սուլթանների պալատական նկարիչները: Քանդակագործ Երվանդ Ոսկանը համարվում է Թուրքիայում քանդակագործության հիմնադիրը:

Թուրքիայում առաջին հայերեն պարբերականը՝ «Լրո գիրը», լույս է տեսել

1832թ-ին: Ներկայումս հրատարակվում են «Ժամանակ», «Մարմարա» օրաթերթերը, «Սուրբ Փրկիչ», «Լրաբեր», «Ակոս» պարբերականները:

Ո՞վ է եղել երկար տարիներ «Ակոս» պարբերականի խմբագիրը և ի՞նչ կարող ես պատմել նրա մասին:

Ո՞ւմ են Թուրքիայում անվանել Ստամբուլի աչք:

25. Վերևում տրված «Հայերը Թուրքիայում»-ը տեքստի ո՞ր տեսակն է:
26. Ի՞նչ փաստեր իմացար այս տեքստից:
27. Տեքստը վերարտադրի՛ր բանավոր:
28. Տեքստից դո՛ւրս գրիր բոլոր հատուկ անունները և բնութագրի՛ր դրանցից յուրաքանչյուրը՝ ըստ բաղադրյալ հատուկ անունների գրության օրենքի:
29. Արտագրի՛ր՝ մեծատառերը գրելով վերը նշված կանոնների համաձայն. ռուսաստանի դաշնություն, իրանի իսլամական հանրապետություն, իսրայելի պետություն, թուրքիայի հանրապետություն, ադրբեջանական հանրապետություն, նորքի զանգված, ծաղկունյաց լեռնաշղթա, տրդատ երրորդ, սառուցյալ օվկիանոս, լեռնարդ դա վինչի, հանրապետության հրապարակ, պակիստանի իսլամական հանրապետություն, գողթն գավառ, խաղաղության համաշխարհային խորհուրդ, բերինգի նեղուց, մխիթարյան միաբանություն, մարիանյան իջվածք:
30. Կազմի՛ր բաղադրյալ հատուկ անուններ հետևյալ բառերով. *հայրենական, հյուսիսային, փոքր, ազգային, վերին, միջին, արևմտյան:*
31. Գտի՛ր տրված բառերով կազմված պարզ և բաղադրյալ հատուկ անուններ և դրանք գործածի՛ր նախադասություններում. բարձր, զով, հովիտ, քաջ, գետ, մութ, հայ:

Օրինակ՝ *զով – Զովունի, Զովք, Զովաշեն: Զովունին մոտ է մայրաքաղաքին:*

ա) Թվարկի՛ր ազգային և կրոնական տոների անվանումներ, գրի՛ր քո տետրում և բանավոր ներկայացրո՛ւ դրանցից մեկը դասարանում:

բ) Փորձի՛ր ինքդ հորինել արական և իգական անուններ:

գ) Ծնողներիդ օգնությամբ կազմի՛ր Քեր ընտանիքի տոհմածառը՝ անունները ծառի ճյուղերի վրա գրելով ըստ սերնդի:

դ) Օգտվելով Հր. Աճառյանի հայոց անձնանունների բառարանից՝ փորձի՛ր բացատրել քո ընտանիքի անդամների անունների իմաստները:

ԱՆՁՆԱՆԻՇ ԵՎ ԻՐԱՆԻՇ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ



Գոյականը ցույց է տալիս **անձ** և **իր**:

♦ **Անձնանիշ** գոյականներն են՝

• **մարդկանց հատուկ և հասարակ անունները, որոնք պատասխանում են *ո՞վ* հարցին՝** *Ազարիա, թարգմանչուհի, համայնքապետ, դաստիարակ, ներկայացուցիչ, հյուպատոս, ամուսին, մորաքույր, գրագիր, նոտար* և այլն,

• **հավաքական առարկաները, որոնք պատասխանում են *ո՞վ, հարցերին՝*** *ժողովուրդ, բազմություն, զորք, ամբոխ, ուսանողություն, ցեղ, տոհմ, ազգ, կաթնեղեն, բանջարեղեն* և այլն:

32. **Կազմի՛ր նախադասություններ** *զորք, ամբոխ, ընդեղեն* **հավաքական գոյականներով:**

Ո՞ր բառին նախապատվություն կտաս՝ *օֆի՞ս,* **թե՞** *գրասենյակ*: **Ինչո՞ւ:**

♦ **Իրանիշ** են մնացած բոլոր գոյականները, որոնք պատասխանում են ***ի՞նչ*** հարցին՝ *թարթիչ, հովհար, սերկևլենի, արծաթ, մասունք, փողկապ, ծոցագրպան, անկյուն* և այլն:

Իրանիշ գոյականները իմաստային ամենալայն ընդգրկումն ունեն: Բացի վերոնշյալ իրանիշ գոյականներից, կարելի է առանձնացնել **իրանիշ** կամ պայմանականորեն ասել **ոչ անձ** ցույց տվող գոյականների խմբեր, որոնք լայն առումով դարձյալ իրանիշ պետք է կոչել՝ այդ խմբերում առանձնացնելով՝

• **շնչավոր, բայց ոչ անձ** ցույց տվող առարկաները՝ *ամեոբա, կրիա, սահնօձ, շնագայլ, եղջերու, բու, կատվաձագ, արծիվ, կոբրա, սարյակ* և այլն,

• **գաղափար, զգացմունք ցույց տվող առարկաներ՝** *բարեկամություն, սեր, իրավունք, արհամարհանք, վիշտ, ցնծություն, անձկություն* և այլն,

• **երևույթ (հասարակական, բնության, սոցիալ-տնտեսական), իրավիճակ ցույց տվող առարկաներ՝** *պատերազմ, ցույց, կարկուտ, ձնաբուք, մրրիկ, հարսանիք, սով, ավտովթար,* և այլն:

♦ **Կազմակերպությունների, հիմնարկների, կուսակցությունների անուններն ու անվանումները՝** *նախարարություն, ընկերություն (ձեռնարկություն իմաստով), մարզընկերություն, մարզ, քաղաքապետարան, համայնք* և այլն:

♦ **Աշխարհագրական անուններ՝** *Հայաստանի Հանրապետություն, Ստեփանակերտ, Գետիկավանք, Ֆիլիպինյան կղզիներ, Նիագարա ջրվեժ, Բալթիկ ծով, Միջին Ասիա, Ս. Էջմիածին* և այլն:

33. Որոշի՛ր անձ և իր ցույց տվող գոյականները և դո՛ւրս գրիր տարբեր սյունակներում:

1. Դաղլիի ծննդյան օրն էր: Հարրին դանդաղ բարձրացավ անկողնուց և սկսեց գուլպաները փնտրել: Երբ հագավ, իջավ խոհանոց, որի սեղանը հազիվ էր երևում Դաղլիի ծննդյան նվերների տակ: Հավանաբար նա ստացել էր իր ուզած նոր համակարգիչը՝ չհաշված երկրորդ հեռուստացույցն ու մարզական հեծանիվը: Հարրիի համար հանելուկ մնաց, թե գեր Դաղլիի ինչի՞ն էր պետք այդ հեծանիվը:
2. Մեքենաման վարելիս քեռի Վեռնոնը բողոքում էր կնոջը: Բողոքում էր գործընկերներից, Հարրիից, բանկից և կրկին Հարրիից:
   Ահա նրա սիրած թեմաներից մի քանիսը: Այս առավոտ ընտրել էր մոտոցիկլները.
   - Մոլագարների պես ոռնալով՝ անցնում են, դեղնակտո՛ւց խուլիգաններ,- ասաց նա, երբ մի մոտոցիկլ իրենից առաջ անցավ:
   - Երազիս մոտոցիկլ էի տեսել,- հանկարծ հիշելով՝ ասաց Հարրին,- օդով թռչում էր: Ջ. Ռոուլինգ

34.* Հետևյալ իրանիշ գոյականները դասակարգի՛ր՝ ըստ տրված իմաստային խմբերի՝

1. կենդանի, 2. թռչուն, 3. բույս, 4. բանջարեղեն, 5. կենդանիների դասեր, 6. թռչունների դասեր, 7. բույսերի դասեր, 8. նյութերի տեսակներ:

Ալկալիներ, արագիլանմաններ, արտույտ, կակաղուներ, բադրիջան, բամիա, բողկ, գազար, կաթնասուններ, թթուներ, ինձ, ածխաջրեր, կատվազգիներ, կեռնեխ, սարյակ, կրծողներ, կատվաղաղձ, հեպարդ, բվազգիներ, կռունկ, հոնազգիներ, մուֆլոն, նեխուրազգիներ, արծիվ, կոլիբրիներ, ձագախոտ, սուսամբար, պտերանմաններ, կակղամորթներ, թևոտանիներ, փասիան, ուրց:

ԱՆԵԿԴՈՏ

- Արե՛ն, մի շնչավոր առարկա ասա՛,- հարցրեց ուսուցչուհին:
- Էծ,- պատասխանեց Արենը:

Հոգոց հանելով՝ ուսուցչուհին շարունակեց.

- Հիմա մի անշո՛ւնչ առարկա ասա:
- Սատկած էծ,- պատասխանեց Արենը ինքնագոհ:

Բառերի շտեմարան

Հավ: Հավազգիների ընտանիքին պատկանող թռչունի այս անվանումը մեր հին լեզվում՝ գրաբարում, նշանակում էր ընդհանրապես **թռչուն**. ահա թե ինչու **հավ** բառով բաղադրված թռչունների անուններ մեր լեզվում շատ կան՝ ***դշխոյահավ, դրախտահավ, թանձրահավ, խոլահավ, ծովահավ, հոլիկահավ, մարգահավ, միրհավ, հնդկահավ, մրրկահավ, մոշահավ, մորահավ, ջրահավ, քաջահավ, հավալուսն (հավալուսան, հավալուսնիկ, փորահավ)*** և այլն: Այդ ընդհանուր «թռչուն» իմաստը պահել է միայն ***հավք*** բառը, ինչպես՝ Գարունը եկավ, **հավքերը** եկան:

հավալուսն



կոլիբրի

Ի՞նչ գիտեք դուք գույների ու գունանունների մասին:

Գույների մի մասը նախ և առաջ հանդես են գալիս որպես գոյական: Դրանք սպեկտրի հիմնական գույներն են՝ ***կապույտը, կարմիրը, դեղինը:*** Այս գույները խառնելով՝ կարելի է ստանալ ցանկացած գույն, բայց այլ գույներ խառնելով՝ երբեք չենք ստանա այս գույներից և ոչ մեկը:

Կապույտ 1. Մանուշակագույնի և կանաչի միջինը: 2. Լեղակի գույնը: 3.Երկինք: 4.Կապույտ երևացող տարածություն:

Կարմիր 1. Արյան գույնը, կարմրագույնը:

Դեղին 1. Նարնջագույնի և կանաչի միջինը: 2. Այդ գույնի ներկ: 3. Ոսկի: 4.Դեղնամորթ:

Բացի սրանցից, որպես գոյական են հանդես գալիս նաև ***սև, սպիտակ, կանաչ, գորշ*** և այլ գույներ:

Ի՞նչ է սպեկտրը. բացատրի՛ր ֆիզիկայի ուսուցչիդ օգնությամբ:

35. **Կազմի՛ր տրված** *սև, սպիտակ, կանաչ* **բառերի գոյական նշանակությամբ նախադասություններ տարբեր հոլովներով:**
Ո՞ր խումբը ավելի շատ ծաղկանուն կարող է որոշակի ժամանակում անգիր ասել. փորձե՛ք ձեր հիշողությունը: Ծաղիկները տե՛ս համացանցում:

Աբեղախոտ, շահպրակ, մեղվամուշկ, տերեփուկ, խոնդատ, եղերդակ, քրքում, օրոճ, ոսկեղեգ, խատուտիկ, խոլորձ, մատիտեղ, ծոքոր, օշինդր, գինարբ, կաղշնակ, լերդուկ, սրոհունդ, նարդոս, մրտավարդ, շուշան, կուժկոտրուկ, խաշխաշ, նունուֆար, խավարծիլ, սուսամբար, մարենփուշ, անիծխոտ, կանթեղախոտ, հողմավարդ, հովտաշուշան, հարսնածաղիկ, ծիծեռնախոտ, ճագախոտ, ղեղնածաղիկ, հողմածաղիկ, քրիստոսածաղիկ:

Կազմի՛ր գեղարվեստական տեքստ՝ գործածելով տարբեր ծաղկանուններ: Քեզ դուր եկած ծաղիկներից որևէ մեկը նկարի՛ր:

Լուս.՝ հեղինակային. ՝զանգակածաղիկ

Լուս.՝ հեղինակային. օձի ճմերուկ՝ կորաք

1. **Անվանե՛ք** *Անվանե՛ք հաց (լավաշ)* **բառի հոմանիշները տարբեր լեզուներում. ով ավելի շատ անվանումներ գրեց: Գնահատում է ուսուցիչը:**
2. **Դիտե՛ք տեսանյութը տարբեր ժողովուրդների հաց թխելու արարողության մասին և բանավոր արտահայտե՛ք ձեր կարծիքը:**

«Ոչ մի բանալի չկա երջանկության համար. դուռը միշտ բաց է»:
Մայր Թերեզա

ԳՈՅԱԿԱՆԻ ԹԻՎԸ

Գոյականի թիվը ցույց է տալիս առարկաների քանակ:

Գոյականներն ունեն երկու թիվ՝ **եզակի** և **հոգնակի:**

Եզակին ցույց է տալիս մեկ առարկա, օրինակ՝ **աղջիկ, այգի, գիրք, սեղան:** Հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ, օրինակ՝ **աղջիկներ, այգիներ, գրքեր, սեղաններ:**



Տրված նկարներից որոնցո՞ւմ են առարկաները եզակի, որոնցո՞ւմ՝ հոգնակի:

Գոյականների հոգնակի թիվը կազմվում է՝ եզակիին ավելացնելով **-եր** կամ **-ներ** վերջավորություն:

- Միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-եր**, իսկ բազմավանկ բառերինը՝ **-ներ** վերջավորությամբ:

Ն-ով վերջացող բազմավանկ բառերը հոգնակի թվում ունենում են կրկնակի **ն**, օրինակ՝ **պատճեն-պատճեններ, վայրկյան-վայրկյաններ:**

Կան գոյականներ, որոնց հոգնակիի կազմությունը շեղվում է հիշյալ կանոնից:

ա) Այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ բառ է, կարող են ստանալ **-եր** կամ **-ներ** վերջավորությունը:

Եթե վերջին միավանկ բաղադրիչը գոյական է և իր իմաստը պահում է անփոփոխ, բառն ստանում է **-եր** վերջավորությունը: Օրինակ՝ **արոտավայր** (արոտի վայր) – **արոտավայրեր, ոտնաձայն** (ոտքի ձայն) – **ոտնաձայներ, վերնատուն** (վերին տուն) – **վերնատներ, նստացույց** (նստած ցույց) – **նստացույցեր, հորատանցք** (հորատման անցք) – **հորատանցքեր:**

Եթե վերջին միավանկ բաղադրիչը բայի արմատ է, կամ այն իր բառային իմաստը չի պահում, բարդությունն ստանում է **-ներ** վերջավորությունը: Օրինակ՝ **վիպագիր** (վեպ գրող) – **վիպագիրներ, ժամացույց** (ժամ ցույց տվող) – **ժամացույցներ, մեծատուն** (մեծ տուն ունեցող = հարուստ) – **մեծատուններ, նրբանցք** (նեղ փողոց) – **նրբանցքներ:**

Պետ և **նիշ** բաղադրիչներով ավարտվող բառերի հոգնակին նախընտրելի է կազմել **-ներ** վերջավորությամբ, օրինակ՝ **թաղապետներ, հարյուրապետներ, մարզպետներ, դրոշմանիշներ, խորհրդանիշներ** և այլն:

բ) Մի շարք միավանկ բառեր ստանում են **-ներ** վերջավորություն՝ **բեռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, ձուկ, մուկ, նուռ, մատ, հարս** և այլն, ինչպես՝ **գառներ, դռներ, լեռներ** և այլն: Սրանք հին հայերենում՝ գրաբարում, վերջացել են **-ն-**ով (բեռ**ն**, գառ**ն**, մատ**ն** և այլն), որը եզակի ուղղականում ընկել է, իսկ հոգնակիում պահպանվել է և միացել **-եր** վերջավորությանը:

- Բացառություն է նաև **ռուս** բառի հոգնակին՝ **ռուսներ**:
- **Ոտ** և **ձեռ** բառերը որոշ չափով խոսակցական-բարբառային երանգ ունեն, գրական ճիշտ ձևերն են **ոտք, ձեռք,** որոնց հոգնակին կանոնավոր կերպով լինում է **ոտքեր, ձեռքեր**:

գ) Եթե մեկուկեսվանկանի բառերում գաղտնավանկը վերջին վանկն է, բառը ստանում է **-եր**, իսկ եթե առաջինն է, բառը ստանում է **-ներ** վերջավորություն (այդպես նաև ***սպ-, սկ-, շտ-, ստ-*** և նման հնչյունակապակցություններով սկսվող բառերում):

ա.	**բ.**	**գ.**
-եր	**-ներ**	**-ներ**
աստղ-աստղեր	բրիչ-բրիչներ	սպա-սպաներ
արկղ-արկղեր	գնդակ-գնդակներ	սպի-սպիներ
դուստր-դուստրեր	գնորդ-գնորդներ	սկյուռ-սկյուռներ
եզր-եզրեր	թրթուր-թրթուրներ	շտաբ-շտաբներ
կայսր-կայսրեր	խրատ-խրատներ	սպունգ-սպունգներ
սանր-սանրեր	հրթիռ-հրթիռներ	սպոր-սպորներ

դ) **Մարդ** և **կին** գոյականների հոգնակին լինում է՝ **մարդիկ, կանայք:**

ե) **Տիկին, պարոն** և **անձ** բառերը հոգնակի են կազմում երկու ձևով՝ **տիկիններ-տիկնայք, պարոններ-պարոնայք, անձեր-անձինք:**

զ) **Ցի** ածանցով կազմված գոյականները երբեմն հոգնակիում ստանում են **-ք** վերջավորությունը, ինչպես՝ **գյուղացիք, վրացիք** և այլն: Արդի գրական լեզվի համար այդ ձևերն ընդունելի չեն, քանի որ դրանք ժողովրդախոսակցական ձևեր են. ճիշտ են **գյուղացիներ, վրացիներ** ձևերը:

36. Տարբեր կանոնների պատկանող հոգնակի ձևերով կազմի՛ր նախադասություններ:

37. **Հոգնակիի կազմության դեպքում հնչյունափոխության ի՞նչ օրինաչափություններ ես նկատում հետևյալ բառերում:**

- *Լրագիր-լրագրեր, ծրագիր-ծրագրեր, դասագիրք-դասագրքեր, մրգաջուր-մրգաջրեր, ծառաբուն-ծառաբներ, դեղատուն-դեղատներ, հացատուն-հացատներ:*
- *Վիպագիր-վիպագիրներ, զինակիր-զինակիրներ, մեծատուն-մեծատուններ, վաչկատուն (քոչվոր)-վաչկատուններ:*
- *ձու-ձվեր, լու-լվեր, դուռ-դռներ, քուրդ-քրդեր, սիրտ-սրտեր, ջիղ-ջղեր:*

38. **1. Դո՛ւրս գրիր հոգնակի թվով գործածված գոյականները և փակագծում նշի՛ր, թե որը հոգնակիի ի՛նչ վերջավորություն է ստացել: 2. Լրացրո՛ւ բաց թողած տառերը:** Եր-անի ու հարակից շրջանների գարունը կարճատև է: Չնայած մայիսը դեռ վա-ճանին չէր հասել, բայց արևի ճառագայթներն արդեն բոցկլտուն նետերի նման այրում էին շրջապատը:

Արարատյան դաշտում հասունացող բույսերը հևում էին շնչահեղ-ի նման: Պապա-ում էին և՛ բույսերը, և՛ մի-ատները, և՛ այգիների ծառերին թառած թռչունները, ու եթե այդ պահին նրանք մարդկային լեզու առնեին, նրանց առաջին խոսքը պետք է լիներ՝ *ջո՛ւր:*

Հեռուներում նիրհում էին բարձրաբերձ լեռները. նրանց շարքում միայն Մասիսի վերամբար- կատարն էր, որ անհաղոր-ակից էր տապին: Նրա սպիտակ գագաթը պեծպեծին էր տալիս արևի ճառագայթների ներքո:

Ցերեկվա այն պահն էր, երբ դաշտի բոլոր աշխատողները քաշվել էին նոր քաղած խոտերի դեզերի ստվերների տակ՝ միջ-ոեի հանգիստը վայելելու: Միայն մոծակներն էին, որոնք խմբերով ոժվժում էին այս ու այն կողմ և իրենց սուր խայթոցներով անհանգստացնում աշխատավորներին: (Հ. Ս.)

39. **Կազմի՛ր տրված բառերի հոգնակին: Բացատրի՛ր, թե ինչու -*եր* և ինչու -*ներ* վերջավորությունն են ստանում:**

Ուղեբեռ, ցուրտ, փունջ, անձրև, անձրևորդ, գավիթ, ակումբ, արձակուրդ, կաթնասուն, հողագործ, ազգանուն, ձյուն, ձեռագիր, նստացույց, ֆիդայի, մուլտֆիլմ, պատճեն, հակինթ, թի, այգեպան, դարուփոս, արկղ, վիպասան, հայրենասեր, նուռ, թռչուն, սյունաշար, հարս, պատշար, հնչյուն, ժամացույց, իտալացի, եղնիկ, թոնրատուն, ժամապահ, մատենագիր, սկյուռ:

Անեզական գոյականներ

♦ Կան գոյականներ, որոնք չունեն եզակի թիվ. դրանք միշտ հանդես են գալիս հոգնակի թվով, օրինակ՝

Ալպեր	Անդեր	Գրիգորենք
Հիմալայներ	Կարպատներ	Վարդանանք
Կորդիլիերներ	Նիդեռլանդներ	Վանդունք
Ֆիլիպիններ	Ապենիններ	Սահակենք

♦ Անեզական են նաև բույսերի, կենդանիների, քիմիական նյութերի դասերն ու կարգերը ցույց տվող գոյականները, օրինակ՝

ալկալոիդներ	վարդազգիներ	սագազգիներ
աղածիններ	կակտուսազգիներ	հոդվածոտանիներ

Անհոգնական գոյականներ

♦ Կան գոյականներ, որոնք չունեն հոգնակի թիվ և հանդես են գալիս եզակի թվով: Դրանք ունեն իմաստային տարբեր խմբեր:

խմոր	թախիծ	անձրև	ուսանողություն	մրգեղեն
գինի	վիշտ	փոթորիկ	գյուղացիություն	ամանեղեն
մածուն	սեր	քամի	աշակերտություն	ոսկեղեն
ջուր	կամք	շոգ	ուրախություն	զարդեղեն

հագնելիք	սոցիալիզմ	ֆիզիկա	Հովհաննես	քրիստոնեություն
ուտելիք	ռեալիզմ	մաթեմատիկա	Ալբանիա	սրտաբանություն
խմելիք	դարվինիզմ	հանրահաշիվ	Տավրոս	դարբնություն

Անհոգնական հասարակ գոյականները կարող են գործածվել հոգնակի թվով, եթե՝

- նշանակում են նյութի տարբեր տեսակներ, ինչպես՝ Ֆրանսիական **գինիները** մեծ պահանջարկ ունեն:
- երևույթը տևական է, կրկնվում է, կամ բառը նշում է մեծ քանակ, ինչպես՝ **Շոգերի** պատճառով փախչում եմ քաղաքից: **Անձրևներից** Աղստևի **ջրերը** վարարել են:

40. Կազմի՛ր տրված հատուկ անունների հոգնակին և հետևի՛ր ուղղագրությանը:

Արշակունի	Կամսարական	Արամյան	Աքեմենյան
Երվանդունի	Բագրատունի	Աբրահամյան	Սելևկյան
Ռուբինյան	Մամիկոնյան	Գալստյան	Արտաշիսյան

Վասակ «Ջիփ»
Մերուժան «Կամազ»

41. **Առանձնացրո՛ւ հոգնակիների հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը՝ փակագծերում գրելով եզակին.** տուֆեր, փռեր, ռուսներ, տուրքեր, բրդեր, բներ, ռունգեր, գնդեր, հունդեր, շուրթեր, գներ, բուժայցեր, մրգեր, թվեր, կամուրջներ, թփեր, խութեր, խրձեր, նռներ, կրծքեր, ձկներ, վիրաբույժներ:

42.* **Կազմի՛ր հոգնակի թվով բարդ բառեր՝ տրված բառերը գործածելով իբրև վերջնաբաղադրիչ՝.** ծառ, քույր, կետ, ցույց, անցք, շար, երթ, ոսկր, եզր[3]:
Օրինակ՝ **շար** – *հարցաշարեր, մրցաշարեր, պատշարներ:*

Թվարկե՛ք մարզական խաղերի տեսակներ՝ կազմելով այդ խաղերի մարզիկների անվանումների հոգնակի ձևերը: Օգտագործե՛ք գրատախտակը:

Բառերի շտեմարան

Մեր ամսանունները անհոգնական գոյականներ են:

Ներկայումս աշխարհի շատ ժողովուրդներ գործածում են հռոմեական (լատինական) ծագում ունեցող ամսանունները: Մինչև Հուլիոս Կեսարը հռոմեացիները տարվա առաջին ամիսը համարում էին մարտը:

Եթե մինչև սեպտեմբեր հռոմեացիները ամիսները կոչում էին աստվածների կամ կայսրերի անուններով, ապա, սեպտեմբերից սկսած, ամիսները մնացին անանուն: Դրանք ընդամենը համարակալվեցին և նշանակում են՝

սեպտեմբեր – «յոթերորդ ամիս»,
հոկտեմբեր – «ութերորդ ամիս»,
նոյեմբեր – «իններորդ ամիս»,
դեկտեմբեր – «տասներորդ ամիս»:

Ըստ Պ. Բեղիրյանի

43. **Համեմատի՛ր այս ամսանունները քո իմացած օտար լեզուների նույն ամսանունների հետ. հնչյունական ի՞նչ տարբերություններ ես նկատում:**

3 Տե՛ս Փ. Մեյթիխանյան, «Հայերենի ուղղագրական նոր բառարան», ԵՊՀ հրտկչ., Եր. 2013թ.:

ԳՈՅԱԿԱՆԻ ՈՐՈՇՅԱԼ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Խոսքի մեջ գոյականը կարող է գործածվել որոշյալ կամ անորոշ առումով:

♦ **Որոշյալ առումը** ցույց է տալիս, որ առարկան արդեն հայտնի, ծանոթ է խոսողին կամ լսողին: Որոշյալ առումով գործածվող գոյականներն ստանում են որոշիչ հոդ՝ **-ը** կամ **-ն**:

Ընդհանրապես **-ը** հոդ ստանում են բաղաձայնով վերջացող բառերը բաղաձայնով (նաև ձայնավորով) սկսվող բառերից առաջ, ինչպես՝ *Աշակերտը* կարդում է, *Կանգառը* արգելվում է, իսկ ձայնավորով վերջացող բառերը ստանում են **-ն** հոդ. ինչպես՝ *Առուն, այգին* նրա առջև էին:

ճիշտ	սխալ
Արամը գնաց:	~~Արամն գնաց:~~
Արամը ասաց:	~~Արամն եկավ:~~
Արամն ասաց:	~~Արամն որոշեց:~~

♦ Գոյականի **անորոշ առումը** ցույց է տալիս խոսողին կամ լսողին անծանոթ առարկա կամ առարկա ընդհանրապես: Անորոշ առումով գործածվող գոյականները հոդ չեն ստանում: Օրինակ՝ Աշակերտը *գիրք* է կարդում նախադասության մեջ *գիրք* գոյականը գործածված է անորոշ առումով և հոդ չի ստացել: Անորոշ առումով գործածվելիս գոյականի հետ կարող են դրվել *մի, ինչ-որ, որևէ* և նման բառեր, որոնք շեշտում են գոյականի անորոշ լինելը: Օրինակ՝ Երեխաները ճանապարհին հանդիպեցին *մի անծանոթի* նախադասության մեջ *անծանոթ*-ը գործածվել է անորոշ առումով՝ *մի* բառի հետ:



Ո՞ր նկարում է կատուն անորոշ, որում՝ որոշյալ:

44. Դո՛ւրս գրիր գոյական անունները և յուրաքանչյուրի դիմաց նշի՛ր՝ ինչ առումով է գործածվել և ինչ հոդ է ստացել:

Սրընթաց պախրա՞, թե՞ գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գլորեց ոտով...
Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թե՞ ոչխարների թույլ մնչոցն էր այն.
Սաքոյին թվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վրա,
Կանգնեց ու լռեց...
Ականջ դրավ նա... (Հ. Թ.)

45.* Արտագրի՛ր՝ փակագծերի մեջ տրված բառերը գործածելով որոշյալ կամ անորոշ առումով:

Արցախի Սմբատ (նահապետ) Տիգրան (արքա) երկու հարյուր նժույգ

ուղարկեց: Նժույգավոր դեսպանի և Տիգրան արքայի (զրույց) մասնակցեց միայն Բագրատ (իշխան):

– Եվ ի՞նչ երկիր է ձեր (Արցախ),– (լռություն) խախտում է (արքա),– ովքե՞ր են ապրում ձեզ մոտ:

– Արքա՛, (Արցախ) առանձին երկիր չէ, նա Հայքի մի (մաս) է, որտեղ ապրում են միայն հայեր,– պատասխանեց (դեսպան): – Արցախի վրա դարեր ի վեր իշխել են (հայեր): Շատ հորդառատ գետեր ունի (Արցախ), որոնցից (ամենամեծ) Տրտուն է՝ Արցախի (Արաքս): Աղբյուրների երկիր է Արցախը: Մեր (հող), արքա՛, հարուստ է ամեն ինչով, իսկ ամենից շատ՝ հայրենասերներով: (Հ. Խ.)

Լսենք մեծերին

Արա՛ այսօր այն, ինչ մյուսները չեն ցանկանում անել: Վաղը կապրես այնպես, ինչպես մյուսները չեն կարողանում: Ջարեդ Լետո

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

Նախադասության մեջ գոյականները կատարում են զանազան պաշտոններ, այսինքն՝ հանդես են գալիս որպես նախադասության այլևայլ անդամներ՝ ենթակա, ստորոգյալի մաս, լրացում: Նախադասության այս կամ այն անդամը լինելու համար գոյականը ենթարկվում է տարբեր ձևափոխությունների: Օրինակ՝ **Ղողանջն արևի գույնն** ուներ, մաղմղում էր **ճամփին, լեռների** վրա, և **օրը** պռնկեպռունկ լցված էր դեղին **զրնգոցով:** (Մ. Գ.)

Ընդգծված գոյականներն ունեն տարբեր ձևեր և կատարում են տարբեր պաշտոններ:

Նախադասության մեջ գոյականի գործածության ձևերից ամեն մեկը կոչվում է հոլով, իսկ նրա բոլոր ձևափոխությունները միասին՝ հոլովում:

- Հայերենն ունի յոթ հոլով՝ **ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:**

Հոլովումը կատարվում է բառին վերջավորություններ ավելացնելով, բառի մեջ որոշ հնչյուններ փոփոխելով և կամ՝ երկուսն էլ միաժամանակ: Օրինակ՝ **լույսով** ձևի մեջ **լույս** բառին ավելացել է **-ով** վերջավորությունը, **հորից** ձևում և՛ **այ** երկհնչյունն է դարձել **-ո-**, և՛ ավելացել է **-ից** վերջավորությունը:

Գոյականները կարող են նաև ունենալ միևնույն ձևը, բայց կատարել տարբեր պաշտոններ:

Օրինակ՝ **Խնձորենին** ծաղկել է: Չորացած **խնձորենին** կտրեցին: Այս նախադասությունների մեջ **խնձորենին** բառը գործածվել է միևնույն ձևով, բայց առաջին դեպքում նա ենթակա է և ուղղական հոլովով է գործածվել, իսկ երկրորդում բայական անդամի լրացում է և դրված է հայցական հոլովով:

1 ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Երկնքում փայլում են **աստղերը:**

Արփինեն վիրավորվել էր ընկերուհու վերաբերմունքից:

Այս նախադասությունների մեջ **աստղերը** և **Արփինեն** ենթականեր են. առաջինի մեջ **աստղերը** բառը ցույց է տալիս, թե ինչերն են փայլում, իսկ երկրորդում **Արփինեն** բառը ցույց է տալիս, թե ով էր վիրավորվել: Երկու դեպքում էլ ենթակաները դրվել են ուղղական հոլովով:

Ուղղական հոլովը բառի ուղիղ, անփոփոխ ձևն է և կոչվում է նաև ուղիղ հոլով՝ ի տարբերություն մյուս հոլովների, որոնք կազմվում են զանազան փոփոխություններով և կոչվում են թեք հոլովներ:

Ուղղական հոլովը պատասխանում է **ո՞վ, ովքե՞ր** կամ **ի՞նչ(ը), ինչե՞ր(ը)** հարցերին: Օրինակ՝ Ուղտապանը նշան արեց և ուղտը չոքեց:

Հայերենում ուղղական հոլովը որևէ վերջավորություն չունի: Ուղղական հոլովով դրվում են՝

- **նախադասության ենթական**. օրինակ՝ Սև **գիշերն** իջավ իր անհայտ գահից: **Երեխան** ցրտից կուչ եկավ:
- **ստորոգյալի մաս կազմող գոյականները**. օրինակ՝ Մայրենին քնած **արծիվ** էր: Նրա աչքերը նռան **հատիկներ** էին:
- **գոյականական անդամի լրացումները**. օրինակ՝ **Բժիշկ** Զաքարյանը քննում է հիվանդին: Սիրում ենք մեր **մայրաքաղաք** Երևանը: Մեր հարևանը՝ **Հունանը,** հայտնի որսորդ է:
- **կոչականը.** օրինակ՝ **Երեխանե՛ր,** սիրեցե՛ք բնությունը: Օգնի՛ր ինձ, **եղբա՛յր:**

Իբրև ենթակա կամ ստորոգյալի մաս գործածվելիս գոյականի ուղղական հոլովը կարող է անորոշ կամ որոշյալ առումով գործածվել և համապատասխանաբար ստանալ կամ չստանալ հոդ: Օրինակ՝ Դպրոցի բակում **պարտեզ** կա: **Պարտեզը** մեծ է ու գեղեցիկ: **Արամն աշակերտ** է: **Արամը** մեր դասարանի լավագույն **աշակերտն** է:

46. Դո՛ւրս գրիր այն բոլոր գոյականները, որոնք ուղղական հոլովով են դրված. որոշի՛ր, թե նախադասության ինչ անդամ են:

Գնացքը ժայռերի ստորոտներով Արաքսին զուգահեռ շարունակում է գնալ: Ահա Կարճևանը՝ Մեղրու շրջանի այդ բարեբեր գյուղը, ուր աճում են նաև նարինջ ու կիտրոն, նուշ և թուզ: Միմյանց հաջորդող Կարճևան, Մեղրի, Ալիդարա, Նյուվադի կայարանները մեր հանրապետության հարավային եզրագիծն են: Այդ կայարանների շուրջը դու տեսնում ես շատ այգիներ՝ խաղողի, դեղձի, թզի, նուշի ծառերով, թթենու անվերջ շարքեր, խնձորուտներ ու տանձուտներ:

Այդ վայրերում դու տեսնում ես ժայռերին բարձրացված այգիներ, զարմանում, թե հայ շինականն ինչպես է մեջքով հող կրել, ժայռի ծերպերին դարավանդ սարքել, որթատունկ, թզենի աճեցրել և այժմ վայելում է քաղցրաձոր խաղողն ու շաքարից էլ անուշ թուզը: (Գ. Ա.)

Հայո՛ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՛ց հող,
Լայն աշխարհում քո գրկի մեջ ապրեմ թող: (Ս. Կ.)

47. Կազմի՛ր եզակի տրված գոյականների հոգնակիները. ե՞րբ չես կազմի հոգնակիները:

48. Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով որպես ենթակա, ստորոգյալի մաս, գոյականի լրացում և կոչական. *բանաստեղծ, հուշ, հարազատ, ոսկերիչ, հեքիաթ, Արագած, դերասան, հոգի:*

Գրի՛ր շարադրություն՝ *«Ես արդեն մեծ եմ»* **թեմայով:**

2 ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Ուսուցչի վերարկուն կախված է պատից:

Աշակերտը վերցրեց **Թումանյանի** նկարը:

Այս նախադասությունների մեջ **ուսուցչի, Թումանյանի** բառերը գոյականական անդամի լրացումներ են. առաջինը ցույց է տալիս, թե ում է պատկանում վերարկուն, իսկ երկրորդը՝ թե ում է վերաբերում նկարը, և երկուսն էլ դրված են սեռական հոլովով:

Սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում կամ վերաբերում է, որից սերում է որևէ բան:

Սեռական հոլովը պատասխանում է **ո՞ւմ** կամ **ինչի՞** հարցերին: Օրինակ՝ **Բուրգի** միջից դուրս եկավ մի երկարամորուք ծերունի: **Դժբախտության** մեջ **հույսի** դուռ է բացվում: (ԵՏԽԸ)

• Սեռական հոլովը նախադասության մեջ գործածվում է որպես գոյականական անդամի լրացում: Օրինակ՝

Եվ հեռվում ինչ-որ ուշացած **Ձիերի** դոփյուն եմ հիշում: (Հ. Ս.)

Սեռական հոլովը որոշիչ հոդ չի ստանում:

Սեռական հոլովը կազմվում է բառի ուղիղ ձևի փոփոխությամբ: Ըստ կազմության՝ սեռական հոլովը լինում է երկու տեսակ՝ **վերջավոր** և **անվերջավոր:**

♦ **Վերջավոր** է կոչվում սեռականի այն ձևը, որը կազմվում է՝ բառի ուղիղ ձևին ավելացնելով վերջավորություն և կամ ուղղականի վերջնահնչյունը փոխելով սեռականի վերջավորությամբ: Օրինակ՝ աշակերտ-**ի,** օր-**վա,** գառ-**ան,** ընկեր-**ոջ,** ամուսն-**ու,** սեռականի հոլովաձևերը կազմվել են՝ ուղղականի **աշակերտ, օր, գառ, ընկեր, ամուսին** ձևերին ավելացնելով **-ի, -վա, -ան, -ոջ, -ու** վերջավորությունները, իսկ **այգ-ու, Խաչիկեն-ց** հոլովաձևերը կազմվել են **այգի, Խաչիկենք** ձևերից՝ առաջինի **-ի** վերջնահնչյունը փոխելով **-ու** վերջավորության, և երկրորդի **-ք** վերջավորությունը փոխելով- **ց**-ի: Սեռականի վերջավոր ձևերը կազմվում են **-ի, -ու, -ան, -վա, -ոջ, -ց** վերջավորություններով, որոնք կոչվում են հոլովիչներ:

♦ **Անվերջավոր** է կոչվում սեռականի այն ձևը, որը կազմվում է բառի ներսում որևէ ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ, առանց վերջավորության:

Օրինակ՝ **եղբայր-եղբոր, տուն-տան, քաջություն-քաջության** բառերի սեռականը կազմվել է՝ առաջինում **այ** երկհնչյունը փոխելով **-ո**-ի, իսկ երկրորդում և երրորդում **ու** ձայնավորը՝ **-ա**-ի:

Սեռականի վերջավոր ձևի կազմությունը կոչվում է **արտաքին հոլովում,** իսկ անվերջավոր ձևի կազմությունը՝ **ներքին հոլովում:**

Գոյականի հոլովումը որոշվում է ըստ եզակի թվի սեռական հոլովաձևի, ինչպես՝ **ընկերոջ,** ուրեմն **ընկերների** բառը պատկանում է **-ոջ** հոլովման:

Ժամանակակից հայերենում կա վեց արտաքին և երկու ներքին հոլովում:

Արտաքին (վերջավոր) հոլովումներն են՝ ի, ու, ան, վա, ոջ, ց:

Ի հոլովման սեռականը կազմվում է՝ բառի ուղղականի ձևին ավելացնելով **-ի,** ինչպես՝ **սարի, շոգի (շոգ), ածխաթթվի, երեխայի, Վահանի, Մանուկի, մարմնի, Անիի, Սոչիի** և այլն:

Հոգնակի թվում **ի** հոլովման են ենթարկվում նաև մյուս հոլովումներին պատկանող այն բոլոր բառերը, որոնց հոգնակին կազմվում է **-եր** կամ **-ներ** վերջավորությամբ:

Ու հոլովման պատկանող բառերը բաժանվում են երկու խմբի.

- Բառեր, որոնք ուղղականում վերջանում են **ի**-ով. սեռականում բառավերջի **ի**-ն փոխվում է **ու**-ի, ինչպես՝ **այգու, սոճու, ոսկու, ապակու, բժշկուհու, ուռենու, գյուղացու, հայելու, ծերունու, գինու, պատանու** և այլն:
- Բառեր, որոնց սեռականը կազմվում է՝ ուղղականին ավելացնելով **ու** հոլովիչը, ինչպես՝ **մարդու, ամուսնու, Աստծու, անկողնու, ձիու, ապրելու** և այլն:

Ան հոլովման սեռականը կազմվում է՝ ուղղականին ավելացնելով **ան** վերջավորությունը, ինչպես՝ **գարնան, ամռան, աշնան, ձմռան, ծագման, ուսման, շարժման, երդման, մանկան, լեռան, թռռան, բռան, բեռան, դռան, նռան** և այլն:

Վա հոլովման սեռականը կազմվում է՝ ուղղականի ձևին ավելացնելով **վա** վերջավորությունը, ինչպես՝ **այսօրվա, կեսօրվա, տարվա, գիշերվա, ժամվա, շաբաթվա, առավոտվա, վաղվա, երեկվա, ամսվա** և այլն:

Ոջ հոլովման ենթարկվում են **քույր, ընկեր, կին, աներ, տիկին, տեր** բառերը, ինչպես՝ **կնոջ, քրոջ, ընկերոջ, աներոջ, տիկնոջ, տիրոջ** և այլն:

Ց հոլովման պատկանում են **անք, ենք, ոնք, ունք** ածանցներով կազմված հոգնակիի իմաստ ունեցող բառերը, ինչպես՝ **Հակոբենք – Հակոբենց** և այլն:

Ներքին (անվերջավոր) հոլովումներն են՝ ա, ո:

Ա հոլովման սեռականը կազմվում է՝ ուղղական հոլովի վերջնավանկի **ու** ձայնավորը դարձնելով **ա**, ինչպես՝ **ուրախության, անվան, դերանվան, անկյան, արյան, սյան, ձյան, շան** և այլն:

Ո հոլովման սեռականը կազմվում է՝ բառի **այ** երկհնչյունը դարձնելով **ո**, ինչպես՝ **հոր, մոր, եղբոր, հորեղբոր, վանահոր, նախամոր** և այլն:

Այլաձև հոլովումներ

Կան մի քանի բառեր, որոնց հոլովումը շեղվում է ընդհանուր կանոններից:

Աստված-Աստծու (նաև՝ **Աստծո**)	աղջիկ-**աղջկա**	գալուստ-գալստի-**գալստյան**
լույս-լույսի-**լուսո**	դուստր-**դստեր**	ծնունդ-ծննդի-**ծննդյան**
հույս-հույսի-**հուսո**	կայսր-**կայսեր**	հանգիստ-հանգստի-**հանգստյան**
սուգ-սգի-**սգո**	(նաև՝ **կայսրի**)	կորուստ-կորստի-**կորստյան**
սեր-**սիրո, սիրու/ն/**	մահ-**մահվան**	փախուստ-փախստի-**փախստյան**
	(նաև՝ **մահի, մահու**)	

Զուգաձև հոլովման են ենթարկվում միաժամանակ երկու հոլովման

գոյականները՝ ինչպես՝ *լույսի-լուսո, ձյան-ձյունի, մահի-մահու, գիշերվա-գիշերի, անկողնի-անկողնու* **և այլն:**

49. **Դո՛ւրս գրիր սեռական հոլովով գործածված բոլոր գոյականները առանձին սյունակներում՝ ըստ արտաքին ու ներքին հոլովումների: Լրացրո՛ւ բաց թողած տառերը:**

Տոնո-ի տունը դար-ել էր մի տեսակ հավաքատեղի. գյուղի ծերերի սիրած վայրը, ուր ամբող- օրը նստած խոսում էին օրվա եղանակի, բերքի, հարկերի, կառավարության արտաքին և ներքին քաղաքականության մասին: Տոնոն՝ գյուղի ամենասիրված ու հարգված մարդը, մագնիսի պես քաշում էր բոլորին: Շրջանում չկար մեկը, որ չճանաչեր նրան, չա-նածեր նրանից:

Այսօր էլ, երբ բոլորին տանջում էր չարաբաստիկ լուրերի տեղատարափը, ամենից շատ մտահո-ված էր Տոնոն: Յուրաքանչյուր նոր լուր նա ընդունում էր հո-ու ցավով, տանջվում, տառապում, բայց աշխատում էր մյուսներին հանգստացնել: Ահա նորից ամեն օրվա պես տանիք ելան գյուղի մի քանի ծերունիներ: Նրանք բոլորն էլ, կարծես ինչ-որ ծանր բեռան տակ կած, կորացել էին, կուչ եկել: (Ա. Խ.)

50. **Տրված բառերին ավելացրո՛ւ** *ո՞ւմ* **և** *ինչի՞* **հարցերին պատասխանող գոյականներ և ստացված կապակցություններով կազմի՛ր նախադասություններ:**
Կանչ, ստորոտ, կտուր, վերաբերմունք, դիրք, մեքենա: Օրինակ՝ *տան (ինչի՞) կտուր – Տան կտուրը ծածկված էր կարմիր կղմինդրով:*

51. **1. Արտագրի՛ր՝ փակագծերի մեջ տրված բառերը դնելով սեռական հոլովով:**
2. Կետերի փոխարեն գրի՛ր բաց թողած տառերը:

Սիրում է Արամայիսը (աշուն) բազմազան երան...ները: Փռվել է գյուղը (լեռ) թեք լան...ին, այգիների մե...: (Հովիտ) մի...ով անցնում է գետակը, որի ջուրը հստակ է բյուրեղի պես: Քայլում է Արամայիսը (այգի) միջով ու հիշում (մանկություն) օրերը: Ահա իրենց այգին:

Այստեղ՝ (առու) եզրին, նա շատ է խաղացել: Նա, (հայր) ձե...քը բռնած, գալիս էր այգի և մնում մինչև ուշ երեկո: (Մայր) մասին նա շատ աղոտ հիշողություն ունի: Քայլում է ու լսում թափված (տերև) հա...ելի խշշոցը (ոտք) տակ: (Քամի) հոսանքով թռ...ում են դեղին տերևները ու պար բռնում (օդ) մեջ: Ար...են երեկո է. (մութ) ստվերները տարածվում են այգում: (Հնձան) առ...և՝ (խնձոր) մեծ (ծառ) կող...ին, դեռ մնում է քարե նստարանը: Մեծ (առու) փայտե կամուր...ը չկա:

Բառերի շտեմարան

Մայր (սեռ.՝ ***մոր)***-ը բնիկ հայերեն բառ է: Մեր **մամ** բառի հետ, որ նախապես նշանակել է «մայր, մեծ մայր», համեմատելի են հունարեն, լատիներեն, ռուսերեն ֆրանսերեն, պարսկերեն տարբերակները:

Հայր (սեռ.՝ ***հոր)***-ը բնիկ հայերեն բառ է, որի հնագույն ձևն է pater, գերմաներեն՝ Vater, ֆրանսերեն՝ père, անգլերեն՝ father, իտալերեն՝ padre: Սլավոնական լեզուներում բառի նախնական ձևն է atta, ռուսերեն՝ **отец**: Սրանք բոլորը բնաձայն բառեր են՝ մանկական լեզվին հատուկ:

Պապ (սեռ.՝ ***պապի)*** – **մեծ հայր, հայրապետ**: Առաջին իմաստով բառը մեզ անցել է պարսկերենից: Հնչյունական փոփոխություններով նույնանում է *հայր, հայրիկ* բառին: Երկրորդ իմաստով *(հայրապետ)*՝ ***Հռոմի Պապ:***

Տատ (սեռ.՝ ***տատի)*** – ***մեծ մայր***, որից՝ տատիկ՝ ***մեծ մայրիկ***: Բնաձայնական բառ է, որ հատուկ է մանկական լեզվին և բնորոշ է շատ ու շատ այլ լեզուների:

Ըստ Հր. Աճառյանի

Խրիմյան Հայրիկ

Հռոմի Պապ Ֆրանցիսկոս

3 ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Տնօրենը գովասանագիր հանձնեց լավագույն **աշակերտին**:

Ես սիրով այցելեցի իմ առաջին **ուսուցչին:** Տղան ուշադիր նայում էր **նկարին**:

Այս նախադասություններից առաջինում **աշակերտ** բառը ցույց է տալիս այն անձը, որին տրվում է մի բան, երկրորդում **ուսուցչին** բառը ցույց է տալիս այն անձը, որին հանգում է ենթակայի գործողությունը (*այցելելը)*, երրորդում **նկարին** բառը ցույց է տալիս այն առարկան, որին, նույնպես, լայն առումով հանգում է ենթակայի գործողությունը (*նայելը)*: **Աշակերտին, ուսուցչին** և **նկարին** բառերը բայական անդամի լրացումներ են և դրված են տրական հոլովով:

Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին տրվում կամ մոտենում է մի բան, և կամ որին հանգում է ենթակայի գործողությունը:

• Տրական հոլովը պատասխանում է **ո՞ւմ, ինչի՞(ն), ինչի՞ համար, ե՞րբ, որտե՞ղ** հարցերին: Օրինակ՝ Այդ բանակի շարժումը ենթարկվում էր մի ճշգրիտ կարգի: (Փ. Ի.)

• Տրական հոլովով դրվում են նաև բայական անդամի այլ լրացումներ, որոնք ցույց են տալիս **նպատակ, ժամանակ, տեղ**: Օրինակ՝ Սուրիկը գնաց **հացի** (հաց գնելու): **Գարնանը** գետերը հորդանում են: Էմման ու Աշխենը նստում են միևնույն **նստարանին:**

Տրական հոլովն իր ձևով նման է սեռականին, բայց ի տարբերություն սեռականի՝ կարող է գործածվել **թե՛ անորոշ, թե՛ որոշյալ առումով:** Օրինակ՝ Երեխաները արդեն մոտենում էին **մի աղբյուրի**: **Աղբյուրին** մոտենալիս կարկամած կանգ առան:

52. **1. Դո՛ւրս գրիր տրական հոլովով դրված գոյականները և որոշի՛ր, թե ինչ են ցույց տալիս: 2. Որոշի՛ր գոյականների հոլովումը:**

Ձյուն է գալիս սարին, քարին,
Ձյուն է գալիս լուռ անտառին...
Ձյուն է գալիս, ճյուն է մաղում
Կախարդական մեծ ծառուղուն,
Ձյուն է գալիս սարին, քարին,
Սոճիների լուռ անտառին: (Հ. Հ.)

Փառք տանք մայր հողին,
Արևի շողին,
Գինի պարգևող
Հայոց խաղողին: (Ս.)

Արև՛, արև՛, եկ, եկ,
Ձիգի քարին վեր՛ եկ,
Սև-սև ամպե՛ր, հեռացե՛ք,
Արևին ճամփա՛ տվեք: (Ղ . Ա.)

53. **Կազմի՛ր նախադասություններ՝ տրական հոլովով գործածելով հետևյալ բառերը.** եկեղեցի, բուժքույր, գարուն, ծաղիկ, մայր, երկինք, տուն, ժողովուրդ, զինվոր:

54. **Արտագրի՛ր՝ փակագծերի մեջ տրված բառերը դնելով տրական հոլովով, իսկ կետերի փոխարեն գրելով բաց թողած տառերը:**

Գնաց...ը մոտենում է հայրենի (քաղաք): Վահանը կարոտով նայում է նոր (կայարան): Ի...նելով գնացքից՝ մոտենում է մի անծանոթ (մարդ):

Արևի շողերն ընկել են լեռան բար...ր (կատար): Ուսուցիչը գր...երը հան...-նեց մի (աշակերտ): (Գարուն) հերկեցին ու ցանեցին նոր յուրացրած հողե-րը: Գուր...ենը մոտենում է (անտառ), կանգ է առնում անտառի (եզր) և ականջ դնում թ...չունների (երգ): Երգում է դեղ...անիկը. հեռվից մի ուրիշը ձայնակ-ցում է նրա (երգ): (Իրիկնապահ) դա...արեց անձրևը: Կինը (ձեռք) բռնել էր պատվոգիրը: Առ...նից քայլում էր հրամանատարը և հրահանգներ էր տալիս (շարք): Աշակերտը իրեն հետաքրքրող հարցով դիմում է (ուսուցիչ):

4 ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Բժիշկը վիրահատում է **հիվանդին:**

Արուսյակը բացում է **գիրքը:**

Այս նախադասություններում **հիվանդին** և **գիրքը** բառերը ցույց են տալիս այն անձը և առարկան, որոնք իրենց վրա են կրում ենթակայի կատարած գործողությունը: **Հիվանդին** և **գիրքը** բառերը բայական անդամի լրացումներ են, դրված են հայցական հոլովով և կոչվում է ուղիղ կամ կրող խնդիր:

Հայցական հոլովը ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որն իր վրա է կրում ենթակայի գործողությունը:

Հայցական հոլովը պատասխանում է **ո՞ւմ, ի՞նչ(ը), ո՞ւր, որքա՞ն, ինչքա՞ն ժամանակ, ե՞րբ** հարցերին: Օրինակ՝ Փոքրիկ իշխանը ոչ **մի մարդ** չտեսավ:

• Հայցական հոլովով դրվում են նաև բայական անդամի այլ լրացումներ, որոնք ցույց են տալիս **տեղ, ժամանակ, չափ ու քանակ**: Օրինակ՝ Աշակերտնե-րը գնում են **դպրոց: Հինգ օր** նրանք մնացին անտառում: Սավառնակը մեկ ժա-մում թռչում էր **900 կիլոմետր:**

Հայցական հոլովը հատուկ ձև չունի. նա նման է կա՛մ ուղղականին, կա՛մ տրականին:

Հայցական հոլովն ուղղականի ձև է ունենում, եթե գոյականը իր է կամ գործածված է իբրև իր. օրինակ՝

*Քաշեց արևը **ծիլերը** հողից:* (Հ. Ծ.)

*Ամեն շինական հոգու մեջ **երգ** ունի:* (Մ. Գ.)

Եղբայրս **շուն** է վարժեցնում:

Հայցական հոլովը տրականի ձև է ունենում, եթե գոյականը անձ է կամ գործածված է իբրև անձ, օրինակ՝ Պատգարակի վրա բերում են վիրավոր **մարտիկին:** Արամը լավ է խնամում իր ընտանի **թռչուններին:**

Անձ ցույց տվող գոյականները կարող են իբրև իր գործածվել և հայցականում ուղղականի ձևն ունենալ միայն անորոշ լինելու դեպքում: Կարելի է ասել՝ **ես մի մարդ տեսա**, բայց չի կարելի ասել՝ **ես այն մարդը տեսա**: Հայցական հոլովը ստանում է որոշիչ հոդ, գործածվում **թե՛ անորոշ, թե՛ որոշյալ առումով:**

55. **1. Արտագրի՛ր հայցական հոլովով դրված բոլոր գոյականները՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով, թե ինչ է ցույց տալիս: 2. Լրացրո՛ւ բաց թողած տառերը:**

Գարունն Ապարանում ուշ է սկսվում՝ ապրիլի վեր...երին, եր...եմն նույնիսկ մայիսին: Ձմեռը, Արագածի կի...ճերում ու անձավներում դիրք մտած, կատաղի դիմադրում է: Իր հերթին գարունն էլ է ապավինում Արագածին, նրա արևկող լանջերին տաքացնում մարմինը, փեշերը զու...ում հազարանուն ծաղկունքով ու զանազան աղ...յուրներով: Ամպն առաջին անգամ Արագածի գլխին է որոտում՝ ու...արկելով կենարար անձրևը, և կայծակի շեղ...ը նրա անդունդներն է լուսավորում զարթոնքի դղրդյունով: Եվ ա...պրոպածին լեռան ոտքերի տակ տեղի է ունենում բնության մենամարտը, մինչև որ գարնան շունչը տարածվում է չորս կողմը, կանաչ թավիշով ծածկում քար ու ժայռ, առվակների շատախոսությամբ լցնում դաշտ ու ձոր: Իսկ ձմեռն իր գունատ ծվենները փա...ցնում, խ...կում է Սևանի լճափնյա խորխորատները: Ամբո...ջ ամառը դրանք արտասվում են մի քարի տակից, մի ժայռի խոռոչից, արցունքով ցողում ծաղիկները: (Զ. Դ.)

56. **Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ գոյականները գործածելով հայցական հոլովով.** *սաղարթ, շարական, ալոճենի, թագավոր, պարապմունք, Հասմիկ, հովվուհի:*

57. **Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ գոյականները գործածելով հայցական հոլովով՝ որպես ժամանակ, տեղ, չափ ու քանակ ցույց տվող լրացումներ.** *ամառ, ամիս, շաբաթ, կիլոմետր, քաղաք, դասարան, այգի, կիրճ:*

5 ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Սուրիկն **ընկերոջից** նամակ է ստացել: Ուսուցիչը գոհ է իր **աշակերտներից:** Հայրը սիրվում է **որդուց**:

Այս նախադասություններում **ընկերոջից, աշակերտներից, որդուց** բառերը ցույց են տալիս այն անձը, որից բխում, ծագում կամ սկսվում է գործողությունը: Դրանք բայական անդամի լրացումներ են և դրված են բացառական հոլովով:

Բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից բխում, ծագում կամ սկսվում է գործողությունը:

Բացառական հոլովը կազմվում է **-ից** կամ **-ուց** վերջավորությամբ և պատասխանում է **ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց, երբվանի՞ց** հարցերին: Օրինակ՝ Ես խռովել եմ իմ **ծաղկից**,- խոստովանեց Փոքրիկ իշխանը: (Փ. ի.)

- Բացառական հոլովով են դրվում նաև բայական անդամի այլ լրացումներ, որոնք ցույց են տալիս **տեղ, ժամանակ, պատճառ:** Օրինակ՝ Գնացքը դուրս եկավ **կայարանից: Առավոտից** քեզ եմ սպասում: **Ցնծությունից** Աստղիկը թռչկոտում էր սենյակում:

Բացառական հոլովը որոշիչ հոդ չի ստանում:

58. **Դո՛ւրս գրիր բացառական հոլովով դրված գոյականները՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով, թե ինչ է ցույց տալիս:**

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեշից:
Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
Ձմռան անվրդով քնի մշուշից:
...Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,
Ամեն մի թփից բլբուլ է խոսում: (Վ. Մ.)

Սիրո՛ւն մանուկներ, դուք ինձ սիրեցիք,
Իմ ծաղիկներից փնջեր կապեցիք.
Բայց կոշտ ձեռքերից, կոպիտ ճանկերից
Ինձ չազատեցիք, չպահպանեցիք: (Ղ. Ա.)
Գարուն է, գարուն... կապույտ երկնքից
Ոսկե արևն է ուրախ ողողանջում... (Վ. Դ.)

59. **Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով բացառական հոլովով.** *մանրանկար, հայր, դաշտ, սուսամբար, պատուհան, աղբյուր, երկինք:*

60. **Կազմի՛ր նախադասություններ՝ բացառական հոլովով գոյականներ գործածելով** *առաջ, բացի, դուրս, հետո, վեր, վերև, ներս* **բառերի հետ:**

61. **Արտագրի՛ր՝ փակագծերի մեջ տրված բառերը դնելով համապատասխան թվով, հոլովով:**

Այդ (օր) անցել է տասնինը տարի: (Իսրայել) որդի Օրին դարձել էր համակրելի երիտասարդ: (Առավոտ) մինչև կեսօր իր փոքրիկ սենյակում (գիրք) զանազան իմաստություններ էր քաղում: Եղիշեն նրան (Ավարայր) դաշտն էր առաջնորդում, (Խորենացի) դաստիարակում էր (Հայկ) և Վաղարշակ (թագավոր) հերոսական կերպարներով:

Քաղցրաձայն (մեղեդի) գերեց (ներկա), կախարդեց ու տարավ այն (երկիր), ուր ծնունդ էր առել երգը: (Նվագ) թովիչ (հնչյուն) մեջ նրանք զգացին դեպի երկինք ձգվող մեր (լեռ) ու անառիկ (ժայռ) վեհությունը:

Դահլիճը կախարդված լսում էր հայ (երաժիշտ):

6 ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Զբոսաշրջիկները **ավտոբուսով** մեկնեցին Գոշավանք: Փայտահատը **կացնով** կտրում էր ծառը:

Այս նախադասություններում **ավտոբուսով, կացնով** բառերը ցույց են տալիս այն առարկան, որի միջոցով կատարվում է գործողությունը: Դրանք բայական անդամի լրացումներ են և դրված են գործիական հոլովով:

Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում է գործողությունը:

Գործիական հոլովը պատասխանում է **ումո՞վ, ինչո՞վ, որտեղո՞վ, ե՞րբ, որքա՞ն ժամանակով, ինչպե՞ս** հարցերին: Օրինակ՝ Ինչո՞ւ ես հանելուկներով խոսում: (Ջ. Ռ.)

- Գործիական հոլովով դրվում են նաև բայական անդամի այլ լրացումներ, որոնք ցույց են տալիս **տեղ, ժամանակ, ձև**: Օրինակ՝ Մեքենան անցնում է **փողոցով**: Բուն **գիշերով** է որսի ելնում: Եղբայրս մեկ **ամսով** գնացել է Մոսկվա: Նա **ցնծությամբ** դիմավորեց ընկերոջը:
- Գործիական հոլովով դրվում են գոյականական անդամի որոշիչ լրացումներ: Օրինակ՝ **Պոչով** ստեր է փչում: **Բրնձով** փլավը շատ համեղ էր ստացվել: Մեզ **ուրցով** ու **դաղձով** թեյ հյուրասիրեցին:

Գործիական հոլովը կազմվում է **-ով** կամ **-ը** վերջավորությամբ. **-ը** վերջավորությունն են ստանում **ություն,** հաճախ նաև **ում** ածանցով կազմված բառերը, ինչպես՝ **շարժում-շարժումով** (նաև՝ **շարժմամբ**), **քաջություն-քաջությամբ:**

Գործիական հոլովը որոշիչ հոդ չի ստանում:

62. 1. Արտագրի՛ր՝ գործիական հոլովով դրված գոյականներից յուրաքանչյուրի դիմաց գրելով, թե ինչ է ցույց տալիս: 2. Լրացրո՛ւ բաց թողած տառերը:

Ապարան...ի շուրջբոլորը քարե հաստաբես... պարիսպ էր՝ աշտարակներով և երկաթյա դռներով, որոնց ճակատները նույնպես զար...արված էին տների տոհմանիշով: Որդիները տան նահապետի կար...ադրությամբ

մշտապես, որպես ավանդական կար..., մարզվում էին զենքի գործածության, և այդ վարժությունը չէր կատարվում միայն որսագնա...ությամբ, այլև ամեն...դյա զբաղումով, երբեմն հայրերի ներկայությամբ, հատուկ մի զինավարժի ղեկավարությամբ:

Ապարան...ի պատանիները խմբերով ճերմակ աղավնիներ էին թ...ցնում և նետեր ար...ակում նրանց վրա:

Մինչ պատանիները և երիտասարդները տարված էին այս խաղով, տոհմի նահապետ Ներսեհ իշխանը երթ...եկում էր մեծ սրահում: Որքան էլ աղավնիներով նետավարժությունը ամեն...դյա երևույթ էր դղյակի բակում, այնուամենայնիվ իշխանը այսօր տհաճությամբ էր նայում այդ խաղին: Նար իշխանը հիսունն անց տղամարդ էր՝ բար...դահասակ, տակավին ձի... ու պինդ կազմվա...քով: Հրավիրված նախարարներից եկել էին չորս-հինգը, ոմանք՝ իրենց որդիներով, ոմանք՝ թիկնապահներով: (Ս. Զ.)

63. **Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով գործիական հոլովով.** *գիրք, անուն, ճանապարհ, քաջություն, արյուն, քույր, ծաղիկ:*

64. **Արտագրի՛ր՝ փակագծերի մեջ առնված բառերը գործածելով գործիական հոլովով:**

Վարդանը (հպարտություն) էր նայում իր **որդուն:** Կարծես դեռ երեկ էր, որ նա մերկ (ոտք) ու կարճ (շալվար) թռչկոտում էր պարտեզում, իսկ այսօր իր բարեկազմ (հասակ), վերին **շրթունքը** զարդարող **բեղերի** (փունջ) և **աչքերի** խելացի (արտահայտություն) արդեն հասուն **տղամարդու** կերպարանք էր ստացել: Նրանք գնում էին (անտառ) ձգվող նեղ (արահետ), արևի շողերը **ճյուղերի** (արանք) թափանցում էին ցած, ոսկե (երանգ) վառում բազմագույն **ծաղիկները**: Վարդանը կանգ առավ, (գլուխ) ցույց տվեց բարձունքի **ճեղքերից** բխող բարակ **աղբյուրը**: Վճիտ **ջուրը** (կարկաչ) ցած էր հոսում թփերի (արանք) ու կորչում **խոտերի** մեջ:

65. **Որոշի՛ր, թե ինչ հոլովով են գործածվել նախորդ վարժության մեջ ընդգծված բառերը:**

66. **Գեղարվեստական գրականությունից դուրս գրի՛ր ուղղական, տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով դրված օրինակներ և նշի՛ր պաշտոնը:** Օրինակ՝

Այնպե՛ս գգվող է ***երեկոն*** *(*ուղղ. հոլով, ենթակա) *անափ,*

Ծաղիկներն *այնպես* ***նազով*** (գործ. հոլով, ձևի պար.) *են փակվում.*

(Վ. Տ.)

7 ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Մեսրոպը սովորում է Հովի. Թումանյանի անվան **դպրոցում: Մշուշում** դեմքերը լավ չէին նշմարվում:

Այս նախադասությունների մեջ **դպրոցում** և **մշուշում** բառերը ցույց են տալիս այն տեղը, որտեղ կամ որի ներսում կատարվում է գործողությունը:

Դրանք բայական անդամի լրացումներ են և դրված են ներգոյական հոլովով:

Ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կամ որի ներսում կատարվում է գործողությունը:

Ներգոյական հոլովը կազմվում է **-ում** վերջավորությամբ և պատասխանում է **որտե՞ղ, ինչո՞ւմ, որքա՞ն ժամանակում** հարցերին: Օրինակ՝Վաչեն գետում խեղդվել է: (ԵՏԽԸ)

- Ներգոյական հոլովը ցույց է տալիս նաև այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կամ երբ կատարվում է գործողությունը:

  Օրինակ՝ Նա **մեկ ամսում** կատարեց ողջ աշխատանքը: Ինքնաթիռը **երեք ժամում** Երևանից թռչում է Մոսկվա: Խ. Աբովյանը ապրել է **տասնիններորդ դարում:**

Անձերի, կենդանիների հատուկ ու հասարակ անունները, ինչպես և **-ություն** (քաջություն, բանվորություն), **-ում** (շարժում, ուշացում) ածանցներով կազմված բառերը ներգոյական հոլովով չեն գործածվում. այդ բառերը ներգոյական հոլովի իմաստն արտահայտում են **սեռական հոլովով** և **մեջ** բառով:

Օրինակ՝ Գայանեի **ուրախության մեջ** կար թախծի ինչ-որ ստվեր:

Արտակի մեջ եռում էր աշխատանքի տենչը:

- Բացառություն են կազմում **հաստատություն, կազմակերպություն, հիմնարկություն, ընկերություն** («կազմակերպություն» իմաստով) և նման բառերը: Օրինակ՝ **Հիմնարկությունում** գործերս լավ են ընթանում:

Ներգոյական հոլովը որոշիչ հոդ չի ստանում:

67. **Արտագրի՛ր՝ փակագծերի մեջ տրված բառերը գործածելով ներգոյական հոլովով:**

Թեև արդեն մոտենում է ամառը, բայց լեռան (բարձունք) դեռ մնում է ձյունը: Ձիավորները բարձրանում էին լեռնալանջով. (ներքև)՝ լեռան (ստորոտ), մարգագետինն է: Էլի են բարձրանում ու հասնում են գոմերին:

Անասուններն արածում են (մոտակայք), հովիվները նստել են մի մեծ կաղնու (ստվեր) ու հսկում են:

Խուստուփի լանջերի մթին (ծմակ) հանգիստ կյանք էին վարում եղնիկները, (անձավ) քուն էր մտնում արջն իր ձագերով, եղնիկները անհետանում էին (թփուտ):

Մեր (օրեր) մարդ չգիտի՝ ինչպես պահի իրեն: Վաղ առավոտից նա փակվել էր (ննջասենյակ), և ոչ ոք չէր համարձակվում աղմուկ բարձրացնել (միջանցք):

68. **Կազմի՛ր նախադասություններ՝ ներգոյական հոլովով գործածելով հետևյալ բառերը.** *Բիայնա, հրապարակ, Մալաթիա, տարի, տասնօրյակ, բոպե, բացատ, կարծիք:*

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ

69. **Պատմության և կենսաբանության դասագրքերից ընտրի՛ր մեկական հատված, դո՛ւրս գրիր բոլոր գոյականները՝ որոշելով դրանց կազմությունը, հոլովը, հոլովումը, թիվը, առումը:**

70.* **Դարձվածաբանական բառարանից դո՛ւրս գրիր 10 դարձվածք, որոշի՛ր գործածված գոյականների հոլովները:**

Օրինակ՝ *ընկույզին քար չնետել – ընկույզին*՝ տրական հոլով, *քար*՝ հայցական հոլով:

71. **Արտագրի՛ր տրված հատվածը՝ փակագծերում առնված գոյականները գործածելով անհրաժեշտ հոլովով, թվով, առումով:**

Աշուն էր ծաղկել (լեռնաշխարհ): Ծաղկել էր հասուն ու կախարդիչ, մնայուն ու խենթացնող (գույն): (Կածան) աշունն (անտառ) հասել էր լեռները, (արահետ) հասել բացատն ու հիմա ծվարել էր (աղբյուր) բերանին՝ ջահել ու հյութալի: Աշունն էլ իր հասակներն ունի և մի (տարի) չափ վաստակ է թողնում իր հետևից: Լավ օրերին նա մոռանալ է տալիս խենթ ու կրակված (ամառ) վատությունները: Իսկ ովքեր դժվարանում են մոռանալ, նա (համբերություն) հասկացնում է, որ եթե չլիներ (շոգ), ինքն էլ այդքան հմայիչ ու ցանկալի չէր լինի այժմ: Աշխատավորը դա շատ շուտ է հասկանում, դրա համար էլ լավ է վայելում (աշուն):

Արաքսյան (ընկերուհի) հետ հաց էր տարել Ներսեսին և հիշեցրել, որ հարկավոր է արդեն մեղուն գյուղ իջեցնել: Գնացել էր (եղբայր) ասելու նաև, որ երկու օր է, ինչ հայրը վերադարձել է (քաղաք): (Ա. Ս.)

72. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով գոյականներ տրված բառերի հետ՝** *առջև, մասին, առանց, բացի, դեպի, միջև, մինչև, ըստ:*



ԱՄՓՈՓԻՉ

- Որո՞նք են գոյականի ձևաբանական հատկանիշները:
- Որո՞նք են գոյականի առումները:
- Ո՞ր միավանկ գոյականներն են հոգնակի թիվը կազմում *-ներ*, ո՞ր բազմավանկ գոյականները՝ *-եր* վերջավորությամբ:
- Բնութագրի՛ր սեռական հոլովը և դրա կազմությունը:
- Գոյականի հոլովներից ո՞րը դժվար յուրացրիր և, ըստ քեզ՝ ինչո՞ւ:
- Թվարկի՛ր այլաձև և զուգաձև հոլովման պատկանող գոյականներ:

73. Թվարկի՛ր 10 գոյական, որ ամրակայեցիր քո բառապաշարում:

Գրի՛ր շարադրություն՝ *«Ես հաշվում եմ աշնան գույները...»* վերնագրով՝ գործածելով տարբեր հոլովներով գոյականներ:

Բառերի շտեմարան

Վարդապետ-վարժապետ-վարպետ

Ժամանակակից հայերենում **վարդապետ** բառի առաջին իմաստն է «կուսակրոն քահանա, որն ապրում է վանքում», երկրորդ իմաստը՝ «հոգևորականին տրվող աստիճան». երրորդ իմաստը՝ «ուսուցիչ», մեր օրերի համար հնացած է, մինչդեռ հին բառարաններում «ուսուցիչ» իմաստը տրվում է որպես առաջին և հիմնական իմաստ:

Հետաքրքիրն այն է, որ Պ. Սևակը «Անլռելի զանգակատուն» պոեմում հինգ տասնյակից ավելի անգամ գործածում է այս բառը. «հոգևորական» նշանակությամբ **վարդապետ**-ը գրում է փոքրատառով, իսկ եթե **վարդապետ** բառով ակնարկում է Կոմիտասին, ապա անպայման գրում է մեծատառով և գործածում «ուսուցիչ» իմաստով, ինչպես՝

Ի՞նչ խոսքերով բարեբանենք
Քե՜զ, Վարդապե՛տ...

Ըստ Հր. Աճառյանի՝ **վարդապետ** նշանակում է «ուսուցիչ, վարժապետ, առաջնորդ ուսման». **վարժապետ** ու **վարդապետ** բառերը իրանյան միևնույն բառի տարբեր ձևեր են: **Վարդ** նշանակել է նաև «գործ, աշխատանք», իսկ **դ**-ի անկումով՝ **վարպետ**՝ «հին ոճի տնային վարժապետ, արհեստապետ»:

74. **1. Լսե՛ք հայկական և իտալական հոգևոր երաժշտություն ու արտահայտե՛ք ձեր կարծիքը:**

2. Բացատրի՛ր *պատարագ, շարական, զանձ, կցուրդ* բառերը՝ որպես հոգևոր երգի տեսակ:

Լա Սկալա օպերային թատրոնի դահլիճը

https://planetofhotels.com/guide/en/italy/milan/la-scala

Լսենք մեծերին

Սկզբում սովորի՛ր բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաջինի չի կարող լինել երկրորդը:

Սենեկա

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ածականը՝ որպես խոսքի մաս

1. **Ընդհանուր իմաստը՝** *հատկություն, վերաբերություն*
2. **Ձևաբանական առանձնահատկությունը՝** *չթեքվող*
3. **Տեսակները՝** *որակական, հարաբերական*
4. **Շարահյուսական դերը՝** *գոյականական և բայական անդամի լրացում*

Երբ մանուկ էի, ընկերներիս հետ
Գյուղի կալերում, դաշտերում ծաղկած,
Ճիպոտներն իբրև նժույգներ հեծած,
Մտրակում էինք և սլանում ***խենթ***
Դեպ ***հեքիաթային*** *աշխարհներ* ***հեռու,***
Եվ շրջում էինք կախարդ, ***հմայուն***
Այն վայրերի մեջ՝ ***անհայտ, անանուն****:*

Երբ հասակ առա, նստեցի հաճախ
Երկաթուղիներ և շոգենավեր
Անցա երկրներ, կտրեցի ծովեր,
Տեսա ***պերճ*** *վայրեր, քաղաքներ* ***չքնաղ,***
Բայց, ավա՜ղ, երբե՛ք, երբե՛ք չըհասա
Իմ ճիպոտ-ձիով ոտք դրած ***շքեղ***
Աշխարհներն ***հեռու*** *և* ***հեքիաթագեղ****...*

Ավ. Իսահակյան

Այս բանաստեղծական հատվածում առարկայի հատկություն (որպիսություն) կամ վերաբերություն (այսինքն՝ առարկաների միջև եղած կապը) ցույց տվող բառերը՝ **հեքիաթային, հեռու, հմայուն, անհայտ, անանուն, պերճ, չքնաղ, շքեղ, հեքիաթագեղ, խենթ** (այստեղ՝ բայական անդամի լրացում) ածականներ են:

Ածական անուն կամ ածական են կոչվում առարկայի հատկություն կամ վերաբերություն ցույց տվող բառերը:

Ածականները պատասխանում են **ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր** հարցերին:

Ածականը չթեքվող խոսքի մաս է, այսինքն՝ չի հոլովվում, որոշիչ հոդ չի ստանում, օրինակ՝ Այգում առաջինը **կարմիր** վարդը բացվեց: Նրա այտերը **կարմիր** են:

Բայց ածականը խոսքի մեջ կարող է հանդես գալ նաև գոյականաբար: Այդ դեպքում ածականը ստանում է որոշիչ հոդ և գոյականի նման հոլովվում է եզակի և հոգնակի թվերով, օրինակ՝ **Քաջերն** ընկան մարտում: **Քաջերով** անցան հարձակման:

- Ածականները նախադասության մեջ գործածվում են որպես գոյականական կամ բայական անդամի լրացում: Օրինակներ՝

Երգի **մեղմ հնչյունները** տարածվում էին գիշերվա լռության մեջ:

Տխուր երեկոն *զարկել է վրան:* (Վ. Տ.)

Մի մարդ ***մեղմ երգում էր:*** (Վ. Տ.)

Առաջին երկու օրինակներում ***մեղմ, տխուր*** ածականները, վերջին օրինակում՝ նաև ***պայծառ***-ը գործածված են որպես գոյականական անդամի լրացում, իսկ հաջորդ երկու օրինակներում՝ որպես բայական անդամի լրացում:

- Ածականը կարող է գործածվել նաև իբրև ստորոգյալի բաղադրիչ: Օրինակ՝Միթե դու այդքան **հզոր** ես,- ժպտաց Փոքրիկ իշխանը: (Փ.Ի.)

Տխուր ու **ամայի** էր աշխարհը՝ **մռայլ** ու **ձանձրալի**: (ԵՏԽԸ)

Գունանունների մեծամասնությունը նախ և առաջ գոյականներ են: Այդ մասին տրվեց գոյական խոսքի մասը տարբերակելիս: Այսինքն՝ սա նշանակում է, որ գունանունները երկարժեք խոսքի մասեր են՝ թե՛ գոյական, թե՛ ածական, և ոչ թե փոխանվանաբար կիրառված ածականներ, ինչպես *կարմիրը* ածական է:

1. **Էդ. Աղայանի բացատրական բառարանի օգնությամբ դո՛ւրս գրիր** *կապույտ, կարմիր, դեղին* **գույների ածական նշանակությունները ու դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

2. **Նույն ձևով դո՛ւրս գրիր** *սև, սպիտակ* **բառերի ածական նշանակությունները և դրանցով կազմի՛ր նախադասություններ:**
3. **Բացատրի՛ր տրված դարձվածքները՝ շեշտը դնելով գույն ցույց տվող բառերի վրա.** *սև ագռավ, սև ամպ, սև աղվես դառնալ, սև դրոշակ, սև ոսկի, սև բիծ, սև գործ, սպիտակ դրոշ, սպիտակ գիշերներ:*
4. **Նշվածներից որո՞նք կարող են գործածվել նաև ուղիղ իմաստով:**

Վերևի գլխանկարում տրված դրոշներից քանի՞սը կարող եք թվարկել ըստ պետությունների:

Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերություն նշանակում է՝

Պատերազմից և տարերային աղետներից տուժած բնակչությանն օգնող միջազգային ընկերություն:

Սպիտակ գիշերներ –Այս արտահայտությունը կապվում է Հյուսիսային բևեռին մերձավոր տարածություններում գարնան և ամռան՝ ցերեկվա նման լուսավոր կարճ գիշերները:

♦ **Կան բառեր, որոնք հավասարապես կարող են հանդես գալ և՛ իբրև գոյական, և՛ իբրև ածական:**

աղքատ	դավաճան	թավուտ	դպրոցական
անցյալ	խավար	հիվանդ	զինվորական
այրի	գող	հով	հոգևորական
անդորր	ծանոթ	միաբան	աշխարհական
ապագա	ծերունի	մութ	բանակային
ապստամբ	դավադիր	որբ	գիտնական
բարեկամ	կտրիճ	սուտասան	հրետանավոր
վայրենի	հարազատ	սուրբ	հետևակային
գիժ	հարևան	ցուրտ	ծովային
խենթ	հարուստ	ունկնդիր	կամավոր

5. **Դո՛ւրս գրիր ածական անունները և յուրաքանչյուրի դիմաց գրի՛ր, թե ինչ է ցույց տալիս՝ հատկությո՞ւն, թե՞ հարաբերություն:**

Հողե հատակին բացված անկողնում պառկած է Դավոն: Խնամքով սափրված է, հագել է բոլորովին նոր սպիտակեղեն (դեռ անցյալ տարվանից էր գնել), հագել ու մաքուր անկողնում մեկնվել էր թիկունքն իվար: Աչքերը կիսախուփ են, բաց թևերը՝ ծաղկավոր վերմակին ձգած:

Եվ Դավոյի խլվլուն կոպերը, ճակատի առնական կնճիռները լարված որոնում են:

Որբերը՝ գողունի ու վախվորուկ հայացքներով, բայց միմյանց դեմ ատամ կոճտացնող ու անողոք: Եվ այս բզկտված, անգույն ու անդեմք որբերի մեջ Դավոն որոնում էր տոհմակից, բարեկամ, ծանոթ: Անհույս էր, բայց փնտրում էր: (Մ. Գ.)

6. **Որոշի՛ր, թե այդ ածականներից որը ի՛նչ կազմություն ունի (պարզ, բարդ, ածանցավոր), և գծիկով բաժանի՛ր բաղադրիչ մասերի:**

7. **Կազմի՛ր կապակցություններ՝ տրված ածականների հետ գործածելով գոյականներ, գոյականների հետ՝ ածականներ:**

- Մարմարյա, մրգառատ, փարթամ, գեղակերտ, գյուղական, շինծու, անմիջական:
- Երազանք, կյանք, առու, զգեստ, պահվածք, միտք, վերաբերմունք:

8. **Տրված բառերից կազմի՛ր ածականներ:**

Առյուծ և սիրտ, արև և շող, տերև և փուշ, երանգ և երփն, պսակ և ձև, ձայն և վիշապ, թույր և ձյուն, երիզ և ոսկի, դատարկ և գլուխ, շեկ և հեր, սուր և ծայր, գունդ և ձև, փրփուր և բաշ:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Վ. Դավթյան



Ճերմակ ձիավորը (հատվածաբար)

Եվ գուժկան ու սև բոթին հետամուտ՝
Շապուհը մտավ աշխարհը հայոց:
Հայոց աշխարհի բարձրիկ լեռներում քամին է խաղում,
Հայոց աշխարհի բարձրիկ լեռներում կապույտ է ու լույս,
Եվ կապույտի մեջ իբրև սպիտակ կրակ
Նժույգը Մուշեղ Մամիկոնյանի:

Եվ կատարների հովերը լազուր
Սրերի բարակ սայրերի վրա
Զնգոցով կիսվում,
Խզվում են կապույտ, ճիգ պաստառի պես:

Հայոց աշխարհի
Գիշերը սև է, սևակնած ու լուռ,
Սև վանքերն այստեղ լուռ են աղոթում.
Լուռ են աղոթում սև քարերն այստեղ,
Ու սև սարսափը լուռ է թափառում…

Դեմն արյաց զորքի խարույկներն են հուր,
Դեմը՝ բանակը պորտը թաց հողին,
Մրափում է լուռ:
Հայոց աշխարհի
Արևածագը քրքում է ու բոց,
Հայոց աշխարհի
Արևածագը որդան է կարմիր,

Իսկ Մասյաց ձյունը կրակ է ասես,
Որ աստվածներն են
Վառել երկնքի անհունի մեջ ցուրտ:
Եվ բռնկվում են կատար ու բարձունք:
Հայոց աշխարհն է բռնկվում համակ
Եվ ալեվետում
Կապույտների մեջ:
Եվ հայոց հաղթած զորքերին ի տես

Իրենց մետաքսե ալ վրաններից
Լաջվարդ, փիրուզե, զառ վրաններից
Ելնում են մեկ-մեկ,
Ելնում կիսամերկ
Շապուհի կանայք՝
Պատիվն ու փառքը Շապուհ արքայի:
Եվ տասնապատիկ,
Եվ բյուրապատիկ
Զարմացավ արքան…
Զարմացավ արքան և հրամայեց,
Որ իր ոսկեձույլ գինու գավաթին
Նկարեն պատկերն սպարապետի,
Նկարեն ճերմակ իր նժույգի վրա…
Ու հետ այնորիկ,
Երբ Շապուհ արքան նստում էր սեղան,
Երբ խրախճան էր իր զորքին տալիս,
Այդ գավաթն առնում
Եվ բարբառում էր կենացն առաջին
Թող Ճերմակաձին գինի վայելի…

9. Ի՞նչ գիտես այս հերոսի մասին: Արտահայտվի՛ր բանավոր:
10. Թվարկի՛ր *ծիրանի* բառի հոմանիշները և դրանցով կազմի՛ր նախադասություններ:
11*. Բառարանի օգնությամբ փորձի՛ր բացատրել հետևյալ բառերը՝ իբրև գունանուն՝ *ալ, բոց, շեկ, լույս, սևակնած, շողակաթ, որդան կարմիր, հուր:*
12. Բառարանի օգնությամբ բացատրի՛ր *համակ, ալեվետել, արյաց, բոթ, սայր* բառերը:
13. Դո՛ւրս գրիր որպես ածական գործածված գունանունները և բացատրի՛ր:
14. Դո՛ւրս գրիր որպես գոյական գործածված գունանունները և բացատրի՛ր:
15. Դո՛ւրս գրիր տեքստից հինգական գոյական՝ կազմությամբ պարզ, բարդ ածանցավոր:
16. Դո՛ւրս գրիր տարբեր հոգնակիակազմության և հոլովումների պատկանող գոյականներ:
17*. Տեքստից դո՛ւրս գրիր քեզ համար ուղղագրական դժվարություն ներկայացնող տասը բառ, հինգը ներկայացրո՛ւ նույն արմատը այլ բառերում սկզբունքով, օրինակ՝ *բառ- բարբառել- բարբառ, բարբառախոս- գրաբար:*

1 ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ածական անունները լինում են երկու տեսակ՝ **որակական** և **հարաբերական**:

Որակական ածականները ցույց են տալիս առարկայի հատկությունը, այսինքն՝ այնպիսի հատկանիշ, որը հատուկ է տվյալ առարկային՝ անկախ ուրիշ առարկաներից:

Օրինակ՝ ***կանաչ*** տերև, ***բարձրաբերձ*** լեռ, ***կարկաչուն*** առվակ, ***պղտոր*** գետ: Որակական ածականները կարող են արտահայտել նաև գործողության հատկանիշ:

Օրինակ՝ ***ամուր*** գրկել, ***աշխույժ*** զրուցել, ***արդար*** դատել, ***բարձր*** գնահատել, ***դառն*** արտասվել, ***խիզախ*** մարտնչել, ***շռայլ*** պարգևել և այլն:

Որակական ածականների արտահայտած հատկությունները համեմատելի են, այսինքն՝ տվյալ հատկությունը մի առարկա կարող է ունենալ նվազ, իսկ մի ուրիշ առարկա՝ ավելի չափով: Օրինակ՝ Արաքսը **ավելի մեծ** գետ է, քան Հրազդանը: Արաքսը Հայաստանի **ամենամեծ** գետն է:

Հարաբերական ածականները ցույց են տալիս առարկայի հատկանիշը մի այլ առարկայի հարաբերությամբ, այսինքն՝ արտահայտում են առարկայի կապը, հարաբերությունը ուրիշ առարկաների հետ:

Օրինակ՝ ***փայտե*** ձի, ***մարդկային*** խիղճ, ***լեռնային*** օդ, ***մայրական*** սեր:

Այս կապակցությունների մեջ ***փայտե, մարդկային, լեռնային, մայրական*** ածականները ցույց են տալիս **ձի, խիղճ, օդ, սեր** գոյականների հարաբերությունը, կապը **փայտ, մարդ, լեռ, մայր** գոյականների հետ (ձի, որ փայտից է սարքած, խիղճ, որ մարդուն է հատուկ, սեր, որ մայրերին է հատուկ):

Հարաբերական ածականները սովորաբար ցույց են տալիս առարկաների ոչ համեմատելի հատկանիշ:

Հարաբերական ածականները կազմությամբ պարզ լինել չեն կարող:

Հարաբերական ածականներ են կազմվում **-ական, -այինն, -ե, -եղեն, -ենի, -յա, -յան** ածանցներով, ինչպես՝ ***արքայական, լուսե, հրեղեն, ջերմոցային, մարմարյա, նոյյան*** և այլն:

18. **Գտի՛ր որակական և հարաբերական ածականները և գրի՛ր առանձին սյունակներում:**

*Մեր լեզուն ճկուն է ու **բարբարոս**,*
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա՝ որպես մշտաբորբոք փարոս՝
Վառված հրով անշեջ դարերում հին:
Եվ վարպետներ՝ խոնարհ ու հանճարեղ,
*Հղկել են այն դարեր, որպես **մարմար**,*
*Եվ փայլել է նա մերթ, ինչպես **բյուրեղ**,*
Մերթ Կոպտացել, ինչպես լեռնային քար:
*Բայց միշտ պահել է նա իր **կենդանի** ոգին...*

Ե. Չարենց

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն
Սպասում իր որդուն
Անհանգիստ ու անքուն:
Տեսնեի այն առուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:
Թեքվեի աղբյուրին,
Կարոտած պաղ ջրին,
Նրա զով համբույրին
Ու թավիշ մամուռին...

Գ. Սարյան

19. **Բառարանի օգնությամբ ճշտի՛ր** *բարբարոս, մարմար, բյուրեղ, կենդանի* **բառերի իմաստները և խոսքիմասային արժեքը:**

20. **Արտագրի՛ր հետևյալ կապակցությունները՝ փակագծերի մեջ տրված գոյականներից կազմելով հարաբերական ածականներ:**
(Երկաթ) դարպաս, (մետաքս) թաշկինակ, (լեռ) գոտի, (ծով) կենդանի, (որդի) սեր, (աշակերտ) պայուսակ, (դպրոց) հասակ, (զինվոր) ջոկատ, (երկինք) թագավորություն, , (փողոց) երթևեկություն, (անասնապահ) համալիր, (օդ) ուղիներ, (մարմար) սյուն:

21. **Հետևյալ հատուկ և հասարակ գոյականներից կազմի՛ր ածականներ.**
Հայաստան, Երևան, Շվեյցարիա, Սանկտ Պետերբուրգ, Լոս Անջելես, սեր, քույր, ընկեր, ծաղիկ, աստված, ուսուցիչ, քաղաք:

22*. **Արտագրի՛ր՝ սեռական հոլովով գոյականները փոխարինելով այդ գոյականներից կազմված հարաբերական ածականներով:**

Ցանկապատի երկաթի ճաղերը ներկված էին սև գույնով: Լուսիկը լեռան ծաղիկների մի փունջ էր բերել իր հետ: Օտար երկրներում թափառելով՝ Արմենակը միշտ հոր տան կարոտն էր քաշում: Գյուղի համայնքը իր միջոցներով վերանորոգում է դաշտի ճանապարհները: Փչում էր գիշերվա զով քամին: Հեռվից լսվում էր հովվի սրնգի ձայնը: Այստեղից սկսվում է անտառների գոտին: Գյուղի կենտրոնում բարձրանում են կառուցվող դպրոցի շենքի քարի պատերը:

Բառերի շտեմարան

Թարգման (թարգմանիչ) բառը ծագել է հին եբրայերենից և անցել է այլ լեզուների:

Հնում **թարգմանիչ** էին կոչվում այն վարդապետները, որոնք եբրայերենից արամեերեն[4] էին թարգմանում Աստվածաշունչը: Սուրբ Գրքի արամեերեն թարգմանությունը կոչվել է **Թարգում (Թարկում)**: Հայերենում **թարգման** հիմքից կազմվել են բազմաթիվ նոր բառեր՝

թարգմանել, թարգմանելի, անթարգմանելի, թարգմանաբար, թարգմանություն, թարգմանիչ, թարգմանչուհի և այլն:

թարգմանական – թարգմանությանը հատուկ, բնորոշ՝ **թարգմանական գրականություն,**

թարգմանչական – թարգմանչին հատուկ, վերաբերող՝ **թարգմանչական գործունեություն,**

Թարգմանչաց դար – հայ գրականության պատմության մեջ հինգերորդ դարը,

Թարգմանչաց տոն – հինգերորդ դարի թարգմանիչների պատվին սահմանված տոն, որ նշվում է հոկտեմբերին:

Գրի՛ր կապակցված խոսք՝ «*Վստահի՛ր ինձ, ընկե՛ր*» **թեմայով՝ գործածելով տրված ածականները.** *զգայուն, խոհեմ, մոռացկոտ, համակրելի, ինքնաբուխ, հնարագետ, արտաքաց, պատասխանատու, հուսալի, ունակ, հպարտ, անտարբեր, ուշադիր, անշահախնդիր, մեղմ, կամակատար:*

2 ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Որակական ածականները ցույց են տալիս առարկաների համեմատելի հատկություններ:

Ածականի համեմատության աստիճանները ցույց են տալիս առարկայի հատկանիշի չափը:

Համեմատության աստիճանները երեքն են՝ **դրական, բաղդատական, գերադրական:**

1. **Դրական աստիճանը** ցույց է տալիս առարկայի տվյալ հատկությունը՝

4 Հյուսիսային Միջագետքի հին սեմական ժողովրդի լեզուն:

առանց ուրիշ առարկաների նույն հատկության հետ համեմատելու: Օրինակ՝ **քաջ** (զինվոր), **հորդ** (անձրև), **մեծ** (անտառ), **ջանասեր** (աշակերտ), **հմուտ** (վարորդ):

Դրական աստիճանը ածականի սովորական ձևն է:

2. **Բաղդատական աստիճանը** ցույց է տալիս առարկայի տվյալ հատկության առավել կամ պակաս լինելը ուրիշ առարկայի (կամ առարկաների) նույն հատկության համեմատությամբ:

Օրինակ՝ **Սրանից ավելի գողտրիկ** անկյուն ես չէի էլ կարող պատկերացնել:

Բաղդատական աստիճանը կազմվում է՝

- դրական աստիճանի ձևին ավելացնելով **ավելի** բառը, ինչպես՝ ***ավելի ջանասեր, ավելի հորդ, ավելի քաջ*** և այլն,
- ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով **պակաս, քիչ** կամ **նվազ** բառերը, ինչպես՝ **նվազ** կամ **պակաս ջանասեր**, **պակաս քաջ, քիչ աշխատասեր:**

Նույն հատկանիշով միմյանց հետ համեմատվող գոյականները կարող են կապվել **քան** բառով կամ համեմատելի գոյականի բացառական հոլովով: Օրինակ՝ **Գուրգենը ավելի ջանասեր** է, **քան Աշոտը,** կամ՝ **Գուրգենը Աշոտից (ավելի) ջանասեր է: Մասիսն Արագածից ավելի բարձր է,** կամ՝ **Մասիսն Արագածից բարձր է:**

♦ **Ավելի** բառով կազմված բաղդատականը կոչվում է **առավելական բաղդատական**:

♦ **Պակաս, քիչ** կամ **նվազ** բառով կազմված բաղդատականը կոչվում է **նվազական բաղդատական**:

3. **Գերադրական աստիճանը** ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանիշի գերազանցությունը ուրիշ առարկաների նույն հատկանիշից:

Գերադրական աստիճանը կազմվում է՝

- աստիճանի ձևին ավելացնելով **ամենա-** նախածանցը, ինչպես՝ **ամենաջանասեր, ամենաքաջ, ամենահորդ**, կամ դրական աստիճանի հետ գործածելով **ամենից** բառը, ինչպես՝ **ամենից քաջ**, **ամենից ազնիվ, ամենից ջանասեր**,
- դրական աստիճանի ձևին ավելացնելով **-(ա)գույն** վերջածանցը, ինչպես՝ **ազնվագույն, լավագույն, գեղեցկագույն**:

Ոչ բոլոր ածականներից կարելի է կազմել գերադրական աստիճան **-ա(գույն)** վերջածանցով:

♦ Մի շարք որակական ածականներ չունեն համեմատության աստիճաններ, ինչպես՝ **ամայի, ամուրի, ամուլ, ստերջ, անոթի, արու, էգ, բուն, գոց, զույգ, զուտ, կաղ, կույր, համր, խուլ, հավասար, ձրի, հոլի, բոբիկ, ճաղատ, մերկ, տկլոր, օժանդակ, վերջին, նախկին:**

Չպետք է շփոթել՝

գույն գոյականը	***-(ա)գույն*** ածանցի հետ՝
վարդա**գույն**	խստա**գույն**
արծաթա**գույն**	նորա**գույն**
նարնջա**գույն**	խորա**գույն**
գին գոյականը	***-(ա)գին*** ածանցի հետ:
էժանա**գին**	թախծա**գին**
թանկա**գին**	մթա**գին**
ամեն(ա) արմատը	**ամեն(ա)- ածանցի հետ՝**

ամենակարող «ամեն ինչ կարողացող» ամենալավ «ամենից լավ»
ամենագնաց «ամեն ճանապարհով գնացող» ամենագեղեցիկ «ամենից գեղեցիկ»
ամենահաղթ «ամենքին հաղթող» ամենաքնքուշ «ամենից քնքուշ»
ամենակուլ «ամեն ինչ կլանող» ամենածույլ «ամենից ծույլ»

ճիշտ	սխալ
լավագույն – ամենալավ	.....**ամենալավագույն**.....

23. Նկարներից օգտվելով՝ բանավոր կազմի՛ր տրված իրերի ու անձերի հատկանիշների համեմատության տարբեր աստիճաններ:



24. 1. Արտագրի՛ր՝ ածականների դիմաց նշելով համեմատության աստիճանները:
2. Օրինակներում հանդիպող հատուկ անունները գրի՛ր մեծատառով:

Սևանը հայաստանի հանրապետության ամենամեծ լիճն է: Աշխարհի ամենաերկար և ամենատղմոտ գետն է նեղոսը: Հանրապետության ամենաբարձր լեռը արագածն է, որը շիրակի դաշտը բաժանում է ապարանի սարահարթից: Վոլգան ջրառատ, նավարկելի գետ է: Ավելի մեծ է գյումրին, քան

էջմիածինը: Գեղամը մեր դպրոցի ամենալավ լողորդն է: Վարդը ամենահոտավետ ծաղիկն է: Արեգակնային համակարգության խոշորագույն մոլորակն է լուսնթագը, իսկ պայծառագույն մոլորակն է արուսյակը: Շահենն ավելի արագավազ է, քան գառնիկը, իսկ ամենից արագավազը վարդանն է:

25. **Կազմի՛ր հետևյալ ածականների բաղդատական և գերադրական աստիճանները.** *փարթամ, առատ, հոգատար, գեղեցիկ, ընդունակ, ամուր, արդար, ջինջ, հին, խոշոր, ծանր, թանձր, դաժան, բարի, համեստ, լուրջ, վարար, նվազ:*

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Եվ ո՛ր իսկական մարդը, որ սիրում է արիական բարքը և խոհականությունը, չի ուրախանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և, ցույց տալով քաջություն, մեր ազգը բարձրացրեց... Ոսկու և արծաթի, և՛ պատվական քարերի, և՛ զգեստների, և՛ զանազան գույների, և՛ գործվածքների հարստություններ՝ տղամարդկանց և կանանց համար, առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ աստվածանում էին: Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները զինվեցին սրերով և տեգավոր նիզակներով... Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու ու վանելու:

...Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծամիտ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն... Նա, ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

Ըստ Մովսես Խորենացու *Հայոց պատմության*

Ա

26. Տեքստի ո՞ր տեսակն է սա՝ նկարագրակա՞ն, պատմողակա՞ն, թե՞ վերլուծական. համեմատի՛ր երկու պարբերությունները:

27. Տեքստում գտի՛ր նախադասություններ, որոնք վերլուծական միտք են պարունակում:

Բ

28. Տետրումդ *պատվական, զանազան, սքանչելի, տգեղ, խարտյաշ, պարկեշտ, արդարադատ* ածականների դիմաց գրի՛ր յուրաքանչյուրի հոմանիշները (որքան կարող ես):

29. Տեքստից դո՛ւրս գրիր որակական ածականները և կազմի՛ր դրանց բաղդատական ու գերադրական աստիճանները:

30. 1. Դո՛ւրս գրիր ածականները, որոշի՛ր դրանց տեսակը: 2. Լրացրո՛ւ բաց թողած տառերը:

Հին ժամանակ ապրում էր մի ասպետ՝ գեղեցիկ, սլացիկ ու բարի: Նրա ձիու ս...բակները չէին տրորում քնքուշ ու նուրբ ծաղիկները, զմրու...տյա մարգագետինները: Մի օր էլ բար...ր լեռների գո...ում նկատեց մի շողշողուն լճակ: Նրա վճի... ու ողորկ հայելու մեջ տեսավ մի չքնա... աղջկա լուսեղեն դեմք: Ոսկյա մազերով աղջիկը նստած էր մարմարյա պատշ...ամբում:

Խիզախ պատանին խթանեց ձին և սուզվեց մթին լճակի խորքը՝ հասնելու հեքիաթային աննման գեղեցկուհուն: (Ավ. Իս.)

31.* Բացատրի՛ր դարձվածքները, ցո՛ւյց տուր ածականները, որոշի՛ր տեսակը:

Բաբելոնյան խառնակություն, Անբան Հուռի, դամոկլյան սուր, աքիլլեսյան գարշապար, հին երգը երգել, սև ակնոցով նայել, տաքուկ տեղ գտնել, սեփական թանը ուրիշի մեղրից քաղցր համարել:

32. Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով հետևյալ ածականները դրական, բաղդատական և գերադրական աստիճաններով. *ընդունակ, պայծառ, խիզախ, նուրբ, մաքուր, խրթին:*

33. Տեղադրի՛ր տրված ածականները համապատասխան տեղերում. *սպիտակ, հավերժական, ամպածրար, մռայլ, շքեղ, լեռնային, փղոսկրե, սարսռազդու, տկար:*

... պալատում նստել էր ... Չինգիզ խանը ... գահույքի վրա՝ զառամած գլուխը ... մազերի տակ, ինչպես ... ձյունների տակ Տյան Շանի ... գագաթը: Խամրած աչքերով, ... մարմնով նա փռվել էր գահույքին: ... հեղեղները սանձող ձեռքերը թուլացել էին, ժողովուրդներ սասանող ... ձայնը մարել էր:

(Ավ. Իս.)

34. **Նկարի՛ր տրված գծապատկերը և յուրաքանչյուր տեսակի ու աստիճանի տակ բե՛ր համապատասխան օրինակներ:**



ԱՄՓՈՓԻՉ

- **Ի՞նչ են ցույց տալիս ածականները և ի՞նչ հարցերի են պատասխանում:**
- **Քանի՞ տեսակ են լինում ածականները:**
- **Ինչպե՞ս են կազմվում որակական ածականների համեմատության աստիճանները:**
- **Ի՞նչ պաշտոններ է կատարում ածականը նախադասության մեջ:**

35. **Թվարկի՛ր 10 ածական, որ ամրակայեցիր քո բառապաշարում:**

Կազմի՛ր ածականներ հետևյալ բառերից, ապա կապակցված խոսք՝ այդ ածականներով. *դյութել, ընկեր, բաղձանք, թախիծ, մեղեղի, թովչանք, հնչյուն, մայր, լսել, սիրտ:*

Բառերի շտեմարան

Մեր ամսանունները՝ հունվար, փետրվար, մարտ

Հունվար ամսանունը ծագել է հին հռոմեացիների **Յանուս** աստծու անունից: **Յանուսը** արևի ընթացքի, մուտքի և ելքի, սկզբի և վախճանի, տարվա և ժամանակի աստվածն էր: Պատկերվում էր երկու երեսով՝ ծեր և երիտասարդ, որոնցից մեկն ուղղված էր անցյալին՝ անցնող տարվան, մյուսը՝ ապագային՝ եկող տարվան: Ահա այս աստծուն են նվիրել հունվար ամիսը, որ կոչվում էր **Յանուսի ամիս (յանուա՛րիուս մե՛նսիս)**, որն էլ գրեթե նույն հնչումով փոխանցվել է ժամանակակից եվրոպական լեզուներին՝ անգլերենին՝ **January,** ֆրանսերենին՝ **janvier,** գերմաներենին՝ **Januar,** ռուսերենին՝ **январь:**

Փետրվար ամսանունը ծագում է լատիներեն **februarius** բառից, որ բառացի նշանակում է **քավության, մաքրման համար:** Անունը կապվում է էտրուսկների **Ֆեբրուս** աստծու անվան հետ: Հեթանոսական այս աստվածը

ստորերկրյա թագավորության տիրակալն էր, որին փետրվարի 15-ին նվիրվում էին զանազան հանդիսություններ: Անունը նույն ձևով անցել է եվրոպական լեզուներին:

Մարտը՝ տարվա երրորդ ամիսը, իր անունն ստացել է հռոմեացիների **Մարս** աստծու անունից: Պատերազմի աստվածը լինելուց դեռ շատ ավելի վաղ Մարսը եղել է դաշտերի ու նախիրների աստվածը: Լատիներենում Մարսի սեռական հոլովը **մարտի՛ս** է, որտեղից էլ **մարտ** ձևը փոխանցվում է մյուս լեզուներին:

Ըստ Պ. Բեղիրյանի

36. Համեմատի՛ր այս ամսանունները քո իմացած օտար լեզուների նույն ամսանունների հետ. հնչյունական ի՞նչ տարբերություններ ես նկատում:

37. Կազմի՛ր ածականներ տրված ամսանուններից և դրանցով՝ նախադասություններ:

38. Բացատրի՛ր տրված առածների իմաստը.

Տարին տասներկու ամիս ունի, ամեն ամիս իր պտուղն ունի:

Կարո՞ղ ես որոշել այդ պտուղները:

Տարի կա՝ օր կպահի, օր կա՝ տարի: Պոչիկ-պոչիկ մարտ մտա, մարտը հանեցի, գարուն մտա: Մարտի իննին՝ լագլագը իր բնին:

39. Ստորև տրված ածականներն ու գոյականները առանձնացրո՛ւ ըստ դրական և բացասական իմաստների:

40. Գեղարվեստական գրականությունից ինքդ բե՛ր օրինակներ, որոնցում կան գունանուններ՝տարբերակելով խոսքի մասը:

Կազմի՛ր տեքստ կամ դրական, կամ բացասական իմաստ արտահայտող բառախմբով և բացատրի՛ր՝ ինչու ընտրեցիր տվյալ խումբը:

Բարեհամբույր, նախանձոտ, վայրագ, նենգ, արժանիք, ոխ, քինոտ, բարի, վրեժ, ագահ, արդար, ագահություն, վատություն, սուտ, քեն, ստախոս, արդարություն, արդարամիտ, վայրագություն, վրիժառու, բարեգործ, չարագործ, սեր, սիրաբաղձ, անարդար, նախանձ, կողմնակալ, աչառու, անաչառ, անշահախնդիր, շահասեր, ոխակալ, արժանի, նենգություն:

Լսենք մեծերին

Աշխարհում ազնիվ մարդուց հիանալի բան չկա:

Ռոմեն Ռոլան

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Թվականը՝ որպես խոսքի մաս

1. Ընդհանուր իմաստը՝ *քանակական հատկանիշ, թվային կարգ*
2. Ձևաբանական առանձնահատկությունը՝ *չթեքվող*
3. Տեսակները՝ *քանակական (բացարձակ, բաշխական, կոտորակային) և դասական*
4. Շարահյուսական դերը՝ *գոյականական, մասամբ և բայական անդամի լրացում*

Առարկաների թիվ, քանակ կամ թվային կարգ ցույց տվող բառերը կոչվում են թվական անուններ կամ թվականներ:

Թվային իմաստ պարունակում են նաև այլ խոսքի մասեր, ինչպես՝ գոյականը՝ **տասնամյակ, հիսունամյակ,** ածականը՝ **եռամսյա, տասնօրյա, երկկողմ,** և մակբայը՝ **եռակի, հնգակի, եռապատիկ, տասնապատիկ, հարյուրապատիկ** (սրանք նաև ածական են) և այլն, բայց, ի տարբերություն թվականների, սրանք չեն կարող գրվել թվերով, այլ գրվում են միայն բառերով: Դրա համար էլ տրված բառերը թվական չեն: Թվական կամ թիվ են համարվում միայն այն բառերը, որոնք ունեն թվային արտահայտություն:

Որպես թվական՝ սրանք դրսևորում են որոշակի առանձնահատկություններ.

ա) ցույց են տալիս անսահմանի հասնող թիվ,

բ) մեծամասամբ մենիմաստ բառեր են,

գ) որևէ լրացում չեն վերցնում,

դ) գրավոր խոսքում դրսևորվում են գրության մի քանի ձևերով:

Ուշադրությո՛ւն դարձրեք այս երեք բառերին՝ ***Թվական, Թիվ, Թվանշան:***

Թվական-ը երրորդ խոսքի մասի անվանումն է: Որպես այդպիսին՝ այն ցույց է տալիս **թիվ, քանակ, թվային կարգ:**

Թիվ-ը մաթեմատիկական առարկաների ուսումնասիրման միավորն է, հասկացությունը:

Թվական և ***թիվ*** բառերը հաճախ գործածվում են մեկը մյուսի փոխարեն, օր.՝ Վաթեռլոոյի ճակատամարտը տեղի է ունեցել 1815 **թվականին/թվին**՝ հունիսի 18-ին: Միանշանակ ***թվականին*** ձևը ճիշտ և ընդունված ձևն է, իսկ ***թիվ*** տարբերակը գործածվում է խոսակցական լեզվի ազդեցությամբ: Նույն ձևով ստորև տրված՝ Սուքիասը ծնվել է 2009 ***թվականին/թվին***, նախադասության մեջ:

Հազար ութ հարյուր վաթսունինն ***թվին***
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-
Դժվար է ասել:
Սակայն այդ ***թվին*** *Մայր Հայաստանի*
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում…(Պ.Ս.)

Բանաստեղծական լեզվում գրողը ազատ է բառն ընտրելիս: Տվյալ դեպքում նրան հետաքրքրում է բանաստեղծական տողի չափը, վանկը:

Ես պատմությունից ստացա վեց **թվանշան: Թվանշան** բառը գործածված է *գնահատական* իմաստով: Սրանք հոմանիշ, ասել է թե՝ թույլատրելի ձևեր են:

Թվական անունները լինում են երկու տեսակ՝ **քանակական** և **դասական**:

1 ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Առարկաների քանակ ցույց տվող թվականները կոչվում են քանակական թվականներ:

Քանակական թվականները լինում են **բացարձակ, կոտորակային և բաշխական:**

♦ **Բացարձակ են կոչվում այն քանակական թվականները, որոնք ցույց են տալիս առարկաների քանակն ամբողջ թվերով:**

Բացարձակ թվականներ են միավորները, տասնավորները, հարյուրավորները և բոլոր ավելի բարձր թվականները:

Հայերենի բացարձակ թվականներից բոլոր **միավորները, տասը** և **քսան տասնավորները, հարյուր**-ը, **հազար**-ը, **միլիոն**-ը, **միլիարդ**-ը կազմությամբ **պարզ** թվականներ են, որովհետև կազմված են մեկ արմատից:

Երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն թվականները **ածանցավոր** են, որովհետև կազմված են ***-սուն*** ածանցով:

Բոլոր մյուս թվականները **բարդ** են կամ **բարդածանցավոր**, որովհետև կազմված են մեկից ավելի արմատներից կամ արմատներից ու ածանցներից: Օրինակ՝ **տասնութ, քսանչորս, հարյուր հինգ, հազար չորս հարյուր քսանմեկ** թվականները կազմված են մեկից ավելի արմատներից (**տասն-ութ, քսան-չորս** և այլն), ուրեմն բարդ են, իսկ **ութսունվեց, հարյուր երեսունյոթ, հազար իննսուներեք** թվականները բարդածանցավոր են, որովհետև կազմված են մեկից ավելի արմատներից և ***-սուն*** ածանցից:

Բարդ թվականներն իրենց կազմությամբ **կցական** կամ **հարադրական բարդություններ** են:

Կցական բարդություններ են այն բոլոր թվականները, որոնք կազմված են տասնավորից ու միավորից (11-ից մինչև 99-ը), օրինակ՝ **տասնմեկ, հիսունվեց, իննսուներկու:**

Հարադրական բարդություններ են 100-ից բարձր բոլոր բարդ թվականները, օրինակ՝ **հարյուր մեկ, հազար հինգ հարյուր յոթանասուն:**

Բոլոր բացարձակ թվականները գրվում են կա՛մ **արաբական թվանշաններով** (1, 2, 3 և այլն), կա՛մ **բառերով** (մեկ, երկու, երեք և այլն): Բարդ թվականներից կցական բարդությունների բաղադրիչները գրվում են միասին, իսկ հարադրական բարդությունների բաղադրիչները՝ առանձին-առանձին, օրինակ՝ **վաթսունութ, քառասունչորս,** բայց՝ **հազար երկու հարյուր վաթսուն**:

9 թվականը միշտ եռատառ է՝

ինը//ինն

տասնինը//ինն	**իննին**
հարյուր ինը//ինն	**իննսունվեց**

10 թվականը միշտ քառատառ է՝

տասը//տասն

հարյուր տասը	**տասներորդ**
հազար տասը	**տասնմեկ**

Բացառություն՝ **տասական**

Քնար, տասնաղի

Հոլովվելիս, հոգնակիում և բառակազմության մեջ՝ **տասն//տաս**

- **տասի, տասից, տասով, տասեր**
- **տասնապատիկ, տասնաղի, տասնյակ, տասնօրյա(կ)**
- **տասանիշ, տասգլխանի, տասանոց, տասանորդ**

1. **1. Արտագրի՛ր՝ բացարձակ թվականները գրելով բառերով: 2. Հատուկ անունները գրի՛ր մեծատառով:**

Ըստ հերոդոտի՝ մ. թ. ա. 610 թ. փյունիկյան ծովագնացները տեսել են բարե-

հուսո հրվանդանը, իսկ մ. թ. 921 թ. ջենովացի վիվալդի եղբայրները մոտեցել են նրան: Բայց այն հայտնաբերեց բարդուղիմեոս դիասը 1486 թ.: Վասկո դա գաման 1497 թ. նոյեմբերի 20-ին անցավ հրվանդանը:

1497-1648 թթ. պորտուգալացիները և հոլանդացիները գաղութացման անհաջող փորձ կատարեցին: Միայն 1652 թվականին նավատորմի վիրաբույժ ժան-անտոնի վան ռիզբեկը բերդ կառուցեց և քեյփթաուն քաղաքի հիմքը դրեց: Գաղթականներն այնքան լավ էին պահպանել իրենց նախնիների սովորությունները, որ հարավային աֆրիկայի այդ գաղութը կարծես հոլանդիայից կտրած մի անկյուն լիներ: 1838 և 1839 թթ.՝ տեղացի սևամորթների ազատագրումից հետո նրանք չհամաձայնեցին հաշտվել այդ պայմանների հետ, և 5000 մարդ նախընտրեցին գաղթել օրանժ գետի մյուս ափը: Անգլիան չուզեց, որ այս համառ մենամարտում վերջին խոսքը նրանց պատկանի, և 1848 թ. հունվարի 3-ին համապատասխան հրովարտակ հրապարակվեց *(թարգմ.)*:

2. **Առանձին այունակներում դո՛ւրս գրիր բարդ և բարդածանցավոր թվականները և գրի՛ր բառերով:**

Հայկական լեռնաշխարհ

Հայկական լեռնաշխարհը մի ընդարձակ լեռնային երկիր է, որի տարածությունը 40000 քառ. կմ է, միջին բարձրությունը՝ 1700 մ: Նրա կենտրոնում Արարատ լեռան հրաբխային զանգվածն է՝ Մեծ Մասիս (5156 մ) և Փոքր Մասիս (3914 մ) գագաթներով: Իր բարձրությամբ լեռնաշխարհում երկրորդը Սիփանն է (4434 մ), երրորդը՝ քառագագաթ Արագածը (4090 մ): Վերջինս Հայաստանի ամենաբարձր լեռն է: Հաջորդը Կապուտջուղն է (3906 մ) Զանգեզուրի լեռնաշղթայում: Հայկական լեռնաշխարհի մյուս բարձր լեռներն են Բյուրակնը (3650 մ), Սուկավետը (3445 մ), Թոնդրակը (3542 մ), Ծաղկոց լեռը (3519 մ), Նեմրութը (3050 մ), Թեղենիսը (2846 մ), Նպատը (2332 մ), Մարութա սարը (2962 մ): (ՀՊԱ)

Ո՞ր լեռների բարձրությունները կարող ես ցանկացած պահի հիշել:

♦ **Բաշխական են կոչվում այն քանակական թվականները, որոնք ցույց են տալիս առարկաների բաշխումը որոշակի թվային քանակով:** Օրինակ՝ Զորասյուները բաղկացած են **ութական** ջոկատից:

Այս նախադասության մեջ **ութական** բառը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր զորասյուն թվով քանի ջոկատ է ընդգրկում, այսինքն՝ պարզում է, թե ջոկատներն ինչ քանակով են բաշխված զորասյուների միջև:

Բաշխական թվականները կազմվում են երկու ձևով.

1. Բացարձակ թվականին ավելացնելով ***-ական*** վերջածանցը, ինչպես՝ **մեկական, իննական, վաթսունական, հարյուրական**:

Այս ձևով կազմված բաշխականները թվանշաններով գրելիս թվանշանից հետո դրվում է գծիկ, ապա՝ **-ական** ածանցը, օրինակ՝ 22-ական, 100-ական:

2. Բացարձակ թվականի կրկնությամբ, եթե հատկապես փոքր կամ կլոր թվեր են, ինչպես՝ **մեկ-մեկ, հինգ-հինգ, հազար-հազար:**

Մեծ թվերի դեպքում, եթե կլոր թվեր են, բաշխական են կազմվում նաև միայն առաջին թվականի կրկնությամբ, ինչպես՝ **հինգ-հինգ հարյուր, երկու-երկու հազար:**

3. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով հետևյալ բացարձակ թվականներից կազմված բաշխականները՝** 4, 6, 12, 36, 80, 110:

♦ **Կոտորակային կոչվում են այն թվականները, որոնք ցույց են տալիս միավորի մեկ կամ մի քանի հավասար մասերից կազմված թվեր:**

Օրինակ՝ Գյուղացիները բերքի **երկու երրորդը** հավաքել են, **մեկ երրորդը** դեռ մնում է:

Այս նախադասության մեջ **երկու երրորդ** և **մեկ երրորդ** բառերը կոտորակային թվականներ են:

Կոտորակային թվականները հարադրական բարդություններ են, որոնց առաջին բաղադրիչը՝ համարիչը, բացարձակ թվական է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ հայտարարը, կազմվում է ***-րորդ, -երորդ*** կամ ***-երորդական*** ածանցներով, ահա թե ինչու կոտորակային թվականները գրվում են առանձին:

Օրինակ՝ **երկու երրորդ, հինգ վեցերորդ, երեք հարյուրերորդական, քսանութ հազարերորդական**:

4. **Հետևյալ բացարձակ թվականներից կազմի՛ր կոտորակային թվականներ՝ գրելով թվանշաններով և բառերով:**

3 և 4, 5 և 9, 3 և 100, 8 և 10, 1 և 2, 7 և 20, 13 և 66:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ռուբիկ-կուբի՞կ, թե՞...

Շատերի համար ռուբիկ-կուբիկը սոսկ խաղ է՝ յուրահատուկ մի խաղալիքով, որ մայրիկները գնում են իրենց երեխաների համար, որովհետև նրանք ուղղակի այս խաղալիքն էլ են ուզում ունենալ:

Ես գիտեմ նաև, որ այս խաղալիքը ստեղծվել է 1974թ. և վաճառվել աշխարհում ռեկորդային քանակով՝ 350 միլիոն, և դարձել համար առաջինը վաճառվող խաղալիքների մեջ:

Բայց ես այս խաղալիքին միայն այդպես չեմ նայում: Ես այդ խաղալիքի ու անշարժ շարված ուղղանկյուն կուբիկների մեջ (դասական ռուբիկ-կուբիկներում յուրաքանչյուր շերտ բաղկացած է 9 հավասար քառակուսիներից) կյանք եմ տեսնում, մարդու կյանք:

Ամենասկզբում պիտի հավաքվի սպիտակի խաչը, սպիտակ, ինչպես նորածինն է՝ մաքուր ու անաղարտ: Հավաքում ես սպիտակի բոլոր անկյունները ու անցնում հաջորդին. երկրորդը մարդու կյանքի բարդ շրջան է՝ պատանեկությունն ու երիտասարդությունը, և եթե մեկ սխալ անկյուն բաց թողնես, ոչինչ չի շարունակվի: Այդպես էլ մարդը. իր կյանքի այդ փուլում կատարած ցանկացած լուրջ սխալ կործանում է նրան, և հարց է՝ նա արդյոք կվերագտնի իրեն մեր բազմաբղետ այս կյանքում: Առաջին շերտը հեշտ է հավաքել, որովհետև այդ տարիքում մեր կողքին են մեր ծնողները: Երկրորդ շերտը ավելի է դժվարանում, որովհետև արդեն ծնողները մեզնով զբաղվելու ժամանակ չունեն, առանձնապես մենք էլ իրենց չենք վստահում մեր գաղտնիքները: Երկրորդ շերտը հաղթահարելուց հետո գալիս է երրորդ, մեծ և հասուն կյանքը, փնտրում ենք կյանքի ընկեր կամ ընկերուհի, կազմում ընտանիք, որը հաճախ ստացվում, բայց հաճախ էլ չի ստացվում: Հավաքում ենք երրորդ՝ դեղինի շերտը: Հավաքում ենք ամբողջ դեղինը՝ սկսելով դեղինի խաչից, ու եթե հավաքվեց այն ամբողջովին, ուրեմն մեր կյանքը ստացվել է և վերջ: Մի՛ մտածեք, թե ես սենտիմենտալ եմ, ուղղակի ուզում եմ, որ ամեն կատարած քայլի մեջ մենք իմաստ ու նպատակ դնենք կամ տեսնենք: Դե ի՛նչ, երրորդ շերտն էլ է հավաքված: Ուրեմն խաղն ավարտված է:

Արեգ Խաչիկյան,
8-րդ դասարանի աշակերտ

5. **Ո՞վ է *Ռուբիկ-կուբիկի* հեղինակը և ընդհանրապես ի՞նչ գիտես այս խաղալիքի մասին. օգտվի՛ր համացանցից:**
6. **Կարողանո՞ւմ ես հավաքել այն և որքա՞ն ժամանակում:**
7. **Համամի՞տ ես մեր հեղինակի հետ. քեզ համար ընդունելի՞ է նման մոտեցումը:**
8. **Այս բոլոր հարցերի մասին քո տետրում գրառումներ կատարի՛ր և արտահայտվի՛ր բանավոր:**
9. **Դո՛ւրս գրիր բոլոր թվականները՝ նշելով տեսակը, փոխանվանական գործածությունները:**

Իսկ դուք կարո՞ղ եք նույն ձևով ներկայացնել ձեր պատկերացումները տրված պատկերների համեմատությամբ. որ խումբը ավելի լավ կպատասխանի, կորոշի ուսուցիչը:

2 ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Առարկայի թվային կարգ ցույց տվող թվականները կոչվում են դասական թվականներ:

Օրինակ՝ **առաջին, երկրորդ, տասներորդ, քսանհինգերորդ, հարյուրերորդ:**

Դասական թվականները կազմվում են՝ **-րորդ** կամ **-երորդ** վերջածանցներ ավելացնելով բացարձակ թվականներին. **երկու, երեք, չորս** թվականներին ավելացվում է **-րորդ**, ինչպես՝ **երկրորդ, երրորդ, չորրորդ,** բոլոր մյուս թվականներին՝ **երորդ** ածանցը, ինչպես՝ **հինգերորդ, վեցերորդ, հիսուներորդ, երեք հարյուրերորդ, հազարերորդ, միլիոներորդ** և այլն:

Մեկ բացարձակ թվականից դասականի ձև չի կազմվում. դրա փոխարեն գործածվում է **առաջին** բառը: Սակայն եթե **մեկ** թվականը բարդ թվականների վերջին բաղադրիչն է, ապա կազմվում է **մեկերորդ** ձևը, օրինակ՝ **տասնմեկերորդ, հարյուր մեկերորդ** և այլն:

Երկու, երեք, չորս թվականները բարդությունների վերջին բաղադրիչ լինելու դեպքում նույնպես ստանում են **-երորդ** ածանցը, ինչպես՝ **տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, հարյուր երկուերորդ** և այլն:

Կցական և հարադրական բարդություններով կազմված բացարձակ թվականների դասականը կազմվում է՝ **-երորդ** մասնիկը միայն վերջին բաղադրիչին ավելացնելով, ինչպես՝ **վաթսունհինգերորդ, հարյուր իննսունութերորդ, հազար ինը հարյուր վաթսունհինգերորդ** և այլն:

Դասական թվականները գրվում են.

1. Արաբական թվանշաններով. այս դեպքում թվանշանից հետո դրվում է գծիկ, ապա՝ **-րդ**, որը կարդացվում է **-երորդ** կամ **-րորդ**, օրինակ՝ 5-րդ (հինգերորդ), 100-րդ (հարյուրերորդ), 12-րդ (տասներկուերորդ) և այլն:

Առաջին բառը գրվում է **1-ին** և կարդացվում է **առաջին**, բայց կարող է կարդացվել նաև **մեկին**, եթե գործածվում է որպես քանակական թվական: Օրինակ՝ Գոհարիկը սովորում է համալսարանի **1-ին (առաջին)** կուրսում: Հունվարի **1-ին (մեկին)** աշակերտները շնորհավորեցին իրենց ուսուցիչների Նոր տարին:

2. Հայերեն այբուբենի տառերով՝ դրանց թվական արժեքի համապատասխան. օրինակ՝ **ա (1-ին), բ (2-րդ), ժ (10-րդ), ժգ (13-րդ), լա (31-րդ), ճ (100-րդ)** և այլն:

3. Հռոմեական թվանշաններով՝ **I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XX, XXX, XL (40-րդ), L (50-րդ), LX (60-րդ), XC (90-րդ), C (100-րդ), CD (400-րդ), D (500-րդ), DC (600-րդ), M (1000-րդ)** և այլն:

4. Լրիվ բառերով՝ **առաջին, վաթսուներորդ, հարյուրերորդ** և այլն:

10. **Կազմի՛ր դասական թվականներ հետևյալ բացարձակ թվականներից և գրի՛ր բառերով՝** 6, 2, 3, 169, 2124, 13, 92, 3, 4, 5, 31, 47, 59:
11. **Հետևյալ դասական թվականները գրի՛ր հայերեն այբուբենի տառերով, հռոմեական թվանշաններով և բառերով՝** 3-րդ, 4-րդ, 9-րդ, 13-րդ, 10-րդ, 68-րդ:
12. **Կազմի՛ր դասարանի աշակերտների ցուցակը, դասավորի՛ր այբբենական կարգով և հերթականությունը նշանակի՛ր հայերեն տառերով:**
13. **Տարբեր խոսքի մասերի մեջ, տարբեր քերականական կարգեր արտահայտիր թվերով, ինչպես՝** 7 հոլով:

Թվականների գործածությունը

Նախադասության մեջ թվական անունը՝ որպես լրացում, գործածվում է սովորաբար գոյականի հետ:

Օրինակ՝ *Խորհուրդ* չի ընդունում ապագայի երգը,
Եվ ա՛յս է իմ **խորհուրդը յոթերորդ:** (Ե. Չ.)

Թվական լրացում ունեցող գոյականը կարող է լինել հոգնակի կամ եզակի թվով: Գոյականը սովորաբար եզակի է լինում՝

- եթե չափի, գնի, քանակի, ժամանակի միավոր է կամ առնվում է իբրև այդպիսին: Օրինակ՝ Գարեգինը **քսան օր** մնաց Մոսկվայում: Ավտոմեքենան սլանում է **ժամում վաթսուն կիլոմետր** արագությամբ: Վարդանը գնեց **տասներկու մատիտ:** Ակումբում հավաքվել է **երկու հարյուր հոգի:**
- Եթե ուշադրությունը բևեռվում է հատկապես թվականով արտահայտված քանակի վրա: Օրինակ՝

  Հին աշխարհը ամեն օր
  ***Հազար** մարդ է մտնում նոր,*
  ***Հազար** տարվան փորձն ու գործ*
  Սկսվում է ամեն օր: (Հ. Թ.)

Գոյականը սովորաբար հոգնակի է լինում՝

- եթե գործածվում է որոշյալ առմամբ:

Օրինակ՝ **Չորս զավակներն** էլ հետևեցին հոր օրինակին:
Երկու սուրհանդակները ամրոց մտան կեսգիշերին:

- Թվականները ածականների նման կարող են գործածվել գոյականաբար, հոդ ստանալ, հոլովվել: Օրինակ՝ **Երեխաներից տասնութը գնացին թանգարան, իսկ քսանը՝ սրճարան:**

Այս նախադասության մեջ **տասնութ** և **քսան** թվականները գործածվել են գոյականաբար:

Գոյականաբար գործածվող թվականները հոլովվում են *ի* հոլովումով և հոգնակի չեն ունենում: Միայն **երկու** թվականը հոլովվելիս ուրիշ ձև է ստանում՝ **երկուսը**, և ունենում է հետևյալ պատկերը:

Ուղղ.	**երկուսը**	Բաց.	**երկուսից**
Սեռ.	**երկուսի**	Գործ.	**երկուսով**
Տր.	**երկուսին**	Ներգ.	**երկուսում**
Հայց.	**երկուսը, երկուսին**		

14. **Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ թվականները գործածելով և՛ որպես թվական, և՛ որպես գոյական** 3, 7, 10, 80:

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թվերի աշխարհում...

Մեկ-ը բնական թվերից առաջինն է. մոտ 10 000 տարի առաջ մարդ-վայրենին ձեռքն է վերցրել մեկ առարկա՝ դրանով միավորն անջատելով շատից՝ բազմությունից:

Հաշվի զարգացման առաջին աստիճանում մարդը բառեր չի ունեցել թվերն անվանելու համար, քանակական հարաբերություններն արտահայտել է մարմնի մասերի իմաստավորված շարժումներով, հաշվելի առարկաների տեղաշարժումներով: Այսպես՝ երկու առարկա արտահայտող թվի փոխարեն օգտագործվել է *այնքան, որքան ձեռք ունեմ* բառակապակցությունը: Ավելի ուշ թվերի անվանումների զարգացումը կախման մեջ է դրվել մատային հաշվից. ձեռքերի, ապա ոտքերի մատների օգտագործումը հնարավորություն է տվել անցնել չորսից մեծ թվերին: Օրինակ՝ ավստրալացիների մոտ 6-ը համարժեք է *մի ձեռք և մյուս ձեռքի մեկ մատ,* 10-ը *2 ձեռք,* 11-ը *երկու ձեռք և մեկ մատ* բառակապակցություններին, իսկ 20-ը *մարդ* բառին:

Թվերը հնում ունեցել են մոգական ուժ: Շատ վաղուց Ճապոնիայում *մահ* բառին համահունչ 4 թիվը, *տանջանք, ցավ* բառերին համահունչ 9 թիվը դժբախտ թվեր են համարվում: Եվրոպայից փոխառել են նաև երրորդ սև-ը՝ 13-ը: Չինաստանում չորրորդ հարկ չկա շենքերում, Ամերիկայում չորրորդ և տասներեքերորդ հարկերը: Իսպանիայում Ամանորի գիշերը խաղողի 12 հատիկ պետք է կուլ տալ վերջին մեկ րոպեում, որպեսզի իր նպատակը իրականացվի:

Մեզ՝ հայերիս համար խորհրդանշական են 4, 7, 9, 11, 60, 666 թվերը:

Մարդկությունն անցյալում ստեղծված տարրական հաշիվը հարմարեցրել է

կյանքի աճող պահանջներին՝ անուններ տալով ամենամեծ թվերին՝ *միլիոն, միլիարդ, տրիլիոն, բիլիոն, գուգոլ, սկստրիլիոն, կվադրիտրիլիոն* և այլն: Ամերիկացի գիտնականները հաշվել են, որ Երկիր մոլորակը կշռում է 5972 պետատոննա, դա 5972 թիվն է, որին հաջորդում է 18 զրո: Իսկ գիտե՞ք արդյոք, թե որքան ժամանակ կպահանջվի Երկրի զանգվածին հավասար ծանրությունը գոնե մեկ սմ բարձրացնելու համար: Ոչ պակաս, քան 30 հազար բիլիոն տարի: Երկրի մասսան աստղաբաշխներին հայտնի է՝ 6 000 000 000 000 000 000 000 տոննա:

(Ըստ Բ.Ն. և ուրիշների Չնաբանություն գործնական դասագրքի)

Ի՞նչ գիտես մոգական թվերի մասին տարբեր երկրների պատմություններից:ից: Իսկ ո՞րն է քո խորհրդանիշ թիվը:

15. **Ի՞նչ սովորեցիր այս տեքստից. տեքստի ի՞նչ տեսակ կարելի է համարել սա:**
16. **Նման հետաքրքիր նյութ գտի՛ր համացանցից, գիտական տարբեր ամսագրերից և ներկայացրո՛ւ դասարանին:**
17. **Դո՛ւրս գրիր բոլոր թվերը և դասակարգի՛ր ըստ տեսակների:**
18. **Դո՛ւրս գրիր տեքստից հինգ գոյական և վերլուծի՛ր ձևաբանորեն:**
19. **Դո՛ւրս գրիր տեքստից հինգ ածական և վերլուծի՛ր ձևաբանորեն:**

Իմաստություններ *չորս* թվի շուրջ

Չորս բան մարդու հարգը բարձրացնում են՝ բարի խոսելը, խոնարհ մնալը, քիչ խոսելը, մեծ ու փոքրից ամաչելը:

Չորս բան մարդու աչքի լույսը շատացնում են՝ ծաղիկներին նայելը, բոբիկ ոտքով կանաչի վրա քայլելը, ջրի հետ դեպի վեր գնալը, բարեկամներին տեսնելը:

Չորս բան անգին են՝ գիտություն, առողջություն, ազատություն, առաքինություն:

Չորս բան անդառնալի են՝ նետված քարը, ասված խոսքը, արած գործը, ժամանակը:

Չորս բան վնասում են առողջությունը՝ անկարգ վարքը, ավելորդ կերակուրը, ցուրտը, երկար ու ծանր աշխատանքը:

Չորս բան արդարություն չեն ճանաչում՝ սերը, ատելությունը, երկյուղը, շահասիրությունը:

Չորս բան անկարելի է գողանալ՝ գիտությունը, կամքը, արհեստը, խելքը: Խիկար Իմաստուն

Ա.

20. **Ո՞ր իմաստությունը քեզ ավելի դուր եկավ. արտահայտվի՛ր բանավոր:**
21. **Դու ի՞նչ իմաստություններ գիտես ուրիշ թվերի շուրջ:**

Բ.

22. **Դո՛ւրս գրիր գոյականները, նշի՛ր ձևաբանական հատկանիշները:**
23. **Դո՛ւրս գրիր ածականները, նշի՛ր ձևաբանական հատկանիշները:**
24. ***Ինը*** **թվականը իբրև բաղադրիչ գործածելով՝ ստացի՛ր թվականի բոլոր տեսակներից և կազմի՛ր դրանցով նախադասություններ:**

Էջմիածնի Մայր տաճարն ունի հազար յոթ հարյուր տարվա պատմություն: Այն կառուցվել է չորրորդ դարում՝ երեք հարյուր մեկ– երեք հարյուր երեք թվականներին: Տաճարը աշխարհի այն հազվագյուտ կառույցներից է, որտեղ շուրջ տասնութ դար կյանքը շարունակվել է առանց ընդմիջման: Չորս հարյուր հիսուներեք թվականին Մայր Աթոռը Էջմիածնից տեղափոխում են Դվին, ապա ինը հարյուր ութսունութ թվին կրկին հաստատում Էջմիածնում: Հինգերորդ դարի սկզբին այստեղ բացվել է առաջին դպրոցը:

25. **Տեքստի ո՞ր տեսակն է սա՝ նկարագրակա՞ն, թե՞ դատողական, փորձի՛ր հիմնավորել:**
26. **Քանի՞ թվական կա այս տեքստում. խմբավորի՛ր ըստ տեսակների:**
27. **Տեքստից դո՛ւրս գրիր բացարձակ թվականները, դարձրո՛ւ բաշխական և դասական:**
28. **Տրված առածներում գտի՛ր թվականները և նշի՛ր, թե ինչ պաշտոն են կատարում:**

Երկու ձեռքն արժեն մի գլուխ: Մի՛ ունեցիր հարյուր դահեկան, ունեցի՛ր հարյուր բարեկամ: Երկու աչքիցդ մեկին մի՛ հավատա: Կոպեկի վրա քառասուն հանգույց կգցի: Մին մի՛ տա, երկու կուզի: Յոթը գյուղ մեկ էշի է բարձում: Տանը յոթը խև, մեկն էլ երդիկից ընկավ: Մեկը մեկով, երկուսը՝ աստծով: (Ա. Ղ.)

29. **Բացատրի՛ր տրված առածների փոխաբերական իմաստները:**
30. **Ինքդ հիշի՛ր թվական պարունակող առածներ ու դարձվածքներ:**

Այբուբենի որոշ տառեր ինչ-որ պատկերներ են հիշեցնում. փորձի՛ր նկարել և հիմնավորել, օրինակ՝ *Ծ - ծիրան* **և այլն:**

31. **Հետևյալ հատվածներում գտի՛ր թվականները և որոշի՛ր դրանց տեսակը:**

1. Հայ առաջին տպագիր գիրքը լույս է տեսել Վենետիկում 1512 թվին, իսկ հայ առաջին տպագրիչը Հակոբ Մեղապարտն է: 15-րդ դարի նշանավոր գրիչ Հովհաննես Մանկասարենցը, 14 տարեկանից սկսած, 72 տարի

շարունակ ձեռագիր է ընդօրինակել՝ մեզ ժառանգելով 132 ձեռագիր մատյան:

2. Եգիպտական խոշոր բուրգերը երեքն են՝ Քեոփսի, Քեփրենի և Միքերինի: Դրանք կառուցվել են մ. թ. ա. 3-րդ հազարամյակում: Քեոփսի բուրգն ունի 147 մ բարձրություն: Այն կառուցված է 2 միլիոն 3 հարյուր հազար քարաբեկորներից, որոնցից յուրաքանչյուրը կշռում է միջին հաշվով 2,5 տոննա:

Այս բուրգը կառուցվել է որպես դամբարան, կառուցման աշխատանքը տևել է 20 տարի, որին մասնակցել է 100 հազար ստրուկ: 17-րդ դարում բուրգ այցելած անգլիացի մաթեմատիկոս Ջոն Գրեյվսը նկատել է, որ բուրգի մեջ կան անցքեր, որոնք ծառայել են իբրև աստղագիտական դիտափողեր *(թարգմ.)*:

32.* **Բառերով գրի՛ր հետևյալ թվականները:**

III, IX, XI, XXII, XLVI, L, LXVII, LXX, CXIX, V, CII:

33.* **Կազմի՛ր հետևյալ թվականների դասականները և գրի՛ր բառերով, հայերեն այբուբենի տառերով ու հռոմեական թվանշաններով:**

36, 61, 103, 1247, 301:

Մեր թվարկության սկիզբը համարվում է Քրիստոսի ծնունդը՝ 1 թվականը: Ուստի ունենք համառոտագրություններ՝

Ք. ա. *– Քրիստոսից առաջ,*

Ն. Ք. *– նախքան Քրիստոսը,*

մ. թ. ա. *– մեր թվարկությունից (թվականությունից) առաջ:*

34. **Նկարի՛ր տրված գծապատկերը և յուրաքանչյուր տեսակի տակ բե՛ր համապատասխան օրինակներ:**



35. **Դիտե՛ք հայկական** *«Հեքիաթ հայելու մասին»* **մուլտֆիլմը, արտահայտեք ձեր ընկալումները ֆիլմի սցենարի, դերասանների խաղի մասին: Մուլտֆիլմը բեմականացրեք դասարանում:**

ԱՄՓՈՓԻՉ

- Ի՞նչ է ցույց տալիս թվականը և քանի՞ տեսակ է լինում:
- Ինչպե՞ս են կազմվում բաշխական և դասական թվականները:
- Սովորի՛ր այբուբենի տառերի թվային արժեքը:
- Թվականները նախադասության մեջ ի՞նչ անդամ կարող են դառնալ:

Կա՞ն, ի՞նչ ես կարծում, անկարևոր թվեր:

Բառերի շտեմարան

Թվականների արմատների մասին

Երեք և *չորս* թվականները ունեն նաև **եռ** և **քառ** արմատները:

Երկու բառը բարդությունների մեջ հանդես է գալիս նաև **երկ** ձևով՝ **երկամյակ, երկկողմանի** և այլն:

Հիսուն բառիմեջ **հինգ**-ի **ն** և **գ** հնչյուններն ընկել են:

Վաթսուն բառի մեջ **վաթ**-ը **վեց** արմատի՝ հին ժամանակներում հնչյունափոխված ձևն է:

Յոթանասուն բառիմեջ **յոթան**-ը **յոթ** բառի գրաբարյան սեռական-տրականի ձևն է:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Համառ ուսուցիչն ու ծույլ աշակերտը

Ուսուցիչը՝ Արենին.

- Ինչո՞ւ գիրքդ չես բերել:

- Մոռացել եմ, հաջորդ դասին կբերեմ,- պատասխանեց Արենը:

Հաջորդ դասին.

- Գիրքդ բերել ես, բա տե՞տրդ...

- Մոռացել եմ, հաջորդ դասին կբերեմ,- ասաց Արենը:

Հաջորդ դասին.

- Տետրդ բերել ես, իսկ տնայինդ ինչո՞ւ չես գրել:

- Մյուս դասին կգրեմ:

Հաջորդ դասին.

- Տնայինդ գրել ես, իսկ տառերն ինչո՞ւ ես այդքան թեք գրել,- վրա տվեց համառ ուսուցչուհին:

Լսենք մեծերին

Համեստությունը ոչ միայն առաքինության զարդն է, այլև պահապանը:

Ջ. Աղիսոն

ԴԵՐԱՆՈՒՆ

Մ. Սարյան. «Եգիպտական դիմակներ»,https://times.am

Դերանունը՝ որպես խոսքի մաս

1. **Ընդհանուր իմաստը՝** *առարկա, առարկայի և գործողության հատկանիշ*
2. **Ձևաբանական առանձնահատկությունը՝** *թեքվող և չթեքվող*
3. **Տեսակները՝** *անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ, ժխտական*
4. **Շարահյուսական դերը՝** *ենթակա, ստորոգյալ կազմող բառ, գոյականական և բայական անդամի լրացում*

♦ **Դերանուն** նշանակում է անվան դեր կատարող բառ:

Խոսքում գոյական, ածական, թվական անունները չկրկնելու համար հաճախ դրանք փոխարինում են **անվան դեր կատարող** բառերով, այսինքն՝ **դերանուններով,** ասել է թե՝ դերանունները գոյական, ածական, թվական անունների, ինչպես նաև մակբայների փոխարեն գործածվող բառեր են:

Դերանվան նշանակությունը նախադասությունից դուրս ընդհանուր է, և միայն նախադասության մեջ կարելի է իմանալ, թե տվյալ դերանունը ի՛նչ որոշակի առարկա կամ ինչպիսի՛ որոշակի հատկություն է ցույց տալիս:

Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք մատնացույց են անում առարկա, հատկանիշ, քանակ՝ առանց դրանք անվանելու:

Դերանունները լինում են ութ տեսակ՝ **անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական:**

1. **1. Ընդգծված դերանունները ի՞նչ նշանակությամբ կամ ո՞ր բառի փոխարեն են գործածված: 2. Այդ դերանուններից ո՞րը ի՛նչ հարցի է պատասխանում և նախադասության մեջ ի՛նչ պաշտոն է կատարում:**

Սովորում էր **նա** Վանի կենտրոնական վարժարանում, բայց **նրա** մասին խոսում էին **բոլոր** դպրոցներում:

– Սովորեցե՛ք Աղասի Խանջյանի նման,– հաճախ լսում էինք **մենք**՝ Երամյան դպրոցի աշակերտներս, **մեր** ուսուցիչներից:

– Աղասի Խանջյանի մայրն էլ կասի՝ տղաս դպրոց կերթա, **քո** մայրն էլ,– դատում էին մայրերը՝ դատապարտելով **իրենց** զավակներին:

Բայց եթե Վանի զանազան դպրոցների աշակերտները դպրոցներում միայն լսում էին **նրա** մասին, ապա **ինձ** վիճակված էր լսել **նրա** անունը նաև տանը: **Ամեն** անգամ, երբ մայրս լինում էր **նրանց** մոտ, մի **ամբողջ** շաբաթ խոսում էր Աղասու մասին:

– Մարդ **այդպիսի** տղա ունենա. խելոք, սուս-փուս, ժամերով՝ գրքի, տետրակի հետ… **Բոլոր** դասերից հինգ ու խաչ, հինգ ու խաչ…

Ամեն անգամ մայրիկը վերադառնում էր ավելի հարուստ տպավորություններով, պատմում նորանոր մանրամասներ նրա մասին, պատմում եռանդով ու ոգևորությամբ և վերջացնում անփոփոխ եզրակացությամբ. «Աղասուց օրինակ առ…»: Գ. Մ.

1 ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անձնական դերանունները մատնացույց են անում խոսող, խոսակից կամ մի երրորդ անձ՝ առանց դրանք անվանելու:

1. Խոսքի մեջ խոսողը առաջին դեմքն է, խոսակիցը՝ երկրորդ, իսկ այն անձը կամ առարկան, որի մասին խոսվում է՝ երրորդ: Ըստ այդմ՝ անձնական դերանունները լինում են երեք դեմքի:

♦ Առաջին դեմքի են **ես, ինքս** դերանունները, որոնք մատնացույց են անում **խոսող անձ կամ դեմք**: Օրինակ՝

Կենսական ծովի հույզերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր: (Ավ. Իս.)
Ինքս էլ չգիտեմ, թե ինչ եմ ուզում:

Ո՞վ է նկարում *ես*-ը. կարող ես հիմնավորել քո տեսակետը:

♦ Երկրորդ դեմքի են **դու, ինքդ** դերանունները, որոնք գործածվում են խոսակցի անվան փոխարեն և մատնացույց են անում **խոսակից անձ կամ դեմք**:

Օրինակ՝ – Քեռի՛ Դանիել, ամենքից շնորհքով **դու** գտնվեցիր:

♦ Երրորդ դեմքի են **նա, ինքը** դերանունները, որոնք գործածվում են մի երրորդ անձի անվան փոխարեն և մատնացույց են անում ո՛չ խոսող, ո՛չ էլ խոսակից, այլ **մի ուրիշ անձ** կամ **դեմք:**

Օրինակ՝ Հին հողագործն ուրիշ բան էր որոնում. **նա** ուզում էր տեսնել ողկույզի առաջին ժպիտը:

Դուռը բացեց **ինքը՝** Ահարոնը՝ ծխախոտը ատամներով բռնած:

2. Անձնական դերանուններն ունեն երկու թիվ՝ **եզակի և հոգնակի:**

	Եզակի	**Հոգնակի**
I դեմք –	ես, ինքս	մենք, ինքներս
II դեմք –	դու, ինքդ	դուք, ինքներդ
III դեմք –	նա, ինքը	նրանք, իրենք

Ինքները ձևը գործածական չէ: Դրա փոխարեն գործածվում է **իրենք:**

3. Գործող անձը կամ դեմքը հատկապես շեշտելու համար **ինքս, ինքդ, ինքը** դերանունները հաճախ գործածվում են **ես, դու, նա** դերանունների հետ՝ **ես ինքս, դու ինքդ, նա ինքը** առանց կետադրության. օրինակ՝ Իսկ ձեր վերքերին, պարո՛ն, **ես ինքս** բժիշկ կլինեմ:

Նա ինքը չէր լսում իր ձայնը, և ամենից սարսափելի նրան թվաց այդ:

Ես ինքս, նա ինքը դերանունները գրվում են անջատ և կետադրական որևէ նշանով չեն տրոհվում:

4. Անձնական դերանունները գործածվում են նաև կենդանիների ու առարկաների անունների փոխարեն, երբ սրանք խոսողի կամ գրողի կողմից դիտվում են որպես անձ, օրինակ՝ ***Ես** մի անտեր ծերուկ եմ,*

Բայց պատվավոր մի մուկ եմ: (Աբ. Խ.)

*Կմեռնեմ, միայն թե **դու** դարերում ազատ խշշաս,*

Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռո՜ւ նախիրյան դալար բարդի: (Հ. Ս.)

Քաղաքավարության համար **դու**-ի փոխարեն գործածվում է **դուք** (նաև հոլովված ձևերը), որը գրվում է մեծատառով՝ **Դուք (Ձեր, Ձեզ, Ձեզ(ա)նից, Ձեզ(ա)նով, Ձեզ(ա)նում)**. օրինակ՝ *Այս երեկո կրկին **Դուք***

Եկաք, որպես հուշ: (Վ. Տ.)

2. **Դո՛ւրս գրիր անձնական դերանունները՝ նշելով դրանց դեմքն ու թիվը:**

Կես ժամ էր մնում, որ ես տանից դուրս եկա և դիմեցի դեպի նրանց ամառանոցը:

Երբ ես ներս մտա բակ, նա, պատշգամբում նստած, կարդում էր: Ինձ նկատելով՝ նա թողեց գիրքը և արագ իջավ.

- Դուք բարկացա՞ծ եք ինձ վրա:

Ես լուռ էի. ոչինչ չէի գտնում ասելու:

- Ներեցե՛ք,– շարունակեց նա,– ես չէի կարող տեսնել Ձեզ:

Մենք լուռ անցանք պատշգամբը: Նա առաջարկեց նստել: Մոտ մի րոպե լուռ էինք. ես նայում էի նրան... Հանկարծ նա անսպասելի բարձրացրեց գլուխը և հարցրեց.

- Կուզե՞ք՝ տամ Ձեզ Ձեր նամակները: (Մ. Մ.)

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Անձնական դերանունները և այլ դերանունների մի մասը ունեն առանձնահատուկ՝ գոյականից տարբեր հոլովում: Սրանք սեռական և տրական հոլովներում հոլովական վերջավորություն չեն ստանում, այլ ունենում են մի ուրիշ հիմք:

Եզակի թիվ

Հոլով	Առաջին դեմք	Երկրորդ դեմք	Երրորդ դեմք
Ուղղ.	ես, ինքս	դու, ինքդ	նա ինքը
Սեռ.	իմ	քո	նրա իր
Տր.	ինձ	քեզ	նրան իրեն
Հայց.	ինձ	քեզ	նրան իրեն
Բաց.	ինձ(ա)նից	քեզ(ա)նից	նրանից իրենից
Գործ.	ինձ(ա)նով	քեզ(ա)նով	նրանով իրենով
Ներգ.	ինձ(ա)նում	քեզ(ա)նում	նրանում իրենում

Հոգնակի թիվ

Ուղղ.	մենք, ինքներս	դուք, ինքներդ	նրանք իրենք
Սեռ.	մեր	ձեր	նրանց իրենց
Տր.	մեզ	ձեզ	նրանց իրենց
Հայց.	մեզ	ձեզ	նրանց իրենց
Բաց.	մեզ(ա)նից	ձեզ(ա)նից	նրանցից իրենցից
Գործ.	մեզ(ա)նով	ձեզ(ա)նով	նրանցով իրենցով
Ներգ.	մեզ(ա)նում	ձեզ(ա)նում	նրանցում իրենցում

- Անձնական դերանունները նախադասության մեջ լինում են **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:** Օրինակներ՝ **Նա** է արժանի կյանքին, ով ամեն օր մարտի է գնում հանուն այդ կյանքի: **Նա** – ենթակա:

  Ես նախանձում եմ **քեզ**, ծովի՛ որդի խիզախ: **Ես** – ենթակա, **քեզ** – բայական անդամի լրացում:

- Որդի՛ս, հիմա տան տղամարդը **դու** ես: **Դու**– ստորոգյալ կազմող բառ:

3. **Տրված հատվածից դո՛ւրս գրիր անձնական դերանունները և որոշի՛ր դրանց դեմքը, թիվը և հոլովը:**

Արդյոք դու միշտ սիրալի՞ր ես հյուրերիդ նկատմամբ:

Ահա թակեցին դուռը: Քեզ մոտ են եկել ընկերներդ: Նրանք քո հյուրերն են: Առաջին իսկ րոպեից նրանք պետք է զգան, որ դու ուրախ ես: Հյուրերին դիմավորի՛ր սիրալիր և ժպտերես: Եթե տրամադրությունդ վատ է, աշխատի՛ր, որ իրենք չնկատեն, թե չէ կարող են զղջալ իրենց գալու համար:

Օգնի՛ր հյուրիդ հանելու և կախելու վերարկուն: Հետո իրեն ուղեկցի՛ր քո սենյակը և թո՛ւյլ տուր, որ առաջինը ինքը ներս մտնի:

Եթե սենյակում մարդիկ կան, նրանց ծանոթացրո՛ւ նորեկի հետ՝ ասելով.

– Ծանոթացե՛ք, իմ ընկեր Արամն է:

Եթե սենյակ է մտնում քեզնից մեծը, ընկերոջդ ներկայացրո՛ւ նրան:

Հյուրեր ընդունելիս աշխատի՛ր քեզ պահել այնպես, որ նրանք քեզ հետ ուրախ և հաճելի ժամանակ անցկացնեն: Մտածի՛ր նրանց և ոչ թե քո մասին:

4. **Կազմի՛ր կամ գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր նախադասություններ անձնական դերանունների տարբեր հոլովներով:**

2 ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ, նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:
Էն տախտի վրա աղոթում մի վանք:
Էն ժայռի գլխին հրսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կլռինչն է տարածվում մերթ-մերթ...

(Հ. Թ.)

Ցուցական դերանունները մատնացույց են անում առարկա, հատկություն, քանակ, գործողության տեղ և ձև՝ առանց դրանք անվանելու:

Օրինակ՝ ***Այնպե՛ս*** *գգվող է երեկոն անափ,*
Ծաղիկներն ***այնպե՛ս*** *նազով են փակվում:* (Վ. Տ.)

Ցուցական դերանուններն են՝ **սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ:**

1. **Սա, դա, նա** դերանունները գործածվում են և՛ անձի, և՛ իրի փոխարեն:

Օրինակ՝ **Դա** առաջին աղջիկն էր, որի հետ Դիանան խոսում էր այդքան մտերիմ: **Դա** առաջին ջերմաէլեկտրակայանն է հայոց լեռնաշխարհում:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Հոլով	եզ.	հոգն.	եզ.	հոգն.	եզ.	հոգն.
Ուղղ.	սա	սրանք	դա	դրանք	նա	նրանք
Սեռ.	սրա	սրանց	դրա	դրանց	նրա	նրանց
Տր.	սրան	սրանց	դրան	դրանց	նրան	նրանց
Հայց.	սա (սրան)	սրան(ք)ց	դա (դրան)	դրան(ք)ց	նա (նրան)	նրան(ք)ց
Բաց.	սրանից	սրանցից	դրանից	դրանցից	նրանից	նրանցից
Գործ.	սրանով	սրանցով	դրանով	դրանցով	նրանով	նրանցով
Ներգ.	սրանում	սրանցում	դրանում	դրանցում	նրանում	նրանցում

Իրի անվան փոխարեն գործածվելիս **սա, դա, նա** դերանունների հայցական հոլովը նման է լինում ուղղականին, իսկ անձի անվան փոխարեն գործածվելիս՝ տրականին:

2. **Այս, այդ, այն** դերանունները երբեմն գործածվում են գոյականաբար՝ ունենալով միայն եզակի թիվ և ուղղական կամ հայցական հոլովաձև: Օրինակ՝ Ես **այն** եմ սիրում: **Այդ** ի՞նչ է:

3. **Այստեղ, այդտեղ, այնտեղ** դերանունները հոլովվում են գոյական անվան պես՝ ենթարկվելով **ի** հոլովման, օրինակ՝ **այստեղի, այստեղից** և այլն:

Մնացած ցուցական դերանուններից հոլովվում են միայն գոյականաբար գործածվողները՝ դարձյալ ենթարկվելով ***ի*** հոլովման. օրինակ՝ **այսքանի, այսքանին, մյուսի, մյուսից... այդպիսիների, այդպիսիներից** և այլն:

4. Ցուցական դերանունները կազմությամբ լինում են **պարզ** և **բարդ**:

Բարդ ցուցական դերանունները կազմվում են **այս, այդ, այն, նույն** դերանուններից ու **քան, պես, չափ, տեղ** բառերից և գրվում են միացած, օրինակ՝ **այսքան, այդպիսի, այնչափ** և այլն:

- Ցուցական դերանունները նախադասության մեջ լինում են՝ **ենթակա,**

ստորոգյալ կազմող բառ, լրացում: Օրինակներ՝ **Սա** (ենթակա) ինձ համար ամեն ինչ է: Բնակարանի տերերը **սրանք** (ստորոգյալ կազմող բառ) են: **Այստեղից** (ստորոգյալի լրացում) սկսվում է դաշտը: **Այս** (գոյականի լրացում) գիշեր նորից լալիս էր քամին: (Վ. Տ.) Էն Լոռու ձորն է (ենթակա): (Հ.Թ.)

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ

Առարկա մատնանշող (գոյական) դերանուններ	Առարկայի որակական հատկանիշ մատնանշող (ածական) դերանուններ	Առարկայի քանակական հատկանիշ մատնանշող (թվական) դերանուններ	Գործողության հատկանիշ մատնանշող (մակբայ) դերանուններ
սա *դա* *նա*	*այս, այդ, այն* *սույն, մյուս* *նույն, միևնույն* *այսպիսի, այդպիսի* *այնպիսի, նույնպիսի*	*այսքան, այսչափ* *այդքան, այդչափ* *այնքան, այնչափ* *նույնքան, նույնչափ*	*այսպես, այստեղ* *այդպես, այդտեղ* *այնպես, այնտեղ* *նույնպես*

5. **Դո՛ւրս գրիր ցուցական դերանունները՝ նշելով, թե դրանք ի՛նչ են մատնացույց անում:**

Ես գնում եմ այնտեղ՝ պարտքս կատարելու: Չնայած հայրս չէր թողնում, բայց այսպիսի մի ժամանակ հայ տղամարդը կարո՞ղ է տանը նստել...

Այո՛, նա գնում է՝ ուղղակի զորքի մեջ մտնելու, և մտադիր է ծառայել իբրև հասարակ զինվոր, որովհետև այդ ձևով կարելի է ծառայել հայրենիքին: Հեշտ է, իհարկե, բարձր պաշտոններ վերցնել և հրամաններ տալ, սակայն հայրենասիրությունը դա չէ. հայրենասիրությունն այն է, որ մարդ, արհամարհելով ամեն տեսակ վտանգ, գնա՝ առաջին շարքում կռվելու:

- Այդպես չէ՞, հայրենակիցնե՛ր:

- Իհա՛րկե,– ասում են զինվորները: (Ս. Զ.)

6. **Հոլովի՛ր** *նույն(ը) այդքան(ը), մյուս(ը)* **դերանունները: 2. Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով այդ դերանունների տարբեր հոլովաձևերը:**

7. **Կազմի՛ր նախադասություններ** *այս, այդ, այն* **դերանունների՝ թե՛ առարկա, թե՛ առարկայի հատկություն ցույց տվող իմաստներով:**

8. **Գտի՛ր ցուցական դերանունները և որոշի՛ր, թե նախադասության ի՛նչ անդամ են:**

Հավատացնում էին, թե այնտեղ պահում է այն տրեխները, որոնցով գաղթել է իր ծննդավայրից: (Շիրվ.)

Գյուղն էր նրան պահում. մի օր մեկի տանը, մյուս օրը մյուսի գոմում կամ մարագում քնում էր մինչև լուսաբաց և էլի վեր կենում, նախիրը քշում (Ակ. Բ.):

Բայց հեռավոր այս ձորում մնում են այս գերեզմանը և նրա մեջ ամփոփված այդ մարդու պատմությունը (Ս. Խ.): Վալյան ուզեց նշմարել իր ոտնահետքերը, բայց դրանք արդեն չկային: (Կ. Տ.):

3 ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Փոխադարձ դերանունները ցույց են տալիս փոխադարձ հարաբերությամբ միմյանց հետ կապված առարկաներ կամ անձեր՝ առանց դրանք անվանելու:

Օրինակ՝ ***Իրար*** *հետ կյանքի երգն ենք լսում:* (Վ. Տ.)

Նրանք հարվածում էին ***մեկմեկու:***

Փոխադարձ դերանուններն են՝ **իրար, միմյանց, մեկմեկու** կամ **մեկմեկի**:

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ուղղ.	–	–	–	–
Սեռ.	իրար	միմյանց	մեկմեկու	մեկմեկի
Տր.	իրար	միմյանց	մեկմեկու	մեկմեկի
Հայց.	իրար	միմյանց	մեկմեկու	մեկմեկի
Բաց.	իրարից	միմյանցից	մեկմեկուց	մեկմեկից
Գործ.	իրարով	միմյանցով	մեկմեկով	մեկմեկով
Ներգ.	–	–	–	–

Փոխադարձ դերանունները եզակի թիվ, ուղղական ու ներգոյական հոլովներ չունեն: Սրանց սեռական, տրական և հայցական հոլովները ձևով նույնն են:

- Փոխադարձ դերանունները նախադասության մեջ լինում են միայն լրացում: Օրինակ՝ Չարաճճի երեխաները բարձրացել էին **իրար** շալակ:

9. Դո՛ւրս գրիր փոխադարձ դերանունները և որոշի՛ր դրանց հոլովը:

Սկսեցին՝ իրար կտրելով, իրար ուղղելով, որը սկզբից, որը վերջից, որը միջից, պատմել ամբողջ եղելությունը (Ն. Դ.): Բոլորի դեմքին էլ տխրություն կար. հարցնում էին իրար, թե որտեղից կարող էր ցավը պատահած լինել (Ակ. Բ.):

Մոտ քսան մետր բարձրության վրա, մեկմեկու պոչից բռնելով, մի կենդանի շղթա կազմեցին: (Կ. Սիմ.)

...Կանչում են, մայում գառն ու մաքին,
Անուշ ձայներով փնտրում միմյանց.
...Սարեր ու ձորեր իրար երեսի
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
...Սև ստվերները հսկա լեռներից
Ձորերն են ընկել, մեկմեկի գրկել: (Վ. Մ.)
Զուռնաչին փչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան: (Հ. Թ.)
Մեզ կյանքը նետեց միմյանցից հեռու,
Եվ մենք չուզեցինք մեկմեկու կանչել: (Վ. Տ.)

Գրի՛ր շարադրություն՝ *«Խաղ անձրևի հետ»* **վերնագրով՝ օգտագործելով անձնական, ցուցական և փոխադարձ դերանուններ:**

4 ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հարցական դերանունները արտահայտում են հարցում անձի կամ առարկայի, սրանց հատկության, թվի, գործողության տեղի, ժամանակի, ձևի և այլնի մասին:

Օրինակ՝ *Աշո՛ւն, քաղցր ու բաղձալի,*
Ի՞նչ *խոսքերով երգեմ քեզ:* (Վ. Տ.)

Հարցական դերանուններն են՝ **ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչչա՞փ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞ր(ը), որքա՞ն, որչա՞փ, որպիսի՞, ո՞րերորդ, որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւր, քանի՞, քանի՞սը, քանի՞ երորդ:**

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

1. Հարցական դերանուններից միայն **ո՞վ** դերանունն է, որ գոյականներից տարբեր հոլովում ունի:

Ուղղ.	**ո՞վ**	Բաց.	**ումի՞ց**
Սեռ.	**ո՞ւմ**	Գործ.	**ումո՞վ**
Տր.	**ո՞ւմ**	Ներգ.	–
Հայց.	**ո՞ւմ**		

Ո՞վ դերանվան հոգնակին լինում է **ովքե՞ր**, որն ունի միայն ուղղական հոլովաձև:

2. **Ե՞րբ** դերանունը ենթարկվում է **-վա** հոլովման: Սա հոգնակի թիվ չունի, իսկ եզակի թվում հոլովվում է **ե՞րբ, երբվա՞, երբվա՞ն, երբվանի՞ց**:

3. Մնացած հարցական դերանունները հոլովվելիս ենթարկվում են **ի** հոլովման:

Գոյական անվան փոխարեն հարցումով գործածվող և հոլովվող դերանուններն են՝ **ի՞նչ(ը), ո՞ր(ը), քանի՞սը, որտե՞ղ**:

Ո՞ր դերանվան հոգնակին լինում է **որո՞նք** և ենթարկվում է **-ց** հոլովման, իսկ **որտե՞ղ** դերանունը հոգնակի թիվ չունի:

4. **Որքա՞ն, ինչպիսի՞, որպիսի՞, քանի՞երորդ, ո՞րերորդ** դերանունները հոլովվում են միայն գոյականաբար գործածվելիս և ենթարկվում են **-ի** հոլովման, ինչպես՝ **որքա՞ն, որքանի՞, որքանի՞ց..., քանի՞երորդը, քանի՞երորդից..., ինչպիսինե՞րը, ինչպիսիների՞** և այլն:

Քանի՞սը դերանունը **քանի՞** դերանվան գրաբարյան հոգնակի հայցականի ձևն է, որն արդեն ընկալվում է իբրև գոյական անվան փոխարեն գործածվող առանձին դերանուն, իսկ **քանի՞**-ն՝ ածականի և հազվադեպ՝ մակբայի:

Քանի՞սը դերանունը գործածվում է թե՛ եզակիի, թե՛ հոգնակիի իմաստով:

Օրինակ՝ – Քանի՞սն ես ուզում:
– Մեկը կամ, ավելի շուտ, տվե՛ք երեքը:

- Հարցական դերանունները նախադասության մեջ լինում են՝ **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:** Օրինակներ՝

Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ (ենթակա) դեմը կերթա, **ո՞վ** կռիվ կանի:

Մեր ուզածն **ի՞նչ** (ստորոգյալ կազմող բառ) է.– մի կտոր չոր հաց,
Էն էլ հրե՜ն, հա՜ – երկնքից կախված: (Հ. Թ.)

Հարցական դերանուններն արտասանվում են հարցական առոգանությամբ: Հարցական դերանունների վերջին ձայնավորի վրա դրվում է հարցական նշան, օրինակ՝ **ո՞վ, ե՞րբ, որքա՞ն, ինչպիսի՞, որտե՞ղ** և այլն:

Բացառություն են **ի՞նչը, ո՞րը, քանի՞երորդ, ո՞րերորդ, քանի՞սը** դերանունները:

- Հարցական դերանունները երբեմն գրվում են շեշտով, երբեմն էլ՝ բացականչական նշանով, երբ սրանք արտասանվում են հրամայական և բացականչական առոգանությամբ: Օրինակներ՝

Ա՜խ, **ինչքա՜ն, ինչքա՜ն** կուզեի լինել զինվոր հասարակ: (Ավ. Իս.)
Ի՜նչ սարի արծիվ կհասնի քաջին,
Ի՜նչ շահ կկանգնի նրա առաջին: (Հ. Թ.)

10. Գտի՛ր հարցական դերանունները, որոշի՛ր դրանց պաշտոնն ու հոլովը:

Ի՞նչ է ծառը քո բակի,
Ծառն ինչի՞դ է հարկավոր...
Մոլորվա՛ծ ճամփորդ, էլ հարց չտամ,
Ինչո՞ւ են լալիս ծաղիկները...
Ո՞ւր եք, արտույտնե՛ր, կանչում եմ, չկաք,
Ճանապարհն ո՞վ է կտրել, որ չգաք,
Ձեր թևերն ո՞վ է կապել հարավում,
Ինչո՞ւ է նա մեր հաղը հարամում: (Հ. Ս.)

Գրի՛ր կապակցված խոսք՝ *«Մայրիկիս հետ շուկայում»* թեմայով՝ գործածելով քո անցած դերանուններից:

Այցելություն Վերնիսաժ: Այնտեղ զրառումներ կատարեք Ձեզ հետաքրքրող արհեստի ու արվեստի նմուշների մասին, զրուցեք արհեստավորների և արվեստագետների հետ ու գրավոր նյութ ներկայացրեք ուսուցչին գնահատման համար:

11. Առած-ասացվածքների բառարաններից օգտվելով՝ դո՛ւրս գրիր զանազան մրգերի անուններով առած ու ասացվածք:

5 ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են, որոնք, սակայն, արտահայտում են ոչ թե հարցում, այլ մի նախադասության կապը, հարաբերելը մյուսին:

Օրինակ՝ ***Երբ*** *բաց եղան գարնան կանաչ դռները,*
Քնար դառան աղբյուրները Բինգյոլի: (Ավ. Իս.)

Հարաբերական դերանուններն են՝ **ով, ինչ, ինչպիսի, ինչքան, ինչչափ, ինչպես, որ(ը), որքան, որչափ, որպիսի, որտեղ, երբ, ուր, քանի, քանիսը:**

- Հարաբերական դերանունները հոլովվում են հարցական դերանունների պես և նախադասության մեջ կատարում են նույն պաշտոնները, ինչ որ հարցականները, այն է՝ **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում**:

Օրինակներ՝ **Ով** ալարի, ոչ դալարի (ժող.):

Մեր պահանջը **որքան** է, այնքան էլ տվեք: **Ինչ** ցանես, այն էլ կհնձես(ժող.):

Ում սայլին որ կնստի, նրա հորովելը կկանչի (ժող.):

ՀԱՐՑԱԿԱՆ-ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ

Գոյականի դեր կատարող դերանուններ	**Ածականի դեր կատարող** դերանուններ	**Թվականի դեր կատարող** դերանուններ	**Մակբայի դեր կատարող** դերանուններ
ո՞վ ի՞նչ(ը) ո՞ր(ը) քանի՞սը	ինչպիսի՞ որպիսի՞	ինչքա՞ն, ինչչա՞փ որքա՞ն, որչա՞փ ո՞րերորդ քանի՞երորդ քանի՞	ինչպե՞ս ինչո՞ւ ե՞րբ ո՞ւր որտե՞ղ

12. **Դո՛ւրս գրիր հարաբերական դերանունները, բացատրի՛ր դրանց դերը նախադասության մեջ:**

Ինչ աղբյուրից մարդ ջուր խմի, էն աղբյուրը քար չի գցի:
Ինչքան որ գիտուն լինես, չիմացածդ անգետից մի՛ հարցրու:
Ով աշխատի, նա կուտի:
Որտեղ տանձ, պոչը հետն է:
Քանի լեզու գիտես, այդքան մարդ ես:
Ում բախտը ծռվեց, նրա ձին ախոռում էշ կդառնա: (Ա. Ղ.)

13.* **Որոշի՛ր ընդգծված հարաբերական դերանունների հոլովն ու պաշտոնը:**

Այն գեղեցկությունն է իսկապես անեղծ,
***Որի** սպիտակ ու կարմիր գույնը համադրված է*
Բնության քնքուշ ու ճարտար ձեռքով:
*Թող նա կորչի անպտուղ, **ով** տձև է ու կոպիտ,*
***Ում** չի ընտրել բնությունը՝ իր սերունդը պահպանելու…*
Մեծությունը միշտ չարիք է դառնում,
***Երբ** բաժանվում է գութը նրանից:*
Հիմարությունը հիմարների մոտ այնքան ցայտուն չէ,
***Որքան** խենթացած խելոքների մոտ:*
***Ով** կամենում է հանգիստ ապրել, նա պետք է ապավինի*
սեփական ուժերին:
***Ով** որ քսակը գողանա, քիչ բան գողացած կլինի…*
*Բայց **ով** ինձնից անունս շորթի,*
*Մի բան կշորթի, **որ** բնավ նրան չի հարստացնի,*
Իսկ ինձ իսկապես կաղքատացնի... (Շ.)

14. **Արտագրի՛ր նախորդ վարժությունների առածներն ու ասացվածքները, բացատրի՛ր դրանց փոխաբերական նշանակությունը:**

15. **Կազմի՛ր նախադասություններ՝** *ինչպիսի, ուր, քանի, ով* **դերանունները գործածելով մեկ որպես հարցական, մեկ որպես հարաբերական դերանուն:**

6 ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Որոշյալ դերանունները ցույց են տալիս առարկաների, նրանց հատկանիշների հայտնի, որոշյալ ամբողջություն՝ միասնաբար կամ առանձին-առանձին վերցրած՝ առանց դրանք անվանելու:

Օրինակ՝ *Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,*
Երբ ***ամեն ինչ*** *երազում է հոգու հետ:* (Վ. Տ.)

Որոշյալ դերանուններն են՝ **ամբողջ(ը), ամեն(ը), ամեն ինչ(ը), ամեն մի, ամեն մեկը, ամեն ոք, ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), յուրաքանչյուր ոք, ողջ(ը), համայն, ամենայն:**

1. Որոշյալ դերանունները գոյականի փոխարեն գործածվելիս հոլովվում են՝ ենթարկվելով **ի** հոլովման: Օրինակ՝ **բոլորի, բոլորին, բոլորից..., ամեն ինչի, ամեն ինչից, ամեն ինչով** և այլն:

- Որոշյալ դերանունները նախադասության մեջ լինում են **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:** Օրինակներ՝

  Ողջը կդառնա կրակի բաժին...
  Քո խոսքը ինձ համար **ամեն ինչ** է:
  Ծաղկի՛ր, հա՛մր հող հոգնած աշխարհի,
  Շռայլ կանաչով ծածկիր **ամեն ինչ:** (Մ. Մ.)

2. Հարադրական կազմություն ունեցող որոշյալ դերանունների բաղադրիչները գրվում են անջատ: Դրանք են՝ **ամեն ինչ(ը), ամեն մեկը, ամեն մի, յուրաքանչյուր ոք, ամեն ոք:**

16. **Գտի՛ր որոշյալ դերանունները, որոշի՛ր, թե նախադասության ինչ անդամ են դրանք:**

Սոխակի քնքուշ հոգին բոլորը գիտեն, իսկ ամենքից շատ՝ Սիցիլիա կղզու բնակիչները, որովհետև ամեն գարնան համայն աշխարհից այստեղ

լցվում են անհամար սոխակներ: Ու ամբողջ տարի լալագին ու թախծոտ երգում են այդ թռչունները: (Վ. Ա.)

Ձիավորներն սկզբում գնում էին լուռ. յուրաքանչյուրն իր մտքերի մեջ էր խորասուզված: Ողջ ճանապարհին նրանք լռելյայն **ձիերն** էին համեմատում իրար, ու ամեն ոք աշխատում էր չխախտել **լռությունը:** (Ակ. Բ.)

17. **Դո՛ւրս գրիր դերանունները, որոշի՛ր դրանց տեսակը, հոլովն ու թիվը, պաշտոնը:**

Նա ինքն էր իրեն կամավոր դուրս դրել այն ամենից, ինչին եռանդով ձգտում էին բոլորը: (Ա. Ս.)

Ամբողջ գիշեր այդ հարցը խռովել է հոգիս: (Ստ. Ալ.)

Ամեն տեսակ երգ երգեցի – ամենից լավ տաղն է էլի: (Ե. Չ.)

Ողջ գիշերը հովը պարեց, ա՜խ, այնքա՜ն, այնքա՜ն թեթև: (Գ. Մ.)

Ամեն հոգի մի վիշտ ունի, ամեն մի ցավ՝ ամոքում: (Ն. Զ.)

Մենք մեկտեղ անցանք ճանապարհն այն ողջ,
Ուր մահն էր սուլում իր դաժան հիմնը: (Վ. Դ.)

Ուզում էի մոռանալ ամենքին, ամեն ինչ: (Ն. Դ.)

Երջանի՜կ կին, համ ինքն է ապրում իր ահագին ընտանիքով, համ էլ սենյակի վարձը տալիս ամենայն ճշտությամբ: (Ն. Դ.)

Յուրաքանչյուրս մեր բաժին կշտամբանքն ու ապտակներն ստացանք, բայց թե ինչի համար էինք թշնամացել, չասացինք: (Խ. Գ.)

18. **Կազմի՛ր կամ գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր նախադասություններ որոշյալ դերանունների տարբեր հոլովներով:**

7 ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անորոշ դերանունները մատնացույց են անում անորոշ անձ, առարկա և կամ անձի ու առարկայի անորոշ հատկություն, քանակ՝ առանց դրանք անվանելու:

Օրինակ՝ ***Մեկն*** *աշխարհում հիմա գուցե*
Ինձ կարոտի երգ է ձոնում: (Մ. Մ.)

Անորոշ դերանուններն են՝ **ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, մեկնումեկը, մի, մի քանի, մի քանիսը, մի երկու, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ, ովևէ, երբևէ, երբևիցե, որևիցե:**

Անորոշ դերանունները գոյականի փոխարեն գործածվելիս հոլովվում են՝ ենթարկվելով **ի** հոլովման. օրինակ՝ **ուրիշը, ուրիշի, ուրիշին, ուրիշից..., մի քանիսը, մի քանիսի, մի քանիսից..., այսինչը, այսինչի, այսինչին** և այլն:

Ոմն դերանվան միայն հոգնակին է գործածվում ինքնուրույն, գոյական անվան փոխարեն՝ ենթարկվելով **ց** հոլովման.

Ուղղ.	**ոմանք**	Բաց.	**ոմանցից**
Սեռ.	**ոմանց**	Գործ.	**ոմանցով**
Տր.	**ոմանց**	Ներգ.	–
Հայց.	**ոմանց**		

- Անորոշ դերանունները նախադասության մեջ լինում են՝ **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում,** օրինակներ՝

Ոմանք արդեն անուշ երազներ էին տեսնում:

Եվ **ուրիշ** է կարոտս հիմա: (Գ. Մ.)

Հիմա իմ հոգում **ինչ-որ** բան կատարվեց: (Գ. Արշ.)

- Անորոշ դերանունները կազմությամբ լինում են **պարզ** և **բարդ:**

Անորոշ բարդ դերանունները կազմված են երկու դերանուններից կամ մեկ դերանունից և որևէ այլ բառից. օրինակ՝ **ինչ-որ, այնինչ, մի քանի, որևէ** և այլն: Սրանք գրվում են կա՛մ միացած բաղադրիչներով, կա՛մ միացման գծիկով, կա՛մ էլ անջատ:

Միասին գրվում են **այսինչ, այնինչ, որևէ, երբևէ, երբևիցե, որևիցե, մեկնումեկը** դերանունները, միացման գծիկով գրվում են **ինչ-որ, ինչ-ինչ** դերանունները, անջատ գրվում են **մի քանի, մի քանիսը** դերանունները:

Անջատ գրություն ունեն **մի** անորոշ դերանվան հարադրությամբ կազմված **մի երկու, մի երկուսը, մի շարք, մի խումբ** ձևերը, որոնք գործածվում են անորոշ դերանվան նշանակությամբ:

Ովևէ, որևէ, երբևէ դերանունները կազմված են **ով, որ, երբ** դերանուններից, **և** շաղկապից ու **է** բայից: Այդ պատճառով էլ վերջում գրվում է **է:**

Երբևիցե, որևիցե դերանունների **-իցե** բաղադրիչը գրաբարյան բայաձև է և այժմ գրվում է **ե**-ով:

19. **1. Գտի՛ր անորոշ դերանունները, որոշի՛ր դրանց պաշտոնը, իսկ եթե հոլովված են՝ նաև հոլովն ու թիվը: 2. Դո՛ւրս գրիր մյուս դերանունները, որոշի՛ր դրանց տեսակը, հոլովը, պաշտոնը:**

Ոտաբոբիկ այն աղջկան
Ես երբևէ չեմ մոռանա: (թարգմ.)

Աշո՛ւն, ինչո՞ւ եկար
Իմ քնքշության պահին...
Այգին թափո՜ւր-թափո՜ւր,

Հավասարության ու եղբայրության
ազնիվ քարոզով
Ուրիշի տուն ու երկիր էր մտնում
Օտար վարք ու բարք:

***

Չէ՞ որ կարող էր նա ինձ էլ գուցե
Ուրիշների հիմար դրության մեջ գցել: (Պ. Ս.)

Եվ ուրիշ է կարոտս հիմա,
Այլ սիրով եմ այսպես դժգունել,
Ու հոգուս ճամփեքի վրա
Վրնջում են ուրիշ նժույգներ: (Գ. Մ.)

Այգին՝ աշնանային:
Այգին տխրեց այնպես,
Տխրեց լոկ մի օրում,
Ու տերևներն անտես,
Տխրություն են ծորում:
Աշունն ելավ հետո
Այգուց մտավ քաղաք,
Շրջեց ամեն մայթով,
Կպավ ամեն պատով,
Մինչև ննջեց խաղաղ
Ինչ-որ սրտում մի ծեր,
Ուր տարիներ առաջ
Իր հետքերն էր գծել: (Ռ. Դ.)

20.* **Տրված նախադասություններում որոշի՛ր *մի* բառի խոսքիմասային արժեքը:**

Մի որոշ ժամանակ անց բոլորը դուրս գնացին:

– Եկել էր, կանգնել. մի տեսնեիր՝ ինչ մարդ էր դարձել: Միանգամից ներս մտան երեք աղջիկ ու մի տղա:

Մի կողմից ծնողներս չէին համաձայնում, մյուս կողմից ես էի համառում, ու այդպես էլ ոչինչ չէր ստացվում:

Մի աղմուկ, մի իրարանցում. չգիտեինք՝ ուր գնանք:

Մի տասը մարդ նրա առաջարկին դեմ արտահայտվեց:

Ինչո՞ւ եք լռել, մի խոսե՛ք, ասե՛ք, բացատրե՛ք ու արդարացրե՛ք ձեզ,–ստիպում էր խոստովանել ուսուցչուհին:

Մի՛ միջամտիր,– ասաց տնօրենը,– թող փորձի իր հարցերը ինքը լուծել:

21. **Կազմի՛ր նախադասություններ *այլ, որոշ, ինչ-որ, ուրիշ, մի քանիսը* դերանուններով՝ վերջին երկուսը գործածելով տարբեր հոլովներով:**

8 ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ժխտական դերանունները մատնացույց են անում ամբողջությամբ ժխտվող առարկաներ կամ անձեր՝ առանց դրանք անվանելու:

Օրինակ՝

Ոչի՛նչ, ոչի՛նչ չկարողացավ հիշել Խողեղանը այդ վշտալի պահին: (Խ. Դ.)

Ժխտական դերանուններն են՝ **ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը**:

1. **Ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ** ժխտական դերանուններն ունեն միայն եզակի թիվ և հոլովվում են **ի** հոլովումով. օրինակ՝ **ոչ ոք, ոչ ոքի, ոչ ոքից..., ոչինչ, ոչնչի, ոչնչից, ոչնչով** և այլն:

2. **Ոչ մի** դերանունը գոյականաբար չի գործածվում և չի հոլովվում:

- Ժխտական դերանունները նախադասության մեջ լինում են՝ **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում,** օրինակներ՝
  Գաղտնիքին հաղորդ մանուկն էր լալիս,
  *Որ **ոչ ոք, ոչ ոք** չի դառնա էլ տուն:* (թարգմ.)
  ***Ոչինչ** են անջատ տարիները ձիգ:* (Մ. Մ.)
  *Իմ կարոտած սրտի համար **ոչ մի** ուրիշ հեքիաթ չկա:* (Ե. Չ.)
  Հիշո՞ւմ ես երկար դասերն այն խրթին,
  *Որ հաճախ **ոչինչ** չէինք հասկանում:* (Մ. Մ.)

3. Ժխտական բոլոր դերանունները կազմությամբ բարդ բառեր են:

Դրանցից մեկը՝ **ոչինչ**-ը, գրվում է բաղադրիչները միացած, իսկ մյուս երեքը՝ **ոչ ոք, ոչ մի, ոչ մեկը,** գրվում են անջատ:

22. Արտագրի՛ր՝ կետերի տեղը դնելով համապատասխան հոլովով ժխտական դերանունը:

Ժխորի մեջ ... ուշք չէր դարձնում նրա վրա, ... մտքով չէր անցնում, որ Պետու սիրտը թրթռում էր, հենց որ բժիշկը մոտենում էր մի կովի և ավելի երկար սկսում զննել: (Ա. Բ.)

Նրանք կգան, կավերեն, և չի մնա էլ ... (Ե. Չ.)

Դեղին տերևն ընկավ քարին, ... շշուկ չլսվեց,

Աշուն իջավ ողջ աշխարհին, ... շշուկ չլսվեց: (Մ. Մ.)

Շատ տեսնել և ... չունենալ նշանակում է ունենալ հարուստ աչքեր և աղքատ ձեռքեր: (Շ.)

Նա ... ահ չուներ, բացի հորից:

Ամեն ինչ մոռացել է, ... չի հետաքրքրվում, նույնիսկ թատրոնով (Շիրվ.):

23. Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով *ոչ ոք* **և** *ոչինչ* **դերանունները բոլոր հոլովներով:**

24. Կազմի՛ր նախադասություններ *ամեն ինչ, ամեն մեկը, ամեն մի, ամեն ոք* **որոշյալ դերանուններով և դրանք փոխարինի՛ր համապատասխան ժխտական դերանուններով:**

ՀՈԴԵՐ

Հայերենում կան դերանունների նշանակությամբ գործածվող մասնիկներ: Օրինակ՝ Եղբայր**ս** տանը չէ: Այս նախադասության մեջ **ս** մասնիկը փոխարինում է **իմ** դերանվանը: Ինք**դ** վճռի՛ր քո անելիքը: Այս օրինակում **դ** մասնիկը փոխարինում է **դու** դերանվանը:

Ս, դ, ն, ը **մասնիկները դերանվանական հոդեր են, որոնք, դրվելով գոյականի կամ գոյականի դեր կատարող բառերի վրա, ցույց են տալիս ստացականություն, ցուցականություն, դիմորոշություն, որոշյալություն:**

Հոդ ստանում են գոյականներն ու գոյականի փոխարեն գործածվող որոշ դերանուններ. օրինակ՝ **սիրտս, միտքդ, առուն, ինքը, ինքս, ոչ մեկդ, բոլորը** և այլն:

Մյուս խոսքի մասերը հոդ են ստանում միայն գոյականաբար գործածվելիս. օրինակ՝ **երեքս, վրադ, մոտս, քնածը, գնալուդ** և այլն:

Ըստ իրենց դերանվանական նշանակության՝ հոդերը լինում են՝ **ստացական, դիմորոշ, որոշիչ** և **ցուցական:**

1. Ստացական հոդերը **ս, դ, ն** կամ **ը** հոդերն են, որոնք, դրվելով մի առարկայի կամ անձի անվան վրա, ցույց են տալիս, թե այն ում է պատկանում կամ վերաբերում՝ խոսողի՞ն, խոսակցի՞ն, թե՞ մի երրորդի:

Գարունդ *հայերեն է գալիս,*
Ձյուններդ *հայերեն են լալիս,*
Հայերեն են երգում ***ջրերդ****:*
Արևդ *հայերեն է ծագում,*
Ծառերդ հայերեն *են ծաղկում,*
Հայերեն են պայթում ***բառերդ:***
(Հ. Ս.)

Իրենց այդ նշանակությամբ ստացական հոդերը փոխարինում են **իմ, քո, իր** կամ **նրա (մեր, ձեր, իրենց** կամ **նրանց)** դերանուններին: Օրինակներ՝

Եվ եթե ավելի երկարեր **բացակայությունդ, սրտիս** տխրությունից պիտի ընկճվեի: **Մտքին** որ դրեց, կանի: Ուրախությունից **գլուխները** կորցրել էին:

Հոգնակի **մեր, ձեր, իրենց** կամ **նրանց** դերանունների նշանակությամբ գործածվելիս ստացական հոդերից առաջ միավանկ բառերին նույնպես ավելացվում է **-ներ** մասնիկ: Օրինակ՝ **Սրտներս** նեղվում է, այսինքն՝ **մեր սրտերը** նեղվում են, **աչքներդ** լույս, այսինքն՝ **ձեր աչքը լույս**:

2. Դիմորոշ են **ս** և **դ** հոդերը, որոնք, դրվելով որևէ առարկայի կամ անձի անվան վրա, նրան տալիս են առաջին կամ երկրորդ դեմքի նշանակություն: Օրինակներ՝ **Զինվորս** ե՞րբ չեմ հնազանդվել հայրենիքի հրամանին:

Այստեղ **ս** հոդը ցույց է տալիս, որ **զինվորը** ինքը խոսողն է՝ առաջին դեմքը:

Քաջիդ գնդակը գետնին չի ընկնում: Այս նախադասության մեջ **դ** հոդը ցույց է տալիս, որ **քաջը** խոսակիցն է՝ երկրորդ դեմքը:

Հաճախ դիմորոշ հոդ ստացող բառի հետ գործածվում է նաև համապատասխան դեմքի անձնական դերանունը, որը մեկ անգամ ևս ընդգծում է դեմքի գաղափարը: Օրինակներ՝ **Ես՝ զինվորս,** պատրաստ եմ: **Քո՝ հերոսիդ** փառքը ոգևորում է մեզ:

3. Որոշիչ ն կամ **ը** հոդը, դրվելով առարկայի կամ անձի անվան վրա, ցույց է տալիս այդ առարկայի՝ խոսողին ծանոթ, հայտնի լինելը:

Այբուբեն չէ սա...
***Էությունն** է մեր,*
Ընթացքն ու ուղի՛ն,
Թագ ու զորավա՛ր.

***Չինարի՞ն** այգու,*
***Պարի՞սպը** մեր տան,*
***Ջրաղա՛ցն** արդար:*
(Գ. Է.)

Որոշիչ հոդը ընդհանուր, անորոշ առարկան դարձնում է որոշակի: Օրինակներ՝ Հայկուհին **գլխարկ** գնեց: Հայկուհին իմ հավանած **գլխարկը** գնեց:

Զուգահեռ բերված նախադասություններում **ը** և **ն** հոդերը ***գլխարկ, լուր*** գոյականները դարձնում են որոշակի, ծանոթ:

4. Ցուցական է **ս** հոդը, որը գործածվում է **այս** ցուցական դերանվան նշանակությամբ: Օրինակներ՝

Վերջերս նա ինձ մոտ եկավ: **Վերջերս** նշանակում է **այս վերջերը**:

Մենք այստեղ մնալ չենք կարող. **գիշերս** այնտեղ պիտի հասնենք: (Վ. Ա.)

Գիշերս նշանակում է **այս գիշեր:**

Հոդ բառի ուրիշ ի՞նչ իմաստներ գիտես:

25. Գտի՛ր հոդերը, որոշի՛ր տեսակը:

Մենք՝ հոգեբաններս, սխալվել չենք կարող: Երկուսս, այժմ միացած, գնում ենք բնության քաղցրություններից մեր կարոտն առնելու (Մուր.): Ինքը չէր շարժվում, ոչխարներին նվագով կանչում էր մոտը (Վ. Փ): Բանը մարդուս բախտն է (Հ. Թ.): **Աշխարհս** աշխարհով կշտացավ... (Ս. Ն.):

Աչքերդ ծովի մեղմ երազանք է...
Թևում է թեթև երջանկությունդ,
Չգիտեմ՝ ինչպես գտնեմ ես տունդ,
Ուրիշի ձայնով լսեմ անունդ
Ու մանկանամ: (Ս. Խ.)

26. Կազմի՛ր նախադասություններ ստացական, դիմորոշ, ցուցական հոդերով:

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ձմեռային տեսարան

Հազա՜ր ասացի
Այդ Աշուն կոչված խենթ նկարիչին.
«Ներկերն ափսո՜ս են,
Իզո՜ւր ես այդքան շռայլ շաղ տալիս
Քո ունեցա՛ծը.–
Այս կարմիր գո՛ւյնը,
Այս դեղին գո՛ւյնը,
Այս կանաչ գո՜ւյնը...»:
Ոգեշնչվա՜ծ էր,
Ականջ չդրեց.
Եվ հիմա
Հազա՛ր գույն ու երանգից
Մե՜կն է մնացել՝
Լոկ ճերմակ գո՜ւյնը,
Որ քսո՜ւմ է նա
Հարկի-անհարկի.
Քա՛ր լինի, տանի՛ք,
Այգեստան, թե լեռ...
...Նկարելով մի ճանճրալի ձմեռ

(Գ. Էմին):



Ա

27. **Համամի՞տ ես հեղինակի *ճանճրալի ձմեռ* արտահայտությանը, եթե այո՝ ինչո՞ւ, եթե ոչ՝ ինչո՞ւ:**
28. **Բանավոր նկարագրի՛ր քո երազած ձմեռը:**

Բ

29. **Դո՛ւրս գրիր բանաստեղծության բոլոր գոյականները՝ նշելով դրանց ձևաբանական հատկանիշները:**
30. **Դո՛ւրս գրիր բանաստեղծության բոլոր ածականները, թվականները ու դերանունները՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով դրանց ձևաբանական հատկանիշները:**

Գրի՛ր շարադրություն՝ *«Ես անհամբեր սպասում եմ Ամանորին»* վերնագրով:

Հեռավոր այդ երկրում ապրում էր մարդկային հզոր մի ցեղ: Ոչ ոք, ոչ մի թշնամի չէր համարձակվում խախտել այդ ցեղի մարդկանց անդորրը: Բայց մի անգամ երկնքից իջավ մի արծիվ և փախցրեց ցեղի աղջիկներից մեկին, որը սև մազեր ուներ և քնքուշ էր գիշերվա պես:

Անցավ քսան տարի, և ահա մի օր աղջիկն ինքը եկավ: Նա հյուծվել էր:

Նրա հետ կար մի երիտասարդ, որը գեղեցիկ էր, առնական: Ու երբ աղջկան հարցրին, թե որտեղ է եղել նա այդքան ժամանակ, պատմեց, որ արծիվն իրեն տարել է լեռներն ու այնտեղ ապրել իր հետ, որպես իր կնոջ հետ:

Բոլորը զարմանքով նայեցին արծվի որդուն: Սա ուներ սառն ու գոռոզ հայացք, հպարտ էր ու ամբարտավան, ինչպես թռչունների արքան: Ամեն ոք ուզում էր զրուցել նրա հետ, բայց սա արհամարհում էր բոլորին:

- Դու,– ասացին նրանք տղային,– անպետք ու բութ նետի ես նման: Քո կրկնակի տարիք ունեցողներն են մեզնից ակնածում: Քեզ համար մեզ մոտ տեղ չկա: Գնա՛, ուր ուզում ես:

Արծվի որդին ծիծաղեց, մոտեցավ մի աղջկա ու ասաց.

- Դու ինձ դուր ես գալիս. գնանք ինձ հետ:

Բայց աղջիկը հրեց նրան և ուզեց հեռանալ, իսկ տղան հարվածեց նրան, ու աղջիկը մեռավ: Երկյուղը բռնեց բոլորին, ովքեր տեսան այդ ամենը, իսկ տղան կանգնած էր բոլորի դեմ մենակ ու հպարտ: Երբ մարդիկ խելքի եկան, բռնեցին նրան, կապեցին ու այդպես էլ թողին՝ գտնելով, որ անմիջապես սպանելը իրենց չի բավարարի: Մի իմաստուն երկար մտածելուց հետո ասաց.

- Հարցնենք նրան, թե ինչու արեց այդ:

Նա պատասխանեց.

- Ես առաջինն եմ աշխարհում: Ինձնից բարձր ոչ ոք և ոչինչ չկա:

Լսելով այդպիսի պատասխան՝ իմաստունն ասաց.

- Թողե՛ք դրան, դրա պատիժը հենց իր մեջ է, թող ազատ լինի, մեզանից մերժված, մեզանից հեռու....

Այսպես տղան, որ ստասավ Լարրա անունը, որ նշանակում է մերժված, վռնդված, ուրուի նման շրջում էր ու շարունակ փնտրում ինչ-որ բան: Նրա համար կյանք չկար, տեղ չկար մարդկանց մեջ. մահն էլ չէր ժպտում նրան:

Ըստ Մ. Գորկու «Պառավ Իզերգիլը» պատմվածքի

Ա

31. **Վերնագրի՛ր այս հատվածը և բանավոր արտահայտվի՛ր, թե ի՛նչը քեզ հետաքրքրեց այս տեքստում:**
32. **Իսկ դու կարդարացնեի՞ր արծվի որդուն:**

Բ

33. **Տեքստից դո՛ւրս գրիր** *աղջիկ, արծիվ, լեռ, տղա* **բառերի ձևերը և վերլուծի՛ր ձևաբանորեն:**
34. **Տեքստից դո՛ւրս գրիր որակական և հարաբերական ածականները. բացատրի՛ր դրանց տարբերությունը. կազմի՛ր որակականների համեմատության աստիճանները:**

35. Գտի՛ր դերանունները, որոշի՛ր դրանց տեսակը, պաշտոնը, թիվը և հոլովը: Թեման կապի՛ր մեր օրերի հետ. անցկացրե՛ք բանավեճ-երկխոսություն՝ *«Հպարտ մարդը իմ պատկերացմամբ»* թեմայով:

Կ.Առաքելյան **Երբ ինձ հարցնում են**

Երբ ինձ հարցնում են,
Թե հավատո՞ւմ եմ
Գոյությանն Աստծո,
Ես երբեք ոչինչ
Չեմ պատասխանում,
Այլ լուռ նայում եմ
Պատից ինձ նայող
Մորս նկարին:
Երբ որ ուզում եմ
Ինձ համար պարզել
Չարը ու բարին,
Դարձյալ նայում եմ
Պատից ինձ նայող
Մորս նկարին,
Պարզելու համար
Նա կա՞, թե՞ չկա…
Կա, երբ այգու մեջ
.....
Նմանեցնում եմ
.....
Ձորի հառաչը
Նմանեցնում եմ
Մորս հոգոցին:
.....
.....
Մեր հին տան պատի
Կիսագնդերի
.....
.....

Երբ ինձ հարցնում են,
Թե հավատո՞ւմ եմ
Գոյությանն Աստծո,
Ես երբեք ոչինչ
Չեմ պատասխանում,
Այլ լուռ նայում եմ
Պատից ինձ նայող
Մորս նկարին:

Մորս ակնոցին:
Կաղնու պարկուճը՝
Ծառի տվերը
Քարտեզը կլոր՝
Մորս գոգնոցին,
Մորս մատնոցին:

Ա.

36. Օգտվելով նկարներից՝ ճիշտ տեղադրի՛ր տողերը:
1. Ձեր մայրիկներին ու տատիկներին ի՞նչով կնույնացնեիք և կառանձնացնեիք. եղե՛ք անկեղծ:
2. Բանաստեղծության որևէ հատված առանձնացրո՛ւ և փորձի՛ր նկարել:

Բ.

37. Դո՛ւրս գրիր հինգական գոյական և վերլուծի՛ր ձևաբանորեն:
38. Դո՛ւրս գրիր բանաստեղծության մեջ գործածված դերանունները և վերլուծի՛ր ձևաբանորեն:
39. Դո՛ւրս գրիր հոդով արտահայտված բառերը՝ նշելով հոդերի տեսակը:
40. Նկարի՛ր գծապատկերը քո տետրում և յուրաքանչյուր տեսակի տակ գրի՛ր համապատասխան դերանունները:



ԱՄՓՈՓԻՉ

- Ի՞նչ ընդհանուր քերականական կարգեր ունեն գոյականն ու դերանունը:
- Ո՞ր խոսքի մասերին են փոխարինում դերանունները. բե՛ր օրինակներ:
- Թվարկի՛ր դերանունների տեսակները և սահմանի՛ր:

- Ո՞ր դերանուններն են հոլովվում, որո՞նք՝ ոչ:
- Նախադասության մեջ ի՞նչ անդամ են դառնում դերանունները:
- Բնութագրի՛ր հոդերը. բե՛ր օրինակներ:

41. Որևէ բացատրական բառարանից դո՛ւրս գրիր տարվա եղանակների անունների բոլոր նշանակությունները:
42. Ի՞նչ հոլովման են պատկանում այդ անունները:
43. Համեմատի՛ր այդ անունները քո իմացած օտար լեզուների նույն անունների հետ:
44. Փորձի՛ր մեկնաբանել ժողովրդական այս առածները.

Տարվա չորս եղանակները հարևան են, էն էլ՝ մեկը մյուսին հակառակ:
Ամառվա անձրևին մի՛ հավատա, ձմեռվա՝ արևին:
Աշնան գինին, գարնան ջուրը:
Գարնան գառն է գովական, աշնան հավը: (Ա. Ղ.)

Բառերի շտեմարան

Տարվա եղանակների անունները

Ամառ – Բնիկ հայերեն այս բառի հնագույն ձևն է ***ամարն,*** որի **ր**-ն ***-ն***-ից առաջ դարձել է **ռ՝ *ամառ,*** և մեկնաբանվում է **ամ** (*տարի*, ռուսերենում՝ лето, лет – *տարի*) – **առն**. պատահական նմանություն ունի ***ձմեռ*** բառին:

Ձմեռ – Ըստ տարբեր մեկնությունների՝ **ձմեռը** բառացի նշանակում է ***սառնամանիք, ցուրտ, բուք***: Հնում ***ձմեռ***-ը ստուգաբանել են իբրև ***ձյունամեռ,*** իբր՝ *ձյունով մեռնում է (ծածկվում է) ամեն ինչ*:

Աշուն – Հայկական ծագում ունեցող այս բառը հնում մեկնաբանել են իբրև ***անշունչ, տխուր, մութ եղանակ:***

Գարուն – Բնիկ հայերեն բառ է, որի ցեղակիցները կան հնդեվրոպական մի շարք լեզուներում: Հավանական արմատն է ***գար,*** որից՝ ***գարն-ան,*** ըստ մեկ այլ կարծիքի՝ ***գառն:***

Ըստ Հր. Աճառյանի

Լսենք մեծերին

Ով չափազանց մեծ կարծիք չունի իր մասին, նա ավելի լավն է, քան ինքն է կարծում:

Յ. Գյոթե

ԲԱՅ

Բայը որպես խոսքի մաս

1. Ընդհանուր իմաստը՝ *գործողություն, եղելություն*
2. Ձևաբանական առանձնահատկությունը՝ *թեքվող (եղանակ, ժամանակ, դեմք, թիվ, սեռ)*
3. Տեսակները՝ *դիմավոր, անդեմ*
4. Շարահյուսական դերը՝ *ստորոգյալ, գոյականական և բայական անդամի լրացում*

Առարկայի գործողություն կամ եղելություն ցույց տվող բառերը կոչվում են բայ:

Գործողություն ասելով հասկանում ենք առարկայի մի բան անելը: Օրինակ՝ Անձրևը **լվանում է** բոլոր հետքերը:

Եղելություն ասելով հասկանում ենք առարկայի մի բան լինելը, դառնալը: Օրինակ՝ Կարճատև անձրևից հետո գետինը միանգամից **չորացավ:**

Առարկայի մի բան անելը ցույց տվող բայերը պատասխանում են **ի՞նչ անել, ի՞նչ է անում, ի՞նչ է արել, ի՞նչ արեց, ի՞նչ անող, ի՞նչ է անելու, ի՞նչ կանի** և նման հարցերի: Առարկայի մի բան լինելը, դառնալը ցույց տվող բայերը պատասխանում են **ի՞նչ լինել, ի՞նչ է լինում, ի՞նչ է եղել, ի՞նչ եղավ, ի՞նչ է լինելու, ի՞նչ եղող** և նման հարցերի:

Որոշ բայեր ու բայաձևեր, ինչպիսիք են՝ **եմ, կամ, գիտեմ, ունեմ** և այլն, ցույց են տալիս ոչ թե առարկայի գործողությունը, այլ հաստատում են նրա լինելը, գոյությունը, մի բան ունենալը, մի վիճակի մեջ գտնվելը: Այդ պատճառով էլ նման բայերը բայական հարց չեն ստանում:

Ժամանակակից հայերենի բայի հատկանիշների, բայաձևերի կազմության և գործածության առաջին հիմնավոր քննությունը կատարել է մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանը:

1. **Հանրագիտարանից դո՛ւրս գրիր նյութեր Մանուկ Աբեղյանի մասին:**
2. **Արտագրի՛ր, հարցերի օգնությամբ գտի՛ր բայերը և ընդգծի՛ր:**

Գարունը եկավ, հավքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան:
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խնդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

(Հ. Թ.)

Իմ ճամփան՝ անվախճան մի գիշեր,
Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա.
Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա:

(Վ. Տ.)

3. **Դո՛ւրս գրիր ընդգծված գոյականները՝ նշելով ձևաբանական հատկանիշները:**

Ժենյա Ղազարյան
ԵՊՀ բանֆակ-ի 3-րդ կուրսի
ուսանողուհի

Փոքր գյուղի մեծ հոգսերը

Մանեն ծնվել ու մեծացել էր քաղաքի թոհուբոհից հեռու, սարերի մեջ ծվարած մի փոքրիկ գյուղում՝ շրջապատված անտառներով ու հորդահոս գետով: Ուսանողության տարիներին ստիպված էր հեռանալ հարազատ գյուղից ու ապրել քաղաքում: Մոր հետ հեռախոսով զրուցելիս իմացավ, որ սարերում մետաղի հանքեր են գտել ու արագ հանքարդյունաբերական գործարան են կառուցել: Գյուղացիներից շատերն են անցել աշխատանքի: Գյուղի բնակչության թիվն էլ ավելացել էր հարակից գյուղերի բնակիչների հաշվին, որոնք նույնպես աշխատանքի էին անցել նույն գործարանում:

Մանեն սովորում էր կենսաբանության ֆակուլտետում, և քանի որ կենսաբանության բաժիններից մեկը էկոլոգիան էր, նա ներքուստ անհանգստացավ: Մայրն իր հարցին՝ թե գործարանը պոչամբար ունի՞, ստացել էր բացասական պատասխան: Մանեն շատ էր անհանգստանում, բայց մորը ոչինչ չասաց, մանավանդ որ մայրը առաջին տարում շատ ոգևորվել էր. իրենք արդեն լավ էին վաստակում, սկսել էին տունը վերանորոգել: Մանեն տեղը չէր գտնում ու առա-

ջին իսկ հնարավորության դեպքում շտապեց հասնել գյուղ՝ մոտիկից տեսնելու և հասկանալու, թե իրականում ինչ էր կատարվել գյուղում:

Անակնկալի եկած ծնողներին հանգստացրեց՝ ասելով, որ նրանց շատ է կարոտել, և որ հաջորդ օրը գյուղում ապրող ընկերուհու ծննդյան օրը պիտի նշեին: Վաղ առավոտյան Մանեն արթնացավ ու շտապեց այգի: Քանի որ տունը ձորալանջին էր, Մանեն միշտ լսում էր գետի առույգ վշշոցը: Բայց հիմա այդ ձայնը չկար: Շտապեց ներքև ու զարմանքից կանգ առավ: Գետը կիսով չափ ցամաքել էր, ձայնը՝ կտրվել: Բայց դա ամբողջը չէր. գետի մեջ ինչ- որ սպիտակ շերտ նկատեց: Մայրը ձայն տվեց վերևից, որ նախաճաշի ժամն է: Տուն դառնալիս էլ նկատեց, որ այգու ծառերը նոսրացել են: Իր սիրած խնձորենին այդպես էլ չգտավ: Ծնողները անհանգիստ նայեցին Մանեին ու հայացքները փախցրին:

Թեյելիս Մանեն արդեն շատ բան գիտեր գործարանի վայ-հետևանքների մասին. գյուղի անասունների արոտավայրը գործարանի հարակից տարածքներն էին, որոնց խոտը ոչ մի դեպքում թույլատրելի չէր անասունների համար, մինչդեռ մանկապարտեզի ու դպրոցի, նաև ողջ գյուղի մարդիկ այդ կաթն էին խմում: Ծնողների գույնն էլ դուր չեկավ Մանեին: Պարզվեց, որ հոր մոտ անհանգստացնող հիվանդություն են հայտնաբերել:

Մանեն լրիվ կորցրել էր իրեն. բա էլ ո՞ւր մնացին իր երազանքները՝ գյուղ վերադառնալու, նոր բույսեր ու ծառեր մշակելու, գյուղը շենացնելու:

Երեք օր անց, տխուր մտքերով բեռնված, Մանեն քաղաք էր վերադառնում: Ճանապարհն անցնում էր սկզբում անտառներով ծածկված լեռների միջով, որոշ ժամանակ անց լեռները մնացին հետևում, իսկ առջևում Երևանն էր՝ ծխի գորշ ամպերը գլխավերևում:

Արծվանիկի պոչամբարը

Ազատի ջրամբարը

Ա

4. **Վերարտադրի՛ր տեքստը բանավոր:**
5. **Ի՞նչ խոհեր արթնացան քո մեջ այս տեքստը կարդալիս:**
6. **Ինչպիսի՞ն է քո ծննդավայրի էկոլոգիական վիճակը. կա՞ն խնդիրներ:**

Բ

7. **Բացատրի՛ր** *պոչամբար* **և** *ջրամբար* **բառերի նշանակությունները բացատրական որևէ բառարանի օգնությամբ:**

8. **Կազմի՛ր բայեր գունանուններով,** ինչպես՝ *կարմիր-կարմրել-կարմրեցնել ղեղին-ղեղնել-ղեղնեցնել-ղեղնանալ-ղեղնացնել …*

9. **Դո՛ւրս գրիր տեքստից բայերը՝ նշելով ձևաբանական հատկանիշները:**

ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բայի կազմությունը որոշվում է նրա սկզբնաձևից՝ ուղիղ ձևից: Բայի սկզբնաձևը գործողության կամ եղելության անունն է, ինչպես՝ **գրել, կարդալ:** Ի տարբերություն մնացած բոլոր խոսքի մասերի՝ բայի սկզբնաձևն ունի հատուկ վերջավորություններ՝ **-ել, -ալ**: Այդ **-ել** և **-ալ** վերջավորություններից առաջ ընկած մասը բայի հիմքն է:

Բայի սկզբնաձևի հիմքը կազմությամբ լինում է **պարզ** և **ածանցավոր:** Պարզ բայերի արմատը նաև հիմք է:

- Բայի հիմքը պարզ է, եթե վերջավորությունից առաջ բայածանց չկա: Օրինակ՝ **կարդալ, շողշողալ, արտագրել** բայերի **կարդ-, շողշող-, արտագր-** հիմքերը պարզ են:
- Բայի հիմքը ածանցավոր է, եթե վերջավորությունից առաջ կա որևէ բայածանց: Օրինակ՝ **մոտենալ, բարձրացնել, գլորվել** բայերի **մոտ-են-, բարձր-ացն, գլոր-վ** հիմքերը ածանցավոր են:

Ըստ իրենց կազմության և բառային ու քերականական իմաստների՝ ածանցավոր բայերը լինում են **սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական, կրավորական:**

1. **Սոսկածանցավոր բայերը** սկզբնաձևի **-ել, -ալ** վերջավորությունից առաջ ունեն **-ան, -են, -ն, -չ** ածանցներ: Օրինակ՝ **քար-ան-ալ, գիտ-են-ալ, անց-ն-ել, փախ-չ-ել** և այլն:

2. **Պատճառական բայերը** սկզբնաձևի **-ել, -ալ** վերջավորությունից առաջ ունեն **-ացն, -եցն, -ցն** ածանցներ: Օրինակ՝ **վազել – վազ-եցն-ել, խաղալ – խաղ-ացն-ել, հագնել – հագ-ցն-ել, կպչել – կպ-ցն-ել** և այլն:

Կան բայեր, որոնցից ածանցներով պատճառական բայ չի կազմվում: Այդպիսի բայերի պատճառականը կազմվում է **տալ** բայի հարադրությամբ, ինչպես՝ **գրել տալ, աղալ տալ:**

3. **Բազմապատկական բայերը** սկզբնաձևի **-ել, -ալ** վերջավորությունից առաջ ունեն **ատ, ոտ, կոտ, տ, կոտ** ածանցներ: Օրինակ՝ **կտրել – կտր-ատ-ել, կտր-տ-ել, կծել – կծ-ոտ-ել, թռչել – թռչ-կոտ-ել, պատռել – պատռ-տ-ել, ծեծել – ծեծ-կոտ-ել:**

♦ **Մեղրոտ-ել, ցեխոտ-ել, յուղոտ-ել, ներկոտ-ել** և նման պարզ բայերը չպետք է շփոթել բազմապատկական **-ոտ** ածանցով կազմված բայերի հետ՝ **ջարդել** – **ջարդ-ոտ-ել, մորթել** – **մորթ-ոտ-ել** և այլն:

Մի շարք բայերից բազմապատկական բայ է կազմվում բայարմատի կրկնությամբ: Օրինակ՝ **ծալել-ծալծլել, վազել-վազվզել, քաշել-քաշքշել, խշշալ-խշխշալ** և այլն:

4. **Կրավորական բայերը** սկզբնաձևի **-ել, -ալ** վերջավորությունից առաջ ունեն **-վ-** ածանց: Օրինակ՝ **հրավիրել** – **հրավիր-վ-ել, աղալ** –**աղաց-վ-ել, հեռանալ** – **հեռաց-վ-ել** և այլն:

♦ Բայի սկզբնաձևի **-ել** և **-ալ** վերջավորությունները միաժամանակ ածանցներ են:

Հարադրական բայեր: Սրանք բարդ բառեր են, որոնք թեև բաղկացած են առանձին գրվող երկու բառերից, բայց ունեն մեկ բայի արժեք: Օրինակ՝ **լաց լինել** – **լալ, հոգ տանել** – **հոգալ** և այլն: Հարադրական բայերից շատերի ինքնուրույն իմաստը համարժեք մեկ բառով չի արտահայտվում: Օրինակ՝ **ծառս լինել, երես թեքել** և այլն:

5. Հարադրական բայերի մի տեսակն էլ երկու բայերի զուգակցությունն է: Օրինակ՝ **ասել-խոսել, ուտել-խմել, մեռնել պրծնել, գնալ հասնել** և այլն:

ճիշտ	սխալ
թարմացնել	թարմեցնել
խմեցնել	խմացնել, խմցնել
խոնավացնել	խոնավեցնել
խոսեցնել	խոսացնել
ծիծաղեցնել	ծիծաղացնել
կռվեցնել	կռվացնել
հիշեցնել	հիշացնել
նստեցնել	նստացնել
վախեցնել	վախացնել

10. *Փոքր գյուղի մեծ հոգսերը* **տեքստից դո՛ւրս գրիր բոլոր պարզ բայերը. ի՞նչ օրինաչափություններ ես նկատում:**

11. **Այդ նույն տեքստից դո՛ւրս գրիր ածանցավոր և հարադիր բայերը՝ ըստ ածանցների առանձնացնելով այնուհետև:**

12.* **Հետևյալ բառերից կազմի՛ր բայեր.** *թաքուն, լի, հավերժ, ծախս, բարի:*

13. **Հետևյալ բայերից բայածանցների կամ** *տալ* **բայի միջոցով կազմի՛ր պատճառական բայեր.** ամաչել, գաղթել, հիշել, խենթանալ, հիանալ, պայթել, հագենալ, սահել, դողալ, սարսափել, մտնել, վերջանալ, թռչել, փայլել:

14. **Հետևյալ բայերից կազմի՛ր բազմապատկական բայեր.** կապել, տաշել, ցատկել, ծախել, կոտրել, ջարդել, թշշալ, նստել, գզել, ծամել:
15. **Հետևյալ բայերից կազմի՛ր կրավորական բայեր.** ազատել, այրել, կարդալ, դարսել, մոտեցնել, թափել, իմանալ, լուծել, հարգել:
16. **Կազմի՛ր նախադասություններ հետևյալ բայերով՝** համաձայնել, պահպանել, պաշտպանել, վերաբերել, վերաբերվել, սուզվել, տուժել:

Գրի՛ր շարադրություն՝ *«Ես շատ հետաքրքրասեր եմ»* **վերնագրով՝ օգտագործելով պարզ, ածանցավոր և հարադրական բայեր:**

ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ԵՎ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐԸ

Բայը նախադասության մեջ գործածվում է երկու ձևով՝ **դիմավոր** և **անդեմ:** Դիմավոր ձևերը (**խաղում է, սովորեցի, կվերադառնաս** և այլն) ստորոգյալներ են:

Բայի բուն կամ հիմնական գործածությունը ստորոգյալ լինելն է, որի պաշտոնում բայն ունենում է **դեմքի, թվի, ժամանակի, եղանակի** հատկանիշներ:

♦ Բայի դիմավոր ձևերն անվանվում են նաև **եղանակային ձևեր**:

Անդեմ ձևերի մի մասը (**վերադառնալ, խաղացող, սովորած, անցնելիս**) նախադասության մեջ լինում է ենթակա, ստորոգյալի մաս և լրացում, մյուս մասը (**խաղացել, խաղում, խաղալու** և այլն) մասնակցում է դիմավոր ձևերի կազմությանը:

♦ Բայի անդեմ ձևերն անվանվում են նաև **դերբայներ**:

Բայի և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերը ունենում են **սեռի** հատկանիշ:

♦ **Այսպիսով՝** բայի քերականական հատկանիշներն են **դեմքը, թիվը, ժամանակը, եղանակն ու սեռը:**

17. **1. Արտագրի՛ր բայի դիմավոր և անդեմ ձևերը առանձին սյունակներով:**
2. Դո՛ւրս գրիր հատվածից ածականները, որոշի՛ր յուրաքանչյուրի տեսակը:

Սկսել էր փչել թարմ, գրեթե ցուրտ քամին: Արևը հաճախ ծածկվում էր վազող ամպերի մութ կտորներով: Առջևս՝ ցածում, փռված էր գյուղը՝ իր կարմիր կղմինդրե տանիքներով, սիրուն ծառաստանների մեջ թաքնված: Հորիզոնում հնձված արտերի հեռանկարը ծածկվել էր մոտակա թաց հողերից ելնող գոլորշիների քողաձև վարագույրով: (Վ. Թ.)

Շարունակի՛ր տեքստը՝ գործածելով տրված բայերը. *կորչել, կուտակվել, ծածկվել, սսկվել, հոսել, որոտալ, խլացնել, շաչել-շառաչել:*

Թանձր մառախուղը կախվեց գյուղի վրա...

ԲԱՅԻ ՍԵՌԸ

Բայն ունի երեք սեռ՝ **ներգործական, կրավորական** և **չեզոք:**

1. Հայրս վաղ գարնանը ջրեց մեր այգին**(ներգործական):**
2. Մեր այգին վաղ գարնանը ջրվեց հորս կողմից **(կրավորական):**
3. Այգում ծաղկել է գեղեցիկ խնձորենին **(չեզոք):**

1 ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ

Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է կրող առարկա:

Ներգործական սեռի բայերը պահանջում են հայցական հոլովով լրացում, որը պատասխանում է **ո՞ւմ** կամ **ի՞նչ(ը)** հարցին: Օրինակ՝ Շինարարները կառուցում են **(ի՞նչ) նոր քաղաք:** Աշոտը ներս հրավիրեց **(ո՞ւմ) բժշկուհուն:**

Կառուցում են, հրավիրեց ներգործական սեռի բայեր են, որոնց արտահայտած գործողությունն անցնում է հայցական հոլովով դրված **քաղաք, բժշկուհուն** առարկաներին:

♦ Ներգործական սեռի բայերի՝ հայցական հոլովով դրված այս լրացումները կոչվում են **ուղիղ խնդիր:**

Բոլոր պատճառական բայերը ներգործական սեռի բայեր են և պահանջում են **ուղիղ (կրող) խնդիր** լրացում: Օրինակ՝ **հիացնել ո՞ւմ – լսողներին: Բարձրացնել ի՞նչը – ձեռքը:**

Ներգործական սեռի բայից կարելի է կազմել կրավորականի ձևը: Օրինակ՝ **գրել-գրվել, պատմել-պատմվել, իմանալ-իմացվել, աղալ-աղացվել** և այլն:

18. **Կազմի՛ր նախադասություններ՝ հետևյալ ներգործական սեռի բայերի հետ գործածելով ուղիղ (կրող) խնդիր լրացում.** արտասանել, բացատրել, գրկել, թրջել, իմանալ, խրախուսել, զայրացնել, կերակրել, հուզել:

19.* **Գտի՛ր ուղիղ խնդիր (կրող) լրացում ունեցող ներգործական սեռի բայերը և արտագրի՛ր բայն իր խնդիր լրացման հետ:** Օրինակ՝ **գրկել (ո՞ւմ) աղջկան:**

Սկսվեց մի անօրինակ պայքար երեքի մեջ: Շուշանիկը ճգնում էր հորը բարձրացնել հատակից, հայրն ամուր կպել էր թախտի ոտներին, Դավիթն աշխատում էր նրանց անջատել միմյանցից: Այնինչ բոցերի առաջին ալիքներն արդեն լիզում էին լուսամուտի առաստաղը, իսկ ծուխը հետզհետե բարձրանում էր ու դառնում հեղձուցիչ: Դավթի ուժերն սպառվում էին:

Այժմ անդամալույծն ինքն էր գրկել աղջկան իր առողջ ձեռքով և այնպես ամուր, որպես երկաթե գոտի: Այդ միակ ձեռքի մեջ էր կենտրոնացել նրա քայքայված կյանքի ամբողջ ուժը: (Շիրվ.)

20. **Գրի՛ր ներգործական սեռի հինգ բայ և կազմի՛ր նախադասություններ:**

21. **Ըստ տրված նկարի՝ «Ծառն աղբանոցում» կազմի՛ր նախադասություններ տարբեր սեռերով:**

2 ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ

Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը ենթական կրում է իր վրա մեկ ուրիշ առարկայից:

Կրավորական սեռի բայերը պահանջում են բացառական հոլովով լրացում և ստանում են **ումի՞ց, ինչի՞ց, ո՞ւմ կողմից** հարցերը:

Ա Կրավորական բայի՝ բացառական հոլովով դրված լրացումը **ներգործող խնդիր** է: Օրինակ՝ Ոսկե հովտի շուշանները օրորվում էին գիշերային մեղմ (ինչի՞ց) **քամուց:** Մեր հոյակապ տաճարներն ավերվում էին (ումի՞ց) **թշնամիներից:** Ուսուցիչը հարգվում է իր (ո՞ւմ կողմից) **սաների կողմից:**

Այս նախադասություններում ընդգծված բառերը կրավորական սեռի բայերի **ներգործող խնդիր** լրացումներ են:

♦ Կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործական սեռի բայերից՝ **-վ-** ածանցով: Օրինակ՝ **տանել-տարվել, ասել-ասվել, իմանալ-իմացվել, հոգալ-հոգացվել, մոտեցնել-մոտեցվել, հնձել-հնձվել** և այլն:

Վ ածանցով ոչ բոլոր բայերն են կրավորական սեռի: Կրավորական **-վ-** ածանց ունեցող շատ բայեր ցույց են տալիս նաև այնպիսի գործողություն, որը ենթական ոչ թե կրում է ուրիշից, այլ ինքն է կատարում: Օրինակ՝ Արայիկը լվացվում է: Անձրևն անընդհատ թափվում է: Կոշիկներս արդեն մաշվել են: **Վ** ածանց ունեցող այսպիսի բայերը կոչվում են **կրավորակերպ չեզոք** սեռի բայեր:

22. **Հետևյալ բայերով կազմի՛ր այնպիսի նախադասություններ, որոնց ենթակաները գործողությունը կրեն մեկ ուրիշից.** բերվել, ամրացվել, լցվել, կառուցվել, պատվիրվել, կանչվել, կոտրվել, մշակվել, պոկվել: Օրինակ՝ Նամակներն ու թերթերը բերվում են փոստատարի կողմից:

3 ՉԵԶՈՔ ՍԵՌ

Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որով ենթական ո՛չ ներգործում է մեկ ուրիշի վրա, ո՛չ էլ ուրիշից կրում է իր վրա:

Օրինակ՝

Բազմած *լուսնի նուրբ շողերին,* *Փերիները սարի գլխին*
Հովի թևին ***թռչելով՝*** ***Հավաքվեցին*** *գիշերով:* (Հ. Թ.)

Ընդգծված բայերը ցույց են տալիս մի գործողություն, որ ենթական կատարում է ինքնին: Չեզոք սեռի բայերը ձևով նման են կա՛մ ներգործական, կա՛մ կրավորական սեռի բայերին, և դրանք տարբերելու համար պետք է իմանալ հետևյալը.

♦ Ներգործական սեռի բայերը պահանջում են ուղիղ խնդիր լրացում և թելադրում են **ո՞ւմ** կամ **ի՞նչ(ը)** հարցը: Օրինակ՝ **վառել ի՞նչը – լամպը: Գտնել ո՞ւմ – որդուն: Աղալ ի՞նչ – ցորեն**:

♦ Ներգործական սեռի բայերը դառնում են կրավորական: Օրինակ՝ **վառել-վառվել, գտնել-գտնվել, աղալ-աղացվել:**

Չեզոք սեռի բայերը չունեն այս հատկանիշներից և ո՛չ մեկը:

Չեզոք սեռի բայերը ձևով նման են նաև կրավորական բայերին, ինչպես՝ **բնակվել, հարձակվել, լվացվել**: Տարբերելու համար պետք է իմանալ հետևյալը.

- Կրավորական սեռի բայերն ունենում են անուղղակի խնդիր լրացում, որոնց գործողությունն անցնում է ենթակային, և թելադրում են **ումի՞ց, ինչի՞ց, ո՞ւմ կողմից** հարցերը: Օրինակ՝ **Բուսականությունն այրվել էր (ինչի՞ց) արևից:**
- Կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունը կարելի է շրջել ներգործական սեռի բայով կազմված նախադասության՝ ենթական դարձնելով խնդիր: Օրինակ՝ **Բուսականությունը այրվել էր արևից: Արևը այրել էր բուսականությունը:**

Չեզոք սեռի բայերը չունեն այս հատկանիշներից ոչ մեկը: Օրինակ՝ **Ես բնակվում եմ գյուղում: Թշնամին հարձակվեց մեզ վրա:**

23. **Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողած տառերը: 2. Գտի՛ր չեզոք սեռի բայերը և որոշի՛ր՝ դրանք ձևով ներգործակա՞ն, թե՞ կրավորական բայերին են նման:**

Հետո Կաքավաբեր...ի գլխին լռություն ի...ավ: Օ...ախներում հան...ավ կրակը, եկավ խավար գիշեր: Գազան...երի ահից շները կուչ եկան վրան...երի առա...: Ոչխարը պա...կեց կանաչի վրա: Խոտի վրա մեկնվեց և կինը՝ թա...իքի տակ ծա...կելով տղային:

Կաքավաբեր...ի գլխից ա...պը հսկա խխուն...ի պես սողա... դեպի վրան...ը, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա, և մակաղա... ոչխարների բր...ի վրա նստե... գիշերային խոնավությունը: Ցող կա...եց ալպ...ական մանուշակի ծա...կաթերթերի վրա: Բուրմունքից ար...եցած մի բզեզ քնել էր առ...ջքների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխար...ը հոտավե... բուրաստան է, ալպ...ական մանուշակ: (Ակ. Բ.)

Փոքր գյուղի մեծ հոգսերը **տեքստից դո՛ւրս գրիր երկուական բայ՝ ներգործական, կրավորական և չեզոք սեռի, ու դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Երգ միայնակ ծառի մասին

Մի քարքարոտ հողում,
Ջրի կարոտ հողում,
Հողմ ու քամու դիմաց
Մի կենտ ծառ է կանգնած:
Հողմ ու քամու դիմաց
Ինքը՝ մենակ ու թույլ,
Մեջքը՝ կարճ ու ծռված,
Տերևները՝ տխուր:
Բայց թե լինե՞ր, լինե՞ր
Շուրջը անտառ լինե՞ր,

Իր թիկունքին, կողքին
Այգի ու ծառ լիներ:
Ճյուղը ճյուղի տված՝
Կդառնային մի պատ,
Հողմ ու քամու դիմաց
Կկանգնեին հպարտ:
Կխեղճանար քամին,
Հողմը կխեղճանար,
Չեռ կթոթվեր ծառին,
Կանցներ ու կգնար:

Ս. Կապուտիկյան

Եղեգնը և ծառերը

Մի թագավոր զբոսանքի ելավ՝ շրջելու լեռներում և հովիտներում: Եվ տեսավ, որ մեծամեծ ծառեր կային՝ կոտրտված և փշրված, և միայն մի եղեգն կար՝ կանգուն, անարատ: Եվ թագավորն ասաց. «Ո՞վ եղեգն, ասա՛ ինձ, թե ինչպես հաստատուն ես մնացել, երբ մեծամեծ ծառերը փշրվել են»:

Եվ եղեգնը ասաց. «Ո՞վ թագավոր, երբ սաստիկ հողմ բարձրացավ, ծառերը հպարտանալով հակառակ կանգնեցին հողմի դեմ, և հողմը նրանց փշրեց, իսկ ես խոնարհվեցի հողմի կամքով և ահա կանգուն եմ»: Վարդան Այգեկցի

Ա

24. **Ի՞նչ են սովորեցնում քեզ այս երկու գործերը՝ բանաստեղծությունը և առակը, համամի՞տ ես առակի արտահայտած մտքին:**
25. **Վերլուծի՛ր բանաստեղծությունը, համեմատի՛ր** *ծառին* **ու** *եղեգնին*:

Բ

26. **Գտի՛ր բայերը, որոշի՛ր դրանց կազմությունը:**

27. **Որոշի՛ր տեքստերում գործածված բայերի սեռը:**

28.* **Տրված բայերը խմբավորի՛ր ըստ սեռերի.** գնահատել, բորբոքել, դառնացնել, հարգվել, արժևորել, հիանալ, բաժանել, դիմավորել, հիշել, հեռանալ, վրնջալ, հիվանդանալ, վախեցնել, զարհուրել, բնակվել, սիրահարվել, ուտել:

29. **Արտագրի՛ր՝ կրավորական կառուցվածքի նախադասությունները շրջելով ներգործականի: Ենթակաները գծի՛ր մեկ, ստորոգյալները՝ երկու, իսկ բայի սեռով պայմանավորված խնդիր լրացումները՝ ալիքաձև:**

Գետինը տեղ-տեղ պատռվել էր երկրաշարժից: Դաշտերը ծածկվեցին ձյունով: Քարերի խոռոչները լցվել էին անընդհատ տեղացող անձրևից:

Արմենակը զրկվեց խաղին մասնակցելու իրավունքից: Պատերը վարպետների կողմից փորագրվում էին զարդանկարներով: Երկաթը ծռվեց արկղի ծանրությունից: Մենք հրավիրվեցինք ճաշի Հակոբյանների կողմից: Առաջին օգնությունը նրան ցույց տրվեց իր ընկերների կողմից: Շենքի կառուցումն ավարտվեց շինարարական բրիգադի կողմից:

30. **Բառարանի օգնությամբ բացատրի՛ր** *մակաղել, ձաղկել, սպրդել* **բայերի իմաստները, որոշի՛ր սեռը և գործածի՛ր նախադասություններում:**

Անցկացրե՛ք բանավեճ *«Ինչո՞ւ են մարդիկ անտարբեր իրենց շրջապատի նկատմամբ»* **թեմայով՝ կարևորելով Գ.Թումբերգի ելույթը՝ ըստ տեսանյութի:**

Գրի՛ր շարադրություն՝ *«Ինչպե՞ս փրկել Երկիր մոլորակը իմ պատկերացմամբ»* **վերնագրով և ընդգծի՛ր բայերի անդեմ ձևերը մեկ, դիմավորները՝ երկու գծով:**

ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐ՝ ԴԵՐԲԱՅՆԵՐ

Այն բայաձևերը, որոնք ցույց են տալիս գործողություն՝ առանց եղանակի, ժամանակի, դեմքի և թվի, կոչվում են բայի անդեմ ձևեր:

Օրինակ՝ Մի անմայր մանուկ, հեկեկանքներից **Հոգնած ու բեկված, ննջել** է ուզում: (Վ. Տ.)

Ընդգծված բայերը անդեմ ձևեր են:

♦ Բայի անդեմ ձևերը նախադասության մեջ ստորոգյալ են դառնում միայն օժանդակ բայի հետ: Օրինակ՝

Երգում է քամին, **լալիս է** նորից,
Անհույս ու անվերջ **մղկտում է** նա:

♦ Բայի անդեմ ձևերը նախադասության մեջ կատարում են նաև ենթակայի ու լրացման պաշտոններ և պատասխանում են անդեմ, այսինքն՝ որևէ դեմքի չուղղված հարցի: Օրինակ՝ **Կառուցելը** (ենթակա) մեր ժողովրդի բնորոշ հատկանիշն է: Մեր ժողովուրդը **կառուցող** (լրացում) ժողովուրդ է:

♦ Բայի անդեմ ձևերը պատասխանում են՝ **ի՞նչ անել, ի՞նչ անելիս, ի՞նչ լինել, ի՞նչ եղող, ի՞նչ արած, ի՞նչ անելու, ի՞նչ լինելու** և նման հարցերի:

♦ **Բայի անդեմ ձևերը կոչվում են դերբայներ:**

Հայերենն ունի ութ դերբայ՝ **անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար, անկատար, վաղակատար, ապակատար, ժխտական:**

Սրանցից առաջին չորսը, առանձին վերցված, լինում են նախադասության անդամ, դրանք **անկախ դերբայներ** են:

Անկատար, վաղակատար, ապակատար և **ժխտական** դերբայները նախադասության անդամներ են դառնում միայն **եմ** բայի խոնարհված ձևերի հետ: Այդ դերբայներով կազմվում են բայի դիմավոր ձևեր: Դրանք խոնարհման ձևեր կազմող **կախյալ**, այսինքն՝ **ձևակազմիչ դերբայներ** են կամ **ձևաբայեր**:

31. **1. Առանձին սյունակներում արտագրի՛ր բայերի դիմավոր և անդեմ ձևերը:**
2. Լրացրո՛ւ բաց թողած տառերը:

Կանգնում էր դռան շե...քին և կարծես թե տեսնում էր պղնձյա զանգերի տխուր ղողան...ները, ինչպես մթնող երկնքի տակ ճախրող աղավնիները: Նա հավատում էր, որ զանգերի հետ երկնային մի օրհնություն թ...թ...ալով ներս է մտնում ու քսվում տան սևացած քարերին, նրա այրվող օջախին, ինչպես ներս կմտներ սողացող մշուշը:

Դար...ասի մոտ Սիմոնը մի պահ կանգնեց, նայեց ձիուն, որ արոտից վերադար...ել և ախո-ժակով խժռում էր թարմ խոտի խուր...ը, երբեմն մ...ութով փնտրում սուսա...բարի տերև: (Ակ. Բ.)

ԱՆԿԱԽ ԴԵՐԲԱՅՆԵՐ

1 ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

♦ **Անորոշ դերբայը ցույց է տալիս գործողության ընդհանուր գաղափար:**

Անորոշ դերբայը բայի սկզբնական կամ ելակետային ձևն է. դրանով մենք անվանում ենք գործողությունը՝ առանց նշելու, թե ով երբ է կատարում այն:

Անորոշ դերբայը պատասխանում է **ի՞նչ անել, ի՞նչ լինել** հարցերին:

Օրինակ՝ ի՞նչ անել – **մտածել, հավաքել, գալ**
ի՞նչ լինել – **հուզվել, հոգնել, քաղցրանալ**

- Անորոշ դերբայն ունի **-ել** կամ **-ալ** վերջավորություն:
- Անորոշ դերբայի **-ել** և **-ալ** վերջավորությունների **-ե-** և **-ա-** ձայնավորները

խոնարհիչներ են: Անորոշ դերբայում **-ել-** վերջավորություն ունեցող բայերը **-ե խոնարհման բայեր** են, ինչպես՝ **հաղթել, բարձրացնել, գրկել** և այլն:

- Անորոշ դերբայում **-ալ** վերջավորություն ունեցող բայերը **-ա- խոնարհման բայեր** են, ինչպես՝ **հասունանալ, խաղալ, բարձրանալ** և այլն:
- Անորոշ դերբայն օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր չի կազմում:
- Իբրև գործողության անուն՝ անորոշ դերբայը կատարում է գոյական անվան դեր և հոլովվում է՝ ենթարկվելով **-ու** հոլովման: Օրինակ՝

Ուղղ.	**վազել(ը)**	Բաց.	**վազելուց**
Սեռ.	**վազելու**	Գործ.	**վազելով**
Տր.	**վազելու(ն)**	Ներգ.	–
Հայց.	**վազել(ը)**		

- Անորոշ դերբայը նախադասության մեջ լինում է **ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում**: Օրինակներ՝ Մի անգամ **տեսնելը** հազար անգամ **լսելուց** լավ է *(ժող.)*: **Տեսնելը** – ենթակա, **լսելուց** – լրացում: Եթե ես այսքան տարվա մեջ քիչ բան եմ գրել, պատճառը շատ **կարդալս** է: **Կարդալս** – ստորոգյալ կազմող բառ:

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝

Վիճակ ***հանելու*** *աշխույժ երգերով:* (Հ. Թ.)

Հանելու – ստորոգյալի լրացում:

Մի շարք բայեր զուգաձև՝ թե՛ ***ա***, թե՛ ***ե*** խոնարհման բայեր են.

ափսոսալ/ափսոսել **կաթկթալ/կաթկթել**
սարսռալ/սարսռել **մորմոքալ/մորմոքել**
կարմրացնել (կարմրանալ)/**կարմրեցնել** (կարմրել)
դեղնացնել (դեղնանալ)/**դեղնեցնել** (դեղնել)
հաչել/հաչալ

---

32. Դո՛ւրս գրիր անորոշ դերբայները, որոշի՛ր դրանց հոլովն ու պաշտոնը:

1. Լևոնը սենյակի զույգ աթոռներն առաջարկեց մեզ: Նստել անկարելի էր. այդ սենյակում յոթ-ութ հոգի միայն կարող էին կանգնել: Լուկրեցիա Կաֆարելլին չդիմացավ օդի սակավությանը, դուրս գնաց: Չելլինին հետևեց նրան: Նրանց դուրս գնալուց հետո սենյակն այնչափ ազատվեց, որ ես կարող էի դիտել շուրջս: (Շիրվ.)

2. Պատուհանի մութ ապակիները սկսեցին որոշակի երևալ, խրճիթը սկսեց քիչ-քիչ լուսավորվել:

Հավերը շարժվեցին թառի վրա, թափահարեցին թևերը, սկսեցին քորել թևե-

րի ու կրծքի տակ, հետո վզները երկարացրին դեպի ներքև, նայեցին դես ու դեն՝ ցնցելով կարմիր կատարները, և հանկարծ ցած թռան՝ օդի մեջ ցանելով իրենց փետուրները: (Ն. Դ.)

33. **Գտի՛ր հետևյալ բայերի հոմանիշները, մի քանիսը գործածի՛ր նախադասությունների մեջ.** *ալեվետել, բարվոքել, հերյուրել, կռահել, խորհել:*

34. **Հոլովի՛ր** *հեռանալ* **և** *հեռացնել* **անորոշ դերբայները:**

2 ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

♦ **Ենթակայական դերբայը ցույց է տալիս առարկայի՝ մի բան անող կամ եղող լինելը:**

Օրինակ՝ Մթնաձոր **տանող** միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է:

Ենթակայական դերբայը պատասխանում է **ի՞նչ անող** կամ **ի՞նչ եղող** հարցերին և ունի **-ող**, **-ացող** կամ **-եցող** վերջավորություն: Օրինակ՝

-ող	
անորոշ դերբայ՝	սիրել, գովել, փախչել
ենթակայական դերբայ՝	**սիրող, գովող, փախչող**
-ացող	
անորոշ դերբայ՝	ջանալ, հոգալ, մոռանալ
ենթակայական դերբայ՝	**ջանացող, հոգացող, մոռացող**
-եցող	
անորոշ դերբայ՝	մոտենալ, վախենալ
ենթակայական դերբայ՝	**մոտեցող, վախեցող**

Բայց հիշե՛ք, որ ենթակայական դերբայի բուն վերջավորությունն է՝ **-ող**:

- Ենթակայական դերբայով դիմավոր ձևեր չեն կազմվում:
- Ենթակայական դերբայը գոյականաբար գործածվելիս հոլովվում է **ի** հոլովմամբ (**սովորող(ը), սովորողի, սովորողից** և այլն), ունի հոգնակի թիվ և նախադասության մեջ դառնում է **ենթակա, գոյականական անդամի լրացում, ստորոգյալ կազմող բառ**:

Օրինակ՝ Ուրիշին հոր **փորողը** (ենթակա) ինքը կընկնի մեջը *(ժող.)*: Սուտ **ասողի** (գոյականական անդամի լրացում) տունը կրակ ընկավ, չհավատացին *(ժող.)*: Մանուկներին **հուզող** (ենթակայի լրացում) գրքեր շատ կան: Նա իր մեծերին **լսող** (ստորոգյալ կազմող բառ) է:

35. **Դո՛ւրս գրիր ենթակայական դերբայները և որոշի՛ր, թե դրանք որպես նախադասության ի՛նչ անդամ են գործածված:**

Իր արհեստին ծուռ նայողը կուշտ չի ուտի: Տուն ավերողին տուն չի մնա: Ուրիշի տուն քանդողը իր հացը ցամաք կուտի: Ասողին լսող է պետք: Հեռվից լսվող դափի ձայնը դուր կգա: Վարդ սիրողը փուշն էլ կսիրի: Գելից վախեցողը ոչխար չի պահի: Վազող ջուրը կեղտ չի բռնում: Ուզողի մի երեսն է սև, չտվողի՝ երկուսը (Ա. Ղ.): Պատվով մեռնողը փառքով է ապրում (Շ.):

36. **Կազմի՛ր հետևյալ բայերի ենթակայական դերբայը և գործածի՛ր նախադասությունների մեջ տարբեր պաշտոններով:**

Բարձել, գնահատել, թպրտալ, թախծել, խախտել, անհանգստանալ, թռչել:

3 ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

♦ **Հարակատար դերբայը ցույց է տալիս առարկայի դրություն, վիճակ՝ որպես ավարտված գործողության հետևանք:**

Օրինակ՝ **Քաղցած** ձիերը պոկոտում էին փողոցի չոր և հազար սմբակի **տրորած** խոտը: (Ակ. Բ.)

Հարակատար դերբայի բուն վերջավորությունն է **-ած**, իսկ **-աց** և **-եց** մասնիկները հիմքի ածանց են:

Ած-ով վերջացող ոչ բոլոր բառերն են հարակատար դերբայ կամ ոչ միայն անդեմ բայ են, ինչպես՝ **արկած, արարած, դիպված, հասարակած, հոդված:**

Կրավորական և որոշ թվով չեզոք սեռի բայերի հարակատարը օժանդակ բայի հետ կազմում է ստորոգյալ: Օրինակ՝ Ես **կանգնած եմ** (ստորոգյալի մաս) վայրի ժայռի կատարին: (Վ. Տ.)

Հարակատար դերբայը գոյականաբար գործածվելիս ենթարկվում է **-ի** հոլովման (**քնածը, քնածի, քնածին** և այլն) և նախադասության մեջ դառնում է **ենթակա, գոյականական անդամի լրացում,** մասամբ նաև **բայական անդամի լրացում**: Օրինակներ՝ Գիշերվա **կերածը** (ենթակա) կորած է: **Տաշած** (ենթակայի լրացում) քարը գետնին չի մնա (ժող.): Քամու **բերածը** (ստորոգյալի լրացում) քամին կտանի (ժող.): **Վիրավորվածի** (գոյակ. անդամի լրացում) աչքերում դեռ վախ կար:

37. **Կազմի՛ր** *գնալ, հնձել, մնալ, ծածկվել, եռալ, խոսել, դիզել* **բայերի հարակատար դերբայները և դրանք գործածի՛ր նախադասության մեջ տարբեր պաշտոններով:**

38. **Դո՛ւրս գրիր տրված հատվածներից հարակատար դերբայները, որոշի՛ր դրանց սեռը և պաշտոնը:**

Թողած Կարսում՝ գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով,

Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով: (Ե. Չ.)

Երբ արևից խանձված ոտքերով քայլում էր առվի եզերքով, Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե պապակ արտերն ու ծարված այգիները տապ առած իրեն են սպասում:

Արևից չորացած հողը, տեղ-տեղ ճաքճքած, ագահությամբ ծծում էր ջուրը, ճեղքերից օդի պղպջակներ էին դուրս գալիս: Լառ-Մարգարին թվում էր, թե երկինքը մի հսկա տաշտ է՝ մեջը լի լեղակած ջուր, և ամպը՝ լվացքի մոռացված կտոր տաշտի մեջ: (Ակ. Բ.)

Ի՞նչ է նշանակում *Լառ.* բացտրի՛ր բառարանի օգնությամբ:

4 ՀԱՄԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

♦ **Համակատար դերբայը ցույց է տալիս ստորոգյալի կամ բայական այլ անդամի արտահայտած գործողությանը համընթաց գործողություն:**

Օրինակ՝ Դաշտերում խոտի խրձերը **կապելիս** ու **տեղափոխելիս** մտերմացավ գյուղի տղաների հետ:

- Համակատար դերբայը կազմվում է՝ անորոշ դերբային ավելացնելով **-իս** վերջավորությունը:

Օրինակ՝ անորոշ դերբայ՝ սովորել, երևալ
համակատար դերբայ՝ **սովորելիս, երևալիս**

- Համակատար դերբայը նախադասության մեջ լինում է **ստորոգյալի** կամ **բայական այլ անդամի լրացում** և պատասխանում է **ե՞րբ, ի՞նչ անելիս, ի՞նչ լինելիս** հարցերին: Օրինակ՝ Մանկությունս **հիշելիս** սիրտս դառնում է գինով: (Ե. Չ)

ճիշտ	սխալ
Դասը **պատասխանելիս** շփոթվեց:	Դասը **պատասխանելուց** շփոթվեց:
Փողոցն **անցնելիս** վայր ընկավ:	Փողոցն **անցնելուց** վայր ընկավ:

39. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով** *անհանգստացնել, գրոհել, փոռել, շարել, մեխել, մրոտել, բարձրացնել,* **բայերի համակատար դերբայները:**
40. **Դո՛ւրս գրիր բայերի դիմավոր և անդեմ ձևերը, որոշի՛ր համակատար դերբայների պաշտոնը:**

Երբ ես մի անվարժ մանուկ եմ եղել,
Արծաթ առվի մեջ անփույթ խաղալիս,
Երբ չար տղերքը ինձ շատ են նեղել,
Ու մոկտալիս կամ դառը լալիս
Լուռ, սրտակտուր ես տուն եմ վազել,
Կանգնել եմ քո լույս նկարի առաջ,
Բողոքել եմ քեզ ու մայր երազել:
(Մ. Մ.)

Երեկ տխուր, այսօր ուրախ,
Ալիքի պես ծափ եմ տալիս,
Երեկ՝ դեպի անհայտություն,
Այսօր դեպի ափ եմ գալիս: (Ռ. Դ.)

1. Գրի՛ր շարադրություն ազատ թեմայով՝ գործածելով բոլոր անկախ դերբայները:

2. Գրի՛ր տեքստ՝ «*Անկեղծ զրույց կենսաբանության ուսուցչուհու հետ*» վերնագրով՝ գործածելով քո անցած դերբայական ձևերը:

ԿԱԽՅԱԼ ԴԵՐԲԱՅՆԵՐ (ՁԵՎԱԲԱՅԵՐ)

1 ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

♦ **Անկատար դերբայը ցույց է տալիս գործողությունն ընթացքի մեջ կամ կատարման վիճակում:**

Օրինակ՝ *Հավքերդ **երգում** են հայերեն,*
*Խոփերդ **հերկում** են հայերեն,*
*Հայերեն են **տոկում** գրերդ:* (Հ. Ս.)

- Անկատար դերբայը ունի **-ում** վերջավորություն, որն ավելանում է անորոշ դերբայի հիմքին **-ել** կամ **-ալ** վերջավորության փոխարեն: Օրինակ՝ անորոշ դերբայ՝ **սովոր-ել, երև-ալ,** անկատար դերբայ՝ **սովոր-ում, երև-ում:**
- Անկատար դերբայն օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և դառնում ստորոգյալ: Օրինակ՝

*Անլռելի **վշվշում** է*
Պղտոր ջուրը Դեբեդի,
*Նրա ափին **կանաչում** է*
Մենակ շիրիմն իգիթի: (Հ. Թ.)

Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,
***Իրիկնաժամին** նստում եմ մենակ*
*Կանաչ առվի մոտ՝ **ուռիների** տակ,*
*Ու հոգնած **սիրտս** էլ չի դժգոհում:*
*Անցած **օրերի** հուշերն եմ թերթում*
*Եվ **խաղաղ** սրտով անխռով-մենակ*
*Քնքուշ **երգերից** հյուսում եմ մանյակ,*
*Որ պճնեմ սիրով **պատկերդ** տրտում:*
(Վ. Տ.)

41. 1. Արտագրի՛ր անկատար դերբայները, կազմի՛ր դրանցով նախադասություններ: 2. Նշի՛ր ընդգծված բառերի ձևաբանական հատկանիշները:

42. Կազմի՛ր նախադասություններ՝ որպես ստորոգյալ գործածելով *ավերել, բարձրանալ, ներառել, սահել, գլորվել, զարմացնել, թափվել* **բայերի անկատար դերբայներն օժանդակ բայերի հետ:**

2 ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

♦ **Վաղակատար դերբայը ցույց է տալիս գործողությունը կատարված, ավարտված վիճակում:**

Օրինակ՝ *Իմ ծիծաղների ծփանքները տաք*
Ես ***թողել*** *էի*
Գետափի կապույտ քարերի վրա: (Հ. Ս.)

- Վաղակատար դերբայն ունի **-ել** կամ **-ացել** վերջավորություն:

Ե խոնարհման պարզ բայերի վաղակատար դերբայը ձևով նման է անորոշ դերբային, այսինքն՝ **համանուն ձևեր** են: Օրինակ՝

անորոշ դերբայ՝ **բերել, շարել**
վաղակատար դերբայ՝ **բերել, շարել**

Սրանց տարբերությունը երևում է նախադասության մեջ, որտեղ անորոշ դերբայը լինում է նախադասության առանձին անդամ, մինչդեռ վաղակատարը օժանդակ բայի հետ լինում է միայն ստորոգյալ, օրինակ՝ Նա սիրում է **երգել** (**երգել** – անորոշ դերբայ): Նա **երգել է** այստեղ (**երգել** – վաղակատար դերբայ):

Ա խոնարհման պարզ բայերի վաղակատարը կազմվում է անորոշ դերբայի հիմքից՝ **-ացել** վերջավորությամբ:

Ածանցավոր բայերի վաղակատարն ունի **-ել, -ացել, -եցել** վերջավորությունները, օրինակ՝ անորոշ դերբայ՝ **թռչել, թռցնել, գտնել, մոռանալ, վախենալ, հեռացնել,** վաղակատար դերբայ՝ **թռել, թռցրել, գտել, մոռացել, վախեցել, հեռացրել**

Վաղակատարի բուն վերջավորությունը **-ել** է, իսկ **-աց-**ը հիմքի ածանց է:

- Վաղակատար դերբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և նախադասության մեջ դառնում է ստորոգյալ: Օրինակ՝ *Երբ առասպելական Բելն է* ***հարձակվել*** *մեր ժողովրդի վրա, նա* ***պատասխանել*** *է եկվոր բռնակալին Հայկ նախահոր լարած աղեղով:* (Գ. Է.)

43. Դո՛ւրս գրիր վաղակատար դերբայները: Կազմի՛ր այդ բայերի անորոշ, անկատար, հարակատար, ենթակայական և համակատար դերբայները:

Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի.
Ու Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր անաղարտ...
Նրանով է մրմնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանո՛վ է որոտացել
Կռվի երգն իմ ժողովրդի,
Նրանո՛վ է մայրս ջահել
Ինձ օրորոց դրել մի օր,
Հիմա եկել քե՛զ է հասել
Նրա կարկաչը դարավոր: (Ս. Կ.)

44. **Կազմի՛ր հետևյալ բայերի վաղակատար դերբայները:**

Արթնանալ, գթալ, մտնել, թվալ, մթնել, մոլեգնել, շաչել, ոստնել, ոռոգել, դիպչել, գտնել, պատվիրել:

3 ԱՊԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

♦ **Ապակատար դերբայը ցույց է տալիս գործողությունը չսկսված, կատարելի վիճակում:**

Օրինակ՝ *...Թե ինչպես հանկարծ նա գնաց հեռու,*
Էլ չի ***դառնալո՞ւ****, էլ չի* ***դառնալո՞ւ:*** (Հ. Թ.)

- Ապակատար դերբայը կազմվում է՝ անորոշ դերբային ավելացնելով **-ու** վերջավորությունը, օրինակ՝ բռնել-**բռնելու**, սուրալ-**սուրալու**:

Ապակատար դերբայը ձևով նման է անորոշ դերբայի սեռական հոլովին, այսինքն՝ դրանք **համանուն** ձևեր են:

- Ապակատար դերբայն օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և նախադասության մեջ դառնում է **ստորոգյալ**: Օրինակ՝ Էլ **չեմ խաղալու**, **գնալու եմ** դպրոց:

45. **1. Գտի՛ր դիմավոր բայերը և որոշի՛ր դրանցում դերբայները: 2. Որոշի՛ր ընդգծված բառերի ձևաբանական հատկանիշները:**

Հեռու գետափից, հեռու, հեռու,
Խաղընկերներս *կանչում են* ***ինձ****.*
– Երդո՛ւմ կեր, որ էլ չես խաբելու,
Որ ***մեզնից*** *էլ չես խուսափելու,–*
Եղինջով ծեծում, տանջում են ինձ...

– Ես ***ձեզ*** *չեմ խաբել, չեմ խուսափել,*
Ճնճղուկներն էին ***ոտքս*** *կապել:*
Արդարանում եմ, ցավից ճչում...
Ու ***ձայնիս*** *վրա վեր եմ թռչում:*
(Հ. Ս.)

46. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով** *անցնել, գրկել, ճանճրացնել, տաքացնել, օղակել, ծածկել, զարդարել* **բայերի ապակատար դերբայները:**

4 ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

♦ **Ժխտական դերբայն արտահայտում է կատարելի գործողություն, որը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևերով:**

Օրինակ՝ *Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,*
Կարոտիդ կանչը չի ***հասնի*** *նրան:* (Վ. Տ.)

- **Ե** խոնարհման բայերի ժխտական դերբայը կազմվում է՝ անորոշ դերբայի **-ել** վերջավորությունը **-ի** վերջավորությամբ փոխարինելով:
- **Ա** խոնարհման բայերի ժխտական դերբայը կազմվում է՝ անորոշ դերբայի վերջի **-լ**-ն դուրս գցելով:

- Ժխտական դերբայը օժանդակ բայի ժխտական ձևի հետ կազմում է բաղադրյալ դիմավոր ձև և դառնում է ստորոգյալ: Օրինակ՝ Ամեն օր ջուրը գերան **չի բերի:** (ժող.)

47. **Գտի՛ր ժխտական դերբայները, բացատրի՛ր դրանց կազմությունը:**
Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:
Խնձորը իր ծառից հեռու չի ընկնի:
Ծովն անցկացողը առվում չի խեղդվի:
Ձուկն առանց փուշ չի լինի:
Մեկ ծաղկով գարուն չի գա:
Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա:
Մինչև չգա հետինը, չի հիշվի առաջինը:
Ջուրն ընկնողը անձրևից չի վախենա:
Ջուրը չտեսած չեն բոբիկանա:
Ցամաք աղբյուրից ջուր չեն ուզի:
Ուրագը իր կոթը չի տաշի: (ժող.)



48. 1. **Բացատրի՛ր տրված առածների ու ասացվածքների այլաբանական իմաստը: 2. Ըստ նկարի խորհրդանիշների՝ ասա՛ առածները:**

49. **Կազմի՛ր** *թերթել, անջատել, քողարկել, խղճալ, իջեցնել* **բայերի ժխտական դերբայները և օժանդակ բայի հետ գործածի՛ր նախադասությունների մեջ որպես ստորոգյալ:**

ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Դերբայներ		Հիմք	Վերջավորություն
Անկախ	Անորոշ	սովոր	ել
		հավատ	ալ
	Ենթակայական	սովոր	ող
		հավատաց	ող
	Հարակատար	սովոր	ած
		հավատաց	ած
	Համակատար	սովոր	ելիս
		հավատ	ալիս
Կախյալ (ձևաբայեր)	Անկատար	սովոր	ում
		հավատ	ում
	Վաղակատար	սովոր	ել
		հավատաց	ել
	Ապակատար	սովոր	ելու
		հավատ	ալու
	Ժխտական	սովոր	ի
		հավատ	ա

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ե. Չարենց **Մորս համար գազել**

Հիշում եմ դեմքը քո ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին,
Լույս խորշոմներ ու գծեր, մա՛յր իմ անուշ ու անգին:
Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մա՛յր իմ անուշ ու անգին:
Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մա՛յր իմ անուշ ու անգին:
Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,
Ո՞ւր է արդյոք հեռացել, մա՛յր իմ անուշ ու անգին:
Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե՞ մեռած,
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մա՛յր իմ անուշ ու անգին:
Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց –
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մա՛յր իմ անուշ ու անգին:
Մտորում ես դու տխուր, և օրրում է թթենին
Տխրությունը քո անծիր, մա՛յր իմ անուշ ու անգին:
Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ
Քո ձեռքերի վրա ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին...

Ա

50. Բանաստեղծությունը փորձի՛ր սովորել անգիր:
51. Ըստ քեզ՝ ի՞նչն է բանաստեղծությունը դարձրել այդքան հուզական. արտահայտի՛ր կարծիքդ բանավոր:
52. Ո՞ւմ դերն ես առավել կարևորում քո կյանքում՝ ծնողների՞դ, տատ ու պապի՞դ, թե՞ որևէ ազգականի. եղի՛ր անկեղծ:

Բ

53. Գտի՛ր դերբայները, որոշի՛ր դրանց տեսակը և պաշտոնը (ստորոգյալի մաս, ենթակա, լրացում):
54. Դո՛ւրս գրիր ձևաբայերը՝ վաղակատարը դարձնելով հարակատար, անկատարը՝ ենթակայական: Օրինակ՝ հեռացել(է)-հեռացած, մտորում(ես)-մտորող:
55. Դո՛ւրս գրիր բոլոր գոյական անունները, վերլուծի՛ր ձևաբանորեն:
56. Դո՛ւրս գրիր ածականներն ու դերանունները, որոշի՛ր դրանց տեսակը. կազմի՛ր նախադասություններ այդ ածականներով:

57. Դո՛ւրս գրիր դերբայները, որոշի՛ր դրանց տեսակը:

Կենդանաբանական այգու տնօրենը մորաքույր Փեթունիայի համար մի գավաթ թեյ պատրաստեց՝ կրկին ու կրկին ներողություն խնդրելով: Փիրզն ու Դաղլին անկապ խոսում էին: Հարրիի կարծիքով՝ օձը նրանց ոչ մի վատ բան չէր արել, ուղղակի կողքերով անցնելիս ձևացրել էր, թե ուզում է կրունկները կծել, բայց երբ վերադարձել էին, Դաղլին պատմում էր, որ օձը համարյա կծել էր, պոկել էր իր ոտքը, իսկ Փիրզը երդվում էր, որ օձը փորձել էր իր գալարներով ճմլել իրեն: Բայց ամենավատն այն էր, որ Փիրզը հանկարծ ասաց.

- Հարրին օձի հետ խոսում էր, չէ՞, Հարրի՛: (Ջ. Ռ.)

58. Առանձնացրո՛ւ բայի անդեմ և դիմավոր ձևերը: 2. Վերլուծի՛ր անկախ դերբայները:

Կանչում է մայրը, հառաչում, կանչում:
Գալիս եմ, գալի՜ս, գալիս եմ, նանի՜…
Ձորից աղջկա ձենն է դողանջում:
Ու մազերն անկարգ տված թիկունքով
Ու ցրված շիկնած այտերի վրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած եղնիկի նման…(Հ.Թ.)

ԱՄՓՈՓԻՉ

- **Ինչո՞վ է պայմանավորված անորոշ դերբայի հոլովվելու առանձնահատկությունը:**
- **Ի՞նչ սկզբունքով է կատարվում դերբայների բաժանումը երկու խմբի:**
- **Ինչպե՞ս իմանալ՝** *կանչել, թռչկոտել, վազել, նկարել* **բայերը վաղակատա՞ր դերբայ են, թե՞ անորոշ:**
- **Թվի՛ր բայեր, որոնց ենթակայական և հարակատար դերբայները դարձել են գոյական և ածական:**



Ըստ քեզ՝ որո՞նք են ամենապահանջված մասնագիտությունները հենց այս տարիքում. ի՞նչ ես ցանկանում դառնալ և ինչո՞ւ:

59. Ի՞նչ սովորեցրեց քեզ *Սթիվեն Հոքինգի* **մասին տեսանյութը, դիտելուց հետո ի՞նչ խոհեր ունես: Ներքին խոսքդ դարձրո՛ւ արտաքին:**

Լսենք մեծերին

Ամենաաղքատ մարդը նա է, ով չունի երջանկություն և երազանք:

Ֆեռնանդո Տորես

ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐ

Գործողության կատարման եղանակ, ժամանակ, դեմք և թիվ ցույց տվող բայաձևերը կոչվում են բայի դիմավոր ձևեր:

Դիմավոր ձևերը նախադասության մեջ լինում են ստորոգյալ և պատասխանում են դիմավոր հարցի: Դիմավոր հարցեր են՝ **ի՞նչ արեցի, ի՞նչ ես անում, ի՞նչ կլինի, ի՞նչ են լինելու, ի՞նչ անեն, ի՞նչ են անելու, ի՞նչ պիտի անեն** և այլն:

60. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով** *անձրևել, էտել, կուտակվել, սայթաքել, փայլատակել, մռայլվել, գոռգոռալ* **բայերի դիմավոր ձևեր:**

ԴԵՄՔ

Բայն ունի երեք դեմք՝ **խոսողը,** որ առաջին դեմքն է, **խոսակիցը,** որ երկրորդ դեմքն է, և **մեկ ուրիշը,** որ երրորդ դեմքն է:

♦ Բայի **առաջին դեմքով** խոսողը հաղորդում է իր գործողությունը: Օրինակ՝ **Տեսա** երազ մի վառ, Ոսկի մի դուռ **տեսա:** (Վ. Տ.)

♦ **Երկրորդ դեմքով** խոսողը հաղորդում է իր խոսակցի գործողությունը: Օրինակ՝ **Լսո՞ւմ ես,** այնտեղ իմ սիրտն է թաղված,
Կոխոտի՛ր նրան քայլերով քո լույս: (Ե. Չ.)

♦ **Երրորդ դեմքով** խոսողը հաղորդում է ո՛չ իր և ո՛չ էլ խոսակցի, այլ մի երրորդ անձի կամ առարկայի գործողությունը:

Օրինակ՝ **Երեկոն փռեց** իր թևերը մութ: (Վ. Տ.)

- Երրորդ դեմքի բայերի ենթակա կարող են լինել երրորդ դեմքի անձնական դերանունները, գոյականները, ինչպես և գոյականաբար գործածված այլ խոսքի մասեր, օրինակ՝

  Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր,
  Քնքուշ ու տրտում որպես իրիկուն: (Վ. Տ.)

  Քամին** քարայրն **է մտել,
  Փշաքաղվել է,–
  Քարայրի հոնքը ծռվել,
  Աչքը շաղվել է: (Հ. Ս.)

- Դեմքն արտահայտվում է անմիջապես բային ավելացող վերջավորությամբ կամ օժանդակ բայով, ինչպես՝

ազատեց**ի**	ազատ**եմ**	ազատում **եմ**
ազատեց**իր**	ազատ**ես**	ազատում **ես**
ազատեց	ազատ**ի**	ազատում **է**

Ընդգծված **-մ, - ս, -ի, -իր** մասնիկները դեմքի վերջավորություններ են: Բայի եզակի երրորդ դեմքը հաճախ վերջավորություն չի ունենում:

61. **Դո՛ւրս գրիր ստորոգյալները, որոշի՛ր բայերի դեմքը:**

Լուսամփոփը հանկարծ շողաց,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի,
Ծառը խշշաց, ճյուղը դողաց,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի,
Առուն փախավ խոխոջալով,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի,
Ծածկվեց լուսնյակն ամպի շողով,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի:
Դու ինչո՞ւ ես լցվել այդպես
Աշխարհով մեկ,
Դու ինչո՞ւ ես այդպես անհուն
Ու անեզերք: (Մ. Մ.)

62. **Բառարանից օգտվելով՝ բացատրի՛ր *քամի* բառը և թվարկի՛ր նրա բոլոր հոմանիշները:**

Իսկ դու քամու ո՞ր տեսակն ես սիրում և ինչո՞ւ:

63. **Նկարագրի՛ր քո արթնանալն ու դպրոց գնալը՝ գործածելով** *արթնանալ, հագնել, մարզվել, վազել, թեյել, գնալ* **և այլ բայեր: Այդ ամենը պատմի՛ր նաև երկրորդ և երրորդ դեմքերով:**

ԹԻՎ

Գոյականների պես բայերն էլ ունեն երկու թիվ՝ **եզակի** և **հոգնակի**:

♦ **Բայի եզակին ցույց է տալիս մեկ առարկայի գործողություն:** Օրինակ՝ Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ **շշնջաց:** (Վ. Տ.)

♦ **Հոգնակին ցույց է տալիս երկու և ավելի առարկաների գործողություն:** Օրինակ՝ *Ծիծեռնակներն* ***եկան, անցան,*** *Ականջիս տակ* ***ծվացին:*** (Գ. Ս.)

Թվի գաղափարը բայի դեմքի գաղափարից անբաժան է և արտահայտվում է բայի կամ օժանդակ բայի նույն դիմորոշ վերջավորություններով, ինչպես՝

Եզակի		Հոգնակի	
պատմեմ	պատմում եմ	պատմենք	պատմում ենք
պատմես	պատմում ես	պատմեք	պատմում եք
պատմի	պատմում է	պատմեն	պատմում են

64.* **Դո՛ւրս գրիր ստորոգյալները, որոշի՛ր դրանց դեմքն ու թիվը:**

«Հարգելի հայրենակի՞ց, բարեկա՞մ, թե՞ եղբայր: Չգիտեմ՝ **ինչպես** դիմեմ **Ձեզ...**

Ես երջանիկ եմ, որ Դուք գոյություն ունեք աշխարհում, որ կա մեր տոհմի ազգանունը կրող զորավար Հովհաննես: Եթե նույնիսկ **Դուք իմ** եղբայրը չեք, եթե միևնույն մայրը չի ծնել մեզ, Դուք, այնուամենայնիվ, իմ եղբայրն եք: Իմ եղբայրը ճակատագրիս համար չէր կարող ավելին անել, քան Դուք եք արել: Թող բնությունը Ձեզ երկար կյանք պարգևի, և թող ապրի մեր սիրելի Հայաստանը՝ **բոլոր** պանդուխտ հայերիս հույսի անմար փարոսը...

Թույլ տվեք ստորագրել **այսպես՝ Ձեր** քույր Անահիտ»:

« ...Թանկագին քույրս: Ձեր նամակը շատ հուզեց **մեզ**: Ես ծնվել եմ ոչ թե Թուրքահայաստանում, այլ Կովկասում և մինչև այսօր Անահիտ անունով քույր չունեի: Դուք կարող եք ինձ Ձեր եղբայրը համարել: Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել է մեզ մի ժողովուրդ և օժտել ընդհանուր զգացմունքներով: Այսօրվանից ես քույր ունեմ հեռավոր օվկիանոսից **այն** կողմ... և պարտք ունեմ **նրա** առաջ: Ձեր եղբայր Հովհաննես»: (Հ. Ք.)

Գրի՛ր նամակ քո սիրելի անձնավորությանը:

ԺԱՄԱՆԱԿ

Դիմավոր բայը գործողության հետ արտահայտում է նաև ժամանակ, այսինքն՝ ցույց է տալիս, թե երբ է կատարվում գործողությունը:

Բայն ունի **ներկա, անցյալ, ապառնի** ժամանակներ:

♦ **Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է խոսելու պահին:** Օրինակ՝ *Ա՜խ, իմ բախտը **կանչում է** ինձ՝*
***Չեմ հասկանում**՝ դեպի ուր:* (Հ. Թ.)

♦ **Անցյալ ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվել է խոսելու պահից առաջ:** Օրինակ՝ *Համբարձումն **եկավ**, ծաղկունքը ալվան*
***Զուգել են** հանդեր նախշում գորգերով:* (Հ. Թ.)

Բայը խոսքից առաջ ընկած անցյալ ժամանակամիջոցի համար մի քանի ժամանակաձևեր է ունենում:

Այսպես՝ **աշխատում էի, վախեցել եմ, փախա, մոռանայիք, հեռանալու էիր, կհարգեր** և այլն բայի անցյալ ժամանակի ժամանակաձևեր են:

♦ **Ապառնի ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվելու է խոսելու պահից հետո:** Օրինակ՝ *Ես **կվառվեմ**, հուր **կդառնամ**,*
*Ես **կհալվեմ**, ջուր **կդառնամ**:* (Հ. Թ.)

Ապառնի ժամանակի բայաձևեր են՝ **աշխատելու ենք, աշխատեն, կաշխատենք, պիտի աշխատես, աշխատեցե՛ք** և այլն:

65. 1. Դո՛ւրս գրիր ստորոգյալները և որոշի՛ր դրանց ժամանակը: 2. Արտագրի՛ր դերանունները՝ նշելով ձևաբանական հատկանիշները:

Իսկ ամենավատն այն ժամանակ էր, երբ ուսուցչուհին հարցրեց. թե ով էր գրատախտակին վատ բառ գրել: Բոլորը պայմանավորվել էին, որ ասեն, որ մյուս՝ Բ դասարանի երեխաներն են գրել, իսկ Անդրեսն այլ ելք չուներ, քան ոտքի կանգնել և իր սեփական դասընկերներին մեղադրել: Նույնիսկ ուսուցչուհին վատ զգաց իրեն, իսկ երեխաներն ամբողջ օրը այլևս չխոսեցին հետը: Անդրեսը ցանկացավ բացատրել նրանց, թե ինչ էր կատարվում, բայց ոչ ոք ճշմարտությանը չէր հավատա, իսկ նա ոչինչ չէր կարող հորինել:

Նա նաև հասկացավ, որ այս կեղծ աշխարհում շատ բաներ կային, որ իրեն դուր էին գալիս, և ինքը կարոտելու էր դրանց:

Առանց մի բառ ասելու ինքն իր հոգում հրաժեշտ տվեց լավագույն ընկերոջը, ով նույնքան նեղացած էր, որքան մյուսները: Ա.Մ.Շուա

66. **Կազմի՛ր նախադասություններ՝** *ոգեշնչել, որսալ, զարդարել,* **բայերը գործածելով ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով:**

ԵՂԱՆԱԿ

Բայերը արտահայտում են նաև գործողության հաստատ կամ ստույգ, ցանկալի, հրամայական, ենթադրական/ պայմանական կամ երբեմն նաև ստույգ/, անհրաժեշտ կամ հարկադրական լինելը:

Բայի այս առանձնահատկությունը կոչվում է **եղանակ:**

Բայն ունի հինգ եղանակ՝ **սահմանական, ըղձական, ենթադրական (պայմանական), հարկադրական** և **հրամայական**:

1. Սահմանական եղանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը ստույգ կատարվել է, կատարվում է կամ կատարվելու է:

Օրինակ՝ Ձմեռը **եկավ**: Սառն աղմուկով ձյունախառն բուքը **թռչում է** քաղաքի վրայով: (Հ. Թ.)

*Ես արդեն երբեք **չեմ մոռանալու***
Աչքերդ անզոր և անօգնական: (Վ. Տ.)

2. **Ըղձական եղանակը ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն:**

Օրինակ՝ *Երնեկ **ունենամ** հազար ու մի կյանք,*
*Հազարն էլ սրտանց քեզ **մատաղ անեմ:*** (Ավ. Իս.)

3. **Ենթադրական եղանակը ցույց է տալիս պայմանով, երբեմն՝ ենթադրաբար, հաճախ էլ՝ հաստատապես կատարելի գործողություն:**

Օրինակ՝ Նա երևի **կուզեր**, որ ես էլ մոդայիկ հագուստներ հագնեի:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
*Դուք հողմերի պես **կկորչեք** վայրագ:* (Հ. Շ.)

4. **Հարկադրական եղանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարումը անհրաժեշտ կամ հարկադրական է:**

Օրինակ՝ **Պիտի գոռամ, պիտ կրկնեմ** անդադար՝ ազատություն: (Մ. Ն.)

5. **Հրամայական եղանակը ցույց է տալիս գործողության կատարման հրաման, թելադրանք, խնդրանք, հորդոր:**

Օրինակ՝ *Դու **հասկացի՛ր** հենց այս գլխից, **մի՛ մոռացիր** երբեք, տղա՛ս,*
Ազնվությունն այն է միայն, որ չի փոխվում, ոնց էլ շուռ տաս: (Պ. Ս.)

67. Դո՛ւրս գրիր բայերը, որոշի՛ր դրանց եղանակը:

Գարնանային երկնի տակ երկու մանուկ են խաղում,
Երկու արդար էակներ երգում են ու ծիծաղում...: (Թ. Հ.)

Ծաղիկները քուն կմտնեն, երբ լինի աշուն,
Կանաչները լուռ կթոշնեն աշնան մշուշում...: (Գ. Ս.)

...Փրկեցե՛ք մտքերից այս անծայր,
Փրկեցե՛ք խոսքերից այս խելոք,
Դարձրե՛ք ինձ մանուկ և անհոգ: (Վ. Տ.)

Ես ծնվել եմ,
Պիտի շռայլորեն ապրեմ,
Ապրեմ երկրիս բախտով,
Ապրեմ ձեզնով : (Ռ. Դ.)

68. Տրված հատվածներից յուրաքանչյուրից ընտրի՛ր մեկական բառ քո ցանկությամբ և վերլուծի՛ր ձևաբանորեն:

69. Հետևյալ բայերը խմբավորի՛ր ըստ եղանակների և դրանցից մի քանիսով կազմի՛ր նախադասություններ:

Լուսավորում է, մի՛ վախեցրու, պիտի կառուցենք, կստանամ, բարձրանամ, կհանգչի, վերադարձել էին, պատասխանի՛ր, չի ամրացնի, չվառեմ, դիմավորեիք, գովեց, չկոտրվեր, պետք է ձգես, չէր հիվանդանա, ստացիր, պիտի աղոթենք:

ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Բայի այն փոփոխությունը, որով արտահայտվում են գործողության կատարման եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը, կոչվում է խոնարհում:

Բայը խոնարհել նշանակում է թվարկել այն բոլոր ձևերը, որոնցով արտահայտվում են գործողություն կատարողի դեմքը, թիվը և գործողության եղանակն ու ժամանակը:

Բայերն ունեն երկու խոնարհում՝ **ե** խոնարհում, **ա** խոնարհում, որոնք որոշվում են անորոշ դերբայի **-ել** և **-ալ** վերջավորություններով:

Խոնարհումը կատարվում է՝

- **Բայի վերջավորությունների փոփոխություններով**. օրինակ՝ խոսեմ, խոսեի, խոսեցի, կխոսեմ, խոսեցե՛ք և այլն: Սրանք կոչվում են **պարզ դիմավոր ձևեր:**
- **Դերբայներով և օժանդակ բայի փոփոխություններով**. օրինակ՝ խոսում եմ, խոսում էինք, խոսել է, խոսելու էր և այլն: Սրանք կոչվում են **բաղադրյալ դիմավոր ձևեր:**

Բերում է, տարել եք, գովելու եմ, չի սովորի բաղադրյալ դիմավոր ձևեր են:

Բաղադրյալ դիմավոր ձևերը կազմվում են օժանդակ բայով և անկատար, վաղակատար, ապակատար, ժխտական դերբայներով:

Օրինակ՝

խաղում
խաղացել — եմ
խաղալու

չեմ — խաղում, խաղացել, խաղալու, խաղա

Հարկադրականն ու արգելական հրամայականը (պիտի հրավիրեմ, մի՛ գնա) թեև երկու բառով են կազմված, բայց **պարզ դիմավոր ձևեր են:**

Անորոշ, ենթակայական, շատ բայերի նաև **հարակատար** դերբայները **եմ** բայի խոնարհված ձևերի հետ գործածվելիս, ինչպես գոյականն ու ածականը, դառնում են ստորոգյալ կազմող բառ և կարող են հոդ ստանալ, օրինակ՝ Ընկերս կենդանիներ **վարժեցնող է** (ո՞վ է, ի՞նչ անող է): Դա Գոհարի **երգելն է** (ի՞նչն է, ի՞նչ անելն է): Քո տետրը այս **թանաքոտվածն է** (ո՞րն է):

70. **1. Գտի՛ր դիմավոր բայաձևերը, որոշի՛ր դրանց խոնարհումը (ե, ա) և կազմությունը (պարզ, բաղադրյալ): 2. Դո՛ւրս գրիր անկախ դերբայները, որոշի՛ր դրանց տեսակն ու պաշտոնը:**

Արթնացավ սաստիկ մրսած ու հիվանդ: Արև չկար: Երկինքն ու երկիրը ավելի ևս գորշացել ու մթնել էին: Մի ցուրտ ու խոնավ քամի էր փչում, և ձյունամրրիկն սպիտակեցնում էր բլրագագաթները: Երբ նա նորից կրակ վառեց ու ջուր եռացրեց, շրջապատի օդն ավելի խտացավ ու սպիտակեց: Սակայն անվերջ թափվում էր ձյունը՝ ծածկելով գետինը, մարելով կրակը և փչացնելով իր չոր մամուռի ամբողջ պաշարը: Դա մի ազդանշան էր իրեն, որ շուտով կապի իր կապոցը և սայթաքելով առաջանա՝ չիմանալով, թե ուր: Նրան այլևս չէր հետաքրքրում «Փոքրիկ ձողերի երկիրը», ոչ էլ Բիլլը և ոչ էլ գաղտնարանը՝ Դիլ գետի ափին: Նրա մտքում իշխում էր այժմ մի բառ՝ «*ուտել*»: Նա քաղցից խելագարվել էր: (թրգմ.)

71. **Որոշի՛ր նախորդ վարժության դիմավոր բայաձևերի դեմքը, թիվը և ժամանակը:**

Օժանդակ բայի խոնարհումը և ուղղագրությունը

Բայի բաղադրյալ դիմավոր ձևերը (**երգում եմ, սովորել է),** ինչպես տեսանք, կազմվում են որևէ կախյալ դերբայով և ***եմ*** բայի խոնարհված ձևերով, որոնք դերբային վերագրում են դեմք, թիվ և ժամանակ, նաև այն ժամանակակետը, որի համեմատությամբ վերցվում է դերբայի արտահայտած գործողությունը. օրինակ՝ **գնում է** (խոսելու պահին), **գնում էր** (խոսելուց առաջ), **գնալու է** (խոսելուց հետո): Այս պատճառով էլ **եմ** բայը իր խոնարհված ձևերով կոչվում է **օժանդակ բայ**:

Օժանդակ բայը խոնարհվում է երկու ժամանակով՝ **ներկա** և **անցյալ**:

Ներկա		**Անցյալ**	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
եմ	**ենք**	**էի**	**էինք**
ես	**եք**	**էիր**	**էիք**
է	**են**	**էր**	**էին**

Երբ **եմ** բայը ստորոգյալ է դառնում առանձին կամ որևէ այլ խոսքի մասի (գոյական, ածական, թվական, դերանուն, որոշ անկախ դերբայներ) հետ, կոչվում է **էական բայ**:

Օրինակ՝ Գարուն **է**: Դուք մեր մեծն **եք**: Նա իմ մայրն **է**:

Խոսքի տրամաբանական շեշտի հետ կապված՝ օժանդակ բայը հաճախ ընկնում է դերբայից առաջ:

Օրինակ՝ *Արևդ հայերեն* ***է ծագում****,*
Ծառերդ հայերեն ***են ծաղկում****,*
Հայերեն ***են պայթում*** *բառերդ:* (Հ. Ս.)

- Ժխտական ձևերում չ մասնիկից հետո օժանդակ բայը մնում է անփոփոխ, բացի ներկայի եզակի 3-րդ դեմքից, որը լինում է **չի**: Օրինակ՝ Պապս քուրսու մոտից **չի** հեռանում:

72. Գտի՛ր օժանդակ բայերը, որոշի՛ր, թե դրանք ի՛նչ խոսքի մասի հետ են ստորոգյալ դարձել: Բացատրի՛ր գործածված օժանդակ բայերի ուղղագրությունը:

Փոքր **Արարատի** գլխին **ձյուն** էր նստել, Էջմիածնում կաթողիկոսն **Աստծու ողորմածությամբ** օրհնել էր խաղողը: Ով **այգի** ուներ, այն քաղել էր՝ կտցած, ցանցառ **ճթերը** թողնելով ճնճղուկներին: Ամբողջ շոգ **ամառ** վանդակներում փակված հավերը հիմա խլրտում էին **խաղողի** թփերում, ծլվլում, կչկչում էին՝ խրտվիլակների ոտքերին քսվելով, բայց նրանց **վախն** իզուր էր, որովհետև խրտվիլակները մեռել կամ քնել էին, ինչպես ուշ **աշնանը** մեռնում կամ քնում են ծառերը: Միայն Գարսևանի այգին էր մնացել անքաղ, միայն **Գարսևանի** այգու խրտվիլակն էր ողջ:

– Գարսևանը խաղող չի սիրում,– ծաղրում էին հարևանները,– Գարսևանը **չամիչ** է սիրում: (Ռ. Հ.)

73. Հոլովի՛ր ընդգծված բառերը և կազմի՛ր դրանց հոգնակին:

Ինչպե՞ս կբացատրես ***խրտվիլակ*** **և** ***քուրսի*** **բառերը: Կարո՞ղ ես որևէ խրտվիլակ նկարել:**

ԴՐԱԿԱՆ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայի խոնարհումը լինում է երկու բնույթի՝ **դրական** և **ժխտական**:

- Երբ բայի խոնարհված ձևերով **հաստատվում է** գործողությունը, խոնարհումը **դրական** է:

Օրինակ՝ **նկարում եմ, վերադարձել է, պիտի մեկնես, հեռացե՛ք:**

- Երբ բայի խոնարհման ձևերով **ժխտվում կամ մերժվում է** գործողությունը, խոնարհումը **ժխտական** է:

Օրինակ՝ **չեմ նկարում, չի վերադարձել, չպիտի մեկնես, մի՛ հեռանա:**

74. **Դո՛ւրս գրիր դիմավոր բայերը՝ դրական խոնարհումը դարձնելով ժխտական, ժխտականը՝ դրական:**

Հին աշխարհը չեմ տեսել
Ու ոչ մի բան չեմ հիշում,
Ու չեմ նրան երազել
Իմ հուշերի մշուշում:

Բայց երբ նայում եմ խաղաղ
Մորս դեմքի դալուկին,
Ինձ թվում է, թե մի պաղ
Վիշտ է եղել կյանքը հին... (Հ. Շ.)

75. **Արտագրի՛ր՝ ընդգծելով բայի դրական ձևերը մեկ, իսկ ժխտականները՝ երկու գծով: Փակագծում նշի՛ր դրանց ժամանակը և եղանակը:**

Եկան Բաբիկն ու Ներսիկը: Վասակը շանթահար խեթեց նրանց ու ասաց.

– Իսկույն նեթ գնացե՛ք պարսկերենի դասին: Եվ սրանից հետո չհամարձակվեք հայերեն խոսել: Կխոսեք պարսկերեն: Իմացա՞ք:

Տղաները լռեցին:

– Ձեզ հետ չե՞մ,– գոռաց Վասակը:

– Ես հայերենը չե՛մ թողնի,– ասաց Բաբիկը՝ տակից վեր նայելով համառ ու չար: Նա այդ րոպեին նման էր հորը:

– Ե՛կ այստեղ,– հրամայեց ցածր ձայնով Վասակը:

Բաբիկը մոտեցավ.

– Խփի՛ր... ես պարսիկներին չեմ ծառայի... Վասակը ապտակեց նրան:

– Սպանի՛ր թեկուզ... չեմ ծառայի... Վասակը մի ապտակ ևս հասցրեց.

– Դու դիմադա՞րձ ես կանգնում ինձ...

– Ձո՛ւր է, պարսիկներին չեմ ծառայի... (Դ. Դ.)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Օրը ***մթնեց****, ժամն է արդեն*
Իրիկնահացի,

Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է *լացի:* (Հ. Ս)

Սահմանական եղանակն ունի երեք ժամանակ՝ **ներկա, անցյալ, ապառնի,** և յոթ ժամանակաձև, որոնցից մեկի դիմավոր ձևերը (**շարեցի, շարեցիր** և այլն)

կազմված են **բայահիմքով** և **վերջավորությամբ**: Դա **պարզ ժամանակաձև** է: Մյուս ժամանակաձևերը **բաղադրյալ** են:

Երբեմն ժամանակաձևերն անվանվում են նաև ժամանակներ:

♦ **Բաղադրյալ ժամանակային ձևերը կազմվում են օժանդակ բայի ներկայի ու անցյալի խոնարհված ձևերով և անկատար, վաղակատար, ապակատար դերբայներով:**

վազում, վազել, վազելու — եմ, ես, է...

վազում, վազել, վազելու — էի, էիր, էր...

76. **1. Դո՛ւրս գրիր սահմանական եղանակի բայերը, որոշի՛ր դրանց կազմությունը, դեմքը, թիվը և ժամանակը: 2. Ցո՛ւյց տուր իբրև լրացում գործածված դերբայները:**

Դպրոցն ավարտեցինք: Ամեն մեկս գնաց մի կողմի վրա, շատ բան աղոտացավ... Այժմ ես էլ երբեմն փողոցում հանդիպում եմ ընկեր Բաղալյանին: Նա երևի ինձ հազիվ է հիշում: Արդեն ծերացել է, նրա ձեռքի տակով ինձ նման հազարավոր մարդիկ են անցել, դժվար է բոլորին հիշել, բայց այդ բոլորը, հավատացած եմ, հիշում են նրան, բարևելուց առաջ ձգվում են և ցանկանում, որ նա հիշի իրենց ու հավատա: (Խ. Գ.)

Կամարը, որ միացրել էր այդ երկու աշտարակները՝ գոյացնելով դռների նման մի բան, այժմ փլված է: Արձանագրություն չի մնացել կարմիր քարերի վրա, և զույգ աշտարակները կանգնած են այդտեղ՝ իբրև պատմական հանելուկ, որի բանալին, ինչպես երևում է, կորած պետք է համարել ընդմիշտ: (Ըստ Լեոյի)

77. **Նախորդ վարժությունից դո՛ւրս գրիր դերանունները, որոշի՛ր դրանց տեսակը:**

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

1 ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱ)

***Աղմկում է** իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ:* (Ե. Չ.)

✧ **Անկատար ներկան ցույց է տալիս ներկայում՝ խոսելու պահին հաստատապես կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն:**

Ներկան կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, որի համար նաև կոչվում է **անկատար ներկա:**

Բազմապատկական բայերը խոնարհվում են պարզ բայերի օրինակով: Կրավորական բայերը **-ե** խոնարհման բայեր են և խոնարհվում են **ե** խոնարհման պարզ բայերի օրինակով:

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգում եմ	երգում ենք	խաղում եմ	խաղում ենք
երգում ես	երգում եք	խաղում ես	խաղում եք
երգում է	երգում են	խաղում է	խաղում են

- Սահմանական եղանակի անկատար ներկայի ձևերի ժխտականը կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ: Օրինակ՝ **ջրում եմ – չեմ ջրում, բարձրացնում ես – չես բարձրացնում, բարձրանում է – չի բարձրանում** և այլն:

Գալ, լալ, տալ բայերի անկատար ներկան կազմվում է համակատար դերբայի ձևերից՝ **գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ:**

78. **Խոնարհի՛ր** *բարձրանալ, բարձրացնել, փախչել, փախցնել* **ածանցավոր բայերը սահմանական ներկայով:**

79. **Արտագրի՛ր և ընդգծի՛ր ներկա ժամանակի բայաձևերը:**

Լեռներից զով է իջնում քաղաքի վրա, և գիշերային զովը բերում է սուսամբարի բույրը, լեռնային օդը և ջրերի ձայնը:

Նայում եմ ուղևորության իմ տետրը, նրա մեջ՝ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր, ինչպես հանգած մոխիր, ինչպես սպիտակ ջրվեժ, որ իջնում է բարձրերից, թափով կտրում դաշտը, խառնվում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի հետ գնում դեպի անեզր ծովը... Մի վիթխարի ծիրանի փող առանց հին ահի և նոր ուրախությամբ հնչեցնում է մեր արդար երգերը: (Ակ. Բ.)

Լայնանում է պարաշրջանն ամեն րոպե,
Դիոլն անվերջ շարունակում է տրոփել,
Հանգույցներ է տալիս զուռնան,
Եղանակն է կոտորակվում,
Իսկ դիոլը սպառնալով
Այնուհանդերձ չի տրաքվում...
Իսկ զուռնայի ծակուտակից
Արցունքներ են կարծես շաղվում: (Պ. Ս.)

80. **Նախորդ վարժությունից դո՛ւրս գրիր ածական անունները, կազմի՛ր որակական ածականների բաղդատական աստիճանները:**

81. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով** *աճել, բազմանալ, կորչել, զբաղվել* **բայերը սահմանական ներկայով:**

Նկարագրի՛ր քո ծննդավայրի երեկոն՝ գործածելով սահմանական եղանակի ներկայի բայաձևեր:

ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

2 ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ

Ձեր բարդու սոսափն իմ ականջում էր,
Եվ թաքուն մի ցավ սիրտս ***տանջում էր****:* (Հ. Ս.)

✧ **Անկատար անցյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում սկսված և ընթացքի մեջ եղած գործողություն:**

Անկատար անցյալը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով, որի համար էլ կոչվում է **անկատար անցյալ**:

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգում էի	երգում էինք	խաղում էի	խաղում էինք
երգում էիր	երգում էիք	խաղում էիր	խաղում էիք
երգում էր	երգում էին	խաղում էր	խաղում էին

- Սահմանական եղանակի անկատար անցյալի ձևերի ժխտականը կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ: Օրինակ՝ ջրում **էի** – **չէի** ջրում, բարձրացնում **էի** – **չէի** բարձրացնում, բարձրացնում **է** – **չի** բարձրացնում և այլն:

82. **Խոնարհի՛ր** *հեռանալ, հեռացնել, փախչել, փախցնել* **ածանցավոր բայերը անցյալ անկատարով:**
83. **Արտագրի՛ր՝ անկատար անցյալի ձևերը դարձնելով ներկա:**

Աշուն էր՝ տերևաթափով, արևի նվազ **ջերմությամբ**, դառնաշունչ քամիով, **որ** ծառերի ճղներից պոկում էր **դեղնած** տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն **կաղնին** խոնարհվում էր քամու առաջ: **Ամայի** ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր **առաջին** ձյունի շունչը:

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին **իրար**, պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և սիմինդրի տերևը, որպես **բեկված սուսեր,** ընկնում էր քամու առաջ: Արևի տակ ժպտում էր **վերջին** արևածաղիկը և օրորում դեղին գլուխը: (Ակ. Բ.)

Ո՞ր բանջարեղենն է սիմինդրը:

84. **Վերլուծի՛ր ձևաբանորեն նախորդ վարժության ընդգծված բառերը:**
85. **Կազմի՛ր** *ճախրել, մաքառել, հևալ, խոստանալ* **բայերի ներկայի և անցյալ անկատարի բոլոր դիմավոր ձևերը:**

3 ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ ՎԱՂԱԿԱՏԱՐ (ՆԵՐԿԱ)

Արարատի ծեր կատարին
Դար ***է եկել*** *վայրկյանի պես Ու* ***անցել*** *:* (Ավ. Իս.)

✧ **Սահմանական անցյալը ցույց է տալիս խոսելու պահից առաջ՝ անցյալ ժամանակում, ավարտված գործողություն:**

Անցյալ ժամանակաձևը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, որի համար էլ կոչվում է **վաղակատար ներկա**:

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգել եմ	երգել ենք	խաղացել եմ	խաղացել ենք
երգել ես	երգել եք	խաղացել ես	խաղացել եք
երգել է	երգել են	խաղացել է	խաղացել են

- Սահմանական եղանակի վաղակատար ներկայի ձևերի ժխտականը կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ: Օրինակ՝ ջրել **եմ – չեմ** ջրել, բարձրացրել **եմ – չեմ** բարձրացրել, ջրել **է – չի** ջրել և այլն:

86. **Խոնարհի՛ր** *բարձրանալ, բարձրացնել, փախչել, փախցնել* **ածանցավոր բայերը վաղակատար ներկայով:**

87. 1. **Դո՛ւրս գրիր վաղակատար ներկայի ձևերը և կազմի՛ր դրանց անկատար ներկան: 2. Որոշի՛ր տեքստում գործածված բոլոր բայերի սեռը:**

Ձյունը **առատությամբ** նստել է տների կտուրներին, մարագների, գոմերի վրա, լցվել է **ավերված** շինությունները, դիզվել, ծածկել է նեղ, **անկանոն** փողոցներն ու հավասարվել ցանկապատերին: **Գյուղում** սև տեղ չի մնացել: Անգամ վանքի գմբեթի **թեքված** խաչին ձյուն է նստել: Հեռվից նայելիս թվում է, թե դա խաչ չէ, այլ մի արագիլ, որը փորձել է թռչել, բայց **հանկարծահաս** սառնամանիքից ոտքերը կպել են գմբեթի սառույցին, ու այդպես քարացել է թռիչքի մեջ՝ թևերը **տարածած** ներքևում **բացվող** անդունդի վրա: Գյուղի շրջապատն ու **լեռները** վաղուց են ճերմակել, ձորաբերանի մացառներն ու ժայռերը՝ նույնպես, իսկ Սևանը, սառույց կտրած, էլ **չի մռնչում** առաջվա նման: (Ըստ Բ. Հովսեփյանի)

88. **Վերլուծի՛ր ձևաբանորեն նախորդ վարժության ընդգծված բառերը:**

89. **Կազմի՛ր** *զգալ, քանդակել, մնալ, կորչել, հսկել* **բայերի սահմանական անցյալի (վաղակատար ներկա) ձևերը:**

Օգտվելով համացանցից՝ դասարանում ներկայացրե՛ք *սակուրայի* տոնը:

Ո՞ր երկրի ծառն է *սակուրան* և ի՞նչ գիտես այդ ծառի ու երկրի մասին:

Եթե քեզ տրված լիներ ընտրություն կատարել *նոնենի, փշատենի, ծիրանենի* և *թթենի* ծառատեսակներից որևէ մեկի տոնակատարությունը նշելու համար մեզ մոտ՝ Հայաստանում, որի՞ն կտայիր նախապատվությունը: Հիմնավորի՛ր՝ ինչու:

90. Բնութագրի՛ր թթենին և դրա հետ փոխկապակցված *բոժոժ* բառը:

4 ՎԱՂԱԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ

Անցել էր այն ժամանակը, կյանքը նորից իր նախկին հունի մեջ էր ընկել:

✧ Վաղակատար անցյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետից առաջ ավարտված գործողություն:

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգել էի	երգել էինք	խաղացել էի	խաղացել էինք
երգել էիր	երգել էիք	խաղացել էիր	խաղացել էիք
երգել էր	երգել էին	խաղացել էր	խաղացել էին

Վաղակատար անցյալը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով, որի համար էլ կոչվում է **վաղակատար անցյալ**:

- Սահմանական եղանակի վաղակատար անցյալի ձևերի **ժխտականը** կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ: Օրինակ՝ ջրել **էի** – **չէի** ջրել, բարձրացրել **էի** – **չէի** բարձրացրել և այլն:

91. Խոնարհի՛ր *բարձրանալ, բարձրացնել, փախչել, փախցնել* ածանցավոր բայերն վաղակատար անցյալով:

92. Դո՛ւրս գրիր անցյալ վաղակատարի ձևերով գործածված բայերը, որոշի՛ր դրանց դեմքը և թիվը:

Անկողնու վրա մեկնվել էր գունատ և նիհարած Թևոսը՝ խամրած աչքերով: Կինն արտասվալի կծկվել-նստել էր կողքին, երեխաները, մերկությունից և վշտից քար կտրած, մեզ էին նայում անկյուններից: Ու երբ խնամում էինք թշվառին, նա մեզ պատմեց իր մարտիրոսության ահավոր պատմությունը:

Խլել էին ձեռքից հողը: Թողել էին, որ մաքրեր, հերկեր, անպետք հողն իր քրտինքով փափկեցներ, համառ կամքով բերրիության հասցներ, և ապա հանկարծ մի օր վճիռ տվել, անտառի պահապաններին ուղարկել, ծեծել էին նրան, հողից դուրս շպրտել ու թողել, որ ջարդված, ընկճված նստեր արտի կողքին ու լար և լար կսկծալից, աղիողորմ ու հուսահատ...

...Հողի աշխատավորը կարծել էր, թե քրտինքն ու աշխատանքը նույնքան արժեք ունեն հողի տեր դառնալու համար, որքան բռնի ուժը: Սակայն նրան շատ ազդու հասկացրել էին, որ դեռ չեն եկել այդ օրերը, և որ հողի տերը նա է, ով ուժ ունի, կաշառվելու, քծնելու վարպետություն, ունի մանավանդ բռունցք, կոպիտ, վայրենի, գազանային բռունցք: (Վ. Փ.)

93. **Նախորդ վարժությունից գտի՛ր ներգործական սեռի այն բայերը, որոնք ունեն հայցական հոլովով լրացում: Արտագրի՛ր այդ բայերն իրենց լրացումների հետ:**

5 ԱՊԱԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ

Որովհետև **մեկնելու էր** երկու ժամից, ուստի հրաժեշտ տվի նրան հենց տանս և գնացի գործի: (Ն. Դ.)

✧ **Ապակատար անցյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետից հետո հաստատապես կատարելի գործողություն:**

Ապակատար անցյալը կազմվում է ապակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով, որի համար էլ կոչվում է **ապակատար անցյալ:**

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգելու էի	երգելու էինք	խաղալու էի	խաղալու էինք
երգելու էիր	երգելու էիք	խաղալու էիր	խաղալու էիք
երգելու էր	երգելու էին	խաղալու էր	խաղալու էին

- Սահմանական եղանակի ապակատար անցյալի ձևերի **ժխտականը** կազմելիս **չ** մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ: Օրինակ՝ ջրելու **էի – չէի** ջրելու, բարձրացնելու **էի – չէի** բարձրացնելու և այլն:

94. **Խոնարհի՛ր** *բարձրանալ, բարձրացնել, փախչել, գտնել* **ածանցավոր բայերը անցյալ ապակատարով:**

95. **Դո՛ւրս գրիր անկատար անցյալով կիրառված բայերը և կազմի՛ր դրանց ապակատար անցյալի ձևերը:**

Կարի արտադրամասում աշխատողները գլխավորապես **կանայք** էին. դրա համար էլ կանանց միջազգային օրն այստեղ նշվում էր առանձնապես **սիրով** և հանդիսավոր... Այդ օրը կանայք առավոտը աշխատանքի էին գալիս տոնական հագուստով և **իրենց** հետ տնից **համեղ** ուտելիքներ էին բերում: **Կեսօրվա** ընդմիջումին փոքրիկ սեղաններից մի երկար շարք էին կազմում: Տղամարդիկ կանանց շնորհավորելու համար ծաղիկներ ու քաղցրավենիք էին գնում:

Այդ ուրախ օրը **վայելելուն** սպասելով՝ առավոտվանից բոլորի տրամադրությունը բարձր էր... Նոյեմ Վարունցը ժպտում էր, պատասխանում էր շնորհավորանքներին և արդեն **ճերմակող** մազերով գլուխը մեքենայի վրա հակած՝ աշխատում էր սովորականի պես, որովհետև նա միշտ կարողանում էր **տիրապետել** իր մտքերին, զգացմունքներին, իր տրամադրություններին: Նա աշխատում էր ավելի կենտրոնացած, քան միշտ: Նրա մեքենայի մոտի փոքրիկ սեղանին **դրված** կոստյումի ձևած մասերի դեզը արագորեն փոքրանում էր: (Ն. Ա.)

96.* **Որոշի՛ր՝ ընդգծված բառերից որո՛նք են բառաձևեր, թվարկի՛ր ձևաբանական հատկանիշները:**

97. **Կազմի՛ր** *հիշեցնել, ձգել, բարկացնել, թռչել* **բայերի անկատար ու ապակատար դերբայներով ժամանակաձևերը և գործածի՛ր դրանք նախադասությունների մեջ:**

Անցկացրե՛ք բանավեճ՝ *Ի՞նչ կարելի է նվիրել մեկմեկու տարբեր տոների առթիվ, իսկ ի՞նչ՝ ոչ* **թեմայով:**

6 ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Լուսինը նորից **դուրս եկավ** սարերի հետևից և հովիտը **լցրեց** իր կաթնագույն լույսով, **արծաթազօծեց** Արածանիի ջրերը: (Ս. Զ.)

✧ **Անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում սկսված և ավարտված գործողություն:**

Անցյալ կատարյալը պարզ դիմավոր ձև է. կազմվում է բայահիմքից և դիմային վերջավորություններից:

Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է՝ անորոշ դերբայի հիմքին ավելացնելով **-եցի, -եցիր, -եց, -եցինք, -եցիք, -եցին** վերջավորությունները:

Ա խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է՝ անորոշ դերբայի հիմքին ավելացնելով **-ացի, -ացիր, -աց, -ացինք, -ացիք, -ացին** վերջավորությունները:

Անցյալ կատարյալի բուն վերջավորություններն այստեղ **-ի, -իր, -ինք, -իք, -ին** մասնիկներն են, իսկ **-եց-, -աց-** մասնիկները հիմքի ածանցներն են:

Ե խոնարհում **Երգել**		Ա խոնարհում **Խաղալ**	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգեց**ի**	երգեց**ինք**	խաղաց**ի**	խաղաց**ինք**
երգեց**իր**	երգեց**իք**	խաղաց**իր**	խաղաց**իք**
երգեց	երգեց**ին**	խաղաց	խաղաց**ին**

Ածանցավոր բայերի համար անցյալ կատարյալն ունենում է նաև **-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան** վերջավորությունները:

Սահմանական եղանակի անցյալ կատարյալի ժխտական ձևերը կազմելիս **չ** մասնիկը դրվում է բայաձևի սկզբից: Օրինակ՝ ջրեցի – **չջրեցի,** բարձրացրի – **չբարձրացրի** և այլն:

98. **Խոնարհի՛ր** *բարձրանալ, բարձրացնել, փախչել, փախցնել* **ածանցավոր բայերն անցյալ կատարյալով:**

99. **1. Դո՛ւրս գրիր անցյալ կատարյալի ձևերը՝ նշելով դրանց դեմքը, թիվը, սեռը: 2. Ի՞նչ կասես ընդգծված բայաձևերի մասին:**

«Ապերա՜խտ Բյուզանդիոն, քո վարմունքը աններելի կմնա իմ սրտում... Դու վատությամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծառայությունները... Քանի անգամ մենք հեռացրինք քո գլխից պարսկական սոսկալի սուրը... Քանի անգամ ազատեցինք քեզ ամոթալի անկումից... Իմ հայրենիքը մի անխորտակելի վահանի պես պատսպարեց քեզ արևելյան խուժադուժների արշավանքներից... իմ հայրենիքը կրեց բարբարոսների հարվածները և քեզ ողջ պահեց... Մենք թողեցինք հեթանոս պարսիկին և քո ձեռքը բռնեցինք: Իսկ դու միշտ դավաճանեցիր մեզ: Ես իմ ընդդիմության համար **դատապարտվեցա** և **աքսորվեցա...**

Երբ նա ոտք **կդնե** հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, ենենգավո՜ր Բյուզանդիոն»: (Ռաֆ.)

100. **Կազմի՛ր** *սառչել, հիացնել, հիանալ, ծրագրել* **բայերի անցյալ կատարյալի ձևերը և դրանք գործածի՛ր նախադասություններում:**

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

7 ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ/ԱՊԱԿԱՏԱՐ

Ես այլևս նրա խոսքերին **չեմ հավատալու, մեկնելու** եմ միայնակ:

✧ **Սահմանական ապառնին ցույց է տալիս խոսելու պահից հետո կատարելի գործողություն:**

Այն կազմվում է ապակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով:

Ե խոնարհում **Երգել**		Ա խոնարհում **Խաղալ**	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
երգելու եմ	երգելու ենք	խաղալու եմ	խաղալու ենք
երգելու ես	երգելու եք	խաղալու ես	խաղալու եք
երգելու է	երգելու են	խաղալու է	խաղալու են

- Սահմանական ապառնու ձևերի **ժխտականը** կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ: Օրինակ՝ ջրելու **եմ – չեմ** ջրելու, բարձրացնելու **ես – չես** բարձրացնելու, մոռանալու **է – չի** մոռանալու և այլն:

101. **Խոնարհի՛ր** *բարձրանալ, բարձրացնել, փախչել, փախցնել* **ածանցավոր բայերը սահմանական ապառնիով:**

102. **Դո՛ւրս գրիր ապառնի ժամանակի բայաձևերը և որոշի՛ր դրանց դեմքը, թիվը և սեռը:**

Բա որ **Լևոնին** ցույց չի տալու, էլ **ում** է հարկավոր: (Ն. Զ.)

Այսօր Սեդան ու **իր ընկերուհիները** վերջին քննությունն են հանձնելու: Վաղը հավաքվելու են մեկի այգում՝ քեֆ անելու, Մաճկալյանն էլ է լինելու **նրանց** հետ: (Ա. Ս.) Հեռվից ավերակներ չեն երևում, և **այնպես** է թվում, թե աշտարակի գլխից **մեկը** ահա ձայն է տալու քարափը բարձրացողին: (Ակ. Բ.)

Եվ դու, որ մտնելու ես արևային քո դաշտը,
Քաղելու ես վարդեր ու մանուշակներ,
***Փա՜ռք** քեզ, եթե լինես **քո** օրերի հետ դաշն*
*Եվ **օրերիդ** հանդեպ երկաթյա քղանցք չհագնես:* (Ե. Չ.)

103. **Դո՛ւրս գրիր ընդգծված բառերը՝ նշելով ձևաբանական հատկանիշները:**

104. **Կազմի՛ր նախադասություններ՝** *ներկայանալ, մրսել, տաքացնել, ընկերանալ* **բայերը գործածելով սահմանական եղանակի ապառնի ժամանակով:**

105. **Կազմի՛ր նախադասություններ՝** *թոցնել, ծանոթացնել* **բայերը գործածելով 1. անորոշ դերբայի սեռական հոլովաձևով, 2. սահմանական ապառնիով:**

106. **Խոնարհի՛ր քո ընտրած երկու բայ սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերով:**

Բաժանվե՛ք երեք խմբերի և գեղարվեստական գրականությունից բերված օրինակների հիման վրա միմյանց հարցրե՛ք համապատասխան բայաձևերի ձևաբանական հատկանիշները:

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Անձրևը** (հատվածաբար)

Սիրում եմ անձրևը, երբ նոսր վարագույրներով կախվում է սևագորշ ամպերից և տիեզերական ցնցուղի նման իր տարափի տակ առնում հանդ ու անդաստան:

Սիրում եմ շոնդալի անձրևը՝ ջրառատ, ծանր, որ աղմկալի հարվածում է տանիքներին ու ջրհորդաններով գահավիժում ցած:

Սիրում եմ անձրևը ամառվա երկարատև երաշտին, երբ թոշնած բույսերը ուշքի են գալիս և վերակենդանացող արարածների նման «օխա՜յ» են քրթմնջում հրճվանքով, երբ պապակած հողը կլանում է երկնային շիթերն այնպիսի ագահությամբ, որ ոչ մի առվակ չի գոյանում երկրի վրա:

Սիրում եմ և գարնանամուտի անձրևը, որին ուղեկցում են ամպերի առաջին որոտներն ու հրեղեն կայծակները:

Սիրում եմ անձրևը՝ իր բոլոր ձևերով, իր բոլոր արտահայտություններով. և՛ հախուռն ու ջրառատ, և՛ կարճատև տեղատարափը, որ դեռ չդադարած՝ շքեղ ծիածանն է շքեղ կամարներ կապում մեր ձորերի վրա:

Երբ սկսվում է անձրևը, և մարդիկ նրանից պաշտպանվելու համար ծածկերի տակ են վազում, ես դուրս եմ գալիս ու քայլում բաց երկնքի տակ: Թող թափվի բոլոր կյանքերին կյանք տվող երկնային հեղուկը:

Անձրևը հուշեր է արթնացնում իմ մեջ, քաղցր հուշեր…

Ասում են՝ ես անձրևի տակ եմ ծնվել… Ըստ Վախթանգ Անանյանի

2. Ծիածանը անձրևից հետո երկնքում հայտնվող բազմերանգ կամարի տեսքով տեսողական երևույթ է, որն ունի շրջագծի ձև:

Ամբողջությամբ ծիածանը կարելի է տեսնել վերևից: Ծիածանը չի երևում այնժամ, երբ Արեգակը գտնվում է հորիզոնից 42 աստիճան ավելի բարձրության վրա:

Աստվածաշնչում խոսվում է այն մասին, որ ծիածանը հայտնվել է համաշխարհային ջրհեղեղից հետո որպես մարդկությանը ներելու նշան:

Ծիածանի գույներն են՝ *կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն:*

Ա

107. **Համեմատի՛ր այս երկու տեքստերը և խոսի՛ր դրանց մասին, հատկապես տարբերությունների:**

Կարո՞ղ է՝ ավելի գեղեցիկ անձրև ու ծիածան տեսած լինես ու պատմես այդ մասին պատկերավոր:

Բ

108. **Արտագրի՛ր դիմավոր բայաձևերը, որոշի՛ր դրանց եղանակը, ժամանակը, դեմքն ու թիվը:**

109. **Արտագրի՛ր բայի անդեմ ձևերը՝ նշելով տեսակները:**

1. **Գրի՛ր շարադրություն** *«Տարվա իմ սիրած եղանակը»* թեմայով:
2. **Նկարի՛ր անձրև կամ ծիածան:**

Գ

110. **Խոնարհի՛ր քո ընտրած երկու բայ սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերով:**

Բաժանվե՛ք երեք խմբերի և մրցե՛ք մարզական ոլորտի բառերի՝ *գոյական, բայ,* **իմացությամբ::**

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Բաղադրյալ ժամանակաձևեր		
Ներկա (Անկ. ներկա)	**Անցյալ (Վաղ. ներկա)**	**Ապառնի (Սահմ. ապառնի)**
երգում եմ, ես, է, ենք, եք, են խաղում եմ, ես, է, ենք, եք, են	երգել եմ, ես, է, ենք, եք, են խաղացել եմ, ես, է, ենք, եք, են	երգելու եմ, ես, է, ենք, եք, են խաղալու եմ, ես, է, ենք, եք, են
Անկատար անցյալ	**Վաղակատար անցյալ**	**Անցյալ ապակատար**
երգում էի, էիր, էր էինք, էիք, էին խաղում էի, էիր, էր էինք, էիք, էին	երգել էի, էիր, էր էինք, էիք, էին խաղացել էի, էիր, էր էինք, էիք, էին	երգելու էի, էիր, էր էինք, էիք, էին խաղալու էի, էիր, էր էինք, էիք, էին
Պարզ ժամանակաձև. Անցյալ կատարյալ		
երգեց-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին խաղաց-ի, -իր, -աց, -ինք, -իք, -ին	բարձրաց-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան բարձրացր-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին	

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Քո հողին ***մեռնեմ****, անգի՛ն հայրենիք,*
Ա՜խ, քիչ է, թե որ մի կյանքով ***մեռնեմ,***
Երնե՞կ ***ունենամ*** *հազար ու մի կյանք,*
Հազարն էլ սրտանց քեզ ***մատաղ անեմ:*** (Ավ. Իս.)

- **Ըղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալ:**

1 ԸՂՁԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

✧ **Ըղձական ապառնին ցույց է տալիս կատարելի գործողության իղձ, ցանկություն:**

Նանի՛ջան, նանի՛, կուժը թող ***առնեմ,***
Աղբյուրը ***գնամ*** *աղջիկների հետ:* (Հ. Թ.)

- **Ե** խոնարհման բայերի ըղձական ապառնին կազմվում է՝ անորոշ դերբայի հիմքին **-եմ, -ես, -ի, -ենք, -եք, -են** վերջավորություններն ավելացնելով:
- **Ա** խոնարհման բայերի ըղձական ապառնին կազմվում է՝ անորոշ դերբայի հիմքին **-ամ, -աս, -ա, -անք, -աք, -ան** վերջավորություններն ավելացնելով:

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
սովոր**եմ**	սովոր**ենք**	խաղ**ամ**	խաղ**անք**
սովոր**ես**	սովոր**եք**	խաղ**աս**	խաղ**աք**
սովոր**ի**	սովոր**են**	խաղ**ա**	խաղ**ան**

Ըղձական ապառնու բուն վերջավորությունները **-մ, -ս, -նք, -ք, -ն** մասնիկներն են, իսկ սրանց նախորդող **ե** և **ա** ձայնավորները խոնարհիչներ են:

Եզակի երրորդ դեմքում **-ե-** խոնարհիչը հնչյունափոխվում է **-ի-**ի՝ **սովորի:**

Ըղձական ապառնու **ժխտական ձևերը** կազմելիս **չ-** մասնիկը դրվում է բայաձևի սկզբից: Օրինակ՝ **ջրեմ – չջրեմ, մոռանամ – չմոռանամ** և այլն:

Ըղձական ապառնու որոշ ձևեր ունեն նաև վերաբերականների արժեք, ինչպես՝ ***ասես, կարծես, տեսնես, տեսնենք, չլինի*** և այլն: Օրինակ՝ **Կարծես** ամեն ինչ իր տեղն է ընկնում: Վարդանն **ասես** մոռացել էր իր շրջապատը: **Չլինի (թե)** ինձ են կասկածում:

111. Որոշի՛ր ըղձական եղանակի ապառնի ժամանակի բայերը, դրանց դեմքը:

Անձրևն անցնի՝ գյուղից դուրս գամ,
Հանդերն ընկնեմ, թափառեմ,
Աղբյուրներով սքանչանամ,
Ծաղիկները փայփայեմ: (Հր. Հովհ.)

112. 1. *Աշխատել, նվիրել, գնալ, հավատալ* **բայերը խոնարհի՛ր ըղձական եղանակի ապառնի ժամանակով: 2. Գործածի՛ր այդ ձևերը նախադասությունների մեջ:**

2 ԸՂՁԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ

Թռչեի *մտքով տուն,*
Ուր իմ մայրն էր արթուն: (Գ. Ս.)

Երա**նի չմտնեիր** այս աշխարհը, որ լի է աղաներով: (Վ. Փ.)

✧ **Ըղձական անցյալը ցույց է տալիս անցյալում կատարելի իղձ, ցանկություն:**

- **Ե** խոնարհման բայերի ըղձական անցյալը կազմվում է՝ անորոշ դերբայի հիմքին ավելացնելով **-եի, -եիր, -եր, -եինք, -եիք, -եին** վերջավորությունները:
- **Ա** խոնարհման բայերի ըղձական անցյալը կազմվում է՝ անորոշի հիմքին ավելացնելով **-այի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային** վերջավորությունները:

Ըղձական եղանակի բուն վերջավորությունները **-ի, -իր, -ր, -ինք, -իք, -ին** մասնիկներն են, իսկ սրանց նախորդող **-ե-** և **-ա-** ձայնավորները խոնարհիչներ են:

- Ըղձական անցյալի **ժխտական ձևերը** կազմելիս **չ** մասնիկը դրվում է բայաձևի սկզբից: Օրինակ՝ **ջրեի – չջրեի, մոռանայի – չմոռանայի** և այլն:

Ըղձական եղանակի բայաձևերի ուղղագրությունը

- **Ե** խոնարհման բայերի ըղձական անցյալի վերջավորություններն արտասանությամբ նույնն են օժանդակ բայի անցյալի ձևերի հետ: Սակայն օժանդակ բայի ձևերը գրվում են **է**-ով (**էի, էիր** և այլն), իսկ ըղձական անցյալի վերջավորությունները՝ **-ե**-ով (սովորե**ի**, սովորե**իր** և այլն):
- **Ա** խոնարհման բայերի ըղձական անցյալի ձևերում դիմային վերջավորությունների և **ա** խոնարհիչի միջև լսվող **–յ-** ձայնակապը գրվում է, օրինակ՝ **զգայի, զգայիր, զգայինք** և այլն:
- **Ե** խոնարհիչի և դեմքի վերջավորությունների միջև լսվող **–յ-** ձայնակապը չի գրվում, օրինակ՝ **քայլեի, քայլեիր, քայլեիք** և այլն:

Ե խոնարհում		Ա խոնարհում	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
սովորե**ի**	սովորե**ինք**	խաղ**այի**	խաղ**այինք**
սովորե**իր**	սովորե**իք**	խաղ**այիր**	խաղ**այիք**
սովորե**ր**	սովորե**ին**	խաղ**ար**	խաղ**ային**

113. **Դո՛ւրս գրիր ըղձական եղանակի անցյալ ժամանակի ձևերը, որոշի՛ր դրանց դեմքն ու թիվը:**

Լինեի չորան սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրանիս մոտով,
Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու:

Գնայիր աղբյուրն ու ետ դառնայիր,
Թեթև, որպես վիթ, ելնեիր ձորից,
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից
Ու վրանիս մոտ հանգստանայիր:

(Վ. Տ.)

114. **Ըղձական եղանակի ապառնի և անցյալ ժամանակներով խոնարհի՛ր** *ներկել, շարել, ցնծալ, ննջել* **բայերը:**

ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եվ դու ոտքի ***կելնես*** *և* ***կողջունես*** *այս երգս՝ քո վիշտը փարատող:* (Ե. Չ.)

- Ենթադրական եղանակն ունի երկու ժամանակ՝ **ապառնի** և **անցյալ**:

1 ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

Մարզիկները **կօգտագործեն** իրենց բոլոր հնարավորությունները: Նա **կմեծարի** արժանավորին, եթե դրա կարիքը լինի:

✧ **Ենթադրական ապառնին ցույց է տալիս խոսելու պահից հետո պայմանով, երբեմն ենթադրաբար, իսկ հաճախ էլ՝ հաստատապես կատարելի գործողություն:**

Ենթադրական ապառնին կազմվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակի ձևերից՝ **կ-** եղանակիչով:

Ըղձական ապառնի			
սովորեմ	սովորենք	խաղամ	խաղանք
Ենթադրական ապառնի			
կսովորեմ	կսովորենք	կխաղամ	կխաղանք
կսովորես	կսովորեք	կխաղաս	կխաղաք
կսովորի	կսովորեն	կխաղա	կխաղան

Կ մասնիկը կոչվում է ենթադրական եղանակիչ և գրվում է բային միացած:

Եթե բայը սկսվում է բաղաձայնով, **կ-**ից հետո արտասանվում է **ը** ձայնավորը, որ չի գրվում. օրինակ՝ **կվազեմ** (արտասանվում է կըվազեմ):

Ենթադրական ապառնու **ժխտական ձևերը** կազմվում են ժխտական դերբայով և օժանդակ բայի ներկայի ժխտական ձևերով, օրինակ՝ **կջրեմ – չեմ ջրի, կջրի – չի ջրի, կմնանք – չենք մնա, կմնաք – չեք մնա** և այլն:

115. 1. Գտի՛ր ենթադրական եղանակի ապառնու ձևերը, որոշի՛ր դրանց դեմքն ու թիվը: 2. Կազմի՛ր նույն բայերի ժխտականը:

Կաճի երկիրը քեզ հետ, կմեծանաս դու,
Ժամանակը կարծաթի մազերդ մի օր.
Եվ խնդությունը կյանքի քո պայծառ հոգում
Ոսկի մի երգ կդառնա, ոսկի մի օրոր:
Օրորոցում կնիրհի մի լուսե մանուկ,
Կկախվի քո հայացքը նրա սնարին,
Կշշնջան շուրթերդ մի պայծառ անուն,
Ու մեղմ մի երգ կհնչի մի նոր քնարից: (Գ. Ս.)

116. Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով *պատմել, ոգևորել, զրնգալ, շողշողալ* բայերի ենթադրական ապառնու ձևերը:

2 ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ

Կմոլորվեր *մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,*
Կկորչեինք*, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն:* (Ն. Զ.)

✧ Ենթադրական անցյալը ցույց է տալիս պայմանով, երբեմն էլ ենթադրաբար, հաճախ էլ հաստատապես կատարելի գործողություն մի անցյալ ժամանակում:

Ըղձական անցյալ			
սովորեի	սովորեինք	խաղայի	խաղայինք
Ենթադրական անցյալ			
կսովորեի	կսովորեինք	կխաղայի	կխաղայինք
կսովորեիր	կսովորեիք	կխաղայիր	կխաղայիք
կսովորեր	կսովորեին	կխաղար	կխաղային

- Ենթադրական անցյալը կազմվում է ըղձական եղանակի անցյալ ժամանակի ձևերից՝ **կ** եղանակիչով:
- Ենթադրական անցյալի **ժխտական ձևերը** կազմվում են ժխտական դերբայով և օժանդակ բայի անցյալի ժխտական ձևերով:

Օրինակ՝ **կջրեի – չէի ջրի, կջրեիր – չէիր ջրի, կջրեր – չէր ջրի, կմնայինք – չէինք մնա, կմնայիք – չէիք մնա, կմնային – չէին մնա** և այլն:

117. Դո՛ւրս գրիր ենթադրական եղանակի անցյալ ժամանակի բայերը, որոշի՛ր դրանց դեմքն ու թիվը:

Եթե մագնիսական սլաքը մոտեցնեինք մեկ ուրիշ այդպիսի սլաքի, ապա

դրանք կշրջվեին և կկանգնեին մեկը մյուսի դիմաց հակառակ բևեռներով (ֆիզ. դաս.): Փողոցում Չաուշենկոյի գլուխը պտտվեց այնպես, որ, անշուշտ, կընկներ, եթե չհենվեր պատին: Անվիճելի է, որ նա շուտով կհրաժարվեր կյանքի բոլոր բարիքներից, քան թատրոնից (Շիրվ.): Ուզում էի տեսնել Ձեզ, տեսնել հեռվից Ձեզ այն պահին, երբ Դուք կարդում եք այս տողերը... Այն ժամանակ ես Ձեր դեմքի վրա կտեսնեի ամեն բան և կհասկանայի ամեն ինչ (Հր. Ք.): Ո՞վ կիմանար եղածը... Ես էլ լողալով կազատվեի կամ ոչ: (Վ. Փ.)

118. **Ենթադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակներով խոնարհի՛ր** *մոռանալ, խնամել, թաքցնել* **բայերը և այդ ձևերով կազմի՛ր նախադասություններ:**

Գրի՛ր շարադրություն՝ *«Երբևէ փորձե՞լ ես անցնել ծիածանի տակով»* **վերնագրով:**

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Աշուղ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ **պիտի ասեմ**:

Երգեմ պիտի գիշեր-ցերեկ ու սրտի խաղ **պիտի ասեմ:** (Ե. Չ.)

- Հարկադրական եղանակն ունի երկու ժամանակ՝ **ապառնի** և **անցյալ**:

1 ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

Պար մտնողը **պիտի շորորա:** (ժող.)

Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ **պիտի գիտենա**: (Ղ. Ա.)

✧ **Հարկադրական ապառնին ցույց է տալիս խոսելուց հետո հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն:**

- Հարկադրական ապառնին կազմվում է՝ ըղձական ապառնի ժամանակաձևին **պիտի** կամ **պետք է** եղանակիչն ավելացնելով:

Ըղձական ապառնի			
սովորեմ	սովորենք	խաղամ	խաղանք
Հարկադրական ապառնի			
`պիտի (պետք է) սովորեմ	պիտի (պետք է) սովորենք	պիտի (պետք է) խաղամ	պիտի (պետք է) խաղանք
պիտի (պետք է) սովորես	պիտի (պետք է) սովորեք	պիտի (պետք է) խաղաս	պիտի (պետք է) խաղաք
պիտի (պետք է) սովորի	պիտի (պետք է) սովորեն	պիտի (պետք է) խաղա	պիտի (պետք է) խաղան

Պետք է կապակցությունը գործածվում է նաև անորոշ դերբայի, գոյականի կամ գոյականաբար կիրառված այլ խոսքի մասի հետ և առանձին դառնում է ստորոգյալ: Օրինակ՝ Ինձ տետր **է պետք:** Մեզ **պետք է** ուժեղը: **Պետք է** ճանաչել հայրենի բնությունը:

- Հարկադրական ապառնու **ժխտական ձևերը** կազմելիս չ մասնիկը դրվում է եղանակիչի սկզբից:

Օրինակ՝ **պիտի (պետք է) ջրեմ – չպիտի (չպետք է) ջրեմ, պիտի հեռանամ – չպիտի հեռանամ** և այլն:

119. **Դո՛ւրս գրիր հարկադրական եղանակի ապառնի ժամանակի ձևերը, որոշի՛ր դրանց դեմքը և թիվը:**

...Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՜ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին՝ Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...
...Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին,
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին: (Հ. Թ.)

120. **Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով** *հասկացնել, կանգնեցնել, ծրագրել, բացատրել* **բայերի հարկադրական ապառնի ժամանակի ձևեր:**

2 ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ

Մի թույլ շփում բոցի, և նավթամբարը **պիտի պայթեր՝** օդ ցնդեցնելով քառասուն մարդկային դիակներ: (Շիրվ.)

✧ **Հարկադրական անցյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակում հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն:**

Ըղձական անցյալ			
սովորեի	սովորեինք	խաղայի	խաղայինք
Հարկադրական անցյալ			
պիտի (պետք է) սովորեի	պիտի (պետք է) սովորեինք	պիտի (պետք է) խաղայի	պիտի (պետք է) խաղայինք
պիտի (պետք է) սովորեիր	պիտի (պետք է) սովորեիք	պիտի (պետք է) խաղայիր	պիտի (պետք է) խաղայիք
պիտի (պետք է) սովորեր	պիտի (պետք է) սովորեին	պիտի (պետք է) խաղար	պիտի (պետք է) խաղային

- Հարկադրական անցյալը կազմվում է՝ ըղձական անցյալի ձևերին **պիտի** կամ **պետք է** եղանակիչն ավելացնելով:
- Հարկադրական անցյալի ժխտական ձևերը կազմելիս չ մասնիկը դրվում է եղանակիչի սկզբից: Օրինակ՝ **պիտի (պետք է) ջրեի – չպիտի (չպետք է) ջրեի, պիտի (պետք է) հեռանայի – չպիտի (չպետք է) հեռանայի** և այլն:

121. Գտի՛ր ըղձական եղանակի անցյալ ժամանակի բայերը, դրանցից կազմի՛ր հարկադրական անցյալի ձևեր:

Ա՜խ, ես երանի

Ա՜խ, ես երանի
Կայծակ լինեի,
Որոտ-ճայթյունով
Մռայլ ամպերից
Ժայթքեի ըմբոստ,
Զարկեի ուժգին,
Պատռեի խավար
Կամարը երկնի,
Ցույց տայի մարդուն
Գաղտնիքը վերին,
Որ տեսնեի՝ այնտեղ
Ի՞նչ բան կա ահեղ,
Կամ ո՞վ է նստած,
Եվ ո՞ւր է աստված: (Հ. Թ.)

122. Հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակներով խոնարհի՛ր *հարգել, պատվել, անզգայացնել* **բայերը: Դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

123. Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակներով խոնարհի՛ր *սիրել* **բայերը:**

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Գնա՛, կյանքի մեջ թշվառ և արվեստի մեջ երջանի՛կ Նա՛լ, **գնա՛, կրի՛ր** ակնառու թագերի թագը, և թող աշխարհի ստրուկներն ու արքաները գլուխ խոնարհեն քո արվեստի առջև: (Դ. Դ.)

✧ **Հրամայական եղանակը ցույց է տալիս գործողության կատարման հրաման, թելադրանք, խնդրանք, հորդոր:**

Հրամայական եղանակն ունի միայն **ապառնի ժամանակ** և **երկրորդ դեմք**: Օրինակ՝ **կանգնի՛ր, կանգնեցե՛ք**:

Ե խոնարհման պարզ, կրավորական, բազմապատկական բայերի հրամայական եղանակի եզակին կազմվում է՝ բայահիմքին ավելացնելով **-իր** վերջավորությունը: Օրինակ՝ **խոս-ի՛ր, կանգն-ի՛ր, ցատկոտ-ի՛ր**:

Ա խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակը կազմվում է՝ բայարմատին ավելացնելով **-ա** վերջավորությունը: Օրինակ՝ **խաղ-ա՛, հոգ-ա՛**:

Ա խոնարհման- **ան-, -են-** ածանցների **ն**-ն փոխվում է **-ց**-ի, որին էլ ավելա-

նում է **-իր** վերջավորությունը, իսկ **ն, չ** ածանցներն ընկնում են: Օրինակ՝ հեռանալ – **հեռաց-ի՛ր,** մոտենալ – **մոտեց-ի՛ր,** փախչել – **փախ-ի՛ր,** գտնել – **գտ-ի՛ր:**

-Ացն, -եցն, -ցն ածանցավոր բայերի եզակի հրամայականում **-ն**-ն փոխվում է **ր**-ի, և այդ բայերը ստանում են **ու** վերջավորություն: Օրինակ՝ մեծացնել – **մեծացր-ո՛ւ,** մոտեցնել – **մոտեցր-ո՛ւ,** թոցնել – **թոցր-ո՛ւ**:

Հրամայական եղանակի հոգնակին կազմվում է՝ **ե** խոնարհման բայերի դեպքում բայարմատին **-եցեք**, իսկ **ա** խոնարհման բայերի դեպքում՝ **-ացեք** վերջավորությունն ավելացնելով, Օրինակ՝ **նստել – նստեցե՛ք, խաղալ – խաղացե՛ք**

Հրամայական եղանակի հոգնակիի բուն վերջավորությունը **-եք** է, իսկ **-եց**, **-աց** մասնիկները կատարյալի հիմքի ածանցներն են:

Օրինակ՝ Անորոշ դերբայ՝ խոսել, խաղալ
Անցյալ կատարյալի հիմք՝ **խոսեց, խաղաց**
Հրամայական հոգնակի՝ **խոսեցե՛ք, խաղացե՛ք**

Ե խոնարհման պարզ բայերի համար հոգնակի հրամայականը կազմվում է նաև բայարմատով և **-եք** վերջավորությամբ՝ **կանգն-ե՛ք, գր-ե՛ք, լռ-ե՛ք**:

- Հրամայական եղանակի բայերն արտասանվում են հրամայական շեշտով, և գրության մեջ վերջին վանկի վրա դրվում է շեշտ: Օրինակ՝ **երգի՛ր, գնացե՛ք:**

Հարադրական բայերի դեպքում շեշտվում է առաջին բաղադրիչը, օրինակ՝ **պա՛ր եկ, շո՛ւռ տուր, դո՛ւրս արի** և այլն:

- Հրամայական եղանակի ժխտականը կազմվում է **մի՛** ժխտական մասնիկով, որը կոչվում է նաև **արգելական մասնիկ**: Ժխտական հրամայականը անվանվում է **արգելական հրամայական**:

Արգելական հրամայականի եզակի և հոգնակի թվերը բոլոր բայերի դեպքում կազմվում են հրամայականի դրական ձևերից՝ **մի՛** մասնիկով:

Բացառություն են ***ե*** խոնարհման պարզ բայերի հոգնակի ձևերը, որոնց արգելականը կազմվում է ներկայի հիմքից, ինչպես՝ **սիրեցե՛ք, սիրե՛ք,** բայց արգելական հրամայականը՝ միայն **մի՛ սիրեք**:

ՊԱՐԶ ԲԱՅԵՐ		ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ	
Եզակի	**Հոգնակի**	**Եզակի**	**Հոգնակի**
երգի՛ր	երգ(եց)ե՛ք	թռի՛ր	թռե՛ք
մի՛ երգիր	մի՛ երգեք	մի՛ թռիր	մի՛ թռեք
խաղա՛	խաղացե՛ք	գտի՛ր	գտե՛ք
մի՛ խաղա	մի՛ խաղացեք	մի՛ գտիր	մի՛ գտեք

ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ			
Եզակի	**Հոգնակի**	**Եզակի**	**Հոգնակի**
բարձրացի՛ր	բարձրացե՛ք	թոցրո՛ւ	թոցրե՛ք
մի՛ բարձրացիր	մի՛ բարձրացե՛ք	մի՛ թոցրու	մի՛ թոցրեք
բարձրացրո՛ւ	բարձրացրե՛ք	մտի՛ր	մտե՛ք
մի՛ բարձրացրու	մի՛ բարձրացրեք	մի՛ մտիր	մի՛ մտեք

Արգելական հրամայականի **մի՛ մեծանա – մի՛ մեծանար, մի՛ մեծանաք, մի՛ մոտենա – մի՛ մոտենար, մի՛ մոտենաք, մի՛ հասնիր – մի՛ հասնեք, մի՛ թռչի՛ր – մի՛ թռչեք, մի՛ բարձրացնի** ձևերն արդեն հնացած են, ունեն խիստ սահմանափակ գործածություն, ուստի դրանցից պետք է խուսափել:

Մի՛ արգելական մասնիկը միշտ շեշտվում է:

124. **1. Դո՛ւրս գրիր հրամայական եղանակի բայերը, որոշի՛ր դրանց դեմքը, թիվը և կազմությունը: 2. Վերլուծի՛ր ընդգծված բառերը ձևաբանորեն:**

*Հեռացի՛ր, **աշո՛ւն**, համբորեն լացող,*
Ողջո՛ւյն քեզ, մրրի՛կ ահեղաշաչյուն,
Ողջո՛ւյն քեզ, կռվի առաջին հնչյո՛ւն՝
*Լույսի պես կարող, խոսքի պես **խոցող**...*

Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ,
*Բորբոքի՛ր **սիրտս**, ազատությա՛ն երգ,*
Շողա՛ մռայլում, ըղձալի՛ եզերք,
*Որոտա՛, շաչի՛ր, **փոթորկավետ** ա՛մպ...*

(Վ. Տ.)

125. **Կազմի՛ր** *արտագրել, հետևել, խոնավանալ,* **բայերի եզակի և հոգնակի հրամայականը և գործածի՛ր նախադասություններում:**

Ականավոր լեզվաբան Էդ. Աղայանի գիտական ուսումնասիրման բնագավառներից են՝ ընդհանուր լեզվաբանություն, բառագիտություն, բարբառագիտություն և այլն:

126. **Տարբեր աղբյուրներից հավաքի՛ր նյութեր Էդուարդ Աղայանի մասին:**

ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Նա նստեց աթոռի վրա, գրկեց մանդոլինան: Առավոտյան արեգակի **շողերը սփռվել էին ներս**: Լևոնի աչքերն անգիտակցաբար դարձան դեպի շողերը կարծես ինչ-որ գաղտնի մագնիսի զորությամբ:

Ինչ էր Լևոնի նվագածը՝ բացատրել չեմ կարող: Հիշում եմ միայն ինձ վրա

գործած տպավորությունը: **Կիսամերկ բևեռվել էի սենյակիս մեջտեղում** և լսում էի: Վիշտ և բերկրություն, փոթորիկ ու մեղմ թախիծ խառնվել էին «Մադրիդի շրջմոլիկի» մեջ. գոնե այսպես էր թվում ինձ: Գուցե դա կրակոտ, ասպետական ժողովրդի սրտի հրաբուխն էր՝ փոքր-ինչ կանոնավորված ինձ անհայտ մի հանճարի ստեղծագործ ուժով, բայց հետաքրքրականն ինձ համար նվագողն էր: Կարծես նյութեղեն պատանին չքացել էր, մնացել էր միայն նրա ստվերը: Նա չէր նկատում իմ ներկայությունը, քաղցր հնչյունների հեղեղով կլանված նյարդերը չէին զգում աշխարհի նյութականը: Կարծես հոգին ամբողջովին ձուլվել էր նվագած եղանակի հետ ու սլացել մի այլ աշխարհ, ընտիր հոգիների կախարդական աշխարհը: (Շիրվ.)

2. Նվագողը մի պատանի էր՝ իտալական լայնեզր գլխարկով: Այնքան դյութիչ էր նվագած եղանակը, որ Ջուլիետան կարծում էր, թե իր սրտի լարերի վրա են նվագում: Նա մեքենայաբար **կիսով չափ դուրս հանվեց պատուհանից** և լսում էր ամենայն ուշադրությամբ: Իր ամբողջ էությամբ լսողություն դարձած՝ ագահորեն կլանում էր մարմինը փշաքաղող այն դյութիչ ձայները, որ պատանի երաժիշտը հնչեցնում էր ջութակի լարերից, ինչպես աղբյուրի ակունքը դուրս էր հոսեցնում իր ականակիտ ջուրը: Շունչը պահել էր, որ **ոչ մի հնչյուն չթոցնի**: Սքանչացման արցունքը գոհարի պես խաղում էր նրա աչքերի մեջ: (Ն. Դ.)

3. Ջինակոչիկ թոռան կամքն էր, որ գերդաստանում, ընդունված կարգով, առաջին պարը սկսեն տասը զավակներով: Հետո պարի մեջ պիտի մտնեն պարի ընդունակ բոլոր թոռները: Ամեն անգամ թոռներից մեկ-երկուսը՝ պարի համար հասունացած, անսպասելի խառնվում են պարողներին: Վերջում պարի մեջ կքաշեն մորը, որպեսզի շատ չհոգնի: Եվ ամեն անգամ նա կպարի շիկնած ու շփոթված. կարծես հարսի պար պարելիս լինի:

Պարում էին: Մայրը նայում էր՝ թիկունքը պատին, և աչքերի շուրջ ու բերանի անկյուններում խնդության ծալքեր կային, զսպված խնդության ծալքեր...

Պարի մեջ մտան արդեն հարսները, պարողների թիվը անցավ երեսունից... Վաղը էլի շաղ են գալու Հայաստանով մեկ: Աստվա՛ծ, մոր էս մի գիշերը շատ չհամարես: (Վ. Ս.)

Ա

127. Ո՞ր տեքստը քեզ ավելի դուր եկավ և ինչո՞ւ:

128. Ի՞նչ ընդհանրություններ ես նկատում տեքստերում. արտահայտվի՛ր բանավոր:

129. Ուշադրությո՛ւն դարձրու ընդգծված կապակցություններում *սփռվել էին, բևեռվել էի, դուրս հանվեց, չթոցնի* **բայաձևերին. արդյոք այդ կապակցություններն այսօր գործածական են և ճիշտ:**

Բ

130. Ի՞նչ երգեր կամ երաժշտություն ես սիրում լսել կամ կատարել. խոսի՛ր այդ մասին:
131. Ի՞նչ երաժշտական գործիք ես նվագում, սիրո՞ւմ ես այդ նվագարանը, եթե այո՛, ինչո՞ւ, եթե ո՛չ, ինչո՞ւ:
132. Ի՞նչ պարեր ես սիրում պարել դու, ինչպիսի՞ք՝ քո ընտանիքի անդամները. պատմի՛ր այդ մասին:

Գ

133. Գտի՛ր դիմավոր ձևերը, որոշի՛ր դրանց եղանակը, ժամանակը, դեմքը, թիվը, սեռը:
134. Գտի՛ր բայերի անդեմ ձևերը, որոշի՛ր դերբայի տեսակը, կիրառությունը:
135. Տրված առաջին երկու տեքստերը փորձի՛ր համառոտել. ո՞ր խոսքի մասերն են հեշտությամբ դուրս գալիս և ինչո՞ւ:

ԱՄՓՈՓԻՉ

- Որո՞նք են բայի բնորոշ հատկանիշները:
- Որո՞նք են բայի դիմավոր և անդեմ ձևերի ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները: Որո՞նք են կոչվում անկախ, որո՞նք՝ կախյալ դերբայներ (ձևաբայեր):
- Ի՞նչ է բայի սեռը, բնութագրի՛ր, տարբերակի՛ր տեսակները, բե՛ր օրինակներ:
- Բայի խոնարհմամբ քերականական ի՞նչ կարգեր են դրսևորվում:
- Բնութագրի՛ր բայի եղանակները. բե՛ր համապատասխան օրինակներ:
- Բնութագրի՛ր հրամայական եղանակը և բե՛ր համապատասխան օրինակներ:

Բայի ո՞ր քերականական կարգը հեշտ սովորեցիր:

Բառերի շտեմարան

Մեղեդի-ն հունարեն *մելոդիա* բառն է, որ նշանակում է *երգեցողություն:* Մեղեդու միջոցով արտահայտվում է ազգային երաժշտության լեզուն: Պ. Չայկովսկին ասել է. «Մեղեդին երաժշտության հոգին է»:

Ռիթմ-ը հունարեն բառ է, որ նշանակում է *համաչափություն:* Ռիթմը բնորոշ է ոչ միայն երաժշտությանը, այլև բնության երևույթներին՝ տարվա եղանակների, տարիների, ամիսների, շաբաթների և օրերի հաջորդականությանը, մարդու սրտի աշխատանքին, ծովերի և օվկիանոսների տեղատվությանն ու մակընթացությանը:

Ջազ-ը առաջացել է ամերիկացի սևամորթ երաժիշտ Չարլզի անունից և աղավաղվելով դարձել ***ջազ,*** հետագայում էլ այդ հասարակ անունից կազմվել են ***ջազային, ջազամոլ, ջազբանդ, ջազմեն*** և այլ բարդություններ: Թե՛ երաժշտության տեսակի, թե՛ նվագախմբի անուն է:

Ջութակ-ը կնտնտոցավոր քառալար երաժշտական գործիք է, որն անվանվում է նվագախմբի թագուհի, և որի հնչողությունը նման է մարդու երգչային ձայնին: Լարային նվագարաններ են նաև **ալտը, թավջութակը, կոնտրաբասը**:



Դափ, դհոլ: Դափը շրջանակաձև երաժշտական հարվածային գործիք է, որի մի երեսին քաշված էբարակ, մեծ մասամբ ձկան կաշի, իսկ ***դհոլը՝*** գլանաձև, որին երկու կողմից բարակ կաշի է քաշված: Հարվածային այլ գործիքներ էլ կան. դրանց անվանում են **ծնծղա, գոնգ, թմբուկ, եռանկյունի**:

Դուդուկ, ծիրանափող: Դուդուկը փոքրիկ սրինգ է, որ պատրաստում են ծիրանի փայտից. այդ պատճառով էլ անվանում են ***ծիրանափող:***

Կլառ(ր)նետ-ը մեծ ձայնածավալով երգային նվագարան է: Բացի կլառնետից, փայտյա փողային նվագարաններ են նաև **ֆլեյտան, հոբոյը, ֆագոտը,** իսկ պղնձյա փողային նվագարաններ են՝ **գալարափողը, շեփորը, տրոմբոնը, տուբան:**

Սրինգ-ը եղեգից կամ փայտե փողից պատրաստված երաժշտական գործիք է, **զուռնան՝** արևելյան սրնգի մի տեսակ: (Ըստ Ա. Լուսինյանի)

136. **Բացատրական բառարանի օգնությամբ դո՛ւրս գրիր** *մեղեդի, ռիթմ* **բառերի բոլոր նշանակությունները և սովորի՛ր:**

137. **Ի՞նչ գիտես հայկական երաժշտական գործիքների մասին. թվարկի՛ր դրանք:**

138. **Ըստ նկարի՝ թվարկի՛ր երաժշտական գործիքները:**

139. **Փորձի՛ր արագ վերհիշել այս անվանումներն իրենց բնութագրումներով:**

140. **Բանավոր արտահայտվե՛ք Ջիվան Գասպարյան և Կամո Մեյրանյանի կատարումների մասին:**

Լսենք մեծերին

Ճշմարտությունը օդ է, առանց որի հնարավոր չէ շնչել:

Ի. Տուրգենև

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

✧ Կան պարզ և ածանցավոր այնպիսի բայեր, որոնք խոնարհման կանոնավոր ձևերից որևէ տեղում շեղվում են: Այդպիսի բայերը կոչվում են **անկանոն բայեր:**

Անկանոն բայերն են ***գալ, լալ , տալ, անել, առնել, ասել, բանալ, բերել, դառնալ, դնել, ելնել, զարկել, թողնել, լինել, լվանալ, վեր կենալ, տանել, տեսնել, ուտել:***

Անկանոնությունները կամ շեղումները լինում են սահմանական եղանակի **անցյալ կատարյալում,** սրա հիմքից կազմվող **վաղակատար, հարակատար,** երբեմն էլ **ենթակայական դերբայներում** և **հրամայական եղանակում:**

♦ **Գալ, լալ, տալ** բայերը, թվարկված անկանոնություններից, անկանոն են նաև նրանով, որ անկատար դերբայ չունեն: Այդ բայերի սահմանական ներկան և անցյալ անկատարը կազմվում են դրանց **գալիս, լալիս, տալիս** համակատար դերբայի ձևերից:

• Պարզ անկանոն բայերն են՝ ***գալ, լալ, տալ, ասել, ուտել, զարկել, բացել, բերել:***

• Ածանցավոր անկանոն բայերն են՝ ***դառնալ, դնել, վեր կենալ, անել, տանել, ելնել, լինել, առնել, տեսնել, թողնել:***

Գալ, ուտել, լինել բայերի անցյալ կատարյալի հիմքը կազմվում է այլ արմատից, այն է՝**գալ-եկ***(ա)*, **ուտել-կեր***(ա)*, **լինել-եղ***(ա):*

Մնացած բայերի կատարյալի հիմքում և մյուս անկանոն ձևերում կան մասնակի շեղումներ:

141. **Անգի՛ր սովորիր անկանոն բայերը:**

142. **1. Գեղարվեստական գրականությունից դո՛ւրս գրիր անկանոն բայերով նախադասություններ: 2. Վերլուծի՛ր այդ բայերը ձևաբանորեն:**

143. **Արդյոք հայերեն և անգլերեն անկանոն բայերը համարժե՞ք են, կա՞ն հայերեն անկանոն բայերն անգլերենում որպես անկանոն:**

144. **Ո՞ր ցանկն է ավելի հեշտ՝ հայերե՞նը, թե՞ անգլերենը:**

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

✧ Կան բայեր, որոնք խոնարհման հարացույցում դիմավոր կամ անդեմ որոշ ձևեր չունեն: Այդպիսի բայերը կոչվում են **պակասավոր բայեր**:

Այս բայերի պակաս ձևերը լրացվում են այլ բայերով: Սրանք բաժանվում են երկու խմբի՝

• **Եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ, կեցցեմ.** Այս բայերն ունեն միայն սահմանական եղանակի ներկայի և անցյալի ձևեր: Ի տարբերություն մյուս բայերի՝ սրանք, բացի **արժել** բայից, չունեն նաև անորոշ դերբայ:

Սրանք կազմությամբ պարզ դիմավոր բայեր են, ինչով էլ տարբերվում են մյուս բայերի՝ դերբայով և օժանդակ բայով կազմված ներկայի և անցյալ անկատարի կանոնավոր բաղադրյալ ձևերից: **Կամ** բայի մնացած ձևերը լրացվում են **լինել, գիտեմ** բայինը՝ **գիտենալ,** իսկ **ունեմ** բայինը՝ **ունենալ** բայերի ձևերով:

Այս խմբի պակասավոր բայերից է ***եմ*** բայը, որը, ինչպես գիտենք, ունի միայն սահմանական ներկայի և անցյալի ձևեր:

• **Հուսալ, ցանկալ, լվալ, կենալ (մնալ).**

Հուսալ. Գործածական են այս բայի անորոշ դերբայը, ըղձական, ենթադրական, հարկադրական, այն է՝ **հուսամ, հուսայի, կհուսամ, պիտի հուսայի** և այլն, հրամայական եղանակի ձևերը՝ **հուսա՛, հուսացե՛ք, մի՛ հուսա, մի՛ հուսացեք:**

Մնացած ձևերը չկան և լրացվում են **հույս ունենալ** հարադրական բայի ձևերով:

Ցանկալ. Գործածական են սրա միայն ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ձևերը. այն է՝ **ցանկամ, ցանկայի, կցանկամ, պիտի ցանկայի** և այլն: Մնացած ձևերը չկան և լրացվում են **ցանկանալ** բայի ձևերով:

Լվալ. Գործածական են այս բայի անորոշ դերբայը, ըղձական, ենթադրական, հարկադրական, հրամայական եղանակների ձևերը: Այս բայը չունի **-ում** վերջավորությամբ անկատար դերբայ և դրանով կազմվող սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի ձևերը. դրանք լրացվում են **լվանալ** բայի համապատասխան ձևերով (**լվանում եմ, լվանում էի**):

Կենալ (մնալ). Գործածական են այս բայի հրամայական եղանակի **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացեք** ձևերը:

Մնացած ձևերը չկան և լրացվում են **մնալ** բայի ձևերով:

145. Անգի՛ր արտասանիր պակասավոր բայերը և դրանցով կազմի՛ր նախադասություններ:

Բառերի շտեմարան

Մեր ամսանունները

Ապրիլ անունը ծագում է լատիներենից՝ Aprilis. ըստ ոմանց՝ բառիմաստը բխում է ***բացել*** բայի հիմքից. հին հռոմեացիներն ասում էին *Ծառը ծաղիկ է բացում* կամ *Ապրիլը բողբոջ կամ գարուն է բացում*, ըստ մեկ ուրիշ կարծիքի՝ նշանակում է ***հաջորդ, երկրորդ***, իբր թե մարտ ամսվա հաջորդ՝ երկրորդ ամիսը:

Մայիս: Հռոմեացիները այս ամիսը կոչել են Majus, այսինքն ***Մայայի ամիս,*** անգլերեն՝ May, ֆրանսերեն՝ mai, գերմաներեն՝ Mai, ռուսերեն՝ **май:**

Մայան եղել է գարնան, բարգավաճման, առատության աստվածուհին: **Հունիս, հուլիս:** *Հունիս* անունը կապվում է լատիներեն Junius բառի հետ, որ նշանակում է ***Յունոնայի***՝ հռոմեական աստվածուհու՝ Սատուռնի և Հռեայի դստեր անունից, որը եղել է Յուպիտերի կինը. աստվածուհին եղել է ամուսնության և ծննդկանների պահպանիչը: ***Հուլիս***-ը կապվում է Հուլիոս Կեսարի անվան հետ. այդ ամսին ծնվել է Կեսարը:

Օգոստոս անունը կապվում է հռոմեական ***Օգոստոս*** կայսեր անվան հետ. Հուլիոս Կեսարի որդեգիրը այսպես է անվանակոչվել գահ բարձրանալուց հետո միայն: ***Օգոստոս***-ն էլ իրականում ոչ թե անունն է եղել, այլ մակդիր, որ նշանակել է ***սուրբ, վսեմ, վսեմափայլ, մեծապատիվ:***

Ըստ Պ. Բեղիրյանի

Լուծե՛ք տրված խաչբառը:



Հեղ.՝ Ա. Ոսկանյան
ԵՊՀ բանֆակ III կուրս

Հորիզոնական
Անմեռ ծաղիկ
Գարնանային մանուշակագույն հրավառություն
Ծաղիկներից ամենահասարակը, բայց ամենաբուժիչը
Անապատի փշոտ թագուհին

Ուղղահայաց
Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող ծաղիկ
Ինքը կարմիր, բայց հոգին՝ սև
Եվ՛ ծաղիկ է, և՛ գրող
Ծաղիկների թագուհին
Գարնան գալն ավետող
Եվ՛ ծաղիկ, և՛ համեմունք

ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

Բանաստեղծությունը պետք է լինի աչքի նման պարզ և աչքի նման բարդ:

(Հ. Թ.)

1. ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բնավորության մեջ, շարժուձևում, ոճի մեջ, ամեն ինչում ամենագեղեցիկը պարզությունն է: Հ. Լոնգֆելլո

Խոսքի ոճերը

Մայրենի լեզուն այն համընդհանուր միջոցն է, որից օգտվում են բոլորը: Բայց ինչպե՞ս և ի՞նչ չափով են օգտվում:

Ա՛յ, դու, սիրելի՛ աշակերտ, երբևէ ուշադրություն դարձրե՞լ ես, թե ինչպես ես խոսում տանը, բակում, խանութում, դպրոցում և այլուր: Անպայմանորեն ոչ նույն կերպ: Տանը դու քո հարազատների հետ շփվում ես ազատ, անկաշկանդ, այսպես ասած, տնավարի՝ չմտածելով ո՛չ բառերի ու արտահայտությունների ընտրության և ո՛չ էլ, առավել ևս, քերականական ճիշտ և սխալ ձևերի մասին: Բակում շարունակում ես խոսել նույն ոճով, բայց մի քիչ այլ բառապաշարով, այլ շեշտադրությամբ: Ամեն դեպքում դու չես վերահսկում քո խոսքը, խոսում ես այնպես, ինչպես դու ես ուզում:

Բայց ահա դու դպրոցում ես. քեզ հետ ոչ միայն քո դասընկերն է խոսում, այլև տնօրենդ, դասղեկդ, ուսուցիչներդ: Զգո՞ւմ ես, թե ինչպես է փոխվում ամեն ինչ: Դու միանգամից զգաստանում ես, ընկերավարի խոսքից անմիջապես անցնում քաղաքավարական դիմելաձևի, ընտրում ես համապատասխան բառեր ու արտահայտություններ, որպեսզի թողնես բարեկիրթ և ուշիմ աշակերտի տպավորություն:

Դաս պատասխանելիս դու արդեն, կարելի է ասել, բոլորովին այլ մարդ ես: Քո բառապաշարը ամբողջովին այլ է՝ մասնագիտական բառապաշար, նայած

թե դու ինչ առարկայից ես դաս պատասխանում, նախադասություններդ քերականորեն ճիշտ են ձևակերպված: Քո դեմքի արտահայտությունն ու ձայնն անգամ այլ են, եթե դու պատմում ես գրականության կամ ֆիզիկայի, պատմության կամ երկրաչափության դասերը:

Ուրեմն ամփոփենք. տանն ու բակում քո խոսքը կրում է զրույցի բնույթ, դաս պատասխանելիս դու առնչվում ես գիտական խոսքի տարբեր տեսակներին, իսկ դասղեկիդ, ուսուցիչներիդ ու տնօրենիդ հետ խոսում ես պաշտոնական ոճին բնորոշ արտահայտություններով:

Ընդունված է խոսքի այդ տարբեր դրսևորումները անվանել ***ոճեր:*** Դրանք են՝

- առօրյա-խոսակցական ոճ
- գեղարվեստական ոճ
- պաշտոնական ոճ
- գիտական ոճ
- հրապարակախոսական ոճ

♦ **Գեղարվեստական ոճում գրողի լեզուն զգացմունքի և հույզի լեզու է**, որով էլ խիստ տարբերվում է գիտական և պաշտոնական խոսքից: Գրողը իր խոսքը գունագեղ դարձնելու համար չի խնայում ոչ մի միջոց և քեզ վրա տպավորություն է թողնում իր ստեղծած պատկերներով, պատկերավոր մտածողությամբ:

Գեղարվեստական ոճի կարևոր հատկանիշներն են՝

- խոսքի հուզականություն,
- պատկերավորություն և արտահայտչականություն,
- գրողի անհատականություն:

Գեղարվեստական խոսքը քեզ է ներկայանում երկու ձևով՝ **արձակ և չափածո**, որոնցում գործածված համեմատություններն ու փոխաբերությունները, մակդիրներն ու շրջասույթները, պատկերավորման բազմաթիվ այլ միջոցներ խոսքը դարձնում են կենդանի և հյութեղ:

Գեղարվեստական գրականության լեզուն, անշուշտ, չպետք է շփոթել գրական լեզվի հետ. միայն պետք է նկատի ունենալ, որ տաղանդավոր գրողները իրենց ստեղծագործության լեզվով նպաստում են գրական լեզվի զարգացմանը: Իր ամբողջության մեջ գեղարվեստական խոսքը չունի ոճական միասնականություն. նրանում կարող են լինել մյուս բոլոր ոճերի դրսևորումներ:

1. **Ներկայացրո՛ւ քո սիրած գեղարվեստական ստեղծագործությունը և արժևորի՛ր:**

Պարտադիր չէ, որ բանաստեղծական երկերը անպայմանորեն պատկերավորման վերը նշված դրսևորումներն ունենան: Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, երբ գրեթե զուրկ լինելով պատկերավորման միջոցներից՝ բանաստեղծությունը դարձյալ դուր է գալիս և գրավում է իր անկեղծությամբ, զգացմունքի խորությամբ: Բերենք մի այդպիսի օրինակ՝

2. **Գեղեցիկ ու հստակ առոգանությամբ կարդա՛ այս բանաստեղծությունը և բացատրի՛ր, թե ինչով է քեզ գրավում:**

Քո մայրը տարավ, քեզ կապեց սյունից
Ու եղինջ փռեց քո ոտքերի տակ,
Իմ հոր զայրույթը դուրս եկավ հունից
Ու դեմքիս կնքեց շառաչուն ապտակ:
Ու բերանն ընկանք բովանդակ գյուղի.
Անպիտա՛ն տղա, կրա՛կ տալ, վառե՛լ:
Չէ՛, խա՛լխ ու խիզան, տղան մեղք չունի,
Աղջիկն է նրան խելքահան արել:

Եվ ի՞նչ էր եղել, ի՞նչ էինք արել,
Անքննելի է բախտը երևի.
Ես մեղվի խայթը այտիցդ հանել
Ու ցաված տեղը համբուրել էի:
Ո՞վ էր մեղավոր, ի՞նչ էինք արել –
Նույն հարցն էր տալիս քո նամակն էլի,
Ո՞վ էր մեղավոր, նա՞ էր մեղավոր,
Անմեղությունն այն ժամանակների:

Հ. Սահյան

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ընթերցի՛ր Մ. Գալշոյանի *Օրն ավետյաց* **պատմվածքը ու պատասխանի՛ր հետևյալ հարցերին ու առաջադրանքներին:**

Ա

3. **Պատմի՛ր այս ստեղծագործությունը գեղարվեստական ոճին բնորոշ բառերով:**
4. **Դո՛ւրս գրիր այն բառերը, որոնք գեղարվեստական շունչ են տվել այս պատմվածքին (նշի՛ր խոսքի մասը):**
5. **Որո՞նք են առօրյա խոսքին բնորոշ հատվածները** *(Օրն ավետյաց, Քո մայրը տարավ, քեզ կապեց սյունից):*

Բ

6. **Դո՛ւրս գրիր մակդիրի օրինակներ և բացատրի՛ր, թե ինչու դրանք ընտրեցիր:**
7. **Փորձի՛ր տեքստում գտնել համեմատության օրինակներ և բնութագրի՛ր պատկերավորման այդ միջոցը:**

Գ

8. **Նյութեր հավաքի՛ր Կոմիտասի մասին և ներկայացրո՛ւ դասարանում:**
9. **Կոմիտասյան ի՞նչ երգեր գիտես. բե՛ր օրինակներ:**

Սովորե՛ք այս անուններն ու դրանց գրությունը և միմյանց հետ մրցե՛ք թե՛ այս, թե՛ ձեր ընտրած նյութի իմացությամբ:

Մեծ երգահաններ

Ալեքսանդր Սպենդիարյան – *«Ալմաստ»* օպերա, Առնո Բաբաջանյան –*«Հերոսական բալլադ»* սիմֆոնիա, Արմեն Տիգրանյան – *«Անուշ»* օպերա, Բարսեղ Կանաչյան – *«Օրոր»*, Էդգար Հովհաննիսյան – *«Էրեբունի-Երևան»* երգ, Լորիս

Ճգնավորյան – *«Ռուստամ և Զոհրաբ»* օպերա, Մակար Եկմալյան – *«Պատարագ»*, Քրիստափոր Կարա-Մուրզա – *«Լեպիո, լե՜, լե՜»* խմբերգ:

Ժորժ Բիզե, ֆրանսիացի երգահան – *«Կարմեն»* օպերա, Լյուդվիգ վան Բեթհովեն (հնչյունների արքա), գերմանացի երգահան – *«Լուսնի սոնատ»*, Յոհան Շտրաուս (վալսի արքա), ավստրիացի երգահան, Յոհան Սեբաստիան Բախ (երգեհոնի արքա), գերմանացի երգահան, Ջուզեպպե Վերդի, իտալացի երգահան – *«Ամիդա»* օպերա, Ֆրանց Շուբերտ, ավստրիացի երգահան – *«Ավե Մարիա»* օրհներգ:

10. **Թվարկի՛ր քո սիրելի ժամանակակից երգիչ-երգչուհիներին. դիտիր տեսանյութը:**

♦ Ի տարբերություն գեղարվեստական ոճի՝ **պաշտոնական ոճը** կիրառվում է պետական-պաշտոնական, գրասենյակային, օրենսդրական, իրավաբանական, դիվանագիտական ոլորտներում: Ինչպես նկատում ես հենց միայն թվարկումից, պաշտոնական ոճն ունի կիրառման լայն շրջանակ:

Պաշտոնական ոճի բնորոշ հատկանիշներն են՝

- գրական լեզվով պատմողական շարադրանք,
- առավելագույն սեղմություն ու կաղապարայնություն,
- բառերի օգտագործում ուղղակի իմաստով,
- հատուկ բառապաշարի՝ վարչաբանությունների օգտագործում,
- խոսքի ընդունված և կանոնակարգված շարադասություն,
- խոսողի անձնական վերաբերմունքի բացակայություն,
- խոսքի հուզականության բացակայություն:

Մարդկային փոխհարաբերություններն այս ոճում պաշտոնական են, զուսպ, և յուրաքանչյուր ոք անպայմանորեն մտածում և ընտրում է համապատասխան բառեր ու արտահայտություններ՝ ճիշտ հաղորդակցում իրականացնելու համար:

Պաշտոնական ոճը դրսևորվում է **և՛ բանավոր, և՛ գրավոր:**

11. **Ինչպե՞ս ես դու խոսում ընկերներիդ, ինչպե՞ս՝ ուսուցիչներիդ հետ. փորձի՛ր գտնել տարբերությունները:**

Գրավոր խոսքի դեպքում կարևորվում է տվյալ ոլորտի փաստաթղթային գրագրության հմուտ իմացությունը:

Յուրաքանչյուր ոլորտի փաստաթուղթ ունի շարադրման իր կայուն կաղապարն ու որոշակի բառապաշարը:

12. **Տրված բառերն ու բառակապակցությունները առանձնացրո՛ւ ըստ գեղարվեստական և պաշտոնական գործածության ոլորտների և փորձի՛ր բացատրել դրանց իմաստները:**

Անձնագիր, գրասենյակ, դիմում, ծխամատյան, համաձայնագիր, ժողով, տնօրեն, վահագնաբոց, տնօրինություն, դավթաղեմ, լուծարք, գորովանք, բարձրաբերձ, ծանուցագիր, ծանուցել, բուրյան, նոտար, ուսանողական ժողով, ստացական, ուղեգրություն, համագործակցություն, իրավասու, ժուժկալ, դաշինք, անդորրագիր, անդորրաբեր, կաթոգին, հայկյան, իրազեկել:

13. Ըստ տրված հատվածների՝ որոշե՛ք գործառական ոճերը:

1. *Անդրեսը հավատացած էր, որ գաղտնիք պահելն ու ստելը նույն բանը չեն: Իսկ իր՝ Որտեղ Ամեն Ինչ Ճիշտ Է Աշխարհը գնալու համար ամենաշատը ցավում էր, որ վշտացնելու էր ծնողներին:* (Ա. Մ. Շ.)

2. *Նոյյան տապանի հայրենիքը հազարամյակներ անց, Աստվածորդու հայտնությամբ նոր բովանդակություն ձեռք բերած նոր ժամանակներում, Տապանի բնակիչներից սերված ժողովուրդներից առաջինը ընդունեց Քրիստոնեությունը՝ Աստծո հետ նոր ուխտը՝ որպես սեփական կրոն:*

Կրթություն շաբաթաթերթ, թիվ 29(690), 15.07.2015թ.

3. *Երկրորդ գիծը, որ Հայկից մինչև Դավիթ, հայկական Թուր կեծակին ուղղված է միշտ դեպի հարավ, որ կնշանակի, թե հայ ժողովուրդը իր վտանգը միշտ զգացել, սպասել ու տեսել է հարավը:* (Հ. Թ.), հ. 8, ԵԼԺ, 1999թ.

4.- *Կնի՛կ, հերի՛ք է փնթփնթաս. քանի հազար անգամ ասել եմ քեզի-ես աշխարհաթող եմ եղել. Ես էլ գեղ եկողը չեմ: Խոսքս խոսք է: Աշխատե՞լ: Քանի ձեռքս բերանս կհասնի, պտի աշխատեմ: Հո հարստության համար չե՞մ դատում, իմ աչքս կուշտ է:* (Ավ. Իս.), Ե., 1987թ. Համբերանքի չիբուխը

2. ՏԵՔՍՏ

Իմաստով և քերականորեն միահյուսված խոսքային միավորների ամբողջությունը կոչվում է տեքստ:

Տեքստի ծավալները կարող են տարբեր լինել՝ մեկ նախադասությունից մինչև ամբողջական պարբերություն ու մի քանի պարբերություններ: Ըստ արտահայտած թեմաների՝ տեքստերը բաժանվում են տարբեր տեսակների՝ ուսումնական, գիտական, պաշտոնական (աշխատանքային) գրագրության, գեղարվեստական (արձակ և չափածո), հրապարակախոսական, տեղեկատվական:

♦ **Տեքստում նախադասություններն ու պարբերությունները անպայմանորեն ունենում են տրամաբանական հաջորդականություն և դասավորվածություն, որ չխաթարվի տեքստի իմաստը, և այն սխալ չընկալվի:**

14. **Դասավորի՛ր տրված նախադասություններն ըստ տրամաբանական հաջորդականության:**

Սուրբ Գևորգի խաչը պահում էր նրան:

Ասում են, որ հետո, երբ Անդրանիկը կռիվ էր գնում, գնդակները չէին խոցում նրան:

Պատմում են, որ երբ նորածին Անդրանիկին քահանան ուզում է կնքել, հանկարծ լսվում է ձիերի պայտերի դոփյուն:

Մարդիկ նկատում են, որ երեխայի մեջքին խաչ է դաջվել, և գլխի են ընկնում, որ դա սուրբ Գևորգն էր:

Ամեն անգամ՝ կռվից վերադառնալիս, թափ էր տալիս շորերը, և գնդակները թափվում էին գետին:

Ներս է գալիս մի մարդ, խլում մանկանը քահանայի ձեռքից, թաթախում սուրբ ջրի մեջ, և ինքն անհայտանում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՔՍՏ

♦ Այն բոլոր տեքստերը, որոնք իրենց հիմքում պարունակում են տեղեկություն, կոչվում են **տեղեկատվական տեքստեր.** այդպիսիք են **լուրը, նամակը, հայտարարությունը, ազդագիրը, հեռագիրը, գովազդը, ծանուցագիրը:**

Այս տեքստերի նպատակը հասարակության ուշադրությունը որոշակի հարցերի վրա բևեռելը կամ կենտրոնացնելն է. այս տեքստերը **հայտնում են, տեղեկացնում, ծանուցում, գովազդում:**

Տեղեկատվական տեքստում բովանդակությունը պետք է լինի բավարար չափով ամբողջական և ավարտուն, որպեսզի լրացուցիչ պարզաբանման կարիք չունենա:

1. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

♦ **Հայտարարությունը որևէ առաջարկ կամ տեղեկություն պարունակող գրավոր կամ բանավոր հաղորդում է:**

Հայտարարությունը կարող է հեռարձակվել եթերով, հնչել ռադիոյով, դրվել համացանցում, էլեկտրոնային կայքերում, տպագրվել մամուլում:

Հայտարարությունները սովորաբար իրենց վերնագրերով արդեն հուշում են հայտարարության բնույթի մասին, ինչպես՝ ***«Ի գիտություն», «Ծանուցագիր»*** կամ ***«Ծանուցում», «Ազդ», «Ազդագիր», «Հայտարարություն»:*** Օր.՝ **Հայտարարություն**

15. **Տարբեր աղբյուրներից տետրումդ դո՛ւրս գրիր տեղեկատվական տեքստերի օրինակներ՝** *լուր, հայտարարություն, ծանուցում:*



Հայտարարությունը ընդամենը տեղեկացնում է, գովազդը՝ և՛ տեղեկացնում, և՛ առաջարկում ծառայություններ ու ապրանքներ՝ լայնորեն գովաբանելով դրանց հատկությունները:

2. ԳՈՎԱԶԴ

♦ **Գովազդը լայն հասարակության՝ գնորդների, հանդիսատեսների, այցելուների և այլոց մեջ որևէ բանի մասին նպաստավոր կարծիք ձևավորելու, ուշադրություն գրավելու և պահանջարկ ստեղծելու նպատակով հրապարակային գովասանական հայտարարություն է:**

Գովազդը միջազգային *ռեկլամ* բառի հայերեն համարժեքն է: Ռեկլամն ունի լատինական ծագում՝ *reklamare* բայից, որ նշանակում է *ճչալ, կանչել:*

Գովազդը՝ որպես տեղեկատվական տեքստ, հանդես է եկել 20-րդ դարում Եվրոպայում և ԱՄՆ-ում ու աստիճանաբար մեծ տարածում գտել ողջ աշխարհում: Գովազդը առևտրի զարգացման, մրցակցության ապահովման շարժիչ ուժն է:

Հեռուստատեսային, էլեկտրոնային և ռադիոգովազդները ուղեկցվում են ինչպես լեզվական (խոսք), այնպես էլ արտալեզվական միջոցներով (երաժշտություն, նկարներ), որոնք էլ պայմանավորում են գովազդի ներգործուն ուժը:

Գովազդի ամենակարևոր բաղկացուցիչ մասը խոսքն է՝ տեքստը, իսկ այդ խոսքը պետք է լինի սեղմ, ճիշտ և համոզիչ, պարունակի բառերի նվազագույն քանակ, առավելագույն տեղեկատվություն, և, վերջապես, լինի յուրահատուկ:

Գովազդը կարող է բաղկացած լինել ընդամենը ապրանքանիշի անվանումից և մեկ նախադասությունից, որն ուղեկցվում է հաճելի երաժշտությամբ, ընդ որում ապրանքանիշը գովազդի կա՛մ սկզբում կարող է լինել, կա՛մ վերջում: Հաճախ այն կրկնվում է թե՛ սկզբում, թե՛ վերջում:

Գովազդների ստվար մասը ունենում է երաժշտական տեսաշար, որն էլ անմիջապես ուշադրություն է գրավում, այնուհետև տրվում է խոսքը:

16. Գովազդի՛ր քո պատրաստած *արդուզարդի* կամ *հագուստի* պարագաները:
17. Գյուղում հրաշալի բերք է աճեցվել, բայց կա իրացման խնդիր. փորձե՛ք օգնել ձեր գովազդով:

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ



Հովհաննես Թումանյան

Խորհրդավոր ծերունին

- Այդ դո՞ւ էս,- ասաց նա և գլուխս թեթև շոյելով՝ շարունակեց իր ճամփան առաց կանգնելու:

- Դու որտեղի՞ց գիտես ինձ, ծերունի՛:

- Քո ծնված օրից:

- Ուրեմն դու ճանաչո՞ւմ ես ինձ:

- Ես քո հորն էլ էի ճանաչում փոքրուց:

- Վա՜հ, մի՞թե...

- Ես քո պապին էլ եմ տեսել. ա՜խ, ի՜նչ չարաճճի երեխա էր:

- Դու իմ պապին տեսել ես երեխա ժամանակ:

- Է՛հ, բայց քո պապի պապը ավելի կայտառ երեխա էր:

- Դու իմ պապի պապի՞ն էլ ես տեսել:

- Հա՛, հա՛, հա՛, հա՛, զարմանո՞ւմ ես դու, դեռ նրանց պապերի պապերին էլ...

- Դե որ այդպես է, պատմի՛ր, խնդրում եմ, պատմի՛ր, ծերունի՛. ի՞նչ տեսակ մարդիկ էին նրանք, ի՞նչ գիտես նրանցից:

- Նրանք էլ քեզ նման էին: Քեզ նման երազում էին, մեծ-մեծ հույսեր էին

փայփայում: Գալիս էին ոգևորված իրենց հույսերով, և մեկ-մեկ դրանք կորցնում ճանապարհին: Ոմանք շուտ էին վհատվում ու բեկվում, ոմանք ավելի հանդուգն ու համառ էին գալիս, մինչև մի տեղ ընկնում էին ուժասպառ ու ... Օ՜, շատ եմ ծիծաղել նրանց վրա:

- Վա՜յ, խե՛ղճ պապեր:

- Բայց ես ականատես եմ եղել նրանց կյանքի ողջ ընթացքին, տեսել եմ նրանց զավակների խաղերն ու լսել եմ նրանց առաջին թոթովանքները, մասնակցել եմ նրանց զվարթ խրախճաններին, ճայնակցել եմ նրանց հաղթանակների աղաղակներին, ես պսակել եմ նրանց առաքինություններն ու մեծագործությունները...

- Ո՜վ բարի ծերունի:

- Հա՛, նրանք ինձ հետ էին: Մի քիչ տեղ եկան. մեկը մի տեղ գտավ իր գերեզմանը, մյուսը նրանից մի փոքր հեռու՝ իր ալևոր գլուխը դրեց. որը՝ դեռ մատաղ, որը՝ ծերունի, որը՝ցրտահար... Քո բոլոր պապերն ինձ հետ անցել են, ու ամեն մեկը՝ մի տեղ մնացել:

- Ո՜ւհ, ինչքա՜ն մեծ ես դու:

- Մե՜ծ, աչքդ ինչ տեսնի, նրա սկիզբն եմ ես, միտքդ ուր հասնի, նրանիից առաջ եմ ես...

- Եվ դեռ այդպես արա՞գ ես գնում. ես չեմ կարողանում քեզ հասնել:

- Հա՛, հա՛, հա՛, հա՛, հոգնեցի՞ր... Օ՜, տեսնում եմ՝ արդեն քեզ էլ եմ թողնում... Ե՜կ, ե՜կ...

- Սպասի՛ր, ծերունի՛, իմ ուժը, իմ եռանդը... Ես հոգնեցի էլ չեմ կարողանում գալ:

-Ե՜կ, ե՜կ...

18. **Ի՞նչ խոհեր արթնացրեց այս փոքրիկ ստեղծագործությունը. արտահայտվի՛ր բանավոր:**

19. **Ո՞վ կարող է լինել խորհրդավոր ծերունին. ի՞նչ է նա խորհրդանշում:**

1. **Բեմականացրե՛ք** *«Խորհրդավոր ծերունին»,* **ո՞վ ավելի ճիշտ և գեղեցիկ կներկայացնի իր խոսքը:**

2. **Անցկացրե՛ք քննարկում՝** *«Արդյոք քեզ համար թանկ է յուրաքանչյուր րոպեն»* **թեմայով:**

ԱՄՓՈՓԻՉ

- Ի՞նչ է ուսումնասիրում ձևաբանությունը:
- Քանի՞ խոսքի մաս ունի հայերենը, ի՞նչ խմբերի են դրանք բաժանվում:
- Ձևաբանորեն բնութագրի՛ր բառը, բառաձևը, բե՛ր համապատասխան օրինակներ:
- Բնութագրի՛ր հիմք և վերջավորություն հասկացությունները:
- Նյութական խոսքի մասերից որո՞նք են թեքվող, որո՞նք՝ չթեքվող խոսքի մասերը:
- Ի՞նչ ես հասկանում *հոլովում և խոնարհում* ասելով:
- Թվարկի՛ր գոյականին, դերանվանը, բային բնորոշ քերականական կարգերը:
- Ո՞րն է ձևաբանական վերլուծության հիմնական միավորը:

Բառի ձևաբանական վերլուծություն

Ձևաբանական վերլուծության ժամանակ նախադասության յուրաքանչյուր բառ վերլուծելի է՝

ա) ըստ խոսքիմասային պատկանելության,
բ) ըստ այդ խոսքի մասին բնորոշ հատկանիշների:

Օրինակ՝ **Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր:**

Նրա – *անձնական դերանուն, դերանվանական հոլովում, սեռական հոլով, եզակի թիվ, երրորդ դեմք*

համար – *կապ*

ամենից – *որոշյալ դերանուն, բացառական հոլով, **ի** արտաքին հոլովում*

մեծ – *որակական ածական, դրական աստիճան*

հաճույքը – *հասարակ գոյական, իրանիշ, ուղղական հոլով, **ի** արտաքին հոլովում, եզակի թիվ, որոշյալ առում*

այգին – *հասարակ գոյական, իրանիշ, հայցական հոլով, **ի** արտաքին հոլովում, եզակի թիվ, որոշյալ առում*

ու – *շաղկապ*

արտերը – *հասարակ գոյական, իրանիշ, հայցական հոլով, **ի** արտաքին հոլովում, հոգնակի թիվ, որոշյալ առում*

ջրելն – *անորոշ դերբայ, ուղղական հոլով, **ու** արտաքին հոլովում, որոշյալ առում*

էր – *դիմավոր պակասավոր բայ, էական բայ, սահմանական եղանակ, անցյալ ժամանակ, երրորդ դեմք, եզակի թիվ, չեզոք սեռ*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. է. – Անտուան դը Սենտ Էքզյուպերի
Աք. Խ. – Աքաբեկ Խնկոյան
Ա. Խ. – Արամ Խաչատրյան
Ակ. Բ. – Ակսել Բակունց
Ա. Ղ. – Արամ Ղանալանյան
Ա. Մ. Շ. – Անա Մարիա Շուա
Ա. Ս. – Անահիտ Սահինյան
Ար. – Արազի
Ավ. Իս. – Ավետիք Իսահակյան
Բ. Հ. – Բաղիշ Հովսեփյան
Գ. Ա. – Գ. Արևյան
Գ. Արշ. – Գևորգ Արշակյան
Գ. Բ. – Գարեգին Բես
Գ. Բոր. – Գուրգեն Բորյան
Գ. Մ. – Գուրգեն Մահարի
Գ. Ս. – Գեղամ Սարյան
Դ. Դ. – Դերենիկ Դեմիրճյան
Ե. Չ. – Եղիշե Չարենց
ԵՏԽԸ – Երկնքից տասը խնձոր ընկավ
Թ. Հ. – Թաթուլ Հուրյան
Խ. Գ. – Խաժակ Գյուլնազարյան
Խ. Իմ. – Խիկար Իմաստուն
Խ. Դ. – Խաչիկ Դաշտենց
Կ. Ս. – Կարեն Սիմոնյան
Կ. Տ. – Կամարի Տոնոյան
Հ. Թ. – Հովհաննես Թումանյան
Հ. Հ. – Հովհաննես Հովհաննիսյան
Հր. Հովհ. – Հրաչյա Հովհաննիսյան
Հ.Փ. – Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը
Հ. Մ. – Հարություն Մկրտչյան
Հ. Մաթ. – Հրանտ Մաթևոսյան
Հ. Շ. – Հովհաննես Շիրազ
ՀՊԱ – Հայաստանի պատմական աշխարհագրություն
Հմ. Ս. – Հմայակ Սիրաս
Հ. Ս. – Համո Սահյան
Հ. Ղ. – Հովհաննես Ղուկասյան
Հր. Ք. – Հրաչյա Քոչար
Ղ. Աղ. – Ղազարոս Աղայան
Մ. Ա. – Մկրտիչ Արմեն
Մ. Մ. – Մարո Մարգարյան
Մ.Ման. – Միքայել Մանվելյան
Մ. Ն. – Միքայել Նալբանդյան
Մ. Ս. – Մկրտիչ Սարգսյան
Մուր. – Մուրացան
Ն. Դ. – Նար-Դոս
Ն. Զ. – Նաիրի Զարյան
Շ. – Շեքսպիր
Շիրվ. – Շիրվանզադե
Պ. Պ. – Պողոս Պողոսյան
Պ. Ս. – Պարույր Սևակ
Ջ.Ռ. – Ջոն Ռոուլինգ
Ռ. Ա. – Ռաֆայել Արամյան
Ռ. Դ. – Ռազմիկ Դավոյան
Ռ. Հ. – Ռուբեն Հովսեփյան
Ս. Ա. – Սուրեն Այվազյան
Ստ. Ալ. – Ստեփան Ալաջաջյան
Ս. Խ. – Սերո Խանզադյան
Ս. Կ. – Սիլվա Կապուտիկյան
Ս. Զ. – Ստեփան Զորյան
Ստ. Կ. – Ստեփան Կուրտիկյան
Վ. Ա. – Վախթանգ Անանյան
Վ. Այգ. – Վարդան Այգեկցի
Վ. Գ. – Վահան Գրիգորյան
Վ. Դ. – Վահագն Դավթյան
Վ. Թ. – Վահան Թոթովենց
Վ. Մ. – Վահան Միրաքյան
Վ. Պ. – Վարդգես Պետրոսյան
Վ. Ս. – Վանո Սիրադեղյան
Վ. Տ. – Վահան Տերյան
Վ. Փ. – Վրթանես Փափազյան
Ռաֆ. – Ռաֆֆի
Փ.Ի. – Փոքրիկ իշխանը

քարգմ. – քարգմանական
ժող. – ժողովրդական

ՓԱՌԱՆՁԵՄ ԳԱՌՆԻԿԻ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հանրակրթական դպրոցի
7-րդ դասարանի դասագիրք

Հրատարակիչ տնօրեն՝ **ՍՈՒՐԵՆ ՉՈՒՆԳՈՒՐՅԱՆ**
Համակարգչային ձևավորող՝ **ՀԱՍՄԻԿ ԱԲԵԼՅԱՆ**
Սրբագրիչ՝ **ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ**

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 11,0 տպ. մամուլ:
Տպաքանակը՝

Երևան, Գևորգ Քոչարի 21, հեռ.՝ (37410) 52-88-00
E-mail: info@astghik.am
www.astghik.am